Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ս. ՎՐԱՑԵԱՆ

ԽԱՐԽԱՓՈՒՄՆԵՐ

Յ. ՔԱՋԱԶՆՈՒՆՈՒ

«Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՆԵԼԻՔ ՉՈՒՆԻ ԱՅԼԵՒՍ»

ԳՐՔԻ ԱՌԹԻՒ

1924

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՏՊԱՐԱՆ

ՊՈՍԹԸՆ

II
506

Հրատարակութիւն
Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ
ՊՈՍԹԸՆ

II-50691

I

«ՀԻՆՆ» ՈՒ «ՆՈՐԸ»

Հայաստանի անդրանիկ նախարարապետ Յ. Քաջազնունին հրատարակել է մի գիրք, որի մէջ աշխատում է ապացուցանել, որ «Հ. Յ. Դաշնակցութիւնը Անելիք Չունի Այլեւս»: Այդ գիրքը կազմուած է Հ. Յ. Դ. Խորհրդաժողովին ներկայացուած ընդարձակ զեկուցումից եւ մի պատասխան-նամակից՝ գրուած «կուսակցական ընկեր եւ անձնական բարեկամ Մ. Մ.-ին»: Այդ Մ. Մ.-ը ես եմ: Իր պատասխան նամակի հրատարակութեամբ Քաջազնունին մի տեսակ բարոյական պարտաւորութիւն է դրել իմ վրայ հրապարակով արտայայտուելու իր շօշափած խնդիրների մասին: Ես կատարում եմ այդ պարտաւորութիւնը:

Հեշտ չէ ինձ համար, այսպիսի հանգամանքներում, Քաջազնունու հետ բանակռուի մէջ մտնելը: Հեշտ չէ, որովհետեւ Քաջազնունին ինձ համար եղել է ո՛չ միայն կուսակցական ընկեր եւ անձնական բարեկամ, այլ... մի բան էլ աւելի: Մեր կեանքի ամենայուզումնալից ու ողբերգական օրերին մենք եղել ենք կողք-կողքի, գործել ենք միասին, շնչել ու ոգեւորուել ենք միեւնոյն գաղափարներով: Նրա կեանքի փորձն ու խորհուրդները, Նրա կարծիքները ինձ համար եղել են թանկագին... Եւ ահա

այդ մարդը, այսօր, հրապարակ է գալիս ասելու, որ այդ ամէնը եղել է սխալ: Գալիս է ի լուր աշխարհի խոստովանելու, որ իր երէկուայ ասածները մոլորութիւն էին, իր համոզումները՝ թիւրիմացութիւն, դաւանած գաղափարները՝ տհաս մտքի արգիւնք, եւ գործը, որի համար ինքը պայքարել եւ ուրիշներին էլ մղել է կռուի, եղել է անտեղի, անարգիւնք, անհեթեթ: Գալիս է բարոյապէս ու նիւթապէս սնանկ յայտարարելու ամէնքին ու ամէն ինչ եւ գետին նետելու երէկուայ պաշտած աստուածները:

Հոգեկան ի՜նչ զարհուրելի փոթորիկներ ապրած պիտի լինի այդ մարդը, հրատարակելու համար նման մի գիրք, որը, նախ եւ առաջ, ինքնախարազանում է, համակ ինքնանուաստացում եւ ինքնասպանութիւն: Այո՛, ինքնասպանութիւն: Քաջազնունին խաչ է քաշել իր անցեալի վրայ, բարոյական առանձնացման է ենթարկել իրեն եւ նոր մթնոլորտ չգտած՝ դուրս է եկել այն մթնոլորտից, որով շնչել ու ապրել է իր ամբողջ կեանքը: Անհեթեթ ու անարդար տապանաքար է դրել նա իր հասարակական եւ քաղաքական կեանքի վրայ:

Իսկապէս որ ծանր ու ցաւալի երեւոյթ է այս—տեսնել, թէ ինչպէս տարիքը առած մի մարդ, վաստակաւոր ու ժողովրդական գործիչ, որ իր կեանքի բոլոր տարիները գնացել է որոշ ուղղութեամբ եւ որոշ նպատակի համար, յանկարծ, հոգեկան մի անըմբռնելի ցնցումով, շուռ է գալիս, հրաժարւմ է կարդում ամէն բանի, խարոյկի հանում ամէն ինչ— ե՛ւ իր անցեալը, ե՛ւ իր ապագան— եւ ընկնում է ինչ որ հիւանդագին, անհասկանալի դեգերումների մէջ: Ծանր է մտածել ու խօսել այդ մասին, բայց պէտք

է խօսել, որովհետեւ Քաջազնունու շօշափած դէպքերն ու յարուցած խնդիրները շատ են կենսական ու ցաւոտ եւ, մանաւանդ, որովհետեւ Քաջազնունին դրել է այդ դէպքերից ու խնդիրներից շատերը խիստ սուր, չափազանց ենթակայական եւ աղաւաղուած ձեւով: Պէտք է խօսել, որովհետեւ այդ խնդիրները դրել է Քաջազնունին — մի մարդ, որ առաջնակարգ դեր է կատարել իր պատմած դէպքերի մեծ մասում, մի մա՛րդ, որի խօսքը կշիռ եւ արժէք ունի մեր իրականութեան մէջ: Պէտք է խօսել ե՛ւ նրա համար, որ Քաջազնունին անողոք դատ ու դատաստան է անում իր առած պատմական շրջանի բովանդակ կեանքի եւ բոլոր մարդկանց գլխին, առանց վերապահութեան դատապարտում է ամէնքին, մինչդեռ այդ կեանքի մէջ կան բազմաթիւ լուսաւոր երեւոյթներ, որոնք վրիպել են նրա տեսողութիւնից: Պէ՛տք է խօսել ո՛չ միայն մեր երէկուայ գործունէութիւնը արժէքաւորելու, այլ եւ վաղուայ համար անսխալ ուղեկէտեր մշակելու նպատակով:

Գրքի բովանդակութեան քննութեան անցնելուց առաջ, ինձ թւում է, հարկաւոր է մի քանի խօսք ասել Քաջազնունու անձի մասին, որովհետեւ նրա գիրքը անբաժան է նրա անձէն, եւ շատ բան, որ, առհասարակ, կարող է մնալ անհասկանալի, հեշտութեամբ կը բացատրուի նրա անհատականութեամբ: Որքան էլ Քաջազնունու գիրքը, արտաքնապէս, առարկայական ձեւ ունի, ըստ էութեան նա գերազանցօրէն ենթակայական է, ես կասէի՝ անձնական: Նրա իւրաքանչիւր տողի մէջ, ամէն մի խօսքի տակ դուք տեսնում էք հեղինակին, նրա դիտելու, ըմբռնելու եւ արժէքաւորելու իւրայատուկ եղանակը, նրա վերացական բանավարութիւնները,

փաստերի ու եզրակացութիւնների դունաւորումն ու չափազանցումը... Տեսնում էք, որ արտաքնապէս պաղարիւն եւ, կարծես, անաչառ արտայայտութիւնների տակ թաքնուած է խորը միտում, կանխակալ գաղափարների մի ամբողջ հաւաքածու: Տեսնում էք, թէ ինչպէ՛ս խնամքով մի կողմ են թողնւում ուրիշները, լռութեան են մատնւում հանրածանօթ իրողութիւններ, առաջ են քաշւում չըստուգուած ու վիճելի տեղեկութիւններ — եւ այդ ամէնը նրա համար, որպէսզի նախօրօք, a priori կազմուած եզրակացութիւնը դառնայ աւելի ցայտուն եւ համոզեցուցիչ:

Իր գրքի մէջ, մի տեղ, Քաջազնունին հետեւեալ խօսքերով է բնորոշում իրեն. «Պարզապէս մի հայ մարդ եմ եղել ես... Հայ մարդն է, որ խօսում է իմ մէջ... Հայ մարդն է, որ դատում է իմ մէջ»: Եւ այստեղից է բղխում նրա ամբողջ սխալը: Նա կարծում է, թէ ինքը մի բնական մասնիկն է հայ ժողովրդի, արիւնը արիւնից եւ ոսկրը ոսկրից, հաւատացած է, թէ բնազդօրէն ըմբռնում է հայ ժողովրդին ու հայ իրականութիւնը, մինչդեռ իրապէս նա իր ապրումներով ու բնազդներով շատ հեռու է հայ ժողովրդից: Նա hայ մարդ չէ — պարզ մարդ է: Հայի համար տիպական ոչինչ չկայ նրա մէջ: Ծեծուած անհատականութիւն է նա՝ մի քիչ նեղ, մի քիչ չոր, մի քիչ ինքն իրեն համար ապրող: Նրա դատողութիւններն ու եզրակացութիւնները գրեթէ միշտ ընդհանուր են ու վերացական, կարծես սահմանուած լինին գործադրուելու ժամանակից ու տարածութիւնից դուրս: Նրան թւում է, թէ ինքը միշտ ի նկատի ունի տուեալ հանգամանքները, մինչդեռ յաճախ կտրւում է կենդանի հողից, ընկնում է երե-

ւակայութիւնների աշխարհը, քնարերգութիւն է անում: Նա կեանքն ու մարդկանց դիտում է հսկայական բարձրութիւնից, դատ ու դատաստան է անում ո՛չ թէ մարդկանց ճանաչելով, այլ միայն իր ներքին ձայնին հետեւելով: Նա չա՛տ է սիրում իր ներքինը, իր գաղափարները, իր հանդիստը, իր հոգեկան ապրումները, որպէսզի կարողանայ լայնօրէն ընդգրկել իրենից դուրս գտնուող իրականութիւնը: Ուրոյն են նրա դատողութիւնները, մտածելու ու հիմնաւորելու ձեւը, նրա խորհուրդները միշտ հետաքրքրական են, բայց ո՛չ միշտ կենդանի ու գործնական: Նրանցից պէտք է օգտուել զգուշութեամբ:

Այդպէս չէր, օրինակ, Ռոստոմը: Նա ունէր կեանքի սուր դիտողութիւն եւ առողջ բնազդ: Այնտեղ, ուր Քաջազնունին դատում ու տատանում է օրերով ու շաբաթներով, Ռոստոմը կարող էր առողջ բնազդով ըմբռնել մի հայեացքից: Եւ նրա բնազդը, մեծ մասամբ, ճիշտ էր դուրս գալիս: Ռոստոմը կեանքի ու գործի մարդ էր—, Քաջազնունին՝ մտքի ճգնաւոր: Այդ պատճառով Ռոստոմին հաւատում էր մասսան՝ ժողովրդական լայն զանգուածները— Քաջազնունուն մասսան չի է՛լ ճանաչում: Այդ է պատճառը նաեւ, որ Ռոստոմը ամէն տեղ փնտռում ու գտնում էր կեանք ու գործ.— Քաջազնունու աչքին աւելի դիակներ են երեւում: Այդ է պատճառը, վերջապէս, որ Ռոստոմին ամէնքը սիրում ու պաշտում էին,— Քաջազնունին միշտ մենակ է եղել եւ մենակ է ապրել իր խոհերը բոլոր:

Հոգու այս մենակութիւնից է բղխում եւ Քաջազնունու ծայր աստիճանի զարգացած րէֆլէկսիան, կասկածոտութիւնն ու անվստահութիւնը: Ամենասովորական երեւոյթները նա, շատ անգամ,

ներկայացնում է ողբերգական գոյներով, վրդովւում ու բացագանչութիւններ է անում այնտեղ, ուր շատ–շատ պէտք է մի հեգնական խօսք ասել ու անցնել, ինչպէս կանէր Թոստոյը: Ըմբոստանում է երեւակայական բռնութիւնների դէմ, կռի՛ւ է յայտարարում գոյութիւն չունեցող հակառակորդներին, «պապանձման կնիք է» տեսնում իր բերանին այն ժամանակ, երբ նրա բերանին ձեռք տուող իսկ չկայ: Աղմուկ է բարձրացնում, դամբանական է կարդում այնտեղ, ուր կեանքը սովորական կարգով իր ճամբան է գնում: Այդպէս է, որովհետեւ կեանքը իրեն համար է, Քաջազնունին՝ իրեն համար: Նա անցնում է կեանքի մօտից՝ կլանուած իր թանձր մտքերի մէջ: Նա ապրում է իր սեփական աշխարհում, որը նման չէ մեր մեղաւոր աշխարհին: Երազների ու պատրանքի աշխարհ է այդ: Զարմանալի գունազեղութեամբ նրա մէջ միացած են տրամաբանող միտքն ու սահման չճանաչող զգացմունքը, փիլիսոփան ու գեղասէրը: Այդ է պատճառը, որ նրա աչքին, յաճախ, երազն ու իրականութիւնը խառնըւում են, սուտն ու ճշմարտութիւնը քայլում են ձեռք ձեռքի: Այդ է պատճառը նոյնպէս, որ շատ փաստեր ու դէմքեր նրան երեւում են միակողմանի: Քաջազնունու գրչի տակից դուրս եկած աշխարհը անրնական է, անիրական, պակասաւոր եւ, շատ անգամ, բռնազբօսիկ եւ աղաւաղուած:

«Ես ունիմ այն հաստատ գիտակցութիւնը, — գրում է Քաջազնունին, թէ այսօր մտածում եմ — խօսքս հիմնական մտածումի մասին է — ճիշտ այնպէս, ինչպէս մտածել եմ 1920 թուականին, 18–ին, 14–ին ու իմ ամբողջ կեանքը... Ես չունիմ նոր պաշտամունք, չեմ կառուցել նոր կուռքեր, մնում եմ

հաւատարիմ իմ դաւանած հին աստուածներին: Այն, որ «նոր» է թւում քեզ, ինձ համար նոյն «հինն» է, հինի շարունակութիւնն ու զարգացումը»...

Այսպէս կարող է ասել մի մարդ, որ չի ճանաչում կեանքը կամ չի ճանաչում իրեն: Այսպէս կարող է ասել մէկը, որ սաւառնում է ժամանակի անհունութեան մէջ եւ երեւոյթները դիտում է տիեզերական տեսակէտից: Ի հարկէ, տիեզերքի մէջ, վերջին հաշւով, նոր ու հին չկայ եւ նորը հնի շարունակութիւնն ու զարգացումն է: Հիւլէի յաւէրժական ձեւափոխութեան մէջ նիւթի բոլոր երեւոյթները միեւնոյն էութեան տարբեր արտայայտութիւններն են: Այսպէս է ուսուցանում փիլիսոփայութիւնը: Կեանքը ուրիշ բան է ասում, եւ դէպքերն ու գործիչներին կեանքի ակնոցով դիտելիս՝ կը տեսնենք, որ Քաջազնունու մէջ «հինն» ու «նորը» հիմնական մըտածումի տեսակէտից էլ շատ են տարբերւում իրարից: Այդ ապացուցանում է հէնց իր՝ Քաջազնունու կեանքը վերջին հինգ–տասը տարուայ ընթացքին: Թող նա վերյիշէ մի քանի փուլեր այդ կեանքից:

1914–ին Քաջազնունին Վասպուրականում էր: Կամաւորական շարժումը սկսուած էր արդէն, երբ հանդուցեալ Խէչօի հետ, եկաւ Թիֆլիս եւ հէնց առաջին քայլից վճռականօրէն հակառակ դիրք բռնեց հանդէպ կամաւորական գնդերի կազմակերպման եւ Ազգային Բիւրօի գործունէութեան դէմ: Այդ հողի վրայ նա նոյնիսկ մի խիստ սուր ընդհարում ունեցաւ բժ. Յ. Զաւրեանի հետ: Անցաւ, սակայն, որոշ ժամանակ, եւ ահա Քաջազնունին, Ազգային Բիւրօի յանձնարարութեամբ գնում է Մոսկուա ու Պետրոգրադ կամաւորական գնդերի համար հրացան ու ռազմամթերք գնելու: Քիչ յետոյ, Քաջազնունին

արդէն Ազգ․ Բիւրօի մէջ պաշտօն ունի եւ զբաղուած է «վեց վիլայէթների եւ նրանց անբաժան մասը կազմող Կիլիկիայի» համար սահմանադրութեան նախագիծը կազմելով։ Այդ նախագիծը, որ, ի դէպ, բաւական հետաքրքրական վաւերաթուղթ էր, ընթացք չստացաւ եւ մնաց Ազգային Բիւրօի արխիւների մէջ*)։

Տեսնում էք, ուրեմն, ահա մի կէտը, երբ Քաջազնունին մի՛շտ միեւնոյն ձեւով չի մտածել· կեանքը ստիպեց նրան եւս, ինչպէս եւ ուրիշներին, շեղուել սկզբնական մտածողութիւնից շատ հիմնական մի հարցում — կամաւորական շարժման մէջ եւ «ծովից ծով Հայաստանի» «ցնորամիտ ու տղայական ծրագրում»։ Նա չի կարող արդարանալ նրանով, թէ ինքը սոսկ պաշտօնեայ է եղել կամ այդպէս վարուել է կուսակցութեան ստիպումով։ Մենք գիտենք նրա կարծիքը իր մասին· «Երբ ես համոզուած եմ, որ սխալուողը ես չեմ, դիմացինս է— այդտեղ արդէն անընդունակ եմ զիջելու կամ յարմարուելու»։

Գալիս են անկախութեան օրերը։ Քաջազնունին նախագահ է Հայաստանի անդրանիկ կառավարութեան։ Կարծում էք այդ ժամանակ նա ռուսական պրօտէկտորատի կամ ֆէտէրացիայի մասի՞ն է մըտածում։ Բնաւ երբեք· նա նախարարապետ է ան–

*) Քաջազնունին առաջարկում էր Վեց Վիլայէթները եւ Կիլիկիան բաժանել 3 ինքնավար շրջանների — 2 հայկական շրջաններ՝ վեց վիլայէթներ եւ Կիլիկիա, 1 մահմետական շրջան՝ Մալաթիա։ Երեք ինքնավար շրջանները միացած՝ պէտք է կազմէին առանձին մի պետութիւն Ռուսաստանի պրօտէկտորատի տակ։

կախ Հայաստանի եւ վրդովւում է, երբ ուրիշները ռուսական ֆէտէրացիայի խօսքն են անում։ Անկախութիւնը նրա համար, ի հարկէ, ապսօլու՝ ինքնանպատակ չէ, բայց եւ այնպէս Հայաստանը պատկերացնում է իբրեւ անկախ պետութիւն՝ մանդատի ինչ որ մշուշապատ յարաբերութիւնների մէջ որեւէ մեծ պետութեան, բայց ո՛չ երբեք Ռուսաստանի հետ։ Անկախութեան այդ հաւատն էր, որ Քաջազնունուն հասցրեց մինչեւ պատերազմ Վրաստանի հետ։

Անկախութեան հաւատը Քաջազնունու մէջ աւելի եւս շեշտուեց արտասահմանում, մանաւանդ Ամերիկայում, ուր նա մի տեսակ խորհրդանիշ էր դարձել Հանրապետութեան։ Եւ երբ 1920 թ․ հոկտեմբերին վերադարձաւ արտասահմանից Հայաստան, հայ–թրքական պատերազմի աղէտաւոր հետեւանքները արդէն որոշ էին։ Այդ ժամանակ Երեւանում էր Խորհրդ․ Ռուսաստանի ներկայացուցիչ Լէգրանը, որը՝ ի պատասխան Հայաստանի կառավարութեան միջնորդութեան խնդրի՝ պահանջ էր դրել անմիջապէս հրաժարուել Սեւրի դաշնագրից։ Քաջազնունին մէկն էր նրանցից, որոնք առանց վերապահութեան, բուռն կերպով դիմադրեցին Լէգրանի պահանջին։ Նա գտնում էր, որ Սեւրի դաշնագիրը մեր մեծագոյն յաղթանակն էր, մեր ձեռքին զօրաւոր մուրհակ էր Եւրոպայի հանդէպ· աչքի լոյսի պէս պէտք էր պահել նրան։ Հրաժարուել Սեւրից՝ նշանակում էր հրաժարուել անկախութիւնից եւ նորից Ռուսաստանի գիրկն ընկնել։ Եւրոպայից էր գալիս եւ, ի հարկէ, նրա կարծիքը մեծ կշիռ ունէր կառավարութեան աչքին։ Լէգրանի պահանջը յետ մղուեց։

Ընկաւ Կարսը, ընկաւ եւ Հայաստանը Թուրքերի ոտքի տակ: Հայ գործիչներից շատերի համար միակ ելքը ներկայանում էր ռուսներին դիմելու մէջ, եւ Բաջազնունին «ռուսոֆիլների» առաջին շարքերում էր: Երբ բոլշեւիկեան ռէժիմին մօտից ծանօթ մարդիկ առարկում էին, նա հաւատացած էր եւ աշխատում էր ուրիշներին էլ հաւատացնել, որ հայ կոմունիստներն էլ մեզ պէս մարդիկ են եւ կը հասկանան, որ անտեսապէս յետամնաց եւ աւերուած Հայաստանում չի կարելի հետեւողական կոմունիզմ իրականացնել: Այս հաւատից մեկնելով՝ նա, յետոյ, մի ընդարձակ եւ պատճառաբանուած նամակ գրեց Յեղկոմի նախագահ Ս. Կասեանին՝ յորդորելով սրան հետեւել չափաւոր քաղաքականութեան մեր գիւղացիական ու մանր-քաղքենիական երկրում, բայց Կասեանը նրան պատասխանի էլ չարժանացրեց:

Շատ ժամանակ պէտք չեղաւ հասկանալու համար, որ մենք սխալ ու անտեղի յոյսեր էինք կապել բոլշեւիկների հետ, որոնց աչքին Հայաստանը սոսկ նիւթ էր կոմունիստական փորձերի համար: Եւ Բաջազնունին հիասթափուողների առաջին շարքերում էր: Դեկտեմբերի վերջերին նա արդէն յորդորում էր Դրօին, որ հակառակ բոլշեւիկների կարգադրութեան՝ Ռուսաստան չ՚գնայ եւ թաքնուի՝ թէեւ գիտէր շատ լաւ, թէ ի՞նչ կը լինէր այդ թաքնուելու հետեւանքը: Յունուարի վերջերին նա արդէն երազում էր Զանգեզուր անցնելու մասին. Հայաստանում ապրելն նրա համար այլեւս անկարելի էր: Մարդ խեղդւում էր: Օդ չկար:

Փետրուարի 18-ին տապալուեց բոլշեւիկեան ռէժիմը, եւ Բաջազնունին առաջին ազատուողներից

եւ առաջին ողջունողներից էր: Նա հոգով յեղափոխութեան հետ էր: Եւ փետրուարի 18-ից սկսած մինչեւ մայիս՝ մինչեւ Պարսկաստան անցնելը նա մասնակցեց Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի բոլոր աշխատանքներին, ներկայ եղաւ նրա նիստերից շատերին, բաժին ունեցաւ գործնական ձեռնարկների մէջ: Այնպիսի պատասխանատու քայլեր, որպիսին էին բանակցութիւնները Թուրքերի հետ կամ Չիչերինին տրուած հեռագիրը, որով Ս. Բէգզադեանը յայտարարում էր լիազօրութիւնից զուրկ Հայաստանի կողմից Թուրք-բոլշեւիկեան խորհրդաժողովին մասնակցելու, եղել են Բաջազնունու անմիջական մասնակցութեամբ: Վերջին հեռագիրը ամբողջապէս նրա գաղափարն է եւ կազմուած է նրա ձեռքով: Նա ստանձնել էր եւ Անգօրա գնալիք յանձնաժողովի նախագահի պաշտօնը:

Թէ ի՞նչ եւ ի՞նչպէս էր մտածում Բաջազնունին փետրուարեան օրերին, միանգամայն որոշ կերպով ցոյց է տալիս նրա գրած մէկ թուղթը Հայկ. Փրկ. Կոմիտէին՝ Պատուիրակութեան ուղարկելու համար: Այդ թուղթը հետաքրքրական է ո՛չ միայն Բաջազնունու մտածելակերպը բնորոշելու, այլեւ այն ժամանակուայ Հայաստանի ընդհանուր վիճակը ներկայացնելու տեսակէտից, դրա համար ես առաջ կը բերեմ ամբողջութեամբ, բառ առ բառ այնպէս, ինչպէս գրել է Բաջազնունին.

«Անցեալ տարուայ նոյեմբերի վերջերին մեր պատերազմը Թուրքիայի հետ վերջացաւ մեր պարտութիւնով: Կարսը եւ Ալեքսանդրապոլը գրաւել էր արդէն մեր հակառակորդը եւ սպառնում էր Արարատեան դաշտին, այսինքն Հայաստանի գոյութեան: Մեր կառավարութիւնը ուրիշ ելք չունէր.

ստիպուած էր հաշտութեան բանակցութիւններ սկըսել եւ դաշն կապել, որքան էլ ծանր լինէին յաղթողի թելադրած պայմանները: Բանակցութիւնները տեղի ունեցան Ալեքսանդրապօլում. այնտեղ էլ ըստորագրուեց խաղաղութեան դաշնը: Թուրքերի պահանջները շատ ծանր էին, բայց քանի որ մենք յաղթուած էինք եւ պատերազմը շարունակելու ո՛չ մի հնարաւորութիւն չունէինք, խոնարհուեցանք յաղթողի կամքի առաջ:

Ալեքսանդրապօլի պայմանագիրը, որքան էլ ծանր էր մեզ համար, այնուամենայնիւ ապահովում էր Հանրապետութեան գոյութիւնը. ապա հնարաւորութիւն էր տալիս ժողովրդին մի քիչ շունչ քաշել, ուժերը հաւաքել եւ վերաշինել երկիրը (թէեւ շատ նեղ սահմաններում) ու վերականգնել աւերուած տնտեսութիւնը: Կառավարութեան որոշումն էր՝ կատարել ամենայն ճշտութեամբ հաշտութեան դաշնը, առիթ չտալ Թուրքերին նորից յարձակուել մեր վրայ, հաստատել Թուրքիայի հետ բարի դրացիական, նոյնիսկ բարեկամական կապեր, վերսկսել առեւտրական յարաբերութիւնները եւ խոյս տալ ամէն տեսակի նոր բարդութիւններից:

Դժբախտաբար, այս ծրագիրը չիրագործուեց:

Նոյն ժամին, երբ մեր լիազօր պատուիրակները ստորագրում էին Ալեքսանդրապօլում խաղաղութեան դաշնը,— նոյն ժամին Սօվէտական Ռուսաստանի ներկայացուցիչը Երեւանում՝ պ. Լէգրանը՝ յայտնեց մեր կառավարութեան, որ Ազրբէջանի սահմաններից, Ղազախի եւ Դիլիջանի վրայով, մըտել է Հայաստան ռուսական կարմիր բանակը՝ հետը ունենալով Հայաստանի Յեղկոմը (Յեղափոխական Կոմիտէն), կազմուած դրսից եկած հայ բոլշե-

ւիկներից: Պ. Լէգրանը հարցնում էր, թէ ի՞նչ դիրք մտադիր է բռնելու մեր կառավարութիւնը այս փաստի հանդէպ:

Հայաստանին սպառնում էր մի նոր պատերազմ, այս անգամ Սօվէտական Ռուսաստանի հետ:

Այդպիսի պատերազմ վարելու կամ, առհասարակ, որեւէ ընդդիմութիւն ցոյց տալու ո՛չ մի հընարաւորութիւն չունէր մեր կառավարութիւնը, ուստի պատասխանեց, որ հաշուի է առնում իր դէմ ելած գերազանցօրէն մեծ ույժը եւ խուսափելով անիմաստ արիւնհեղութիւններից՝ տալիս է իր տեղը նոր եկուորներին:

Այսպիսի որոշման շատ նպաստեց նաեւ այն հանգամանքը, որ պ. Լէգրանը, Ռուսաստանի անունից, գրաւոր կերպով տուեց մի շարք կարեւոր խոստումներ: Դրանցից գլխաւորներն էին. Ա) Հայաստանի Հանրապետութեան լիակատար անկախութիւնը կը յարգուի եւ կը պաշտպանուի ամէն կերպ. Բ) Ռուսաստանը տնտեսական խոշոր օգնութիւններ կ՚անի Հայաստանի, այն է. կը վերահաստատէ երկաթուղային հաղորդակցութիւնը Հայաստանի եւ հարեւան Վրաստանի, Ազրբէջանի ու Պարսկաստանի միջեւ. վառելիք ու կերոսին (քարիւղ լուսաւորութեան համար) կը բերի Բագուից, Ռուսաստանից կը բերի հաց, մանուֆակտուրա եւ այլ ապրանքներ եւայլն. Գ) Չի ենթարկի որեւէ հալածանքի ոչ-կոմունիստական քաղաքական կուսակցութիւններին պատկանող անդամներին իրանց անցեալ գործունէութեան համար:

Այսպիսով հաստատուեց Հայաստանում, խաղաղ ճանապարհով, առանց դիմադրութեան, բոլշեւիկեան սօվէտական իշխանութիւնը:

Երկու ու կէս ամսուայ կեանք ունեցաւ այդ իշխանութիւնը մեզանում (դեկտեմբեր 2–ից մինչեւ փետրուար 18):

Այդ կարճ ժամանակամիջոցում պարզուեց լիովին բոլշեւիկեան ռէժիմի իսկական բնոյթն ու էութիւնը:

Վերեւ յիշուած խոստումներից ոչ մէկը չկատարուեց: Հայաստանի անկախութիւնը մնաց մեռած տառ: Մեր երկիրը դարձաւ պարզապէս Մեծ Ռուսաստանի նահանգներից մէկը: Հայաստանի կառավարութիւնը ստանում էր հրամաններ կամ Բագուից (ուր նստած էր կոմունիստական կուսակցութեան բիւրօն), կամ Մոսկուայից: Հայաստանի զօրքը ենթարկուած էր ռուս հրամանատարութեան եւ կազմում էր ռուսական բանակի մի մասը: Գերագոյն Դատական Մարմինը, այսպէս անուանուած Արտակարգ Յանձնախումբը (Չէ–կա), որը մահուան դատավճիռներ էր հանում եւ կատարում, ենթարկւում էր ոչ Հայաստանի կառավարութեան, այլ Ռուսաստանի կենտրոնական Չէ–կային:— Ո՛չ մի տընտեսական օգնութիւն Ռուսաստանից չստացուեց. ոչ մի փութ ապրանք Հայաստան չներմուծուեց: Ընդհակառակը, սովից մեռնող Հայաստանից դուրս տարուեց Ադրբէջան այն ամէնը, ինչ որ յաջողուեց խլել ժողովրդի ձեռքից (նոյն իսկ որբանոցներում մնացած խտացրած կաթի վերջին մնացորդները եւ հիւանդանոցներից՝ վերջին դեղերը): Բռնագրաւումները դարձան պետական տնտեսութեան միակ ձեւն ու միջոցը: Զանազան անուն կրող զինուած խմբակներ օր ու գիշեր վխտում էն քաղաքներում եւ գիւղերում, խուզարկում էին տներն ու մառանները, գոմերն ու բակերը եւ բռնագրաւում ամէն մի

11-5069

արժէքաւոր բան: Մի չտեսնուած թալան էր, որ կատարւում էր ամենուրեք: Եւ որովհետեւ քաղաքաբնակները այսօր համարեա ոչինչ չունէին, թալանի գլխաւոր ծանրութիւնը ընկնում էր գիւղացու վրայ: Գիւղացուց խլում էին անխնայօրէն ե՛ւ օրուայ պաշար հացը, ե՛ւ սերմացուն, ե՛ւ լծկանը: Երկիրը աւերւում էր վերջնականապէս ու զրկւում էր վերաշինման վերջին միջոցներից: Երկաթուղային հաղորդակցութիւնը դադարեց վերջնականապէս: Ո՛չ վառելիք (նաւթ), ո՛չ կերոսին, ո՛չ հաց, ո՛չ մանուֆակտուրա Հայաստան չբերուեց: Աղքատութիւնը, մերկութիւնը, անօթութիւնը աճում էին օր օրի վրայ: Սրա հետ զուգընթացաբար աճում էին նաեւ ամէն տեսակի բռնութիւններ: Բոլշեւիկեան իշխանութիւնը ասպարէզ հանեց բռնակալութեան այնպիսի ձեւեր ու չափեր, որոնց նմանը հազիւ թէ տեսած լինի պատմութիւնը: Ժողովուրդը բաժանուած էր երկու անհաւասար մասի. մի կողմից իրանք բոլշեւիկները եւ իրանց արբանեակները (մի քանի հազար մարդ) կարմիր բանակի հետ միասին, միւս կողմից՝ բոլոր մնացածները: Առաջիններին պատկանում էր բոլոր իշխանութիւնը, բոլոր իրաւունքները, վայելելու եղած բոլոր հնարաւորութիւնները: Վերջիններին՝ բոլոր պարտականութիւնները, թալանուելու բոլոր ծանրութիւնը եւ հլու, անխօս հպատակուելու դառն արտօնութիւնը: Քաղաքացիական բոլոր ազատութիւնները արմատախիլ էին արուած լիովին: Գրել, դատել, խօսել, հաւաքուել, կազմակերպուել կարող էին միայն բոլշեւիկները: Միւսները ծպտուն հանելու, կեանքի նշոյլ ցոյց տալու իրաւունք չունէին: Լրտեսութիւնը դարձել էր վարչական սիստէմի հիմքը: Բանտերը

թէ Երեւանում, թէ՛ գաւառներում լեփ լեցուն էին հազարաւոր մարդկանցով: Ո՛չ ոք չէր զգում իրան ապահով լրտեսի մատնութիւնից: Հալածանքները եւ ձերբակալութիւնները կրում էին թէ անհատական եւ թէ խմբային բնոյթ: Բոլշեւիկները նպատակ էին դրել մաքրել երկիրը բոլոր անհաճոյ տարրերից — առաջին հերթին քաղաքական կուսակցութիւններից, ապա մտաւորականներից եւ, առհասարակ, բոլոր ղեկավար, ազդեցիկ, մտածող ու գործող տարրերից: Զօրքի կողմից ապահով լինելու համար հաւաքեցին խաբէութեամբ բոլոր հայ սպաներին (մօտ հազար երկու հարիւր մարդ), զինաթափ արին ու խումբ–խումբ աքսորեցին Բագու (մասամբ էլ Ռուսաստանի խորքերը): Նրանց տեղ դրին ռուս սպաներ եւ բոլշեւիկ կոմիսարներ ու այսպիսով գըլխատեցին հայ բանակը: Ինչ վերաբերւում է ոչ–զինուորական մտաւորականութեան, սկզբից բաւականացան բանտարկելութիւնով, բայց վերջը սկսեցին գնդակահարել եւ կացիններով կոտորել բանտերում, առանց դատի ու դատավճռի, նոյնիսկ առանց քննութեան:

Կացութիւնը դարձաւ միանգամայն անհանդուրժելի,— ապստամբութիւնը բռնկուեց: Ապստամբողը գիւղացիութիւնն էր, միաժամանակ զանազան վայրերում, բայց առանց կանխամտածուած ծրագրի, առանց համաձայնեցրած գործողութիւնների: Շարժումը ունէր գերազանցօրէն ժողովրդական բնոյթ, մասսային ու տարերային — եւ այնքան ուժգին էր, որ 3–4 օրուայ ընթացքում ապստամբ գիւղացիների զինուած խմբերը՝ խորտակելով ճամբին տեղական սովետական իշխանութիւնները՝ փետրուարի 18–ին առաւօտ վաղ հասան Երեւան ու դուրս

վռնտեցին այնտեղից կենտրոնական կառավարութիւնը կարմիր զօրքերի հետ միասին:

Այդ օրից հաստատուեց Երեւանում, փոխարէն տապալուած Սովէտական կառավարութեան, մի առանձին մարմին՝ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ անուան տակ, որի նպատակն է ազատել վերջնականապէս Հայաստանը բոլշեւիկներից ու ապա իր տեղը տալ համաժողովրդական կառավարութեան:

Կռիւները դեռ չեն վերջացած: Երեւանից փախած բոլշեւիկեան կառավարութիւնը՝ իր հետը ունենալով այստեղի կարմիր բանակային ուժերը, ամբողջ հրամանատարութիւնը, երկու զրահակիր երկաթուղային գնացքները, երկաթուղային բոլոր շոգեմեքենաներն ու վագոնները, մեր թնդանօթները, առատ կենսապաշար, զէնք ու զինամթերք — ապաստանել է Շարուրի մէջ եւ կռւում է յամառօրէն: Բոլշեւիկների մի ուրիշ մասը, թիկունքում ունենալով Սովէտական Ադրբէջանը՝ ամրացել է ու կռւում է Սեւանայ լճի հարաւ–արեւմտեան ափերում: Երրորդ մասը՝ թիկունքում ունենալով Սովէտական Վրաստանը՝ կռւում է Փամբակի (Կարաքիլիսի) շրջանում: Կենտրոնական Հայաստանը ամբողջովին մեզ հետ է: Մեզ հետ է նաեւ մեզանից արեւելք գտնուող ամբողջ Լեռնային Հայաստանը (Դարալագեազ, Զանգեզուր, Հայկական Ղարաբաղ), բայց հաղորդակցութեան դժուարութիւնների պատճառով, ունի իր տեղական ինքնավար կառավարութիւնը, որ նստում է Գորիս քաղաքում:

Այս կռւում մենք չունինք ո՛չ կանոնաւոր զօրք, ո՛չ հրամանատարական կազմ եւ ո՛չ ռազմական–տեխնիկական միջոցներ: Կռուողը ինքը զինուած ժողովուրդն է,— գիւղացիներ ու քաղաքացիներ,

ծերեր ու երիտասարդներ, որոնք յօժարակամ, առանց որեւէ ստիպողական միջոցների, յաճախ իրանց սեփական զէնքերով ու պաշարով, կազմում են խմբեր ու վազում կռուի դաշտ: Հրամանատարութեան բացակայութիւնը եւ կանոնաւոր կազմակերպութեան խոշոր պակասը մեզանում լրացւում է մեծ ու ընդհանուր ոգեւորութիւնով, յաղթելու կամքով եւ անվերջ ատելութիւնով դէպի բոլշեւիկների բռնակալութիւնը:

Այս է մեր այսօրուայ դրութիւնը:

Ի՞նչ է սպասում մեզ ապագայում— նոյնիսկ մօտիկ ապագայում — դժուարանում ենք գուշակել: Մի բան գիտենք հաստատապէս. կամովին այլեւս չենք ենթարկուի բոլշեւիկեան լուծին: Միայն մեր դիակների վրայով բոլշեւիզմը կարող է երկրորդ անգամ ոտք կոխել Հայաստան: Գիտենք եւ մի ուրիշ բան. եթէ բոլշեւիկները չստանան դրսից նոր օգնութիւն, եղածներից մենք կը մաքրենք մեր երկիրը մեր սեփական ուժերով: Բայց որովհետեւ բոլշեւիկների դրսից (Վրաստանից, Ազրբէջանից, Ռուսաստանից) օգնութիւն ստանալը աւելի քան հաւանական է, ահա այստեղ է մեր դրութեան ամբողջ տրագիզմը: Այս օրհասական կռուի մէջ մենք լարել ենք մեր վերջին ուժերը: Երկար ժամանակ չենք կարող մնալ այսպիսի լարուած դրութեան մէջ: Ժողովուրդը ուժասպառ է, արնաքամ: Եթէ բոլշեւիկները ուժեղանան արտաքին օժանդակութիւնով, իսկ մենք մնանք մենակ, պարտութիւնը անկասկած է ու անխուսափելի: Իսկ մեր այս օրուայ պարտութիւնը կը լինէր ամենամեծը այն բոլոր աղէտներից, որ տեսել է հայութիւնը 15 թուականից դէսը, որովհետեւ այսօր Հայաստանի անկախ պետութիւնը

եւ հայ ժողովուրդը չունին աւելի մեծ թշնամի, քան ռուսական բոլշեւիզմը:

Այսքան երկար գրեցի այն նպատակով, որ դուք իրազեկ լինէք մեր իրականութեան: Մեր արտասահմանի բարեկամները յաճախ խոշոր սխալներ են անում՝ անտեղեակ լինելով կամ հաշուի չառնելով մեր իրական դրութիւնը:

Բոլշեւիզմի դէմ կռուելու եւ — ընդհանրապէս — մեր երկրում խաղաղ կեանք վերսկսելու համար մենք մեծապէս պէտք ունինք հարեւան Թուրքիայի բարեկամութեանը, նոյնիսկ աջակցութեանը: Ամէն մի քայլ (թէ այստեղ, թէ արտասահմանում), որ հակառակ է մեր եւ թուրքերի մէջ բարեացակամ կապեր հաստատելուն, կարող է ճակատագրական լինել մեզ համար: Այսօր մենք երկու իրական ոյժ ունինք մեր կողքին. մէկը Սովէտական Ռուսաստանն է, միւսը՝ Թուրքիան: Միւս ուժերը մեզանից շատ հեռու են: Առաջինի հետ, ինչպէս ցոյց տուեց դառն փորձը, հաշտուել չենք կարող. մնում է, որ հաշտուենք ու բարեկամանանք միւսի հետ: Այդ անհնարին չէ, որովհետեւ մենք եւ թուրքերը ունինք ընդհանուր շահեր, որ ամենայն համերաշխութեամբ կարող ենք պաշտպանել ընդհանուր ուժերով: Բոլշեւիկների վերադարձը նոյնքան անցանկալի է թուրքերի համար, որքան եւ մեզ համար: Բոլշեւիկների վերադարձը կը նշանակէ ոչ այլ ինչ, քան Հայաստանի կցումը Ռուսաստանին: Այդ դէպքում Թուրքիան իրան սահմանակից կ'ունենայ դարձեալ իր դարեւոր թշնամին, մեծ եւ ագրէսիւ Ռուսաստանը (ասում եմ ագրէսիւ, որովհետեւ ամէնքի համար պարզ է, որ սովէտական Ռուսաստանը նոյնքան իմպէրիալիստական է, որքան եղել է իր ժա-

մանակին ցարականը)։ Պահած ունենալով իր ձեռին Ազրբէջանը, ամրանալով Վրաստանում եւ նուաճելով Հայաստանը՝ Սովէտական Ռուսաստանը հետեւեալ հերթին պիտի յարձակուի Թուրքիայի վրայ։ Հասկանալի է, թէ Թուրքիայի համար, որքան ձեռնտու է ունենալ իր եւ Ռուսաստանի միջեւ այնպիսի անկախ պետութիւններ, ինչպիսի են Ազրբէջանը, Վրաստանը ու Հայաստանը։ Այդ նորակազմ, փոքր ու անզօր պետութիւնները ո՛չ մի սպառնալիք չեն կարող ներկայացնել իրան՝ Թուրքիային, բայց միեւնոյն ժամանակը բաւականին ապահովութիւն են Ռուսաստանի ոտնձգութիւնների դէմ։ Եթէ Թուրքիայի եւ Ռուսիայի միջեւ ծագին անհամաձայնութիւններ (որ անխուսափելի են), հակաբօլշեւիկեան հայութիւնը հանդիսանում է թուրքերի բնական դաշնակիցներից մէկը։ Այս հողի վրայ մենք հեշտութեամբ կարող էինք համաձայնութեան գալ թուրքերի հետ՝ նրանց եւ մեր օգտի համար։

Բայց սրա համար անհրաժեշտ է, որ արտաքին գործօնները անհնարին չդարձնեն հայ-թրքական մերձեցումը։ Ամենամեծ քաղաքական գործօնը այսօր Լոնդոնի կօնֆերանսն է եւ նրա որոշումները Մերձաւոր Արեւելքի վերաբերմամբ։ Ստացել ենք Ամ.-ի հեռագիրը Պօլսից, բայց եւ այնպէս չգիտենք հաստատ, թէ արդեօք ձեւակերպուե՞լ է վերջնականապէս մեր եւ Թուրքերի մէջ եղած դատի որոշումը, եւ եթէ ձեւակերպուել է, ի՞նչ է այդ ձեւակերպումը։ Բայց մենք գիտենք մի ուրիշ բան եւ շատ ենք ցանկանում — պահանջում ենք ամենակտրուկ կերպով— որ դուք եւս գիտենաք այդ ուրիշ բանը, այն է, որ այդ որոշումները փոխանակ մեր յօնքը շինելու աչքը չփչացնեն։ Մեր իրական դրութիւնը պա-

հանջում է հաշտ եւ բարեկամական կենակցութիւն մեր հարեւան Թուրքիայի հետ։ Ուրեմն, մեր արտասահմանի բարեկամները (եթէ նրանք, իրօք, բարեկամ են մեզ) չպիտի դնեն Թուրքիան այնպիսի դրութեան մէջ, որ նա նկատի մեզ իբրեւ իրա դժբախտութեան պատճառը ու լցուի ատելութեան եւ վրիժառութեան զգացմունքներով հանդէպ մեզ։ Կօնֆերանսի որոշումները մեր վերաբերմամբ ընդունելի պիտի լինին Թուրքիայի համար — ահա մեր պահանջը»։

Այսպէս էր մտածում ու գրում Քաջազնունին 1921 թ. մարտին, իսկ 1924 թ. մարտին... Բայց շարունակենք մեր պատմութիւնը։

Ապա եկան նահանջի դառն ու յուզումնալից օրերը— Բաշ Գառնի, Միլլի Զոր, Դարալագեազ ու Զանգեզուր։ Վրաստանի անկումից յետոյ Հայաստանը տակաւին դիմացաւ աւելի քան մէկ ամիս։ Բայց Արարատի ու Ախտայի ճակատները չպրտուած բօլշեւիկեան դիվիզիաները ստիպեցին մեզ քայլ առ քայլ քաշուելու դէպի լեռնային գաւառները։ Այս անյաջողութիւնը ոմանց մէջ առաջ բերեց յուսահատութիւն եւ «որեւէ ելք» գտնելու տրամադրութիւն։ Ուրիշներ առաջարկում էին առանց դիմադրութեան անցնել Արաքսը։ Քաջազնունին մինչեւ վերջ մնաց պաշտպան կռուի։ Նա հաւատացած էր, որ բօլշեւիկների հետ ընդհանուր լեզու գտնել հնարաւոր չէ, իսկ եթէ հնարաւոր էլ լինի, աւելորդ է, որովհետեւ «մենք պէտք է մինչեւ վերջին փամփուշտը հաւատարիմ մնանք անկախութեան գաղափարին», որովհետեւ «մենք պէտք է ցոյց տանք Եւրոպային, որ հասկանում ենք անկախութեան արժէքը եւ գիտենք նրա համար կռուել ու զոհուել»։

Այս խօսքերով չէր, գուցէ, բայց այս իմաստով
էր արտայայտւում Քաջազնունին Զանգեզուրում:
Այս տեսակէտից շատ ուշագրաւ է նրա մէկ ճառը
Արաքսի ափին: Ապրիլի 27–ին էր: Մեղրի գիւղի
ժողովրդի խնդրանքով Քաջազնունին ու ես յանձն
առինք խօսելու ժողովրդական միտինգում: Հոծ
բազմութիւն էր հաւաքուած գիւղական հրապարա-
կի պատմական չինարիների տակ: Եւ Քաջազնունին,
ճերմակ մազերը ցրիւ տուած քամուն, կանգնած
ծառի տակ, առաքեալի պէս խօսում ու ոգեւորում
էր ժողովրդին: Նա հրաւիրում էր շարունակել կռի-
ւը, յորդորում էր գիւղացիներին կռուել անհաշտ
քաներորդ դարի բարբարոսների նկատմամբ: Հա-
մոզում էր չընկճուել, որովհետեւ անհնար բան է,
որ արդար գործի համար մղուած կռիւը վերջանայ
պարտութեամբ: «Մենք գնո՛ւմ ենք Պարսկաստան
ձեզ համար օգնութիւն բերելու, գնո՛ւմ ենք, բայց
շուտով կը վերադառնանք՝ ձեզ հետ միասին շարու-
նակելու համար պայքարը»: Այսպէս վերջացրեց նա:
Իրօք որ, մենք գնում էինք, որպէսզի շուտով վերա-
դառնանք պայքարը շարունակելու համար: Եւ յա-
ջորդ օր մենք անցանք Արաքսը եւ մի քանի օրից ար-
դէն Թաւրիզում էինք, ուր շուտով պարզուեց, որ
Եւրոպայի օգնութեան ո՛չ մի յոյս չկայ: Այստեղ
լուր ստացուեց նաեւ, որ բոլշեւիկները ուզում են
ինչ որ առաջարկներ անել մեզ հաշտութիւն կնքելու
նպատակով: Անկախ նրանից, թէ որքան լուրջ էր
այս լուրը, եղան մարդիկ, որոնք պնդում էին, թէ
կռիւը այլեւս անիմաստ է եւ հարկաւոր է որեւիցէ
ձեւով վերջ տալ պատերազմին: Խոստովանում եմ,
մի վայրկեան իմ մէջ էլ ծագեց վարանում, Եւրո-
պա չկայ, Զրոնշղատի եւ Ռուսաստանի միւս վայ-

րերի ապստամբութիւնների ճակատագիրը անյայտ,
ամբողջ Կովկասը բոլշեւիկների ձեռքին — աւելի
խելացի չէ՞ր մտածել հաշտութեան մասին...
«Ո՛չ, աւելի խելացի չէր», այս էր Քաջազնունու
կարծիքը: Նա պնդում էր, որ հաշտութեան փորձե-
րը վնասակար են: Ինչո՞ւ: Նախ՝ որովհետեւ բոլ-
շեւիկներին հաւատալ չի կարելի — ապացոյց դեկտ.
2–ի համաձայնութիւնը: Երկրորդ՝ ի՞նչ պիտի տայ
Հայաստանին հաշտութիւնը — ոչի՛նչ, մինչդեռ
պատերազմի շարունակութիւնից առնուազն երկու
օգուտ կայ. մէկ՝ եթէ մենք դիմանանք 5–6 ամիս,
ո՞վ է իմանում, ինչեր են պատահելու Ռուսաստանի
ներսը կամ Եւրոպայում: Անկախ Լեռնահայաստա-
նը, ըստ էութեան, սաղմ է անկախ Հայաստան՝ իր
օրինական կառավարութեամբ, իսկ Հայաստանի
կառավարութեան գոյութիւնը մեծապէս կ'ուժեղա-
ցընէ մեր դիւանագիտութեան դիրքը արտասահմա-
նում:
Երկրորդ՝ սենք թէ կռուեցինք ու պարտուե-
ցինք: Դրանից մեծ վնաս չկայ, իսկ օգուտը կը լի-
նի այն, որ մենք դուրս տարած կը լինենք մեզ հետ
Հայաստանի անկախութեան գաղափարը՝ արտա-
սահմանում էլ շարունակելու համար պայքարը:
Անհրաժեշտ է, որ հայ ժողովրդի մէջ գոյութիւն
ունենայ քաղաքական երկու հոսանք.— Բոլշեւիկնե-
րը կը լինին ռուսական օրինատցիայի կողմնակից
եւ հակառակ անկախութեան. մենք կը լինինք ան-
կախութեան պաշտպան՝ եւ արեւմտեան ուղղու-
թեան ներկայացուցիչներ:
Այսպէս էր մտածում Քաջազնունին Թաւրի-
զում: Այս էր, ընդհանուր առմամբ, եւ Հայաստանի
գործիչների ճնշիչ մեծամասնութեան կարծիքը՝ ան-

կախ կուսակցական տարբերութիւնից։ Փետրուար-
եան շարժումը ստեղծել էր որո՛շ միասնութիւն,
քաղաքական որոշ ըմբռնում — ա՛յն, որ յետագային
աւելի եւս լայնացաւ եւ գաղութներում էլ արմատ-
ներ ձգեց։

Կուիւը Զանգեզուրում շարունակուեց, իսկ Քա-
ջազնունին գնաց Թէհրան։

Թէհրանում էլ Քաջազնունին նոյնն էր մտա-
ծում։ Նոյն ձեւով էր արտայայտւում նա ե՛ւ Բաղ-
դադում, ե՛ւ Բասրայում, ե՛ւ Բոմբէյում, ե՛ւ Գահի-
րէում, ե՛ւ Ալեքսանդրիայում ու Պոլսում — ամ-
բողջ ճանապարհին, ուր որ հայ մարդու էր հան-
դիպում։ Նրա խօսած հակաբոլշեւիկեան ճառերը
Բաղդադում, Գահիրէում, Ալեքսանդրիայում ծա-
նօթ են արտասահմանում։ Յիշենք նրա խօսքերը՝
արտասանած Ալեքսանդրիայի հրապարակային ժո-
ղովում, 1922 թ., փետրուար 26-ին, Քաղինօ Բէլ-
վիւի մէջ, երկսեռ խուռն բազմութեան առջեւ։

«Ռուսական կարմիր բանակը եկաւ, գրաւեց մեր
երկիրը եւ հաստատեց մի կառավարութիւն, որ հայ-
կական չէ։ Բայց կարո՞ղ ենք ասել, որ ամէն բան
վերջացած է։ Ո՛չ.— Անկախութիւնը այնպիսի բան
է, որ նուէր չի տացւում. ամէն ազգ իր անկախու-
թիւնը սեփական բռունցքով միայն կարող է ձեռք
բերել... Հայ ժողովրդի համար անկախութիւնն
այսօր մահուան եւ կեանքի խնդիր է, եւ Հայաստա-
նի ժողովուրդը ունի այդ գիտակցութիւնը»...

Նոյնքան վճռական է Քաջազնունին եւ Պօլսում.
«Այո՛, պէտք է տօնել, գրում է նա Մայիս 28-ի ան-
կախութեան տօնի առթիւ*),— պէ՛տք է տօնել այ-

*) Տե՛ս «Ճակատամարտ», 1922 թ., մայիս 28։

սօր եւ միշտ, ու ամէն տեղ, ուր կայ մի զոյգ հայ։
Եւ, ի հարկէ, ամէնից առաջ ու ամէնից խանդավառ
Արարատեան դաշտի վրայ, Գուգարքի ու Սիւնիքի
լեռներում,— այն տեղ, ուր հաստատուած ու իրա-
կանացուած է հայ պետութիւնը։

«Եթէ Հայաստանի այսօրուայ կառավարութիւ-
նը ջնջել է իր տօնացոյցի միջից Մայիս 28-ը, դա
հետեւանք է ու ապացոյց քաղաքական տհասութեան
կամ յանցաւոր ապերախտութեան...»

«Կան պարտութիւններ, որ նուիրական են ու
պատուաբեր նոյնքան, որքան եւ ամենափայլուն
յաղթանակները»։

Իսկ երկու օր յետոյ, «Ճակատամարտ»ի մայիս
30-ի համարից սկսած հրատարակուող «Ի՞նչ պէտք
է լինի մեր ուղին» յօդուածաշարքի մէջ, Քաջազնու-
նին գրում է հետեւեալը.

«Այսօր Դաշնակցութիւնը աքսորուած է Հայաս-
տանից եւ Հանրապետութեան անկախութիւնը կի-
սով չափ վերացած։ Բայց սա մի անցողակի շրջան
է միայն։ Պատմութիւնն ունի իր ընթացքը եւ այդ
ընթացքը հասցրել է մեզ անկախութեան շեմքին։
Խօսքը արտասանուած է արդէն. գաղափարը՝ կեն-
դանի ու կենսունակ։ Պատճառ չկայ կասկածելու,
թէ հայ երկիրը ունենալու է— աւելի կամ պակաս
սահմանափակումներով — իր ուրոյն քաղաքական
կեանքը։

Վաղուայ Հայաստանի հայկական կառավարու-
թեան մէջ Հ. Յ. Դաշնակցութիւնը նորից կանչուած
պիտի լինի բերելու իր աշխատակցութիւնը (թերեւս
նորից ղեկավարող դեր ստանձնելու)։ Սա մի պար-
տականութիւն է, որից չի կարող խոյս տալ ո՛չ մի
քաղաքական կուսակցութիւն։ Եւ սրա համար է,

որ նա այսօրուանից պէտք է գիտենայ իր վաղուայ անելիքը»։ Եւ մանրամասն, վեց ընդարձակ յօդուածների մէջ բացատրում է, թէ ի՞նչ է անելու վաղը Դաշնակցութիւնը — պէտք է հաստատէ պետութեան մէջ ռամկավար իրաւակարգ, պէտք է լուծէ հողային հարցը, ույժ տայ պիտի արդիւնաբերութեան զարգացման, հանքերի մշակութեան եւայլն եւայլն։

Քաջազնունի հարց է տալիս. «Պէ՞տք է արդեօք, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը ... ձգտի նորից իր ձեռն առնել Հայաստանի պետական ղեկը»։ Եւ պատասխանում է— այո՛, պէտք է ձգտի, որովհետեւ «Դաշնակցութիւնից աւելի կարող ու աւելի ձեռնհաս քաղաքական կազմակերպութիւն» չկայ ասպարիզում։ «Դաշնակցութիւնը եղել է եւ մնում է հայ աշխատաւոր զանգուածների կուսակցութիւն... Դաշնակցութիւնը, իբրեւ ամբողջութիւն, իբրեւ զանգուածային արտայայտութիւն, անկախ կուսակցական ծրագրից ու պաշտօնական դաւանանքից՝ հայ ժողովրդի հարազատ զաւակն է, արիւնը արիւնից եւ ոսկրը ոսկրից... Դաշնակցութիւնը, իրականութեան մէջ, Հայաստանի սահմաններում վարել է մինչեւ այսօր այն քաղաքականութիւնը, որը ամէնից աւելի համապատասխան է եղել հայ աշխատաւոր զանգուածների ընկերային կազմին ու քաղաքական կացութեան, նրանց գիտակցութեան, իրական ձգտումներին ու հասունացած պահանջներին»*)։

Այսպէս մտածում ու գրում էր Քաջազնունին 1922 թուականի յունիս ամսին, իսկ 1923 թուակա–

*) «Ճակատամարտ», 1922 թ., յունիս 1։

նի մարտին նրա մտքերը արդէն ստացել են հետեւեալ ընթացքը**)։

«Եթէ ուզենանք մի ընդհանուր գնահատում անել մեր կատարած ծանր աշխատանքի ու ձեռք բերած արդիւնքների՝ Հանրապետութեան անկախութիւնը հռչակելուց յետոյ, պէտք է ասենք, որ պարծենալու շատ բան չունինք» (այսինքն՝ չունի Դաշնակցութիւնը. Ս. Վ.)։

Մենք (այսինքն Դաշնակցութիւնը) եղել ենք «անկարող, պետական գործերը վարելու անձեռնհաս»։ «Պետական մարդիկ չէինք մենք», այսինքն Դաշնակցութիւնը պետական կուսակցութիւն չէր։ «Երախտապարտ պիտի լինինք բոլշեւիկներին. խորտակելով մեզ՝ նրանք, եթէ չասեմ փրկեցին, գէթ աւելի ապահով վիճակի մէջ դրին մեր կեանքի գործը»։ Բոլշեւիկները «ինձ պէս ու իմ չափ հայ մարդիկ են»։ «Մի՞թէ մենք երբ եւ իցէ կարծել ենք, թէ կարող ենք կազմել իսկապէս անկախ պետութիւն»։ «Հայաստանը պիտի դաշնակցէ Խորհրդային Ռուսաստանի հետ»։ «Բոլշեւիկները պէտք են Հայաստանին»։ «Հ. Յ. Դաշնակցութիւնը այլեւս անզօր ու անպէտք գործիք է իր կեանքի դարը՝ հայ ժողովրդի քաղաքական ազատագրութեան գործը վարելու համար. նա պէտք է վերանայ ասպարէզից ու տեղ տայ հայ բոլշեւիկներին»։ «Դաշնակցական կազմակերպութիւնը... դատապարտուած է մահուան (աւելի ճիշտ՝ մեռած է արդէն)»...

Ես դիտմամբ իր իսկ բառերով առաջ բերի Քաջազնունու զանազան տեղեր եւ տարբեր ժամանակ–

**) Բոլոր կտորները բերւում են Յ. Քաջազնունու գրքից։

ներում արտայայտած կարծիքներն ու դատողութիւնները, առանց իմ կողմից որեւէ մեկնութիւն աւելացնելու: Թո՛ղ ընթերցողը ինքը դատի, թէ արդեօք «հինն» ու «նորը» Քաջազնունու մտածողութեան մէջ եղե՞լ է միշտ նոյնը, արդեօ՞ք այսօր էլ Քաջազնունին մտածում է ճիշտ այնպէս, ինչպէս մտածել է Հայաստանում, Թաւրիզում, Եգիպտոսում կամ Պոլսում...

II

«ՊԱՐԶ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ»

Յ. Քաջազնունու գիրքը կազմուած է երկու մասից: Առաջին մասում նա պատմում է, թէ «ի՞նչ աստիճաններ է անցել հայ քաղաքական դատը 1914 թուականից սկսած, ինչպէ՞ս են զարգացել, դասաւորուել ու միմեանց յաջորդել դէպքերը եւ ո՞ւր են բերել, մասնաւորապէս ի՞նչ է արել մեր կուսակցութիւնը»— Հ. Յ. Դաշնակցութիւնը: Երկրորդ մասում պարզում է մեր կուսակցութեան դերը այսուհետեւ եւ յանգում է այն եզրակացութեան, որ «Հ. Յ. Դաշնակցութիւնը աւելիք չունի այլեւս»:

Իսկապէս Քաջազնունու գիրքը երկու գիրք է՝ կազմուած իրարից բոլորովին անկախ երկու մասերից: Նրա հանած եզրակացութիւնների եւ նախորդ դէպքերի միջեւ չկայ ո՛չ մի օրգանական կապ: Եզրակացութիւնները չեն բղխում արձանագրուած փաստերից, աւելի ճիշտ հայկական ներքին կեանքում կատարուած դէպքերից ու հայ ժողովրդի ցուցահանած քաղաքական-պետական շնորհից: Քաջազնունու եզրակացութիւնները, այսինքն ռուս-թուր-

քական գործօնի դերը մեր կեանքում եւ Ռուսաստանի վերադարձը Կովկաս, որի հետեւանքով եւ Հ. Յ. Դաշնակցութեան «անպէտք գործիք» դառնալը հետեւանք են արտաքին հանգամանքների, չեն պայմանաւորուած հայ ժողովրդի սեփական կամքով, մինչդեռ գրքի առաջին մասը գլխաւորապէս ծանրանում է հայ իրականութեան, կազմակերպութիւնների եւ գործիչների վրայ:

Իմ հասկացողութեամբ Քաջազնունու գրքի արժէքաւոր մասը առաջինն է— պատմական փաստերը, նրանց ըմբռնումն ու գնահատութիւնը, կամ «պարզ ինքնագնահատումը», ինչպէս հեղինակն է որակում: Հետաքրքրական է, թէ Հայաստանի առաջին նախարարապետը ի՞նչպէս է հասկացել այն երեւոյթներն ու գործերը, որոնց խոշոր մասի մէջ ինքն եւս խաղացել է կարեւոր դեր, ինչպէ՞ս է գնահատում կատարուած դէպքերը, նրա համոզումով ի՞նչ սխալներ են գործուել մօտիկ անցեալում, ինչո՞ւ եւ ո՞ւմ կողմից· ինչի՞ց կարելի էր խուսափել եւ որո՞նք ճակատագրական էին ու մեր կամքից վեր: Օգտակար է այս հարցերով զբաղուել, քննադատութեան ու վերագնահատութեան ենթարկել մեր երէկը, հանգամանօրէն պարզել մեր գործի ճիշտն ու սխալը, որովհետեւ «վաղը» բղխում է «երէկից», եւ անհաւանական չէ, որ վաղը նորից տեղի ունենան երէկուայ դէպքերը եւ այդ դէպքերի մէջ նորից դեր խաղան երէկուայ մարդիկ:

Այսպէս որ մօտենալու լինենք դրուած խնդիրին, պարտաւոր ենք նիւթը վերցնել իր ամբողջ ծաւալով, թէ՛ խաւար եւ թէ լուսաւոր կողմերով: Պարտաւոր ենք առարկայօրէն ներկայացնել բոլոր կարեւոր փաստերը, անաչառօրէն վերլուծութեան են-

թարկել եւ ապա եզրակացութիւններ հանել: Քաջազնունին այդպէս չի վարուել: Նա վերցրել է կեանքից իր ուզած ու հաւանած պատառները միայն՝ առանց դիպչելու բազմաթիւ ուրիշ կարեւոր երեւոյթների: Նրան հետաքրքրել է լոկ այն, որը անհրաժեշտ է համարուել իր կանխակալ եզրակացութիւնները հաստատելու համար: Միտումնաւոր պատմարանի պէս, նա ոչ թէ իր գաղափարներն է հանել փաստերից, այլ փաստերն է յարմարցրել գաղափարներին: Եւ սա նրա գրքի ամենաարատաւոր կողմն է: Դրանից, նրա գիրքը դուրս է եկել միակողմանի, նեղսիրտ, աչառու եւ չափից աւելի ենթակայական:

Միւս արատաւոր կողմը Քաջազնունու գրքի զարմանալի անփութութիւնն է դէպի իր արձանագրած ու բացատրած պատմական դէպքերը: Նրա մօտ կը գտնէ՛ք ե՛ւ փաստական անճշտութիւններ, ե՛ւ ժամանակագրական սխալներ, ե՛ւ անտեղի վերագրումներ ու մեղադրանքներ: Այդ է պատճառը, որ նրա եզրակացութիւնները դրուած են յեղյեղուկ աւազի վրայ եւ չեն կարող դիմանալ քննադատութեան: Քաջազնունին արձանագրում է, ինչ որ լսել է եւ գրի է առել, ինչ որ յիշում է— կամ իրեն թըւում է, թէ յիշում է— առանց մի րոպէ կասկածելու լսածի եւ իր յիշողութեան վրայ, առանց նեղութիւն կրելու իր ասածները նախօրօք ճշտելու ու համեմատելու իրականութեան հետ:

Այսպիսի պայմաններում նրա աշխատութիւնը կորցնում է համոզեցուցիչ բնոյթը, եւ, դառնում է գերազանցօրէն միտումնաւոր եւ տեղ-տեղ նոյնիսկ պասկւիլի տպաւորութիւն է թողնում: Մի հանգամանք, որ շատ է ցաւալի, որովհետեւ Քաջազնունին

իր բազմաթիւ սխալներով ու վիճելի կացութիւններով հանդերձ՝ յայտնում է եւ շատ առողջ ու ճշմարիտ մտքեր, մատը դնում է մեր կեանքի վէրքերից շատերի վրայ եւ հարկադրում է մտածել: Քաջազնունու գիրքը մեծ արժէք կ՚ունենար, եթէ նա աւելի լուրջ վերաբերուած լինէր դէպի նիւթը, հրաժարուէր վիճելի եւ անարդար դատավճիռներ արձակելուց, մի կողմ թողնէր իր մի քիչ յաւակնոտ, ու մի քիչ ծիծաղելի մարգարէութիւնները, մոռանար, որ ինքը ինչ որ «պարտք» ունի կատարելիք եւ խորը թափանցէր ընդգրկած շրջանի ճշգրիտ նկարագրութեան եւ մանրազնին ու անաչառ վերլուծութեան մէջ: Պատմարան ու քննադատ Քաջազնունուց մենք շատ բան կարող էինք սովորել. պօլիտիկոս Քաջազնունին միայն ցաւ եւ կարեկցութիւն է առաջ բերում:

Դժբախտաբար, Քաջազնունուն հետաքրքրել է ո՛չ թէ պատմական ճշմարտութիւնը, այլ իր կանխակալ ու բռնազբօսիկ եզրակացութիւնները: Այդ պատճառով նրա գրքի պատմական կամ «ինքնագնահատումների» բաժինը լեցուն է աչք ծակող սխալներով եւ անճշտութիւններով: Շատ դէպքերի էլ վրայից է միայն սահել, առանց մտնելու էութեան մէջ, եւ դժուար է լինում հասկանալ, թէ ինչո՞ւ է այս կամ այն դէպքը արձանագրուած:

Անցնինք, սակայն, նրա փաստերին ու դատողութիւններին, եւ տեսնենք, թէ ի՞նչ ճանապարհով եւ ո՞ւր է տանում նա մեզ:

---

1. Քաջազնունին հէնց սխալով է սկսում իր «ինքնագնահատումները»: «Հ. Յ. Դաշնակցութիւ-

նը, գրում է նա, հակառակ իր Ընդհանուր Ժողովին, որ հազիւ մի քանի շաբաթ առաջ՝ Էրզրումում, բացասական որոշում էր տուել — գործօն մասնակցութիւն ունեցաւ թէ (կամաւորական) խմբերի կազմակերպման եւ թէ նրանց յետագայ ռազմական գործողութիւնների մէջ Թուրքիայում... Մենք ամենամեծ չափերով մասնակից ենք եղել կամաւորական շարժման եւ այդ արել ենք հակառակ կուսակցական կամքը արտայայտող Ընդհանուր Ժողովի որոշման»:

Ընդգծում եմ «բացասական» եւ «հակառակ» բառերը եւ, իբրեւ մէկը, որ մասնակցել է Էրզրումի Ընդհանուր Ժողովին, հաստատում եմ, ո՛ր Էրզրումում ո՛չ բացասական եւ ոչ դրական որոշում չի տրուած կամաւորական շարժման մասին, հէնց այն պարզ պատճառով, որ այդ հարցը Ընդհ. Ժողովի քննութեան նիւթ էլ չի եղել: Էրզրումի Ընդհ. Ժողովը գումարուեց յուլիսի կէսերին: Այն ժամանակ դեռ կարելի չէր ոչ պարզուելիք դէպքերի բնոյթը որոշել եւ ոչ ծաւալը: Ընդհ. Ժողովը հնարաւոր սխալներից խուսափելու համար սահմանափակուեց միայն ընդհանուր խօսքերով եւ ընտրեց յատուկ մի մարմին, որը յետագային պէտք է որոշէր կուսակցութեան կոնկրէտ անելիքները: Հետեւաբար եւ կամաւորական շարժումը, որ այն օրերին դեռ չէր գուշակւում, պիտի լուծում ստանար այս մարմնից: Յետագային, դէպքերի արագ զարգացման եւ յարաբերութիւնների փակման պատճառով յատուկ մարմինը չկարողացաւ մէկտեղուել, եւ կուսակցական տեղական մարմիններին մնաց այս կամ այն ընթացքին հետեւելու վճիռ տալը:

Քաջազնունին Էրզրումի Ընդհ. Ժողովին հակա-

կամաւորական որոշում է վերագրում նրա համար, որ դրանից եզրակացնի, թէ՝ «Դաշնակցութիւնը, Անդրկովկասի մէջ, անցեալներում էլ եղել է ո՛չ այնքան հեղինակ ու նախաձեռնող, որքան հետեւող այն շարժումների, որոնք առաջ են եկել իրանից անկախ»: Ենթադրենք մի րոպէ, թէ այդ այդպէս է. ի՞նչ վիրաւորական բան կայ դրա մէջ: Քաղաքական կուսակցութեան դերն է՝ հասկանալ ժողովրդական զանգուածների տրամադրութիւնները, ներքին բընազդով ըմբռնել կեանքի մէջ հասունացող խնդիրները, գիտակցել տարերային կերպով սկսուող շարժումները եւ նրանց ընթացք եւ ուղղութիւն տալ համաձայն իր հիմնական սկզբունքների: Ենթարկուելով ընդհանուր հոգեբանութեան, հետեւելով իրենից անկախ առաջ եկած շարժումներին՝ Դաշնակցութիւնը գոյն ու բովանդակութիւն է տուել, վարել է այդ շարժումները: Դրան ապացոյց հէնց Քաջազնունու յիշած դէպքերը — եկեղեցական կալուածների գրաւման առթիւ ցոյց տրուած դիմադրութիւնը, հայ-թաթարական ընդհարումները, բանուորական շարժումները եւայլն: Հարցը այն չէ, թէ նա հետեւել է, այլ, թէ արդեօք դրանով կարողացե՞լ է հետապնդել իր հիմնական նպատակները, իրագործել իր ծրագրի այս կամ այն կէտը: Եւ — հետաքրքիր է — ո՞ր կուսակցութիւնն է աշխարհում, որ այդպէս չի վարւում: Կուսակցութիւնները եւս առանձնասենեակներում գաղափարներ յղանալու համար չեն ստեղծւում: Նրանց նպատակը կեանքի ընկերային գործնական պահանջներին գոհացում տալն է: Ընկերային խոշոր շարժումները, մեծ մասամբ, առաջ են գալիս տարերային կերպով, եւ կուսակցութիւնները օգտագործում են այդ՝ ի-

րենցից առաջ ստեղծուած տարերային շարժումները եւ իրենց նպատակներին համապատասխանող ձեռնարկներ կատարում :

2· Խօսելով 1915–16 թուականի դէպքերի, հայ գաղթականութեան եւ ռուսական նահանջների ու սրանց զուգընթաց հայ հասարակութեան տրամադրութեան մէջ առաջ եկած ելեւէջների մասին՝ Քաջազնունին համարում է հայ հասարակութիւնը թեթեւամիտ ու տհաս, որ իր դժբախտութիւնները բացատրում էր լոկ ռուս քաղաքականութեան նենգութիւններով: Եւ այստեղ էլ Քաջազնունին կանգնում է սխալ հողի վրայ: Որ թեթեւամիտ տարրեր կային հայ հասարակութեան մէջ, ոչինչ չկայ զարմանալու, բայց որ Դաշնակցութիւնը եւ, առհասարակ, հայ ժողովրդի ղեկավար շրջանները իրաւունք ունէին դժգոհելու, զայրանալու եւ բողոքելու ռուս կառավարութեան դէմ, այդ էլ ամենեւին զարմանալի չէ :

Քաջազնունու խօսքերից այնպէս է դուրս գալիս, որ ռուս կառավարութիւնը 1914–ին, կամաւորական խմբեր կազմելու նախօրեակին, ո՛չ մի յանձնառութիւն չի ստանձնել հայ ժողովրդի հանդէպ եւ որ, իբր թէ, մենք «մեր սեփական ցանկութիւնները դրել էինք ուրիշի մէջ, մեզ հաճելի իմաստ էինք տալիս անպատասխանատու մարդկանց անորոշանդակ խօսքերին»: Քաջազնունին չի կարող պնդել, որ Կովկասի փոխարքայ Վորոնցով–Դաշկովը եւ Ռուսաստանի ցարը «անպատասխանատու մարդիկ» էին, եւ ահա այդ երկու պարոններն էին, որ շատ որոշ կերպով յայտարարում էին հայ ազգի ներկայացուցիչներին, թէ նրանք խոստանում են իրագործել հայկական բաղձանքները Քաջազնունուն յայտնի

բանաձեւով: Նոյ· 11–ին, Թիֆլիսում, Հայոց կաթողիկոս Գէորգ Ե.–ի հետ ունեցած տեսակցութեան ժամանակ ցար Նիկոլայը յայտնել էր դարձեալ, որ ինքը խոստանում է կատարել հայ ժողովրդի ցանկութիւնները, այն ձեւով, ինչ ձեւով որ նրանք արտայայտուել են Կաթողիկոսի կողմից:

Քաջազնունին այսօր կարող է առարկել, թէ սրանք առանձնասենեակներում ասուած խօսքեր են եւ մէջտեղը վաւերաթուղթ գոյութիւն չունի: Նախ՝ Քաջազնունին հէնց իր ծանր փորձերից գիտէ, թէ միջազգային յարաբերութիւնների մէջ ի՞նչ արժէք ունին եւ վաւերաթղթերը· Սեւրի յիշատակը դեռ կենդանի է: Իսկ երկրորդ՝ Քաջազնունին գիտէ նաեւ, թէ, ի միջի այլոց Հայոց Ազգային Բիւրօն ինքն էր, որ շատ վճռական կերպով — Քաջազնունուն յայտնի պատճառներով — սկզբի շրջանում հակառակում էր հրապարակային ցոյցերից ու հռովարտակներից: Պատերազմի առաջին ամիսներին ռուս կառավարութիւնը կամենում էր լեհացիների օրինակով, հայերին եւս հռովարտակ ուղղել, եւ հայ գործիչներն էին, որ վնասակար ու անցանկալի էին համարում :

«Իլլիւզիայի մի անթափանցիկ մթնոլորտ էինք ստեղծել մեր մտքի շուրջը», ասում է Քաջազնունին: Եթէ ստեղծել էինք էլ, խիստ կարճ ժամանակով: Շատ շուտով ամէնքի աչքերը բացուեցին եւ հասկանալի դարձաւ, որ ռուս կառավարութիւնը Հայաստանում ինչ նենգ քաղաքականութեան է հետամուտ լինում: Եւ չարաչար սխալւում է Քաջազնունին, երբ 1915–16 թուականի ռուս զինուորական յառաջխաղացումներն ու նահանջները միայն ռազմագիտական նկատումներով է բացատրում: «Քա–

ղաքականապէս տհաս ու մտքով անհաւասարակշռուած» լինելու բնաւ պէտք չկայ տեսնելու համար, որ ռուս զինուորականների քայլերի մէջ ռազմագիտութիւնից զատ կար եւ քաղաքականութիւն — այն քաղաքականութիւնը, որի հեղինակն է համարւում Լօբանօվ–Ռոստովսկուն: Այս պարագան բոլորովին անվիճելի դարձաւ 1916–ին, երբ Դաշնակիցների կողմից Թուրքիայի եւ Պարսկաստանի բաժանման հարցը մէջտեղ դրուեց: Այդ ժամանակից սկսած ռուսների վերաբերումը դէպի հայերը կտրուկ կերպով փոխուեց, կամաւորական գնդերը, որոնց քաջութիւնը մինչեւ այդ համարւում էր ամէն գովեստից վեր, յանկարծ դարձան աւելորդ եւ լուծուեցին, հակառակ որ քիչ առաջ նոր գնդեր կազմակերպելու հրաման էր տրուած: Հայ քաղաքացիական պաշտօնէութիւնը թիկունքից հեռացուեց. Վանի, Ալաշկերտի եւ միւս շրջանների հայկական վարչութիւնը վերացուեց, եւ մէջտեղ եկաւ Եփրատեան կազմակերպութեան ծրագիրը: Հայկական ինքնավար շրջանի փոխարէն հաստատուեց գէնէրալ Պէշկօվի ընդհանուր նահանգապետութիւնը, որի գաղտնի հրամաններից շատերը, ինչպէս նաեւ վարչական կանոնադրութիւնը ժամանակին եղել է հայ գործիչների ձեռքին: Շեշտուած հակահայ կազմակերպութիւն էր այդ ընդհանուր նահանգապետութիւն կոչուածը, եւ գէն. Պէշկօվը իր պաշտօնեաներին հրաման էր տուել պատերազմի ընթացքում դրաւուած վայրերը մաքրել տեղական ազգաբնակութիւնից եւ, առաջին հերթին, հայերից՝ Ռուսաստանից գաղթելիք ազգաբնակութեան տեղ պատրաստելու նպատակով: Ահագին տարածութիւններ Վանի լճի

եզերքին, Մանազկերտի ու Խնուսի կողմերը, Ռիզայի ծովափին վերապահուած էին իբրեւ բաժին պատերազմին մասնակցող զինուորականների եւ ծառայողների համար:

Քաջազնունին, որ այդ ժամանակ պաշտօնեայ էր Հայոց Ազգ. Բիւրօում եւ պատրաստում էր Սահմանադրութիւնը ապագայ ինքնավար Հայաստանի — Բայազէթից մինչեւ Ալէքսանդրեթ — այս ամէնը, անշուշտ, գիտէ: Գիտէ նաեւ, թէ ինչ ոճրագործ հակահայ վերաբերում էին ցոյց տալիս գէն. Զէրնօզուբօվները, իշխան Խախօվսկիները, գէն. Պէշկօվները: Ինքն էլ է ուրիշների հետ միասին վրդովուել այդ մարդկանց կատարած քայլերի համար, ծանօթ է Ազգային Բիւրօին հասնող բազմաթիւ փաստերին, որոնք ցոյց էին տալիս, թէ ինչպէս այս ու այն հրամանատարը արհեստական նահանջներով գաղթեցնում ու թալանում էր հայ ժողովրդին: Եւ գիտէ— գոնէ այն ժամանակ գիտէր, բայց այսօր գալիս է ասելու, թէ «կոյր ու անհիմն է մեր մեղադրանքը»՝ ռուս կառավարութեան հասցէին:

Ո՛չ, կոյր ու անհիմն չէ: Ճի՛շտ է, որ «ռուսները խաբեցին ու դաւաճանեցին մեզ»: Ճի՛շտ է, որ «ռուսները այդպէս արին, որպէսզի ամայացնեն Հայաստանն ու կօզակներ նստեցնեն այնտեղ»: Սրանք ծանօթ ու հաստատուած փաստեր են եւ մնում է զարմանալ, թէ Քաջազնունին ինչպէ՞ս է առարկում դրանց:

Քաջազնունին հեղնանքով է խօսում եւ անգլիացիների Անդրկովկասում հետեւած քաղաքականութեան առթիւ հայ հասարակութեան մէջ առաջ եկած դժգոհութիւնների մասին. «Ի հարկէ, գրում

է նա, գանգատուեցինք գաղտնօրէն անգլիացիներից, ասինք. ապերախտ են այս մարդիկ: Դա ամենահեշտ միջոցն էր՝ մեզ անհասկանալի երեւոյթները բացատրելու համար: Ապերախտ են, ասինք, ու սրտերս թեթեւացրինք, այլեւս չորոնեցինք այդ ապերախտութեան աղբիւրները»:

Անարդար է Բաջազնունին: Ճիշտ չէ նրա ասածը: Դժգոհեցինք, ի հարկէ, անգլիացիների վերաբերմունքից, որովհետեւ դժգոհելու լուրջ հիմքեր կային: Բազմաթիւ օրինակներից յիշենք, անգլիացիների վարմունքը, թէկուզ Զանգեզուրի հարցում: Իրաւունք չունէի՞նք դժգոհելու եւ բողոքելու: Հէնց Բաջազնունին ինքը Հայաստանի կառավարութեան կողմից ընդհանուր կոմիսար էր ուղարկել Գորիս եւ պատուիրել ամէն գնով Զանգեզուրը Հայաստանի մաս պահելու: Ինչո՞ւ: Որովհետեւ նա շատ լաւ հասկանում էր, որ Զանգեզուրը Հայաստանի պետականութեան էական պայմաններից մէկն էր: Եւ ահա Հայաստանի պետականութեան այդ էական մէկ պայմանը անգլիացիք աշխատում էին խլել հայերից եւ յանձնել ադրբէջանցիներին: Բնական չէ՞ր, որ անգլիացիների այդ վարմունքը համարուէր վրդովեցուցիչ եւ բողոք առաջ բերէր:

Սխալւում է, սակայն, Բաջազնունին, թէ անգլիացիների արածները մեզ համար «անհասկանալի երեւոյթներ» էին եւ որ մենք «չորոնեցինք այդ ապերախտութեան աղբիւրները»: Եթէ Հայաստանի ներկայ վարիչները չեն այրել եւ պարսիկ խանութպաններին չեն ծախել Հայաստանի Հանրապետութեան բոլոր արխիւները, երեւի, մնացած կը լինին այն բազմաթիւ գրութիւնները, ոմանք, թերեւս, եւ Բաջազնունու ստորագրութեամբ, որոնք կը հաս–

տատեն, թէ ինչպիսի՛ յամառութեամբ Հայաստանի այն ժամանակուայ կառավարութիւնը աշխատում էր պարզել եւ առաջը առնել անգլիական վնասակար քաղաքականութեան: Բաջազնունին կարող է գտնել նաեւ Հ. Հ. Պատուիրակութեան Փարիզի արխիւներում մէկից աւելի նամակներ կառավարութեան արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանեանի ձեռքով գրուած, որոնք ապացուցանում են, որ մենք ոչ միայն աշխատել ենք «մեզ անհասկանալի երեւոյթները բացատրել», այլ եւ պայքարել ենք նրանց դէմ: Բաջազնունին գիտէ, որ այդ պայքարի հետեւանքով էր, որ Լորտ Քըրզընը անգլիական կառավարութեան անունից սպառնալիք ուղղեց Հ. Հ. Պատուիրակութեան հայերի Ղարաբաղում ու Զանգեզուրում վարած «հակաանգլիական քաղաքականութեան» համար: Եթէ Բաջազնունին նեղութիւն քաշէր վերյիշելու իր կառավարութեան այդ ուղղութեամբ կատարած քայլերը, արած դիմումները, գրած նամակներն ու տեղեկագրերը, տուած հրահանգները, եթէ քրքրէր Հ. Հ. Պատուիրակութեան «գործ»–երը, անշուշտ, չէր գրի՝ այս անհասկանալի ե՛ւ անհունօրէն անարդար խօսքերը— «սրտերս թեթեւացրինք, այլեւս չորոնեցինք, այդ ապերախտութեան աղբիւրները»:

Եւ այն ժամանակ — 1918–ին— եւ ա՛յժմ մենք շատ լաւ ըմբռնում ենք անգլիացիների քաղաքականութեան իմաստը: Այլ բան է անզօր կամ դժգոհ լինել այդ քաղաքականութիւնից, այլ բան է՝ հասկանալ նրա դրդիչները: Հասկանալով հանդերձ՝ մենք դժգոհ էինք եւ հակառակում էինք նրան, որովհետեւ տեսնում էինք, որ այդ քաղաքականութիւնը, որ, թերեւս, համապատասխանում էր անգ–

լիական շահերին, հակասում էր հայ ժողովրդի զարգացման կենսական պայմաններին։

3. «Մեր կուսակցութիւնը, ասում է Քաջազնունին, յատկապէս պէտք է գիտենայ ու յիշի, որ մեր ամենատագնապալի օրերին նա ապրել ու գործել է վրաց սօցիալ-դեմոկրատների հեգեմօնայի տակ, քարշ է եկել նրանց փէշը բռնած»։ Ճի՛շտ է, եւ ինքը՝ Քաջազնունին մէկն է եղել այն գործիչներից, որոնք անհրաժեշտ են համարել — ասենք իր խօսքերով — «քարշ գալ վրաց սօց.-դէմօկրատների փէշը բռնած»։

Բայց ինչո՞ւ էր այդ այդպէս։ Քաջազնունին տալիս է դրա բացատրութիւնը, եւ մենք կատարելապէս համաձայն ենք նրա հետ։ Վրացիները ամէն տեսակէտից մեզանից աւելի նպաստաւոր վիճակի մէջ էին— եւ այսօր էլ են — եւ բնական է, որ նրանց ազդեցութիւնը աւելի մեծ էր։ Անբնական չէր եւ այն, որ մենք նրանց «փէշից էինք քարշ գալիս», որովհետեւ հայ ժողովուրդը պէտք ունէր այդ «փէշին»։ Ընկած դէպի մեզ թշնամաբար տրամադրուած մահմեդական ծովի մէջ, լքուած ռուսներից՝ մենք մնացել էինք մենակ եւ հասկանալի է, որ պիտի որոնէինք բարեկամներ։ Ինչ եւ լինին վրաց թերութիւնները, մեր եւ նրանց բարեկամութիւնը օգտակար էր հայ ժողովրդի համար եւ, այո՛, յաճախ, նոյնիսկ նուաստացուցիչ ձեւերով մենք «քարշ էինք գալիս նրանց փէշից»։ Այդ միայն կարող է պատիւ բերել Դաշնակցութեան խոհականութեան, քաղաքական տակտին եւ բնաւ երբեք նուաստացուցիչ չէ նրա համար։

Բայց հարցնենք Քաջազնունուն. այդ տեսակէտից նոյնը չէ՞ եւ այսօր։ Արդեօք հայ ժողովուրդի

բարեկեցութիւնը մեծ չափով կախուած չէ՞ Թիֆլիսից ու Վրաստանից։ Եւ արդեօք հայ բոլշեւիկները «քարշ չե՞ն գալիս վրացի բոլշեւիկների փէշից»։ Կացութիւնը ոչ միայն տարբեր չէ, այլ նոյնիսկ աւելի վատթար. վրաց հէգէմօնիան, այս անգամ կոմունիզմի անուան տակ, շարունակւում է, եւ վրացի բոլշեւիկները «շատ վարպետօրէն (աւելացնեմ նաեւ՝ ցինիկաբար) օգտւում» են իրենց նպաստաւոր դիրքից։ Եւ եթէ մեր պայմաններում— ընդհանուր քաօսի ու փոթորկի մէջ— այդ հէգէմօնիան հասկանալի էր ու տանելի, այժմ նա շատ աւելի պակաս է հասկանալի ու տանելի։ Այդ փաստը ե՛ւ առաջ, եւ այժմ ցոյց է տալիս մի բան, որ Հայաստանի աշխարհագրական աննպաստ դրութիւնը թելադրում է հայ ժողովրդին հասկացողութեան ընդհանուր լեզու գտնել եւ հաշտ ու բարեկամաբար ապրել վրացիների հետ եւ ո՛չ թէ է՛լ աւելի գրգռել ու վատացնել փոխյարաբերութիւնները։

4. «Համառուսական Սահմանադիր Ժողովը, չգումարուեց, գրում է Քաջազնունին, բոլշեւիկեան յեղափոխութիւնը... Թոյլ չտուեց, որ հաւաքուի դէմօկրատական սկզբունքներով ընտրուած Սահմանադիր Ժողովը»։ Ինչպէ՞ս թէ չգումարուեց։ Սահմանադիր Ժողովը բացուեց Պէտրօգրադում 1918 թ. յունուար 5-ին։ Ժողովին մասնակցեցին եւ բոլշեւիկները։ Սահմ. Ժողովը նոյնիսկ ընդունեց մի քանի օրէնքներ։ Առաջին օրէնքով Ռուսաստանը յայտարարուեց Ռամկավար Դաշնակցական Հանրապետութիւն։ Երկրորդ ընդունուած օրէնքը հողերի համայնացման օրէնքն էր։ Դրանից յետոյ էր, որ տեսնելով, թէ իրենք փոքրամասնութեան մէջ են եւ չեն կարողանում իրենց տեսակէտները անց-

կացնել՝ բոլշեւիկները զինուած նաւաստիների ուժով ցրեցին Սահմանադիր ժողովը: Այս Սահմ. ժողովը փոխադրուեց Ուֆա եւ մի առ ժամանակ էլ այնտեղ շարունակեց իր աշխատանքները:

5. «Անդրկովկասը... չուզեց ճանաչել խորհրդային կարգերն ու իշխանութիւնը»: Ինչո՞ւ:

Բաջազնունին երեք պատճառ է թւում: Նախ՝ որովհետեւ Կովկասի «դերիշխող կուսակցութիւնները կանգնած էին լայն ռամկավարական տեսակէտների վրայ», իսկ բոլշեւիկները կողմնակից էին տիկտատուրային: Ապա՝ որովհետեւ «բոլշեւիկեան Մոսկուան անջատուած էր Անդրկովկասից հակաբոլշեւիկեան Դոնով, Կուբանով ու Հիւսիսային Կովկասով»: Եւ, վերջապէս, այն պատճառով, որ «Անդրկովկասի քաղաքականութեան ուղղութիւն տուող վրացի մենշեւիկները՝ կուսակցօրէն՝ կատաղի հակառակորդ էին իրանցից անջատուած բոլշեւիկներին», «Մուսաւաթը»... ձգտում էր օր առաջ կտրել բոլոր կապերը Ռուսաստանի հետ, իսկ Դաշնակցութեանը «ոչ բոլշեւիկեան իտէօլօգիան, ոչ էլ գործելակերպը չէին հրապուրում»: Բաջազնունին աչքաթող է արել այն գլխաւոր պատճառը, որից բղխում էր Դաշնակցութեան հակառակութիւնը բոլշեւիզմին: Դա բոլշեւիկների վերաբերումն էր դէպի պատերազմի շարունակութիւնն ընդհանրապէս եւ Կովկասեան ճակատն ու Թրքահայոց հարցը, ի մասնաւորի:

Ինչպէս յայտնի է, բոլշեւիկները հրապարակ իջան հակապատերազմական նշանաբաններով եւ սկսեցին քայքայել ռազմաճակատը: Բոլշեւիկեան յեղաշրջման օրերին ռուսական ճակատը գտնւում էր Երզնկայից ու Բիթլիսից այն կողմ, այսինքն՝ գրե-

թէ ամբողջ Թրքահայաստանը գրաւուած էր: Ժամ. կառավարութիւնը 1917 թ. ապր. 27-ի հրամանագրով Թրքահայաստանի գրաւուած վայրերը «վերացրեց Կովկասի իշխանութեան եւ ռազմաճակատի զինուորական հրամանատարութեան տնօրինութիւնից եւ ենթարկեց անմիջապէս իրեն՝ ժամ. կառավարութեան»: Ըստ այդ հրամանագրի, կառավարութիւնը նշանակելու էր «Թրքահայաստանի ընդհանուր կոմիսար», որ ունենալու էր քաղաքացիական մասի մէկ օգնական: Թրքահայաստանի ընդհանուր կոմիսարը իր քաղաքացիական մասին զեկուցումով պիտի առաջարկէր ժամ. կառավարութեան օրինագիծ «Թրքահայաստանի կազմութեան եւ վարչութեան համար»: Թրքահայաստանի կոմիսար նշանակուեց զօր. Ավերիանօվը, իսկ քաղաքացիական մասի օգնական՝ բժ. Յ. Զաւրեանը: Հայ գաղթականութիւնը սկսեց վերադառնալ իր տեղերը: Վան, Մուշ, Էրզրում եւ միւս շրջանները նշանակուեցին կառավարիչներ հայ գործիչներից: Երկիրը կամաց-կամաց սկսեց կենդանանալ ու վերակազմուել: Բազմաթիւ հիասթափութիւններից ու տառապանքներից յետոյ հայ ժողովուրդը սկսեց հաւատալ իր ապագային: Հայկական ինքնավար շրջան կազմելու առաջին գործնական քայլն էր արւում:

Ժամ. կառավարութիւնը եւ, մանաւանդ, Ա. Կէրէնսկին, բարեացակամ դիրք էին բռնել դէպի Թրքահայկական հարցը: «Մենք չենք կարող պարպել Հայաստանը, որովհետեւ այն ժամանակ ոչինչ չի մնայ. նա կը կորչի Թուրքերի եւ քրդերի դանակի տակ», յայտարարում էր Կէրէնսկին Խորհուրդների համագումարի յունիս 8-ի նիստում բոլշեւիկ-

ների քննադատութիւնների դէմ ուղղուած իր մի ճառում, եւ ներկաները փոթորկալից ծափերով վաւերացնում էին այդ խօսքերը: Բոլշեւիկներն, ընդհակառակը, կատաղի յարձակումներով պահանջում էին անմիջապէս պարպել Թրքահայաստանը եւ ռուս բանակը յետ քաշել: Բոլշեւիկները մեղադրում էին Ժամ. կառավարութիւնը աշխարհակալական յանցանքների մէջ եւ պահանջում էին յանուն «ազգերի ինքնորոշման» «պարպել ռուսական Իրլանդիան»—*) Հայաստանը: Լէնինը սօցիալիստ–յեղափոխականների եւ մէնշեւիկների դէմ մղած բանակռւում յաճախ շահագործում է Հայաստանի անունը եւ առանց մազաչափ իսկ ծանօթ լինելու հայկական իրականութեան՝ անվերջ կրկնում է գրաւուած վայրերը դատարկելու պահանջը: Նրա մտքովն իսկ չի անցնում, որ այն ժամանակուայ պայմաններում հեռացնել ռուս զօրքը Հայաստանից նշանակում էր անգէն հայ ժողովրդին յանձնել քրտերի եւ Թուրքերի կամքին...

Հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ բոլշեւիկները դիմեցին իրենց ծրագրի իրագործման— բանակի քայքայման: Երզնկայից, Բիթլիսից եւ Ռէվանդուզից՝ ռուս զօրքը խուժեց դէպի թիկունք:

---

*) Տե՛ս Ն. Լէնին, «Երկերի Ժողովածու», հատոր XIV, էջ 230–31, 308, 311: Լէնինն իր ճառերի եւ յօդուածների մէջ ամէն քայլափոխին յիշում է «մարտիրոս» եւ «նահատակ» «իմպէրիալիստների զոհ» Հայաստանը եւ յամառօրէն պահանջում է Հայաստանի անկախութիւնը վերականգնելու համար հեռացնել ռուսական զօրքերը հայկական նահանգներից:

Թրքահայկական գաւառների ժողովրդի համար սարսափելի աղէտ եղաւ այդ, իսկ Թրքահայոց հարցի համար՝ մահացու հարուած: Այդ ամէնի հանդէպ, Լէնինը՝ ցինիկ խուժանավարութեամբ հրատարակեց ... Թրքահայաստանի անկախութեան դէկրէտը:

6. Մի քիչ տարօրինակ են եւ բացատրութեան կարօտ Քաջազնունու յուզուած արտայայտութիւնները Կարսի յանձնման «դաւադրական հրամանի» առթիւ: Յուզուելու եւ վրդովուելու իրաւունք ունէին նրանք, որոնք դէմ էին Բրէստ–Լիտովսկի պայմանները ընդունելուն եւ կողմնակից՝ պատերազմը շարունակելուն մինչեւ վերջին փամփուշտը: Քաջազնունին դրանց մէջ չէր: Նա գտնում էր, որ ամէն ինչ կորցնելուց լաւ է հաշտութիւն կնքելը, թէկուզ, Բրէստ–Լիտովսկի պայմաններով: Եւ դեռ Տրապիզոնում, Զինկէլի հետ միասին, համաձայնուել էր Կարսը տաճիկներին յանձնելու: Բացի այդ, Տրապիզոնից վերադառնալուց յետոյ, Թիֆլիսում եւ Ալեքսանդրապօլում նա մեծ ջանք էր թափում համոզելու համար, որ Կարսը յանձնենք տաճիկներին, որովհետեւ առանց դրան կարելի չէ հաշտութիւն կնքել: Եւ, վերջ ի վերջոյ, Զինկէլի–Քաջազնունու թէզն էր, որ յաղթանակեց. գործից քաշուեց Գէգէճկօրի–Կարճիկեան կառավարութիւնը, որ հակառակ էր Կարս–Բաթումը զիջելուն, եւ կազմուեց Զինկէլի–Քաջազնունի կառավարութիւնը, որ պատրաստ էր Կարսն ու Բաթումը կորցնելով՝ հաշտուելու տաճիկների հետ: Սրանից յետոյ ինչպէ՞ս կարելի է «դաւադրական» անունը տալ Կարսը յանձնելու համար Զինկէլի տուած հրամանին: Այդ հրամանը, տրուած էր հապճեպով,

կամայական ձեւով, բայց ըստ էութեան նա ո՛չ մի նոր ու գաղտնի բան չէր պարունակում: Եւ եթէ հոգեբանական հասկանալի պատճառներով ա՛յն ժամանակ ներելի էր աղմուկ հանել, այսօր հօ կարելի է մի քիչ աւելի պաղարիւն կերպով արտայայտուել:

7. Քաջազնունին գրում է. «Մայիս 26-ին... Վրաց Ազգ. Խորհուրդը՝ մեծ հանդիսաւորութեամբ՝ յայտարարեց Վրաստանի անկախութիւնը: Հետեւեալ օրը նոյնն արաւ եւ Ազրբէջանը... Մայիս 28-ին ուշ գիշերով (հայոց) Ազգային Կենտրոնական Խորհուրդը վճռեց յայտարարել Հայաստանի անկախ Հանրապետութիւն եւ իրան՝ գերագոյն իշխանութիւն Հանրապետութեան»:

Այդ ճիշտ չէ. Նախ՝ Ազրբէջանի հանրապետութիւնը յայտարարուեց ոչ թէ «հետեւեալ օրը»՝ մայիս 27-ին, այլ մայիս 28ին: Երկրորդ՝ Հայոց Ազգ. Խորհուրդը Հայաստանի անկախութիւն չէ յայտարարած: Ընդհակառակը, անկախութեան հարցը նիւթ եղաւ երկար եւ յուզումնալից վիճաբանութեան, բայց Ազգ. Խորհուրդը սիրտ չարաւ հարեւանների օրինակին հետեւելու. ոչ ոքի բերանին չէր գալիս «անկախութիւն» բառը: Ձայների մեծամասնութեամբ մերժելով անկախութեան յայտարարութեան առաջարկը, որ գալիս էր Դաշնակցութեան թեան հատուածից, Ազգ. Խորհուրդը մայիս 30-ին իրեն յայտարարեց «Հայկական գաւառների գերագոյն իշխանութիւն» եւ հրատարակութեան տուեց հետեւեալ «Յայտարարութիւնը».—

«Անդրկովկասի քաղաքական ամբողջութեան լուծումով եւ Վրաստանի ու Ազրբէջանի անկախութեան հռչակումով ստեղծուած նոր դրութեան հան-

դէպ Հայոց Ազգային Խորհուրդը իրեն յայտարարում է հայկական գաւառների գերագոյն եւ միակ իշխանութիւն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մօտիկ օրերում կազմել Հայոց Ազգային կառավարութիւն, Ազգային Խորհուրդը ժամանակաւորապէս ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները հայկական գաւառների քաղաքական եւ վարչական ղեկը վարելու համար: 1918 թ. մայիսի 30, Թիֆլիս: Հայոց Ազգ. Խորհուրդ»:

Սրանից երեւում է, որ Ազգ. Խորհուրդը միայն արձանագրում էր իր կամքից անկախ ստեղծուած փաստական դրութիւնը եւ ժամանակաւորապէս կառավարական պաշտօն էր ստանձնում: Անկախութեան ո՛չ մի նշան չկայ այս յայտագրի մէջ:

8. Հայաստանի Հանրապետութեան առաջին շրջանի մասին խօսելիս՝ Քաջազնունին երկարօրէն կանգ է առնում Դաշնակցութեան դիկտատորական ձգտումների վրայ եւ դրանով է բացատրում մի շարք անյաջողութիւններ, ինչպէս նաեւ «անկեղծ կօալիսիօն» ստեղծելու անկարելիութիւնը: Որ Դաշնակցութեան մէջ այդպիսի ձգտում կար, ի հարկէ, փաստ է: Մեր երիտասարդութիւնը եւ պետական գործիչները, առհասարակ, դաստիարակուած են ռուսական յեղափոխութեան գաղափարներով, իսկ ոմանք էլ ազդուած են երիտասարդ-Թուրքերի գործելակերպից: Այս երկու հոսանքներին էլ յատուկ է դիկտատորական ոգին, «քօմիթաճիութիւնը»: «Յեղափոխական» կամ «կուսակցական» դիկտատուրայի հմայքին մեծ ոյժ էր տալիս եւ Ռուսաստանի անմիջական օրինակը: Ասել, թէ Հայաստանը գործնականում զուտ ռամկավար հանրապետութիւն էր, կը լինէր սխալ: Բայց նոյնքան սխալ են եւ Քաջազնու-

նու տուած մեկնութիւնները: Ռամկավարութեան ու կոալիսիոնի մասին գրելիս Քաջազնունին մոռանում է հայկական իրականութիւնը, ուր առաջին պայմանը ուժեղ իշխանութեան հաստատման անհրաժեշտութիւնն էր: Կարո՞ղ էր Քաջազնունին իր առաջարկած դեղատոմսով ունենալ ուժեղ իշխանութիւն, երբ Դաշնակցութիւնից զատ փաստօրէն ուրիշ կուսակցութիւն գոյութիւն չունէր Հայաստանում:

Քաջազնունին անտես է առնում այն պարագան, որ ամենառամկավար երկիրներում անգամ, ինչպիսին են Անգլիան, Ամերիկան, արտախորհրդարանական միջամտութիւնները յաճախակի երեւոյթներ են: Ռամկավար Ամերիկայում կուսակցութիւններն են վարում ու հսկում պետական քաղաքականութեան վրայ: Ճերմակ Տունը, նախարարութիւնները, պետական բարձր պաշտօնէութիւնը ամբողջապէս կուսակցական են, եւ երբ մի կուսակցութիւն իշխանութիւնն իր ձեռքն է առնում, ամէնից առաջ ամէն տեղ դնում է իր պաշտօնները:

Ռամկավարութեան դասական հայրենիք Անգլիայում եւս, պետական գործերը իրապէս կենտրոնացած են կուսակցութիւնների ձեռքին, եւ դեռ նոր էր, որ տեղի ունեցաւ Քարլթըն Ակումբի յայտնի coup d'etat-ն, պետական հարուածը, երբ աջ պահպանողականների «արտախորհրդարանական դաւադրութեան» հետեւանքով տապալուեց Լլոյդ Ջորջի դահլիճը եւ կառավարութեան պետ նշանակուեց Բօլտուինը: Ինչե՛ր կը գրէին ու կը խօսէին հայ գործիչներն ու հրապարակախօսները, եթէ Քարլթըն Ակումբի դէպքը պատահէր Հայաստանում:

Այսպիսի դէպքեր յաճախ են պատահում ռամկավար երկրներում, եւ կուսակցութիւնների հըսկողութիւնն ու միջամտութիւնը պետական գործերի մէջ սովորական է այնտեղ: Եւ ի զուր է կարծում Քաջազնունին, որ ռամկավարութիւնն ու կուսակցականութիւնը անյարիր, միմեանց ժխտող երեւոյթներ են: Առողջ կուսակցականութիւնը բղխում է հէնց ռամկավարութեան էութիւնից: Հարցը ո՛չ թէ իշխանութեան կուսակցական կազմի կամ կուսակցական միջամտութեան մէջ է, այլ պետական քաղաքականութեան ձեւի, որ գրեթէ ամբողջապէս կախուած է ժողովրդի հասունութեան աստիճանից: Հայաստանը Անգլիա չէ, այդ պատճառով այն երեւոյթները, որոնք Անգլիայում անցնում են աննշմար կամ առանց վնասի, Հայաստանում տալիս են հիւանդագին հետեւանքներ: Համաձայնելով հանդերձ Քաջազնունու հետ մեր իրականութեան մէջ գոյութիւն ունեցող «քօմիթաճիական» բարքերի վնասակարութեան նկատմամբ, չէ կարելի ընդունել նրա եզրակացութիւնները. հայկական իշխանութիւնների թուլութեան գլխաւոր պատճառը այդ «քօմիթաճիութիւնը» չէր, ոչ էլ դեղ ու դարմանը՝ մաքուր ռամկավարութիւնը: Ամէն ժամանակաշրջան եւ ամէն միջավայր իր պահանջներն ունի:

Քաջազնունին համոզուած է, թէ՝ «կուսակցութեան միջամտութիւնը թոյլ չէր տալիս, որ կառավարութիւնը իր գիտցածը անի, իր գիծը տանի»: Համարեա մի ամբողջ տարի Քաջազնունին եղաւ վարչապետ եւ կուսակցութիւնը տուել էր նրան կատարեալ ազատութիւն գործելու՝ միաժամանակ իր ամբողջ ուժերը դնելով նրա տրամադրութեան տակ: Եւ, սակայն, երբեք Հայաստանը չի ունեցել այնքան

անդոյն ու կամազուրկ կառավարութիւն որքան այդ շրջանում, մանաւանդ ժողովրդական կուսակցութեան հետ հաստատուած կօալիցիօնի շրջանում: Ո՞վ էր արգիլում Քաջազնունուն «իր գիտցածը անելու»: Իր հոգու վրայ մեղք կ'առնի նա, եթէ ասի, թէ Դաշնակցութիւնը ճնշում էր գործ դնում իր կամքի վրայ եւ թոյլ չէր տալիս ազատ գործելու:

Ո՛չ, Քաջազնունու կառավարութեան թուլութիւնը Դաշնակցութիւնից չէր կախուած, այլ այն ընդհանուր, առարկայական պայմաններից, որոնց մէջ ապրում էր Հայաստանը: Եւ, եթէ այնուամենայնիւ, կառավարութեան յաջողւում էր դրական գործ կատարել, դրան մէջ չափով պարտական ենք Դաշնակցութեան: Բացի ընդհանուր պայմաններից, կառավարութեան թուլութիւնը պայմանաւորւում էր եւ ժողովրդական կուսակցութեան հետ կապուած կօալիցիօնով: Քաջազնունին վրդովւում է, որ Դաշնակցութիւնը պէտքին չափ չի աշխատել կօալիցիօնի համար, բայց ո՞ւմ հետ էր այդ կօալիցիօնը: Կարո՞ղ է Քաջազնունին հանդիստ կերպով, ձեռքը խղճին դրած՝ ասել, թէ չնչին բացառութեամբ, պետական գիտակցութիւն ունեցող ու բարեխիղճ մարդիկ էին ժողովրդականների Հայաստան եկած նախարարներն (ու գործիչները), կարո՞ղ է նա նորմալ համարել նրանց ստեղծած դրութիւնը, երբ Երեւան գալիս էին լոկ իբրեւ հիւրեր եւ աշխատում էին Հայաստանը կառավարել Թիֆլիսից: Ո՞ւր էին գտնւում Քաջազնունու կօալիցիօն նախարարները, ի՞նչ էին անում, ի՞նչ ծրագիրներ բերին Հայաստանի համար եւ ի՞նչ եղաւ նրանց դրական դերը: Ասել ընկել ենք՝ կօալիցիօն-կօալիցիօն, պէտք է հասկանանք նոյնպէս, որ ամէն կօալիցիօն բարիք չէ:

Ի՞նչ հոգեբանութիւն եւ ախորժակ ունէին դէպի Հայաստանը եւ միւս տարրերը, որոնց հետ պէտք է կօալիցիօնը կնքէինք: Քաջազնունին գիտէ այն վրդովեցուցիչ ծրագիրը, որ բերել էին Երեւան պ. Վ. Թէքէեանը եւ Ն. Տէր-Ստեփանեանը, որոնք առաջարկում էին Հայաստանը կապալով տալ Պօղոս փաշա Նուպարին եւ նրան շրջապատող ազգայիններին: Հայաստանի պետականութեան գիտակցութիւնը չէր, որ խօսում էր այդ մարդկանց մէջ, այլ իշխանութեան տենչը կամ — լաւագոյն դէպքում — քաղաքական տհասութիւնը: Կարո՞ղ էր Քաջազնունին հաստատել այնպիսի մի կօալիցիօն, որով Հայաստանի կառավարութիւնը փաստօրէն տեղափոխուէր Փարիզ: Եւ ինչո՞ւ նա, կօալիցիօնի մասին խօսելիս, այնքա՛ն անողոք է դէպի Դաշնակցութիւնը եւ այնպէս ներողամիտ դէպի այն տարրերը, որոնք, հակառակ իրենց համեստ ազդեցութեան, տենչում էին Հայաստանի ճակատագրի կարգադրութիւնն իրենց ձեռքը առնել, առանց, սակայն, հայ իրականութեան հետ օրգանապէս կապուել ուզելու:

Քա՛ւ լիցի. կօալիցիօնի, այսինքն Հայաստանի անկախութեան տեսակէտի վրայ կանգնած հոսանքների համագործակցութեան դէմ չէ, որ ծառանում եմ ես: Ընդհակառակը, ինձ թւում է, որ համագործակցութեան ու կօալիցիօն իշխանութեան չըստեղծուելուց ամէնից շատ տուժեց հէնց մեր կուսակցութիւնը: Հայաստանին վիճակուած ծանր պայմաններում կօալիցիօնը անհրաժեշտ էր նախ եւ առաջ մեզ՝ Դաշնակցականներիս համար, թէկուզ հէնց աշխատանքի ծանրութիւնն ու պատասխանատուութիւնը բաժանելու համար: Բայց ես հարց եմ

տալիս Քաջազնունուն, որո՞նք էին այն պայմանները, որ կարող էին հնարաւոր դարձնել կօալիսիոնը եւ մենք չընդունեցինք:

Քաջազնունին իր մի յօդուածաշարքում*) «Ճակատամարտ»ի մէջ ցոյց է տուել այն հիմնական սկզբունքները, որոնք պէտք է լինէին եւ ապագայում էլ պէտք է լինին Դաշնակցութեան քաղաքականութեան առարկան: Առաջին հերթին նա դնում է հողերի համայնացման անհրաժեշտութիւնը եւ ապա թւում է մի շարք ռամկավարական կէտեր: Բայց հէնց դրա դէմ էին ըմբոստանում ե՛ւ ժողովրդականները, ե՛ւ ռամկավարները, ե՛ւ Պօղոս փաշայի մարդիկ ամէն անգամ, երբ կօալիսիոնի խօսք էր լինում: Հողերի համայնացումը, օրինակ, մի սկզբունք էր, որի շուրջ կարելի չէր կօալիսիոն առաջ բերել. նմանապէս և 8 ժամուայ աշխատանքի օրը, եւ մի շարք ուրիշ ընկերային կարեւոր բարենորոգումներ**): Քաջազնունին ի՞նչ կը հրամայէր անել— տեղի՞ տալ, հրաժարուե՞լ այդ սկզբունքներից: Չեմ կարծում, որ նա այդպիսի բան մտածէ: Ապա, ուրեմն, ի՞նչպէս ստեղծել «անկեղծ կօալիսիոն»: Ինչպէս ստեղծել կօալիսիոն այնպիսի մարդկանց հետ, որոնք նոյն իսկ Հայաստան գալը համարում էին անհանդուրժելի պայման եւ ուզում էին երկիրը կառավարել արտասահմանից՝ իրանց փոք-

*) Տես «Ճակատամարտ», 1922 թ. թիւ 1076–1081, «Ի՞նչ պէտք է լինի մեր ուղին»:

**) Տե՛ս Ս. Վրացեան. «Բանակցութիւններ Ազգ. Պատուիրակութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ». հրատ. «Հայրենիք»ի, 1920 թ., Պոսթըն:

րաւորների միջոցով:

Թո՛ղ չմոռանայ Քաջազնունին եւ այն, որ «անկեղծ կօալիսիոնի» անհրաժեշտ պայմաններից մէկն էլ Թիֆլիսի ու Փարիզի հայ բուրժուազիայի համար այն էր, որ կառավարութիւնը կազմուէր պարիտէտի սկզբունքով, այսինքն՝ համերաշխող կուսակցութիւնները ունենային հաւասար չափով նախարարներ: Հասկանալի է, որ այս ձեւով ստեղծըւած կառավարութիւնը, ինչպէս ցոյց տուեց Քաջազնունու կօալիսիոն դահլիճի փորձը, կը լինէր երերուն, հեղինակութիւնից զուրկ եւ թոյլ:

Կօալիսիոնի եւ, առհասարակ, իշխանութեան պրօբլէմը Ռուսաստանում Քաջազնունին սխալ ձեւով է դնում եւ սխալ էլ լուծում է՝ նա մատը չի դնում վէրքի վրայ: Պատճառները բոլորովին ուրիշ տեղ պէտք է փնտռել, մինչդեռ նա փնտռում է Դաշնակցութեան մէջ: «Ճակատամարտ»–ի մէջ նա այդ հարցը աւելի ուղիղ է դրել:

9. Զարմանալի են Քաջազնունու դատողութիւնները եւ հայ–վրացական պատերազմի մասին: Անաչառ երեւալու տենչից դրդուած՝ նա ընկնում է ծայրայեղ անարդարութեան մէջ: Պատերազմի ծագման պատճառները թուելիս, նա գրում է. «Անհաւանական չէ, որ որոշ դեր կատարել է նաեւ մեր բանակի մէջ գտնուող ռուս սպաների պրովօկացիան, ... Մեր բանակում կային բաւական մեծ թւով ռուս սպաներ, որոնք կապեր ունէին Թիֆլիսում (գուցէ եւ զօր. Դէնիկինի բանակի հետ): Անհաւանական չէ, որ սրանք դրդում էին մեր զինուորական շրջանները Վրաստանի դէմ, ստեղծում էին թշնամական մթնոլորտ, որ շատ նպաստաւոր էր ռազմական գործողութիւններ սկսելու համար»:

Այսպէս է գրում պատմութիւնը եւ դրողը Հայաստանի այդ ժամանակուայ նախարարապետն է: Երբ Հայաստանի այն ժամանակուայ կառավարութեան նախագահն է հաւանական համարում «ռուս սպաների պրովօկացիան», էլ ինչո՞ւ զարմանալ, որ վրացիներն էլ նոյն ամբաստանութիւնն էին չպրտում հայերի երեսին: Այն օրերի հայ-վրացական յարաբերութիւնների մէջ առանց այն էլ այնքան շատ պայթուցիկ նիւթ էր հաւաքուած, որ ընդհարում առաջ բերելու համար ամենեւին կարիք չկար «ռուս սպաների պրովօկացիայի»: Եւ, իրականութեան մէջ, ռուս սպաները ո՛չ մի դեր չեն էլ կատարել հայ-վրացական պատերազմի սկզբնաւորութեան խնդրում: Եթէ Քաջազնունին ժամանակին հրատարակութեան տուած լինէր այդ պատերազմի ծագման վերաբերող փաստաթղթերը, այսօր պէտք չէր ունենայ այդպիսի կասկածներ յայտնելու: Պատերազմի ընթացքին, ճիշտ է, մի քանի ռուս սպաներ աչքի ընկան իրենց քաջութեամբ, բայց այդ այն սպաներն էին — գնդ. Կորոլկով եւն. — որոնք իրենց ճակատագիրը անվերապահ կերպով կապել էին Հայաստանի ու հայկական բանակի հետ եւ մինչեւ վերջ էլ մնացին Հայաստանում ու փետրուար 18-ից յետոյ Քաջազնունու հետ միասին հեռացան Պարսկաստան: Որո՞նք են այն շօշափելի փաստերը, որոնք իրաւունք են տալիս Քաջազնունուն այդպիսի ծանր մեղադրանք ուղղելու Հայաստանի պետականութեանը այնքա՛ն ծառայութիւններ հասցրած ռուս սպաների հասցէին*): Շատ տարօրինակ է եւ Քա-

*) Ես յոյս ունիմ, որ մօտիկ ապագային հրատարակութեան կը տրուին հայ-վրացական պատե-

ջազնունու հետեւեալ դատողութիւնը. Հայ-վրացական պատերազմի խնդրում, «Անկախ Վրաստանի դիրքից, որ անվիճելիօրէն դատապարտելի էր, քիչ դեր չի խաղացել նաեւ մեր սեփական ապիկարութիւնը, մեր քաղաքական տհասութիւնը եւ պետական կեանքը վարելու անպատրաստութիւնը»:

Ուրեմն, ի՞նչ, կարելի՞ էր խուսափել հայ-վրացական պատերազմից, թէ նա ճակատագրական անհրաժեշտութիւն էր: Եթէ մենք չլինէինք «ապիկար», «քաղաքականօրէն տհաս» եւ «պետական կեանքը վարելու անպատրաստ», կարելի՞ էր պատերազմի առաջը առնել, թէ՞ պատերազմը կախուած էր «Վրաստանի բռնած դիրքից, որ անվիճելիօրէն դատապարտելի էր»: Այսպիսի հարցերում ակնարկներով ու կիսատ խօսքերով կարելի չէ սահմանափակուել. կամ իրօք Հայաստանի վարչապետ Քաջազնունին է առաջ բերել հայ-վրացական պատերազմը իր «ապիկարութեամբ» ու «քաղաքական տհասութեամբ», եւ այդ պէտք է ասել շատ պարզ ու որոշ, կամ «Վրաստանի դատապարտելի դիրքը»: Մինչեւ այժմ ամէնքը համոզուած էին, թէ պատերազմի պատճառը վրացիներն էին: Այդ էին հաստատում եւ Քաջազնունիի տուած հեռագիրները Ժօրդանիային եւ պետութիւնների ներկայացուցիչներին: Հիմա Քաջազնունին հակառա՞կն է ասում, թէ՞ ... ոչինչ չի ասում. այլ գրում է հէնց այնպէս ... մտքեր յայտնելու նպատակով...

Այո՛, հայ-վրացական պատերազմը չարիք էր,

րազմին վերաբերուող փաստաթղթերը, որոնց ընթերցողը կը տեսնի, թէ ո՛չ մի հիմք չունի Քաջազնունու ենթադրութիւնը: Ս. Վ.

աւելին ասեմ, աղէտ էր, բայց նա, դժբախտաբար,
անխուսափելի էր այն մթնոլորտում, որ վրաց շօ-
վէն կառավարութիւնն ու ղեկավար շրջաններն էին
ստեղծել: Եւ եթէ հայերից էլ կային տարրեր, ո-
րոնք գրգռում եւ ուժեղացնում էին վրաց շօվինիզ-
մը, դրանք, յամենայն դէպս, Հայաստանի ղեկա-
վարները չէին: Մասամբ այդ հարցում վատ դեր
կատարեց Թիֆլիսի հայ բուրժուազիան եւ, ընդհան-
րապէս, Թիֆլիսի հայ մամուլը, որն իր անհաւա-
սարակշիռ ու ջղագար արտայայտութիւններով իւղ
էր լցնում վրաց շօվինիստական խարոյկի վրայ.
բայց սա էլ չափազանց աննշան երեւոյթ էր, որպէսա-
գի նրան կարելի լինէր որեւէ վճռական ազդեցու-
թիւն վերագրել հայ–վրացական պատերազմի ծագ-
ման հարցում:

10. Քաջազնունին արձանագրում է նաեւ «այն
անընդհատ կռիւները, որ ունեցել ենք հիւսիս–արե-
ւելեան սահմանների վրայ ու երկրի ներսը». «մենք
չենք կարողացել գտնել նպատակայարմար միջոց-
ներ մեր դրութիւնը ապահովելու համար՝ դրսից
ու ներսից. չենք կարողացել գտնել մի քիչ տանելի
modus vivendi Ազրբէյջանի հետ, չենք կա-
րողացել վարչական միջոցներով կարգի մէջ պահել
մահմեդական գաւառակները, հարկադրուած ենք
եղել զէնքի դիմելու, զօրքեր շարժելու, աւերելու ու
կոտորելու եւ — որ կրկնակի վարկաբեկիչ էր կա-
ռավարութեան համար — խոշոր անյաջողութիւն-
ների հանդիպելու այնպիսի կարեւոր վայրերում,
ինչպիսի էին Վէդի–Բասարը, Շարուրն ու Նախիջե-
ւանը»:

Այս բոլորը Քաջազնունին արձանագրում է նրա
համար, որ յետոյ ասի, թէ ինչ որ մեզ չյաջողուեց,

բոլշեւիկները յաջողութեամբ իրագործեցին: Բայց
ի՞նչ գնով իրագործեցին այդ՝ բոլշեւիկները: Մենք
Ազրբէջանի հետ վիճում էինք Ղարաբաղի, Զանգե-
զուրի ու Նախիջեւանի համար, ուզում էինք, որ այդ
գաւառները լինին Հայաստանի սահմաններում,
հակառակում էինք, որ Հայաստանը Պարսկաստա-
նից բաժանուի օտար հողով: Քաջազնունին պէտք է
ասի՝ պարտաւո՞ր էինք մենք այդպէս վարուելու,
համապատասխանո՞ւմ էր մեր այդ ընթացքը Հա-
յաստանի կենսական շահերին: Բոլշեւիկները տեղի
տուին Ազրբէջանի առջեւ. նրանք ձեռք քաշեցին
Ղարաբաղից ու Նախիջեւանից եւ մինչեւ այս տողե-
րը տպուելն, երեւի, հրաժարուած կը լինեն եւ
Կարճկան–Մեղրի–Ծիվանի Զոր գծից, որով Պարս-
կաստանի եւ Հայաստանի միջեւ կ'ընկնի Ազրբէջան-
Նախիջեւան–տաճկական մի հողաշերտ: Կարո՞ղ է-
ինք արդեօք այդ գնով ազրբէյջանցիների հետ mo-
dus vivendi գտնել.— կարո՛ղ էինք: Պէ՞տք է այդ-
պիսի modus vivendi ստեղծէինք: Քաջազնու-
նին պատասխան չի տալիս: Իմ կարծիքով՝ մենք ի-
րաւունք չունէինք մեր կամքով այդպիսի բան անե-
լու, որովհետեւ դրանով իսկ քանդած կը լինէինք
Հայաստանի գոյութեան հիմքերը: Մեր եւ բոլշեւիկ-
ների տարբերութիւնը նաեւ այն է, որ մեզ համար
պետական սահմանները անարժէք բաներ չեն, մինչ-
դեռ բոլշեւիկների համար ազգային–պետական սահ-
մանը կարեւորութիւն ունի այն չափով, ինչ չափով
որ նա նպաստում է կօմունիստական գաղափարների
եւ Խորհրդային կարգերի տարածման:

«Չենք կարողացել վարչական միջոցներով կար-
գի մէջ պահել մահմեդական գաւառակները, հար-
կադրուած ենք եղել զէնքի դիմելու, զօրքեր շարժե-

լու»... Ինչո՞ւ: Արդեօ՞ք միայն «մեր ապիկարու-
թեան» ու «պետական կեանքը վարելու անպատրաս-
տութեան պատճառով», թէ կային եւ ուրիշ աւելի
լուրջ պատճառներ: Այո՛, այլացեղների եւ, մանա-
ւանդ, մահմեդականների հանդէպ մեր վարած քա-
ղաքականութիւնը եղել է սխալ, եւ մենք յաճախ,
ընդօրինակել ենք տաճիկների օրինակը այնտեղ,
ուր կուլտուրական Եւրոպան շատ աւելի բարձր ու
նպատակայարմար ճանապարհներ է ցոյց տալիս:
Հայաստանի մահմեդականների վերաբերմամբ մենք
հետեւել ենք իթթիհատականների, մուսաւաթական-
ների ու քէմալականների քաղաքականութեան, բայց
այդքա՞ն միայն: Քաջազնունին միայն ա՞յդ է տե-
սել: Իսկ ինչո՞ւ չի արձանագրում այն վրդովեցու-
ցիչ դիրքը, որ Հայաստանի մահմեդական ազգաբը-
նակութիւնը հէնց առաջին օրերից բռնեց պետական
իշխանութեան հանդէպ: Այն ժամանակ, երբ Քա-
ջազնունին վարչապետ էր— եւ դրանից յետոյ էլ —
Զանգիբասարը, Վէտիբասարը, Շարուրը, Նախիջե-
ւանը, Միլի Զորը, Կարադոյինլի Զորը, Բասարգե-
չարը չէին ճանաչում Հայաստանի իշխանութիւնը:
Հայաստանի մայրաքաղաքից 6 քիլօմէտր այն կողմ՝
Զանգիբասարում այլեւս հայկական վարչութիւն
չկար. այնտեղ նստած էին Խոսրով բէգ Սուլթանո-
վի գործակալները եւ քէմալական ասկեարները:
Ի՞նչ է ասում այժմ Քաջազնունին. ինչպէ՞ս պիտի
վարուէր Հայաստանի կառավարութիւնը, չպիտի՞
աշխատէր, որ իր իշխանութիւնը տարածուի նաեւ
այդ շրջանների վրայ, չպիտի՞ ձգտէր վերջ տալու
Ազրբէջանի ակնյայտնի միջամտութիւններին ու հե-
ռացնել Հայաստանից նրա նշանակած պաշտօնեան-
րին, չպիտի՞ պատժէր հակապետական տարրերին:

Եւ ինչպէ՞ս կարող էր անել այդ, եթէ ոչ «զէնքի
դիմելով» ու «զօրքեր շարժելով»: Վրդովեցուցիչը
միւսն էր՝ «աւերելն ու կոտորելը»: Որ Հայաստանի
կառավարութիւնը պէտք է նուաճէր և իր իշխանու-
թեան ենթարկէր պետութեան սահմաններում ապ-
րող անհնազանդ եւ ըմբոստ տարրերը, բնական է ու
անհրաժեշտ, այդ նրա պարտականութիւնն էր:
Բայց նա բաւարար ջանք չի՛ թափել, իսկ նրա պաշ-
տօնեաներից ոմանք եւ չե՛ն ուզեցել, որ այդ գործո-
ղութիւնների ընթացքին տեղի չունենայ աւեր, թա-
լան ու կոտորած: Այս է ահա ցաւալին ու վրդովե-
ցուցիչը, թէեւ այն եւս չպէտք է մոռանալ, որ շատ
անգամ այս դէպքերը տեղի են ունեցել տարերային
կերպով եւ դժուար է եղել առաջը առնել:

Քաջազնունին ասում է, որ «այնպիսի կարեւոր
վայրերում, ինչպիսին էին Վէտի-Բասարը, Շա-
րուրն եւ Նախիջեւանը, մենք չկարողացանք հաս-
տատել մեր իշխանութիւնը նոյն իսկ զէնքի ուժով»:
Այդ ճիշտ չէ. Վէդի-Բասարը եւ Շարուրը մենք գը-
րաւեցինք եւ ենթարկեցինք հայկական իշխանու-
թեան, եւ մեր զօրքերը արդէն մօտեցել էին Նախի-
ջեւանին, իսկ Նախիջեւանի պատգամաւորութիւնն
Երեւանում բանակցում էր մեր իշխանութիւնը ըն-
դունելու պայմանների մասին, երբ շտապով վրայ
հասան կարմիր զօրագնդերը եւ մեզ հարկադրեցին
յետ քաշուելու: Արտաքին՝ շատ աւելի զօրաւոր ու-
ժի առջեւ միայն հայկական զօրքն ու վարչութիւնը
ստիպուած եղաւ տեղի տալ:

Բայց ենթադրենք նոյն իսկ, որ այդպէս չի եղել
եւ որ Քաջազնունու ասածը ճիշտ է՝ մենք չենք կա-
րողացել որոշ շրջաններում հաստատել մեր իշխա-
նութիւնը, ի՞նչ կայ դրանում արտասովոր եւ ան-

պատուարեր մի պետութեան համար, որ դեռ մէկ—
երկու տարուայ անկախ կեանք ունի: Բօլշեւիկեան
իշխանութիւնը ահարկու բանակներ ունի, բայց եւ
այնպէս այսօր էլ դեռ Ռուսաստանի սահմաններում
կան տեղեր, ուր ազգաբնակութիւնը չի ճանաչում
նրա իշխանութիւնը: Մի՞թէ Քաջազնունին խսկա—
պէս համոզուած է, որ եթէ Հայաստանը թողնուէր
անկախ, նրա կառավարութիւնը չպիտի կարողանար
տարածել իր իշխանութիւնը նաեւ Նախիջեւանի վը—
րայ:

Քաջազնունին տալիս է այս մռայլ ու ողբերգա—
կան նկարագրութիւնը նրա համար, որ քիչ յետոյ
ասի, թէ՝ «բօլշեւիկները ներքին կռիւներ չունե—
ցան»: Բայց նա մոռանում է, որ այդպիսի «ներքին
կռիւ» Հայաստանում նրանք չէին էլ կարող ունե—
նալ, որովհետեւ Քաջազնունու յիշած Զօղում, Զան—
գի—Բասարում, Վէդի—Բասարում, Միլլի Զորում եւ
Զանգեզուրում մահմեդական ազգաբնակութիւն
չէր էլ մնացել, իսկ Նախիջեւանում — հակառակ
Քաջազնունու պնդումի — ժողովուրդը մի քանի ան—
գամ ըմբոստացել է բօլշեւիկեան իշխանութեան
դէմ. արիւնահեղ ընդհարումներ եղան եւ Գանձա—
կում, ուր բօլշեւիկների ձեռքով սպանուեց մի քանի
հազար Թուրք եւ ջնջուեց մի քանի տասնեակ գիւղ—
այնքա՛ն, որքան չի սպանուել Հայաստանի բոլոր
քաղաքացիական կռիւներում: Հայաստանի խոր—
հրդային իշխանութիւնը Հայաստանում պէտք չու—
նէր Թրքական հարցով զբաղուելու, որովհետեւ այդ
հարցը արդէն լուծուած էր «Դաշնակ»—ների օրով:
Սխալներ են արուել այդ հարցը լուծելիս, համաձայն
եմ Քաջազնունու հետ — բայց փաստը մնում է
փաստ. երբ բօլշեւիկները եկան, Հայաստանում

այլեւս Թուրք ազգաբնակութիւն չէր մնացել, եւ,
ուրեմն, չի կարելի գովել նրանց այն բանի համար՝,
որ գոյութիւն չունեցող Թուրքերի հետ ներքին կը—
ռիւներ չեն ունեցել:

11. — Ուշագրաւ են Քաջազնունու դատողու—
թիւնները եւ մայիս 28—ի ակտի մասին: Ցոյց տալով
երկու պատճառ այդ ակտի հրատարակութեան,—
Թրքահայոց նկատումները եւ միջազգային—դիւա—
նագիտական պարագաներ՝ յանգում է այն եզրակա—
ցութեան, որ «յայտարարութիւնը ո՛չ մի դրական
հետեւանք չունեցաւ, իսկ բացասական՝ ունեցաւ
(ներքին անհամաձայնութիւնների եւ վէճերի բոր—
բոքում)»:

Ինչ որ վերաբերում է «ներքին անհամաձայ—
նութիւններին ու վէճերին», նրանք առանց մայիս
28—ի յայտարարութեան էլ բաւական ուժեղ էին եւ
առատ նիւթ ունէին է՛լ աւելի բորբոքուելու: Այդ
«անհամաձայնութիւնների ու վէճերի» արմատները
շատ աւելի խորն էին, քան մայիս 28—ի յայտարա—
րութեան պատճառները: Նրանք բղխում էին այն
հայեացքից, որ արտասահմանի տաճկահայերն ու
Հայաստանի ժողովուրդը ունէին Հայաստանի սահ—
մանների, ներքին կեանքի եւ ապագայի վերաբեր—
մամբ, եւ մեծ չափով պայմանաւորուած էին մեր
ազգային—կուսակցական նկարագրով ու բարքերով:
Ասել թէ, եթէ մայիս 28—ի ակտը չլինէր, «ներքին
անհամաձայնութիւններն ու վէճերը» պակաս կը
բորբոքուէին, կը նշանակէ չհասկանալ այդ վէճերի
ու անհամաձայնութիւնների էութիւնը եւ չճանա—
չել մեր հասարակութիւնը:

Ես չգիտեմ նոյնպէս, թէ ի՞նչ դիւանագիտական
նշանակութիւն ունեցաւ մայիս 28—ի յայտարարու—

թիւնը: Ընդունում եմ, որ նա իսկի չնկատուեց էլ
Եւրոպայում, թէեւ չեմ կարող համաձայնուել, որ
նա արժէք ու կշիռ չէր ունենայ, եթէ, յետագայ
քաղաքական դէպքերը այլ կերպ դասաւորուէին:
Սակայն մայիս 28-ի յայտարարութիւնը մի ուրիշ
նշանակութիւն ունեցաւ, որ Հայաստանի Հանրա-
պետութեան համար առանձին կարեւորութիւն ու-
նէր: Եւ դարձեալ, եթէ Քաջազնունին խուսափէր
վերացական դատողութիւններից եւ իր փաստերը
առնէր իրականութիւնից, անտարակոյս, այսպէս
թեթեւ կերպով չէր գնահատի մայիս 28-ի ակտը:

Ինչպէս վերեւն ասացինք, 1918-ի մայիսի 26ին
ու 28-ին յայտարարուեցին Վրաստանի եւ Ազրբէ-
ջանի անկախութիւնները, մինչդեռ Հայաստանի ան-
կախութեան ակտ չեղաւ: Անկախութեան յայտարա-
րութեան ակտ տեղի չունեցաւ եւ օգոստոսի 1-ին,
Երեւանում, Հայաստանի խորհրդարանի բացման
օրը: Ո՛չ էլ ուրիշ որեւէ քայլ արուեց, որը ցոյց տար
Հայաստանի անկախութեան յայտարարութիւնը:
Ընդհակառակը, քիչ չէին պատահում դէպքեր, ո-
րոնք առիթ էին տալիս մտածելու մեր կասկածոտ
հարեւաններին,— եւ ո՛չ միայն հարեւաններին՝ որ
հայերը կողմնակից չեն անկախութեան: Իսկ Դէնի-
կինի սպայակոյտում, օրինակ, հայկական բանակը
համարւում էր, իբրեւ «Ռուսական 7-րդ դիվիզիա»:
Մեզ մեղադրում էին, թէ մենք «ռուսոֆիլ» ենք, թէ
մեր աչքը միշտ հիւսիս է, թէ մենք չենք ուզում բա-
ժանուել Ռուսաստանից եւ սեփական անկախ պե-
տութիւն ստեղծել եւ դրանով վտանգ ենք հանդի-
սանում կովկասեան ժողովուրդներին, որոնք ամէն-
քը ձգտում են անկախութեան:

Այդ հանգամանքը բաւական դժուարացնում էր

Հայաստանի կառավարութեան դրութիւնը: Պատա-
հել են դէպքեր, երբ Անդրկովկասի օտար ներկա-
յացուցիչներն էլ նկատել տուած են, որ հայերը
կողմնակից չեն անկախութեան: Մայիս 28-ի յայ-
տարարութեան գլխաւոր արժէքը հէնց դրա մէջ էր·
— անկախութեան պաշտօնական յայտարարու-
թեամբ մէկ անգամ ընդմիշտ վերջ տալ հայերի մա-
սին ստեղծուած աննպաստ կարծիքին: Եւ նրանք,
ովքեր մայիս 28-ի ակտից առաջ եւ յետոյ ապրել են
Կովկասում, անշուշտ, նկատած կը լինին այն բա-
րերար հետեւանքները, որ այդ ակտը ունեցաւ մեր
եւ հարեւանների յարաբերութեան, ինչպէս եւ օ-
տարների վերաբերումի մէջ:

Եւ Հայաստանի ներքին կեանքում էլ մայիս 28ի
յայտարարութիւն նշանակութիւն ունեցաւ: Նրանից
յետոյ էր, որ առանձին թափով, առաջ տարուեց
պետութեան ազգայնացման աշխատանքը եւ հայե-
րէն լեզուի պարտադիր գործածութիւնը պետական
ու հասարակական հիմնարկութիւնների մէջ: Դրա-
նից յետոյ էր, որ արեւելահայերը փաստօրէն սկսե-
ցին մասնակցել պետութեան կեանքին: Քաջազնու-
նին դիտէ, որ մինչ այդ արեւմտահայերը նոյնիսկ
զինուորութիւնից էին խուսափում՝ տարկելով, թէ
իրենք գաղթական են Հայաստանում: Ասել թէ մա-
յիս 28-ի ակտը միայն բացասական հետեւանքներ
ունեցաւ եւ անցնիլ — կը նշանակէ շատ մակերեսա-
յին կերպով դիտել տեղի ունեցող երեւոյթները:

12. Պէտք է կանգ առնել եւ Քաջազնունու դա-
տողութիւնների վրայ Հայաստանի խորհրդարանի
ու կառավարութեան մասին: Կարծես լուսնից է ի-
ջել նա եւ չգիտէ, թէ ինչ հանգամանքներում ստեղ-
ծուեցին ու գործում էին այդ հիմնարկութիւնները:

Նա Հայաստանի համար այնպիսի պահանջներ է դընում, որոնք այսօր չեն գործադրւում նոյն իսկ Անգլիայի եւ Ֆրանսիայի պէս յառաջադէմ ու ռամկավար երկրներում: Եւ դարձեալ ես չեմ ուզում աչք ցոցել ե՛ւ խորհրդարանի, ե՛ւ կառավարութեան թերութիւնների վրայ: Շատ էին նրանք եւ խոշոր, բայց ո՛չ այն, որ Քաջազնունին է ցոյց տալիս եւ ոչ էլ Դաշնակցութեան կամքով ստեղծուած, ինչպէս ճգնում է ցոյց տալ նա:

Բոլորովին անճիշտ է ու անիրական Քաջազնունու այն պնդումը, թէ Դաշնակցութիւնը դիտաւորեալ կերպով աշխատել է ուրիշ կուսակցութիւններին քիչ տեղ տալ խորհրդարանում եւ բոլոր աթոռները իրեն է վերապահել: Ցամենայն դէպս, մեղքը Դաշնակցութեանը չէր, որ «միւս քաղաքական կուսակցութիւններից ներկայ էր միայն սոցիալիստ-յեղափոխականը»... Ընդհակառակը, եթէ Քաջազնունին այն ժամանակ լինէր Հայաստանում կամ եթէ փորձէր իրողութիւններին տեղեակ դառնալ, հեշտութեամբ կը համոզուէր, որ Դաշնակցութիւնը ամէն կերպ աշխատեց, որ միւս կուսակցութիւնները նըկատելի չափով ներկայանան խորհրդարանում, եւ նոյնիսկ առաջարկեց հայ ժողովրդական կուսակցութեան իր աջակցութիւնը, որպէսզի սա կարողանայ դէթ 10–15 պատգամաւոր անցկացնել խորհրդարան, բայց այդ բոլոր ջանքերը ի դերեւ ելան: Ինչո՞ւ: Որովհետեւ Դաշնակցութիւնից զատ Հայաստանում կազմակերպուած կուսակցութիւն չկար: Այս պարագան Քաջազնունիին շատ լաւ յայտնի է եւ նա հէնց ինքն է մատնանշել այդ փաստը իր «Ճակատամարտ»ի մէջ հրատարակած յօդուածաշարքում: Այսօր նա մոռացել է այդ հանգամանքը եւ գալիս է

Դաշնակցութեան գլխին բարդելու այնպիսի մեղադրանքներ, որոնք չեն համապատասխանում իրականութեան:

Այո՛, Դաշնակցութիւնը շատ էր ուզում, որ հայ ժողովրդական կուսակցութիւնը մասնակցի խորհըրդարանական ընտրութիւններին, բայց չմասնակցեց: Գիտէ՞ Քաջազնունին, թէ ինչու: Եւ եթէ գիտէ, ինչո՞ւ դատապարտութեան մի խօսք էլ նրանց չի ուղղում եւ ամբողջ պատասխանատուութիւնը բարդում է Դաշնակցութեան վզին:

Հայ ժողովրդական կուսակցութիւնը բոյկոտ արաւ Հայաստանի առաջին խորհրդարանի ընտրութիւններին ո՛չ սկզբունքային նկատումներով. սկըզբունքով նա համաձայն էր ընտրութիւններին: Նա նոյնիսկ որոշել էր մասնակցել եւ նրա կենտր. կոմիտէն, որ Թիֆլիսում*) էր գտնւում, կազմել եւ Երեւան էր ուղարկել ընտրելիների ցանկը: Բայց հէնց այդ ցանկը պատճառ դարձաւ յետագայ բոյկոտի: Ուղարկուած ցանկի առաջին տեղը բռնուած էին Թիֆլիսեցի թեկնածուներով, իսկ Երեւանցիներին վերապահուած էին վերջին տեղերը: Երեւանցիներից միայն մէկի՝ Գր. Տէր-Խաչատրեանի անունը տրուած էր վեցերորդ թէ եօթներորդ տեղում եւ հաւանականութիւն ունէր ընտրուելու, մնացեալները շատ հեռու էին եւ ընտրուելու յոյս չէին կարող ունենալ: Այս փաստը անհագին յուզում եւ դժգոհու-

---

*) Այս էլ շատ բնորոշ է. հայ բուրժուազիայի միակ կուսակցութիւնը մինչեւ վերջ էլ չկամեցաւ տեղափոխուել Հայաստան, իր կենտր. մարմինը պահեց Վրաստանում եւ այնտեղից էր վարում Հայաստանի գործերը: Ինչո՞ւ:

թիւն առաջ բերեց հայ ժողովրդական կուսակցութեան Երեւանի Կոմիտէի մէջ: «Թո՛ղ իրենք դան եւ տանին ընտրական գործը. մենք չկանք», ասում էին վրդովուած Երեւանցիք: Եւ այնուհետեւ մօտ մի շաբաթ Երեւանն ու Թիֆլիսը բանակցում էին՝ նամակով, հեռագրով, ուղիղ հեռագրաթելով: Երկու կողմերի յարաբերութիւնը սրուեց այնպէս, որ անխուսափելի էր համարւում պառակտումը: Բայց, ի վերջոյ, ելքը գտնուեց. Հայաստանի Խորհրդարանի ընտրութիւնների դէմ յայտարարուեց բոյկոտ, որովհետեւ... Դաշնակցական կառավարութիւնը մայիս 28-ի յայտարարութիւնը հրատարակելուց առաջ չէր ստացել Պօղոս փաշա Նուպարի համաձայնութիւնը: Այսքան էր հայ բուրժուազիայի պետական գիտակցութիւնը:

Քաջազնունին քաջ գիտէ նոյնպէս, թէ ինչո՞ւ խորհրդարանում չէին ներկայացուած կամ քիչ էին ներկայացուած միւս հոսանքները: Հայաստանի Սոց.-Դէմօկրատ կուսակցութիւնը նոր էր կազմուած, ընդամէնը մի երկու տասնեակ անդամ ունէր եւ, բնականաբար, չէր կարող ձայներ շահել: Հայ սօցիալիստ-յեղափոխականները անցկացրին 4 պատգամաւոր եւ այդ կատարելապէս համապատասխանում էր նրանց տեսակարար կշռին երկրում: Դաշնակցութիւնից յետոյ, միակ խոշոր զանգուածը Հայաստանում, եթէ կ՚ուզէք, անկուսակցականներն են — քաղաքականապէս անգիտակից, եսական նեղ հաշիւներով ապրող, յաճախ բութ եւ հաւաքական, ձեռնարկների անընդունակ, նախաձեռնութիւնից զուրկ մի բազմութիւն: Դաշնակցութի՞ւնն էր մեղաւոր, որ միակ ինքն էր կազմակերպուած, լայն ժողովրդական եւ պետական գիտակցութիւն ունե-

ցող կուսակցութիւնը: Դաշնակցութի՞ւնն էր պատասխանատու, որ հայ իրականութիւնը քիչ էր չերտաւորուած, եւ խորհրդարանում ուրիշ հոսանքների կարեւոր ներկայացուցչութիւն չկար:

Սրանով չեմ ուզում ասել, թէ ընտրութիւնների ժամանակ տեղի չեն ունեցել անկանոնութիւններ ու գեղծումներ: Ի հարկէ, ունեցել են: Բայց ամենավճռական կերպով յետ եմ մղում այն անարդար մեղադրանքը, թէ Դաշնակցութիւնը հակաօրինական միջոցներ է գործածել ընտրութիւնների ժամանակ: Անկանոնութիւններ, ընտրութիւնների ժամանակ պատահում են եւ ամենաազատ ու ռամկավար երկրներում — Ամերիկան ձեզ փայլուն օրինակ, բայց դրանք կազմում են ստուերաւոր կողմը պարլամենտական կարգերի: Հայաստանի պէս նորակազմ ու յետամնաց երկրում, ի հարկէ, այդ ստուերաւոր կողմերը աւելի շատ էին, բայց, վերջին հաշուով, դրանք խորհրդարանի բնոյթը որոշող գործօնները չէին:

Այս առթիւ Քաջազնունին յանդիմանում է մեզ. «Չէինք հասկանում, որ այդպիսի կազմ ունեցող պարլամենտը՝ պարլամենտ չէ, այլ միայն պարլամենտի ծաղրանկար: Չէինք հասկանում, որ դա մի սոսկալի ապացոյց է, թէ ո՛ր աստիճանի անպատրաստ է մեր ժողովուրդը պետական կեանքի համար, ո՛ր աստիճանի տգէտ է ու անփորձ՝ իր քաղաքական իրաւունքների հանդէպ»: Ո՛չ, հասկանում էինք, շատ լա՛ւ էինք հասկանում, բայց — կը պատասխանեմ հէնց Քաջազնունու խօսքերով «այդքան էր հայ ժողովրդի կարողութիւնը, աւելին չունէր ու այսօր էլ չունի»: Չկար հայ իրականութեան մէջ ուրիշ գիտակից ու կազմակերպուած ոյժ, որ

թիւն առաջ բերեց հայ ժողովրդական կուսակ–
ցութեան Երեւանի Կոմիտէի մէջ: «Թո՛ղ իրենք գան
եւ տանին ընտրական գործը. մենք չկանք», ասում
էին վրդովուած Երեւանցիք: Եւ այնուհետեւ մօտ մի
շաբաթ Երեւանն ու Թիֆլիսը բանակցում էին՝ նա–
մակով, հեռագրով, ուղիղ հեռագրաթելով: Երկու
կողմերի յարաբերութիւնը սրուեց այնպէս, որ ան–
խուսափելի էր համարւում պառակտումը: Բայց,
ի վերջոյ, ելքը գտնուեց. Հայաստանի Խորհրդարա–
նի ընտրութիւնների դէմ յայտարարուեց բօյկոտ,
որովհետեւ... Դաշնակցական կառավարութիւնը
մայիս 28–ի յայտարարութիւնը հրատարակելուց ա–
ռաջ չէր ստացել Պօղոս փաշա Նուպարի համաձայ–
նութիւնը: Այսքան էր հայ բուրժուազիայի պետա–
կան գիտակցութիւնը:

Քաջազնունին քաջ գիտէ նոյնպէս, թէ ինչո՞ւ
խորհրդարանում չէին ներկայացուած կամ քիչ էին
ներկայացուած միւս հոսանքները: Հայաստանի
Սոց.–Դէմօկրատ կուսակցութիւնը նոր էր կազմը–
ւած, ընդամէնը մի երկու տասնեակ անդամ ունէր
եւ, բնականաբար, չէր կարող ձայներ շահել: Հայ
սօցիալիստ – յեղափոխականները անցկացրին 4
պատգամաւոր եւ այդ կատարելապէս համապա–
տասխանում էր նրանց տեսակարար կշռին երկրում:
Դաշնակցութիւնից յետոյ, միակ խոշոր զանգուածը
Հայաստանում, եթէ կ՚ուզէք, անկուսակցականներն
են — քաղաքականապէս անգիտակից, եսական նեղ
հաշիւներով ապրող, յաճախ բութ եւ հաւաքական
ձեռնարկների անընդունակ, նախաձեռնութիւնից
զուրկ մի բազմութիւն: Դաշնակցութի՞ւնն էր մե–
ղաւոր, որ միակ ինքն էր կազմակերպուած, լայն
ժողովրդական եւ պետական գիտակցութիւն ունե–

ցող կուսակցութիւնը: Դաշնակցութի՞ւնն էր պա–
տասխանատու, որ հայ իրականութիւնը քիչ էր չեր–
տաւորուած, եւ խորհրդարանում ուրիշ հոսանքների
կարեւոր ներկայացուցչութիւն չկար:

Սրանով չեմ ուզում ասել, թէ ընտրութիւնների
ժամանակ տեղի չեն ունեցել անկանոնութիւններ ու
զեղծումներ: Ի հարկէ, ունեցել են: Բայց ամենա–
վճռական կերպով յետ եմ մղում այն անարդար մե–
ղադրանքը, թէ Դաշնակցութիւնը հակաօրինական
միջոցներ է գործածել ընտրութիւնների ժամանակ:
Անկանոնութիւններ, ընտրութիւնների ժամանակ
պատահում են եւ ամենաազատ ու ռամկավար եր–
կրներում — Ամերիկան ձեզ փայլուն օրինակ,
բայց դրանք կազմում են ստուերաւոր կողմը պար–
լամենտական կարգերի: Հայաստանի պէս նորա–
կազմ ու յետամնաց երկրում, ի հարկէ, այդ ըստ–
ուերաւոր կողմերը աւելի շատ էին, բայց, վերջին
հաշուով, դրանք խորհրդարանի բնոյթը որոշող
գործօնները չէին:

Այս առթիւ Քաջազնունին յանդիմանում է մեզ.
«Չէինք հասկանում, որ այդպիսի կազմ ունեցող
պարլամենտը՝ պարլամենտ չէ, այլ միայն պարլա–
մենտի ծաղրանկար: Չէինք հասկանում, որ դա մի
տեսակի ապացոյց է, թէ ո՛ր աստիճանի անպատ–
րաստ է մեր ժողովուրդը պետական կեանքի հա–
մար, ո՛ր աստիճանի օտար է ու անփորձ՝ իր քա–
ղաքական իրաւունքների հանդէպ»: Ո՛չ, հասկա–
նում էինք, շատ լա՛ւ էինք հասկանում, բայց — կը
պատասխանեմ հէնց Քաջազնունու խօսքերով «այդ–
քան էր հայ ժողովրդի կարողութիւնը, աւելին չու–
նէր ու այսօր էլ չունի»: Չկար հայ իրականութեան
մէջ ուրիշ գիտակից ու կազմակերպուած ոյժ, որ

պատասխանատու դեր ստանձնէր Հայաստանի քաղաքական կեանքում, եւ մենք ստիպուած եղանք,— սեղմուած ատամներով — «մեր վրայ վերցնել անբաժանելիօրէն ամբողջ իշխանութիւնը, մեր վրայ վերցնել նաեւ ամբողջ պատասխանատուութիւնը»:

Ո՚չ, հասկանում էինք, որ «մեր սեփական դաստիարակութեան համար մեծ կարիք ունէինք, որ մի զօրեղ օպօզիցիա կանգնած լինէր մեր կողքին, միշտ զգաստ պահէր մեզ, ի կարգ հրաւիրէր եւ թոյլ չտար, որ դուրս գայինք օրէնքի ու իրաւասութեան սահմաններից», մենք փնտռում էինք, նոյն իսկ աշխատում էինք արհեստական միջոցներով ստեղծել Խորհրդարանում այդպիսի օպօզիցիա, բայց չկար, և Բաջազնունին շատ լաւ գիտէ, ինչու չկար—որովհետեւ Հայաստանի կեանքում էլ չկար կազմակերպուած օպօզիցիա: Չեմ ասում հայ կեանքում, որովհետեւ Թիֆլիսում, Պօլսում, Փարիզում ու Ամերիկայում կար, բայց Բաջազնունուն շատ լաւ յայտնի է, որ Դաշնակցութիւնը չէր Հայաստանի դռները նրա առջեւ փակողը: Այդ օպօզիցիան Հայաստան գալիս էր միայն այն ժամանակ, երբ նրան նախարարական աթոռներ էին առաջարկում. այլ պարագաներում չէր ուզում Հայաստանի երեսը տեսնել:

Իսկ Հայաստանի օպօզիցիա՞ն... Բաջազնունին պէտք է ճանաչելիս լինի եւ Հայաստանի օպօզիցիան. նրա մի մասը անհամբեր սպասում էր, թէ ե՞րբ պիտի վերադառնայ Հայաստանի «իսկական տէրը»՝ Ռուսաստանը, իսկ միւս մասը... այդ միւսն էլ «ղաւուրմայից» դէնը չգնաց... Բաջազնունին վերագրում է Դաշնակցութեան անհանդուրժող ոգի դէպի ուրիշ կուսակցութիւնները: Աւելի անարդար եւ աւելի անհիմն մեղադրանք դժուար է երեւակա-

յել: Ի՞նչ էր Հայաստանի Խորհուրդը սկզբից մինչեւ վերջ. ովքե՞ր էին այդ Հայկ Ազատեանները, Տիգրան Մուշեղեանները, Լ. Ղուլեանները, Ա. Մելիքեանները— ո՞ւմ էին ներկայացնում նրանք, ո՞վ էր նրանց ընտրել եւ մի՞թէ Դաշնակցութեան լայնախոհութիւնը չէր, որ այդ տարօրինակ բազմութիւնը դէսից-դէնից հաւաքուած սօց. դէմօկրատների, սօց.-յեղափոխականների, հայ ժողովրդականների ու բօլշեւիկների բազմել էր Հայաստանի անդրանիկ օրէնսդիր ժողովում: Եւ ինչո՞վ էր զբաղուած այդ բազմութիւնը. Բաջազնունին այն ժամանակ վարչապետ էր՝ գիտէր, ի՞նչ պետական իմաստութիւն ու շնորհք ցոյց տուեց նա: Բացի կուսակցական նեղ ու ողորմելի խծբծանքներից, կրքոտ ճառերից ու մանկամիտ թոթովանքներից ուրիշ ի՞նչ դրական գործ կատարեց նա: Ինչո՞ւ են այդքան շուտ մոռացւում փաստերը, եւ ո՞վ է մոռացողը...

Մէկ անգամ, որ խորհրդարանի կազմը աննորմալ պայմանների հետեւանքով դարձել էր աննորմալ, բնականաբար եւ նրա աշխատանքներն էլ պիտի լինէին աննորմալ: Այո՛, «վհատեցուցիչ էր» Հայաստանի Խորհրդարանը, բայց դրա պատճառը — տեսանք արդէն — Դաշնակցութեան մենատիրութեան տենչը չէր, այլ Հայաստանի իրականութիւնը: Պարզ էր, երբ 80 անդամից 72 հոգին պատկանում էին մի կուսակցութեան, խորհրդարանական նորմալ աշխատանք չէր կարող կատարուել, եւ Խորհրդարանը պիտի վերածուէր կուսակցական Փրակցիայի: Եւ դարձեալ Բաջազնունին չէ, որ պիտի գրէր, թէ Դաշնակցութիւնը չէր գիտակցում դրա անպատեհութիւնները: Պառլամենտարիզմ Հա-

յաստանում, ի հարկէ, չկար, բայց կ'ուզէի հարցնել
Քաջազնունուն պատերազմի ու յեղափոխութեան
շրջանում ո՞րտեղ է եղել պարլամենտարիզմ: Մեր
հարեւան Վրաստանո՞ւմ թէ Ադրբէջանո՞ւմ, Թուր-
քիայո՞ւմ թէ Յունաստանո՞ւմ, Ֆրանսիայո՞ւմ թէ՞
Իտալիայում... Ամէն տեղ ժողովրդի վստահութիւ-
նը վայելող մի կուսակցութիւն է պետական գործերը
վարողը եւ, անշուշտ, դրա մէջ մի իմաստ ու ան-
հրաժեշտութիւն կայ: Ինչո՞ւ Հայաստանի համար
պահանջել այն, ինչ որ Հայաստանից շա'տ աւելի
նպաստաւոր պայմաններում գտնուող երկրների մէջ
գոյութիւն չունի...

Խնդիրը այդ չէ: Խնդիրը այն է, թէ արդեօք
գիտակցո՞ւմ էր այս աննորմալ վիճակը, ձգտում
նկատո՞ւմ էր նրանից ազատուելու, արդեօք որո՞նք
էին պետական սկզբունքները, ի՞նչ հիմքերի վրայ էր
կառուցւում հանրապետութեան շէնքը: Եւ այստեղ
Քաջազնունին չի կարող ասել, որ Դաշնակցութեան
իտէալը մենատիրական, տիկտատորական իշխանու-
թեան հաստատումն էր: Ընդհակառակը, հազար ու
մի փաստերով կարելի է ապացուցանել, որ Հա-
յաստանի պետական կեանքը զարգանում էր դէմօկ-
րատիզմի ուղղութեամբ եւ կամաց-կամաց ստեղծը-
ւում ու ամրանում էին ռամկավար կարգեր:

Այս բոլորից յետոյ, աւելորդ ու մանր խծբը-
ծանքներ են նկատւում Քաջազնունու հեգնանքները
մայիս 5-ի «Fnւ տ'Էքա»-ի՝ «բիւրօ-կառավարու-
թեան» կազմութեան մասին: Այո', նա զտարիւն
դիկտատուրա էր եւ — իմ հասկացողութեամբ —
չարիք, ինչպէս չարիք է ամէն դիկտատուրա: Բայց
լինում են պատմութեան մէջ շրջաններ, երբ չարիքը
դառնում է անհրաժեշտութիւն, ինչպէս Քաջազնու-

նին Հայաստանի համար այսօր անհրաժեշտ է հա-
րում բոլշեւիկեան չարիքը: Բոլշեւիկեան ապըս-
տամբութիւնը Հայաստանում ճնշուեց միայն այդ
«անհրաժեշտ չարիքի» շնորհիւ: Եթէ Դաշնակցու-
թեան գերագոյն մարմինը ա'յն պահուն տատանուէր
իր ձեռքը չառնէր երկրի բովանդակ իշխանութիւնը
եւ ամբողջ կուսակցութիւնը շարժման մէջ դրած
չլինէր, ես չգիտեմ՝ արդեօ՞ք բոլշեւիկեան ապըս-
տամբութիւնը կարելի պիտի լինէր ճնշել: Դաշնակ-
ցութեան բիւրօի սխալը այն չէր, որ նա կեանքի
հրամայական թելադրութեան հետեւանքով հարկա-
դրուած եղաւ հակառակ Ընդհանուր Ժողովի որոշ-
ման պետութեան ղեկը իր ձեռքը առնել: Նա յան-
ցաւոր կը լինէր, եթէ այդպէս չվարուէր. — Սխալը
եղաւ այն, որ նա բոլշեւիկեան շարժումը զսպելուց
յետոյ էլ մնաց իշխանութեան գլուխը: Այս սխալից
բղխեցին եւ մի շարք ուրիշ սխալներ, բայց սա ար-
դէն ուրիշ պատմութիւն է եւ դրա մասին չէ Քաջազ-
նունու խօսքը:

13. Գալիս ենք Քաջազնունու եւ մի այլ վերին
աստիճանի ծանր մեղադրանքին — Դաշնակցու-
թեան դերին հայ-տաճկական պատերազմի ժամա-
նակ: Նա գրում է. «Մի փաստ մնում է անհերքե-
լի, ազդակող. մենք չենք արել այն ամէնը, ինչ որ
պէտք է անէինք — պարտական էինք անելու — պա-
տերազմից խոյս տալու համար: Անկախ նրանից, թէ
որքան կը յաջողէինք՝ մենք պէտք է փորձէինք հաշ-
տութեան լեզու գտնելու Թուրքերի հետ: Սա' է, որ
չենք արել»:

Ապա. «Օլթիի հապճեպ գրաւումը ձեռնոց էր,
որ, կարծես, դիտմամբ նետում էինք Թուրքերի ե-
րեսին, կարծես ինքներս որոնում էինք ու ցանկա-

նում պատերազմ»:

Եւ, վերջապէս. «Երբ սահմանի վրայ զինական ընդհարումները սկսած էին արդէն, Թուրքերը առաջարկեցին մեզ տեսնուել ու բանակցել: Մենք մի արհամարհական ժեստով մերժեցինք առաջարկը: Եւ դա մեծ յանցանք էր»:

Այդպէս չէ. Քաջազնունին սխալւում է:

Նախ՝ մենք Օլթին չենք գրաւել եւ նպատակ էլ չենք ունեցել գրաւելու: Կռիւներ ունեցել ենք Փէնեաքի շրջանում եւ այն ոչ թէ պատերազմ որոնելու դիտաւորութեամբ, այլ՝ որովհետեւ առանց այդ շրջանի քարածուխի անկարող էինք ապրել: Փէնեաքի շրջանը պատկանում էր ոչ թէ Թուրքերին, այլ Հայաստանին, եւ ինչպէս Զանգի-Բասարի կամ Վէդիի Թուրքերը, այնտեղի ազգաբնակութիւնն էլ չէր ուզում ճանաչել Հայաստանի իշխանութիւնը: Մեր կատարեալ իրաւունքն էր — ե՛ւ պարտականութիւնը — այդ շրջանում եւս տարածել Հայաստանի իշխանութիւնը, եւ այս ամենեւին Թուրքերի երեսին ձեռնոց նետել չէր: Եթէ Փէնեաքի շրջանի գրաւումը թշնամական գործ էր Թուրքերի հանդէպ, ապա, ուրեմն, է՛լ աւելի մեծ թշնամութիւն էր Կարսի ու Սարըղամիշի գրաւումը:

Այդ շրջանի «հապճեպ» գրաւումը կենսական անհրաժեշտութիւն էր, որովհետեւ Խորհրդ. Ադրբէջանի կառավարութիւնը թոյլ չէր տալիս, որ Բագուից նաւթ գայ Հայաստան, եւ մեր երկաթուղիները գտնւում էին կանգնելու սպառնալիքի տակ: Հայաստանի կառավարութիւնը նաւթ հասցնելու համար մի շարք արտակարգ միջոցներ ձեռք առնելուց զատ, ստիպուած եղաւ դիմելու եւ իր սահմաններում գտնուող քարածուխին: Փէնեաքի հանքային

շրջանը յունիս ամսին բռնուեց հայ զօրքերով, ուղարկուեցին հանքագէտներ ու մասնագէտներ եւ նախնական փորձերը կատարելուց յետոյ՝ ձեռնարկուեց ածխահանքերի շահագործման:

Ածխով բեռնաւորուած առաջին սայլերը արդէն սկսել էին հասնել Կարս, երբ տեղական Թուրքերը յարձակուեցին աշխատողների վրայ, մի մասի՛ կոտորեցին ու գերի տարին, իսկ միւս մասը հազիւ կառողացաւ ազատուել: Սրանից յետոյ էր, որ կառավարութիւնը ստիպուած եղաւ կտրուկ միջոցներ ձեռք առնելու: Այս դէպքը Քաջազնունին անուանում է «Օլթիի հապճեպ գրաւում»:

Երկրորդ եւ աւելի էական ուղղում. ճիշտ չէ, թէ՝ «Երբ սահմանի վրայ զինական գործողութիւնները սկսուած էին արդէն, Թուրքերը առաջարկեցին մեզ տեսնուել ու բանակցել»: Սահմանի վրայ ընդհարումները սկսուելու միջոցին Թուրքերի կողմից այդպիսի առաջարկութիւն չի եղել մեզ: Հայ-Թըրքական ընդհարումները սկսուեցին, սեպտ. 23-ին, իսկ «տեսնուելու եւ բանակցելու» առաջարկութիւններ Թուրքերը արին ուղիղ երեք ամիս առաջ: Եւ թէ «տեսնուելու ու բանակցելու» ի՞նչ առաջարկութիւններ էին դրանք, ցոյց են տալիս հետեւեալ տեղեկութիւնները:

Յունիս 24-ին Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովի արտաքին գործերի գործավար Բէքիր Սամին մի թուղթ է գրում Հայաստանի Արտ. Գործոց Նախարարութեան, որի մէջ յայտնելով, թէ «հայկական շահերը Թուրքականի հետ անհամապատասխան չեն, ընդհակառակը կարելի է համաձայնեցնել եւ աւելի սերտ դարձնել»՝ խորհուրդ է տալիս խաղալիք չդառնալ անգլիացիների ձեռքին եւ դադարեցնել

զինուորական գործողութիւնները Օլթիի շրջանի մահմեդական ազգաբնակութեան դէմ (ի նկատի ունի քարածուխի հանքերի գրաւման համար կատարուած գործողութիւնները)։ Հակառակ դէպքում, «յարձակումների շարունակութեան ամբողջ պատասխանատուութիւնը թողնում է հայկական կառավարութեան վրայ»։ Ինչպէս տեսնում էք, այս թղթի մէջ չկայ եւ ո՛չ մի խօսք «տեսնուելու եւ բանակցելու» մասին։

Բէքիր Սամիի նամակին Հայաստանի Արտ. Գործոց նախարարութիւնը պատասխանում է յունիս 30-ին՝ քարտուղար Տէր-Յակոբեանի ստորագրութեամբ*)։ Այդ պատասխանի մէջ յայտնւում էր, որ «հայ զօրքերի վերջին ռազմական գործողութիւնները Օլթիի շրջանում նպատակ ունէին ազատելու հայկական հողամասերը անիշխանական տարրերից եւ երբեք ուղղուած չէին մահմեդական խաղաղ ազգաբնակութեան դէմ»։

Ապա. «Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ բարի դրացիական փոխյարաբերութիւնների վերահաստատումը ամբողջապէս կախուած է Թուրք ղեկավարների ընթացքից, որոնք մէկ անգամ ընդմիշտ պէտք է ճանաչեն հայ ազգի իրաւունքները ամբողջական Հայաստանի սահմանների վերաբերմամբ եւ վերջ դնեն Հայաստանի Հանրապետութեան սահմաններում իրենց գործակալների գործունէութեան։

*) Անկասկած, արտ. գործոց նախարարութեան կողմից վրիպում էր այս. նախարարի նամակին պէտք է պատասխանէր նախարարը։ Այս սխալը ահագին դայրոյթ եւ գրգռութիւն է առաջ բերել Անգորայում։

«Տեսնուելու եւ բանակցելու» մասին ո՛չ մի խօսք չկայ եւ այս թղթի մէջ։

Մի շաբաթ յետոյ, յուլիս 7-ին Բէքիր Սամի մի հեռագիր է քաշում Հայաստանի արտ. գործոց նախարարութեան։ Նա նորից բողոքում է Օլթիի շրջանում կատարուող գործողութիւնների դէմ, որոնք խախտում են երկու պետութիւնների փոխյարաբերութիւնները։ «Ինչպէս ձեզ էլ անծանօթ չէ, երկու կառավարութիւնների միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնների հիմք են ծառայում Հայաստանի Հանրապետութեան պաշտօնապէս ճանաչած Բրէստ-Լիտովսկի դաշնագիրը եւ նրա լրացուցիչ՝ Բաթումի դաշնագիրը, որը լիազօրութիւն ունեցող պատուիրակութիւնների կողմից ընդունուած եւ հաստատուած է»։ Ապա նորից յայտնելով, որ «մեր կառավարութիւնը եւ Թուրք ազգը հայ կառավարութեան եւ հայ ժողովրդի թշնամին չեն եւ ցանկանում են գտնել մի կապ փոխադարձ շահերը ապահովելու համար»՝ կրկին պահանջում է. «Ձեր զօրամասերը յետ քաշել եւ հիմնուելով մեր երկուսի միջեւ գոյութիւն ունեցող փաստական եւ իրաւական տեսակէտով գործադրութեան մէջ եղող Բաթումի դաշնագրի վրայ՝ բողոքում եմ կատարուած շարժումների դէմ եւ պատասխանատու եմ գտնում մուսուլման ազգաբնակութեան վնասների պատճառ եղողներին»։

Եւ դարձեալ ո՛չ մի խօսք «տեսնուելու եւ բանակցելու առաջարկի» մասին։

Բացի այս երկու նամակից Թուրքերի կողմից Հայաստանի կառավարութեան ուրիշ դիմում չի եղել։ Մնում է անհասկանալի, ո՞րտեղից է առել Քաջազնունին, թէ «Թուրքերը առաջարկեցին մեզ

տեսնուել ու բանակցել», իսկ մենք «մի արհամարհական ժեստով մերժեցինք»։

Այս այսպէս լինելով հանդերձ՝ ես կատարելապէս համաձայն եմ Քաջազնունու հետ, որ «մենք պէտք է փորձէինք հաշտութեան լեզու գտնելու Թուրքերի հետ» եւ որ այդ մենք չենք արել։ Եւ դա «մեծ յանցանք է»։ Բէքիր Սամիի դիմումներից չօգտուելն ու բանակցութիւնների մէջ չմտնելը ծանր սխալ էր։ Մենք ինքներս պէտք է քայլեր անէինք բանակցելու, որովհետեւ մենք թոյլ էինք եւ շատ պէտք ունէինք հաշտութեան։ Բայց միաժամանակ լաւ հասկանանք. յաջողութեան յոյս կա՞ր այդպիսի փորձերի համար եւ հոգեբանօրէն կարո՞ղ էինք այդպիսի քայլեր անել։

Քաջազնունու գրածից պարզ չէ՝ հաւատո՞ւմ է նա, թէ այն ժամանակ հնարաւոր էր Թուրքերի հետ հասկացողութեան գալ։ Մէկ ասում է, թէ՝ «հաւանական է պատերազմը լինէր (քանի որ նա պէտք էր Թուրքերին)». մէկ՝ թէ «մի խաղաղ ելք գտնելը անկարելի չէր (անհաւանական, բայց ոչ անկարելի)»։ Մնում է չպարզուած, թէ ինչպէ՞ս «խաղաղ ելք գտնելը անկարելի չէր», երբ «պատերազմը պէտք էր Թուրքերի համար»։ Սա տրամաբանական հակասութիւն է։ Եթէ Թուրքերի համար շահաւէտ էր մեզ հետ պատերազմելը», մենք ո՞րտեղից «որոշ շանսեր ունէինք Թուրքերին խօսք հասկացնելու»։ Պարզ է, որ Քաջազնունին իր ցանկութիւնները շփոթում է իր իսկ առաջ բերած փաստերի ու եզրակացութիւնների հետ, եւ նրա թուած փաստերից ու եզրակացութիւններից չի հետեւում, թէ մենք կը յաջողէինք Թուրքերի հետ ընդհանուր լեզու գտնելու, ընդհակառակը, այդ փաստերից մի եզրակացութիւն

միայն կարելի է հանել — ա՛յն, որ Թուրքերին պատերազմը Հայաստանի հետ հարկաւոր էր եւ որ ո՛չ մի քայլ մեր կողմից չպիտի փրկէր մեզ պատերազմից։

Բայց ենթադրենք մի պահ, որ «տեսնուելու եւ բանակցելու» առաջարկ կար Թուրքերի կողմից եւ որ բանակցութիւններն, իրօք, սկսուեցին։ Ի՞նչ կը լինէր հետեւանքը։ Ի հարկէ, եթէ ես ու Քաջազնունին մեր այսօրուայ խելքով վարէինք բանակցութիւնները, երեւի, մի համաձայնութեան կը հասնէինք, որովհետեւ այսօրուայ մեր ախորժակները չա՛տ են համեստ։ Բայց այն ժամանակ, 1920 թ. յունիս–օգոստոս ամիսներին այդպէ՞ս էինք մտածում։ Թո՛ղ Քաջազնունին վերյիշէ, թէ ի՞նչպէս էր մտածում ինքը ոչ թէ 1920 թ. յունիս–յուլիսին, այլ հոկտեմբեր ամսին, երբ ծառանում էր Լէգրանի պահանջի դէմ եւ համոզում «աչքի լոյսի պէս պահել Սեւրի դաշնագիրը»։ Եւ եթէ այդպէս էր մտածում Քաջազնունին, որ նոր էր գալիս արտասահմանից եւ, ուրեմն, տեղեակ էր Ամերիկայի եւ «մեր մեծ Դաշնակիցների» տրամադրութիւններին, ի՞նչ կարելի էր պահանջել մեզանից, որ բոլորովին կտրուած էինք արտաքին աշխարհից եւ տապակւում էինք մեր իւղի մէջ։

Սեւրի դաշնագիրը մի անգին գանձ էր, որ պէտք էր պահել աչքի լոյսի պէս, իսկ Բէքիր Սամի բէյը խօսում էր Բրէստ–Լիտովսկի ու Բաթումի դաշնագրերի անունից։ Պէ՞տք էր յուսալ, որ այս երկու բեւեռ–մտածողութիւնները կարելի կը լինի հաշտեցնել միմեանց հետ։ Կա՞ր, կարո՞ղ էր գոյութիւն ունենալ հայոց մէջ այն ժամանակ թէկուզ մի մարդ, որ հրաժարուէր Սեւրի հեռանկարներից եւ Թուրքե-

րի հետ առանձին հաշտութիւն կնքէր, օրինակ, Ալաշկերտ–Բասէն առանալով: Չկար ու չէր կարող լինել: Այդպէս է համոզուած եւ ինքը՝ Քաջազնունին: Ինչո՞ւ չէր կարող լինել: «Որովհետեւ, պատասխանում է նա, բոլոր քաղաքական կուսակցութիւններն ու խմբակցութիւնները, ազգային բոլոր դիւանագէտները, կոչուած ու անկոչ հայրենիք փրկողները — թէ երկրի ներսը եւ թէ, մանաւանդ, երկրից դուրս — բոլորը իբրեւ մի մարդ կըմբոստանային, կը քարկոծէին, միաբերան դաւաճան կը յայտարարէին... Սեւրի դաշնագիրը շլացրել էր բոլորի աչքերը»:

Քիչ առաջ տեսանք, որ Սեւրի դաշնագիրը ո՛չ միայն «ազգային բոլոր դիւանագէտների, կոչուած ու անկոչ հայրենիքի փրկիչների» աչքն էր, «շլացրել», այլեւ իրեն՝ Քաջազնունու պէս զգաստ մարդու աչքը: Եւ յետոյ, արդեօ՞ք միայն Սեւրի դաշնագիրն էր դեր խաղում, որ հայերը այնպէս վերապահ էին դէպի Թուրքերը, թէ՞ կար եւ ուրիշ պատճառ: Ինչո՞ւ 1920–ի ամառը միայն մէջտեղ եկաւ Թուրքերի հետ «տեսնուելու եւ բանակցելու» խնդիրը: Արդեօք որոշ չափով իրաւացի չէի՞ն այն յոռետեսները, որոնք պնդում էին թէ Թուրքերի նպատակը Սեւրի դաշնագիրը վիժեցնելն է եւ ոչ թէ հայերին զոհացում տալը: Անկարելի չէ եւ այս: Շատ բնական է, որ Թուրք գործիչները կ'ուզենային հայկական հարցը հանել կնքելիք դաշնագրից եւ դարձնել հայ–թրքական անմիջական յարաբերութիւնների առարկայ՝ վստահ, որ եթէ իրենք հայերի հետ մնան երես առ երեսի, միշտ էլ միջոց կը գտնեն իրենց ուզածը ընդունել տալու:

Հայ–թրքական յարաբերութիւնները խիստ բարդ

ու ցաւոտ եւ, մանաւանդ, մեզ համար չափազանց շատ անյայտ կողմեր ունեցող երեւոյթ են, եւ կարելի չէ այնպէս թեթեւ կերպով մօտենալ նրան, ինչպէս վարւում է Քաջազնունին: Այնքա՛ն թեթեւ, որ նոյնիսկ նեղութիւն չի քաշել իր գործածած փաստերը ճշտելու...

14. Քաջազնունին հարց է տալիս.— «Կա՞ր արդեօք որեւէ համաձայնութիւն բոլշեւիկների եւ Թուրքերի միջեւ»:

Եւ պատասխանում է. «Մեր շարքերում շատ տարածուած է այդ համոզմունքը: Կարծում եմ, սակայն, որ սխալ է այդ. յամենայն դէպս, դրական ապացոյց չկայ... Բոլշեւիկների դաւադրութիւնը չէր մեր պարտութեան պատճառը, ոչ իսկ Թուրքերի ուժը (որ շատ էլ մեծ չէր այն ժամանակ*), այլ մեր սեփական ապիկարութիւնը»:

Որ «մեր սեփական ապիկարութիւնը» դեր խաղում էր, ես չէ, որ պիտի հերքեմ: Բայց որ «մեր պարտութեան պատճառը բոլշեւիկեան դաւադրութիւնն էր», Քաջազնունին չէ, որ պիտի հերքէ: Եղել է՞ արդեօք Թուրքերի ու բոլշեւիկների միջեւ ձեւական համաձայնութիւն Հայաստանի դէմ, այդ ո՛չ ես կարող եմ հաստատել, ոչ էլ Քաջազնունին

---

*) Այս կէտում էլ Քաջազնունին սխալւում է: Ճիշտ է, սկզբում այն կարծիքը կար, որ Թուրքերի ուժը շատ էլ մեծ չէ, բայց յետոյ պարզուեց, որ Թուրքերը մեր դէմ հանել էին առնուազն 20,000 կանոնաւոր զօրք: Այս թուի մասին կարելի չէ ասել «շատ էլ մեծ չէր», երբ նոյն ժամանակ Սարըղամիշ–Մերտենէք գծի վրայ ունէինք ընդամէնը 300 զինուոր:

կարող է ժխտել։ Այդպիսի պաշտօնական փաստաթուղթ հրապարակի վրայ չկայ, բայց որ թուրք-բոլշեւիկեան գործնական քայլերից շատերը ուղղուել են Հայաստանի դէմ, այդ չի կարող վէճի նիւթ ծառայել։

Արձանագրենք մի քանի փաստեր։

Յայտնի է, որ Ազրբէջանը խորհրդային դարձաւ քէմալականների ջանքերով։ Խալիլ փաշա, Քեազիմ բէյ եւ ուրիշներն էին, որ բոլշեւիկներին բերին Բագու եւ այնտեղից էլ Զանգեզուրի վրայով առաջնորդեցին Նախիջեւան։ Խորհրդային Ազրբէջանի առաջին քայլը եղաւ հեռագրական վերջնագիր ներկայացնել Հայաստանի կառավարութեան Ղարաբաղ-Զանգեզուրի շրջաններից հայկական զօրքերը դուրս բերելու համար։ Ազրբէջանի խորհրդայնացման հետ մէկտեղ ամբողջ Հայաստանում բռնկուեցին բոլշեւիկեան ապստամբութիւններ, եւ գրեթէ անընդհատ, թէ մինչեւ հայ-թրքական պատերազմը եւ թէ պատերազմի ընթացքին կարմիր զօրամասերը պաշարման վիճակի մէջ էին պահում Հայաստանի հիւսիսային սահմանները։ Թէ բոլշեւիկեան ապստամբութիւնների եւ թէ հիւսիսային սահմանների վրայ կատարուած յարձակումների հետեւանքով երկիրը ահագին նիւթական ու բարոյական ույժ վատնեց ու թուլացաւ։ Մեր պարտութեան պատճառ եղող դաւադրութի՞ւն է այս, թէ ոչ— Թո՛ղ Քաջազնունին ինքը որոշէ։

Թէ Շուշի-Նախիջեւան խճուղիով եւ թէ Սեւ ծովի նաւահանգիստներով բոլշեւիկները մեծ քանակութեամբ ոսկի, ռազմամթերք, թնդանօթներ, անթել հեռագիր, փոխադրութեան միջոցներ եւ պարէն ուղարկեցին Տրապիզոն եւ Էրզրում։ Այդ ռազմա-

մթերքով ու դրամով Քարա Բէքիր Քեազիմ փաշան զինեց ու կազմակերպեց իր բանակը եւ ուղղեց դէպի Հայաստանի սահմանները։ Կարսն ու Ալեքսանդրապոլը նուաճուեցին բոլշեւիկեան զէնքերով։ Մեր պարտութեան պատճառ եղող դաւադրութի՞ւն է այս, թէ ոչ — Թո՛ղ Քաջազնունին ինքը որոշէ։

Հիմա արդէն յայտնի է, որ Քեազիմ Քարաբէքիրի սպայակոյտում եղել են բոլշեւիկ գործակալներ, որոնք կապ են պահել Հայաստանում պահուած բոլշեւիկների հետ եւ վերջիններից տեղեկութիւններ են ստացել։ Լուրջ հիմքեր ունինք կասկածելու, որ նոյնիսկ Լէգրանը յարաբերութեան մէջ է եղել թուրք հրամանատարութեան հետ։ Անհերքելի է նաեւ այն, որ Թիֆլիսից ու չէզոք շրջանից բոլշեւիկները թռուցիկներ ու պրօպագանդիստներ են ուղարկել հայկական զօրքերի մէջ եւ աշխատել նրանց բարոյալքել։ Փաստ է նաեւ, որ երբ թուրք բանակը մօտենում էր Ալեքսանդրապոլին, բոլշեւիկեան կոմիտէն՝ ընդառաջ է գնացել կարմիր դրօշակով եւ բոլշեւիկ ներկայացուցչի առաջին խօսքը եղել է. «Ողջո՛յն թուրք ազատարար բանակին, որ գալիս է ազատելու մեզ Դաշնակների դժոխքից»...*)

Մեր պարտութեան պատճառ եղող դաւադրութի՞ւն է այս, թէ ոչ — Թո՛ղ Քաջազնունին ինքը որոշէ։

Ահա ինչ է գրուած Ֆրանսիացի յայտնի պատմաբան Հանրի տը Ուէնտէլ-ի խմբագրութեամբ

---

*) Կարող եմ եւ ճառախօսի անունը տալ. Քեազիմ Քարաբէքիրի բանակին ողջոյնի ճառ խօսողը եղել է Ալեքսանդրապոլի նորակազմ յեղկոմի ներկայացուցիչ օր. Նուշիկ Զաւարեանը։

հրատարակուող «Սօվիէտների Պատմութիւնը» գրքի մէջ․— «Ամենակարեւոր փաստը, որ մենք պէտք է այստեղ յիշատակենք, ռուս–թրքական դաշինքն է։ Կնքուած 1920 թ․ յունիսին եւ լրացած զինուորական համաձայնութեամբ, որ ստորագրուեց հոկտ․ 27ին Սըվասում Ռաղէկի, Վօլսկիի, Էլիավայի եւ Ահմէտ Մուխթարի կողմից՝ դաշինքը հաստատուած է նախ եւ առաջ Սեւրի դաշնագրի բացասման վրայ։ Նա մերժում է կատարելապէս Դաշնակիցների վերահսկողութիւնը Նեղուցների վրայ․ ջնջում է բոլոր անզամահատումները, ճանաչում է օսմանեան վեհապետութիւնը թրքական հողերի ամբողջութեան վրայ, վերջապէս հաստատում է համերաշխութիւն Անգօրայի կառավարութեան հետ արտաքին իմպէրիալիզմի դէմ մղուող կռւում։ Ռուսաստանը դրամ է տալիս Մուսթաֆա Քէմալի ձեռնարկի համար եւ դնում է նրա տրամադրութեան տակ Կովկասի պահեստների զէնքերը եւ բազմաթիւ գործարաններ ռազմամթերքի արտադրանքներ կատարելու համար։

«Այս դաշինքի հետեւանքները բազմաթիւ են եւ շատ կարեւոր։ Բացի Բագուի արեւելեան ժողովուրդների համագումարից, որի բանաձեւերը կը քննենք յաջորդ գլխում, մենք պէտք է անմիջապէս նկատենք, որ սոյն այս դաշնագրի հիման վրայ էր, որ Մուսթաֆա–Քէմալի բանակները 19 սեպտ․ 1920–ին արշաւեցին Հայաստանի դէմ։ (Ընդգծումը իմն է․ Ս․ Վ․)։

«Այս արշաւանքը հասաւ իր նպատակին, խորհրդային ռէժիմը յայտարարուեց Հայաստանի ամբողջ տարածութեան վրայ, եւ Ռուսաստանի, Ադրբէջանի, Անգօրայի եւ Հայաստանի խորհրդային կառավարութիւնները ստորագրեցին միութեան եւ

եղբայրութեան դաշնագիր»։*)

Այս նոյն փաստը հաստատւում է եւ մի ուրիշ աղբիւրից· «Րեվիւ տիւ Մօնտ Միւսիւլման» լուրջ եւ շատ իրազեկ ամսագիրը հաղորդում է, որ կայ Քարաբէքիր փաշայի Հայաստանի դէմ սկսած պատերազմական գործողութիւնների եւ Բագուի Արեւելեան ժողովուրդների համագումարի միջեւ, որին ներկայ էր եւ Էնվէր փաշան։ Նոյն տեղ ասւում է նաեւ, որ քէմալականները ստանում էին բոլշեւիկներից պատերազմը շարունակելու համար անհրաժեշտ ռազմամթերք, անթել հեռագրի գործիքներ, ծանր թնդանօթներ եւայլն**)։

Մեր պարտութեան պատճառ եղող դաւադրութի՞ւն է այս թէ ոչ — թո՛ղ Քաջազնունին ինքը որոշէ։

1920 թ․ հոկտ․ 10–ին Երեւան եկաւ Խորհրդ․ Ռուսաստանի ներկայացուցիչ Լէգրանը եւ 13–ին Ռուսաստանի ներկայացրեց Հայաստանի կառավարութեան մի նոտա, որով պահանջում էր․

1․ Տալ Խորհրդ․ Ռուսաստանին իրաւունք տեղափոխելու հայկական երկաթուղիներով ու խճուղիներով զօրք ու ռազմամթերք թրքական բանակին միանալու համար։

2․ Հրաժարուել Սեւրի դաշնագրից։

Եւ այս արւում էր այն ժամանակ, երբ թուրքերը Բէգիր–Ահմէտի տակ կանգնած՝ սպառնում էին Հայաստանին։

---

*) Տե՛ս "Histoire des Soviets", Publiee sous la Direction de M. Henri de Weindel, 1923, Paris.

**) "Revue du Monde Musulman", Volume LII, Decembere, 1922, Paris, էջ 197, 199․

Հոկտ. 15-ին Հայաստանի կառավարութիւնը պաշտօնական տեղեկութիւն ստացաւ, որ 12 օր առաջ Տուապսէում ստացուել է Մոսկուայից 16 վագոն հրացան ու փամփուշտ եւ անմիջապէս շոգեմակոյկներով փոխադրուել Տրապիզոն, պարպուել ռուսական նաւամատոյցի Թիւ 1 պահեստում եւ ապա բաժանուել է չէտաներին, որոնք ուղղուել են հայկական ճակատ: Այս մասին մեր կառավարութիւնը անմիջապէս յայտնեց Մոսկուա եւ Դաշնակիցների Թիֆլիսի ներկայացուցիչներին:

Խորհրդ. Ազրբէջանի պաշտօնաթերթ «Կոմունիստը» Թուրքերի Հայաստանի դէմ սկսած պատերազմի առթիւ իր հոկտեմբերի Թիւ 137-ում գրում է. «Հարաւ-Արեւմտեան Կովկասի (Կարս-Արտահան-Բաթում) հանրապետութեան կառավարութեան հինգ անդամները — երեք մահմեդական, մէկ յոյն եւ մէկ ռուս, որոնք 1919 թուին անգլիացիների կողմից ձերբակալուած էին Կարսում եւ աքսորուած Մալթա կղզին, փախել են գերութիւնից եւ վերադառնում են հայրենիք, որպէսզի նորից՝ Երրորդ Կոմունիստական Ինտէրնացիոնալի օգնութեամբ՝ ձեռք առնեն երեք միլիոնանոց մահմետական ազգաբնակութեան ազատագրութեան գործը Դաշնակների եւ մէնշեւիկների ձեռքից»: Նոյն թերթը գոհունակութեամբ արձանագրում է, որ Մուսթաֆա Քէմալի զօրքերը գրաւել են Կարսի ու Բաթումի նահանգները, Ախալցխան, Սուրմալուն ու Շարուրը:

1920 թ. օգոստոսի 6-ին, Հայաստանի հետախուզական մասի վարիչը հաղորդում է Թիֆլիսից. «Բաթումում ու Բագւում երիտասարդ Թուրքերը բանակցել են բոլշեւիկների հետ եւ համաձայնութեան են եկել միասին դուրս գալու եւրոպական իմ-

պերիալիստների դէմ: Քէմալականները բաւական մեծ գումար են ստացել բոլշեւիկներից այդ ուղղութեամբ աշխատելու համար: Հայաստանը ճանաչուած է անվստահելի, Անտանտի կողմնակից: Թուրքերի նպատակն է պահպանել Տաճկաստանի ամբողջութիւնը եւ ամէն ջանք գործ դնել անկախ Հայաստանի ստեղծումը խանգարելու»:

1920 թ. սեպտ. 20-ին Հայաստանի Թիֆլիսի դիւանագիտական ներկայացուցիչը տեսնում է Լէգրանի հետ եւ հարցնում, թէ՝ արդեօք Խորհրդ. Ռուսաստանը հարկ չի՞ համարում ճնշում գործ դնել իր դաշնակից Թուրքերի վրայ սկսուած յարձակումը կասեցնելու նպատակով: Լէգրանը խոստանում է հեռագրել Մոսկուա: «Բայց, նկատում է Հայաստանի ներկայացուցիչը իր զեկուցման մէջ, ինձ թուաց, որ սա սոսկ դիւանագիտական պատասխան էր: Ես կարծում եմ, որ այս խաղը սկսուած է ո՛չ առանց սովէտական Ռուսաստանի օգնութեան՝ մեզ նեղ պայմանների մէջ դնելու դիտաւորութեամբ»:

Մեր պարտութեան պատճառ եղող դաւադրութիւննե՞ր են սրանք, թէ ոչ — թո՛ղ Քաջազնունին ինքը որոշէ:

Քաջազնունին համոզուած է, որ «բոլշեւիկների դաւադրութիւնը չէր մեր պարտութեան պատճառը». թո՛ղ նա ինքը խօսի իր խղճի հետ: Իմ խիղճը եւ իմ ունեցած փաստերը հակառակն են ասում: Իսկ երբ բացուին Մոսկուայի արտաքին աշխարհի համար գոցուած արխիւները եւ հրատարակութեան տրուին գաղտնի վաւերագրերը, անշուշտ Քաջազնունին էլ կը համոզուի, թէ ի՛նչ մեղք է վերցնում նա իր հոգու վրայ հանդէպ պատմութեան ու հան-

դէպ հայ ժողովրդի իր այս ո՛չ մի իրական տուեալի վրայ չհիմնուած կարծիքներով։

Այս նիւթը վերջացնելուց առաջ յիշեմ եւս մի դէպք։ 1919 թուի աշնանը Երեւանում ստացուեց Դաշնակցութեան Պօլսի Պատասխանատու Մարմնի ուղարկած պատճէնը բոլշեւիկ–քէմալական գաղտնի դաշնագրի։ Դաշնագիրը ստորագրուած էր — լաւ չեմ յիշում — Սամսոնում կամ Տրապիզոնում, եւ պատճէնը ձեռք էր բերուած շատ վստահելի աղբիւրից։ Երեւանում այդ թուղթը ահագին յուզում առաջ բերեց, եւ ընկ. Ա. Ջամալեանը, Ռ. Տէր–Մինասեանը ու ես Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրօի կողմից մեկնեցինք Թիֆլիս, որպէսզի բոլշեւիկեան աղբիւրից իմանանք ճշմարտութիւնը։ 1920 թ. յունուարի սկզբին Ռ. Տէր–Մինասեանը Թիֆլիսի մեր կենտր. Կոմիտէի մի անդամ եւ ես տեսնուեցինք Համառուսական Կոմունիստական Կուսակցութեան Կովկասեան Բիւրօի ընդհանուր քարտուղար Հ. Նազարէթեանի հետ, որը գաղտնի ապրում էր Վրաստանի մայրաքաղաքում եւ վարում իրենց կուսակցութեան գործերը։ Մենք հարցրինք.— 1) ճի՞շտ է արդեօք, որ բոլշեւիկների եւ քէմալականների միջեւ կնքուած է գաղտնի համաձայնութիւն եւ 2) ճի՞շտ է, որ այդ համաձայնութիւնը ուղղուած է նաեւ Հայաստանի դէմ։ Նազարէթեանը բոլշեւիկ–քէմալական համաձայնութեան փաստը չհերքեց եւ կմկմալով ու չփոթուելով շատ երկար խօսում էր այն մասին, որ խորհրդային իշխանութիւնը ճնշուած ժողովուրդների պաշտպան է եւ, հետեւաբար, չի կարող չպաշտպանել նաեւ հայ ժողովրդին։ Մեր դրած պարզ հարցին պարզ պատասխան չստացանք, եւ Նազարէթեանի խօսքերից այն համոզումը գոյա–

ցրինք, որ, իրօք, բոլշեւիկ–քէմալական գաղտնի համաձայնութիւնը կարող է ուղղուել նաեւ Հայաստանի դէմ . . .

15. Բնականաբար, Քաջազնունին գոհ չէ եւ «մեր դիւանագիտական աշխատանքից դրսի աշխարհում»։ Եւ ամէնից առաջ նրան զայրացնում է այն «ցնորամիտ, ողայնական ծրագիրը», որ «1919 թ. գարնան, Փարիզում, Հանրապետութեան Պատուի– րակութիւնը, Ազգ. Պատուիրակութեան հետ միասին», ներկայացրեց դաշնակից մեծ պետութիւններին։ «Մեր պատուիրակութիւնը՝ իբրեւ հրահանգ՝ տարել էր Երեւանից շատ համեստ պահանջներ՝ համապատասխան մեր շատ համեստ կարողութիւններին։ Ինչպէ՞ս պատահեց, ուրեմն, որ Պատուիրակութիւնը ստորագրեց ու ներկայացրեց «ծովից ծով» պահանջը»։ Եւ Քաջազնունին պատասխանում է. «Հայկական Փարիզը որոշեց»։

Քաջազնունու վրդովումը միանգամայն արդարացի է. այո՛, ճակատագրական դեր կատարեց մեր նորագոյն պատմութեան մէջ «Հայկական Փարիզը» — ուտոպիստ, մեծամիտ, ամբարտաւան, եսապաշտ, բամբասանքներ եւ ինտրիգներ սիրող, հայրենի հողից կտրուած ու օտար, բայց հայրենիքի ճակատագիրը տնօրինելու յաւակնութեամբ արբեցած, դաւադիր «Հայկական Փարիզը»։ Եւ «Երեւանից շատ համեստ պահանջներով» Եւրոպա մեկնած պատուիրակութիւնը, անշուշտ, զոհ գնաց նոյն այդ «Հայկական Փարիզի» դաւերին։

Պէտք է ասել, որ Երեւանում նախատեսւում էր այդպիսի հնարաւորութիւն։ Երբ կազմւում էր Պատուիրակութիւնը, շատերին լուրջ կերպով մտահոգում էր այն վախը, որ «Հայկական Փարիզը» կա–

րող է անել ոչ ցանկալի ազդեցութիւններ: Եւ այդ պատճառով կային մարդիկ, որոնք անհրաժեշտ էին համարում, որ Պատուիրակութեան մէջ մտնեն նաեւ բուն երկրի գործիչներ: Մասնաւորապէս պնդող կային, որ հանգուցեալ Արամն էլ գնայ Պատուիրակութեան հետ: Դժբախտաբար, այս առաջարկը չանցաւ: Միւս կողմից ե՛ւ կուսակցութիւնների մէջ, ե՛ւ խորհրդարանում մանրազնին քննութեան առարկայ դարձան Պատուիրակութեան տրուելիք հրահանգները: Մասնաւորապէս երկար եւ բուռն վէճ եղաւ Հայաստանի սահմանների շուրջ, եւ խորհրդարանը պարզ ու որոշ կերպով ձեւակերպեց իր կամքը.— Պահանջել Հայաստան՝ ելքով դէպի Սեւ ծով: «Ծովից ծով» Հայաստանի պահանջը մերժուեց: Այս իրադարձութիւններին, բոլոր վէճերին ու բանակցութիւններին, խորհրդարանի ու կառավարութեան նիստերին մասնակցել են եւ Պատուիրակութեան անդամներ Ա. Ահարոնեանն ու Մ. Պապաջանեանը, որոնք ստացել են իմպէրատիւ մանդատ ու մեկնել Եւրոպա... Եւ, յանկարծ, մի քանի ամիս յետոյ, Հայաստանի խորհրդարանն ու կառավարութիւնը իմանում են, որ իրենց Պատուիրակութիւնը ներկայացրել է «Ծովից ծով Հայաստանի» պահանջ... «Հայկական Փարիզը» խաղացել էր իր դաւադիր խաղը:

Պատուիրակութեան պատասխանատուութիւնը մեծ է այս խնդրում: Կազմակերպուած պետութեան մէջ նման քայլի հեղինակները կ'ենթարկուէին ամենախիստ պատասխանատուութեան: Քաջազնունու վրդովումը հասկանալի է ու տեղին... բայց ո՛չ բաւարար:

Պատուիրակութիւնը վատ վարուեց: Իսկ ի՞նչ

արաւ կառավարութիւնը: Ի՞նչ արաւ ինքը Քաջազնունին, որ այն ժամանակ նախագահ էր կառավարութեան: «Հայաստանի կառավարութիւնը, ասում է նա, իր անունից ներկայացուած պահանջի մասին՝ տեղեկութիւն ստացաւ երկու թէ երեք շաբաթ յետոյ միայն»: Այդքա՞ն: Տեղեկութիւն ստացաւ ու տեղը հանգիստ նստե՞ց: Ինչո՞ւ վարչապետ Քաջազնունին ա՛յն ժամանակ չվրդովուեց ու պատասխանատուութեան չկանչեց այդ «ցնորամիտ ու տղայական ծրագրի» հեղինակներին, ինչո՞ւ պաշտօնանկ չարաւ Ահարոնեանին, Պապաջանեանին, դատի չյանձնեց նրանց. չէ՞ որ այդ իր անմիջական պարտականութիւնն էր: Եւ, վերջապէս, ինչո՞ւ չշտապեց յետ առնել խորհրդ. ժողովից «աշխարհակալական այդ ապշեցուցիչ պահանջը» ու տեղը նորը, աւելի համապատասխանը չներկայացրեց: Ասացէք խնդրեմ, ի՞նչ տարբերութիւն կայ «Հայկական Փարիզի» ու «Քաջազնունու Երեւանի» միջեւ:

Եւ յետոյ: 1919 թ. գարնան, երբ Խաղաղութեան Համաժողովին ներկայացուել էր «ծովից ծով» Հայաստանի պահանջը, Փարիզ հասաւ Հայաստանի Հանրապետութեան նախագահը՝ ինքը Յ. Քաջազնունին: Բաւական ժամանակ մնաց Փարիզ, մասնակցեց Պատուիրակութեան աշխատանքներին եւ մեկնեց Ամերիկա: Այստեղ էլ մնաց բաւական երկար ժամանակ, մինչեւ 1920 թ. ամառը: Ապա նորից անցաւ Փարիզ ու Փարիզից Հայաստան: Քաջազնունու ճամբորդութեան ժամանակ գրած գրեթէ բոլոր նամակներն ու տեղեկագրերը — Փարիզից թէ Ամերիկայից— ես կարդացել եմ: Երկա՜ր, շա՜տ երկար գրում էր նա բազմաթիւ հարցերի մասին, եւ չեմ

յիշում մի խօսք, մի ակնարկ, որով նա դժգոհութիւն կամ բողոք յայտնած լինէր Պատուիրակութեան այդ քայլի դէմ: Բնակա՞ն բան է այս, ներելի՞ բան է. համարես, որ քո ներկայացուցիչը «ապշեցուցիչ», «ցնորամիտ», «տղայական» ծրագիրներով դիմումներ է անում պետութիւններին, եւ ինքդ հանգիստ խղճով նստես նրա կողքին, տեսնես նրա գործերն ու լռես... Ինչո՞ւ Քաջազնունին, հէնց Փարիզում չբռնեց Պատուիրակութեան օձիքը, ինչո՞ւ չշտապեց սրբագրել «ապշեցուցիչ» սխալը: Չէ՞ որ ժամանակ կար, ծրագիրը ներկայացուած էր 1919ի գարնանը, իսկ Սեւրը եղաւ 1920–ի օգոստոսին... Այո՛, պատմութեան դատաստանը պէ՛տք է դատ անի այն մարդկանց գլխին, որոնք հայ ժողովրդի անունից դրին «աշխարհակալական ցնորամիտ պահանջներ», բայց... այդ մարդիկ միայն «հայկական Փարիզում» չէին, այլ եւ «հայկական Երեւանում»:

16. Այնուհետեւ ես կ՚անցնեմ փետրուարի 18ին եւ ապստամբութեան յաջորդող դէպքերին, բայց նախ քան այս կ՚անեմ մի–երկու զուտ փաստական ճշտում: Քաջազնունի գրում է: Ալեքսանդրապոլի դաշնագիրը ստորագրուեց «դեկտ. 1–ին (թէ նոյեմբեր 30–ին)», այն ինչ Ալեքսանդրապոլի դաշնագիրը ստորագրուել է դեկտ. 2ին: Գրում է. «Դեկտ. 1–ին Վրացեանի կառավարութիւնը հրաժարուեց իշխանութիւնից», մինչդեռ այդ դէպքը տեղի է ունեցել դեկտ. 2–ին: Գրում է. «1922 թուականին սկսուեց Թուրքահայ Դատի հոգեվարքը: Լօնտօնի կօնֆերանսում առաջին անգամ պաշտօնապէս արտասանուեց ու արձանագրուեց hom բառը». Իրապէս «Թուրքահայ Դատի հոգեվարքը» սկսուեց եւ

hom–ը մէջ տեղ եկաւ 1921 թ. մարտին: Ինչպէս առաջ էլ տեսանք, Քաջազնունու գրքոյկում քիչ չեն նման անճշդութիւններ: Սրանք, ի հարկէ, նրա «եզրակացութիւնները լայնօրէն հիմնաւորելու» տեսակէտից առանձին կարեւորութիւն չունին, բայց բաւական բնորոշ են:

Շատ ճիշտ է ասում Քաջազնունին. «Փետրուարեան ապստամբութիւնը բոլշեւիկների գործն էր ամբողջովին»: Ճիշտ է եւ այն, որ «Դաշնակցութիւնը ... հակառակ է եղել ապստամբութեան»: Բայց ճիշտ չէ եւ — թո՛ղ ների ինձ Քաջազնունին այս բառը — զրպարտութիւն է հայ ժողովրդի մասին այն ամէնը, որ նա ասում է կռուի յետագայ փուլերի վերաբերմամբ:

Նա ասում է. «Ապստամբութիւնը... բռնկուեց յանկարծակի, մի վայրկեան յայտ բերեց մեծ ոգեւորութիւն ու ուժերի լարում, բայց իսկոյն իջաւ, յուսալքուեց, գոլորշիացաւ»:

Եթէ, իսկապէս, ապստամբութիւնը իսկոյն «յուսալքուեց ու գոլորշիացաւ», ապա ինչպէ՞ս 42 օր շարունակ ապստամբ ժողովուրդը դիմացաւ երեք ճակատներից կատարուող բոլշեւիկեան բազմաթիւ գրոհներին: Ինչպէ՞ս եղաւ, որ բոլշեւիկները չգրաւեցին Երեւանը փետրուարի 28–ին կամ մարտի 14–ին, երբ նրանց զրահապատ գնացքները արդէն Շէնգաւիթի տակ էին, իսկ հետեւակները մագլցում էին Ագրաշի բարձունքները: Ինչո՞ւ ահագին զոհեր տալով փախան «անդիմակից ու յուսալքուած» ապստամբների առջեւից:

Մեր կողմը չի եղել զինուորական կազմակերպութիւն — այդ ճիշտ է: Մենք չենք ունեցել փորձուած հրամանատարներ ու տեխնիկական միջոցներ

— այդ էլ ճիշտ է։ Ճիշտ է նաեւ, որ զինուորական կարգապահութեան պակասի պատճառով, մեզ չէր յաջողւում լիովին օգտագործել յաղթանակները, արագ տեղափոխութիւններ կատարել եւ ուզած ժամանակին հարուածել։ Բայց սա չի նշանակում, թէ ապստամբութիւնը «իսկոյն իջաւ, յուսալքուեց, գոլորշիացաւ»։

«Մեր շարքերում, գրում է Քաջազնունին, տարածուած է այն համոզմունքը, թէ ապստամբ ժողովուրդը լաւ կռուեց ու եթէ յաջողութիւն չունեցաւ, պարտուեց — պատճառը բոլշեւիկների գերազանցօրէն մեծ ուժն էր։ Ես հակառակ կարծիքի եմ։ Լաւ կռուեցին, ինչպէս հերոսաբար կռուեցին՝ բոլշեւիկները, իսկ մերոնք վատ կռուեցին։ Եթէ լաւ կռուէին, առաջին իսկ շաբաթուայ ընթացքում կը ջարդէին հակառակորդին թէ՛ Ղամարլուի եւ թէ Ելենովկայի ճակատներում (հակաբոլշեւիկեան Վրաստանը դեռ կանգուն էր, դրսից օգնութիւն դեռ չէին ստացել բոլշեւիկները եւ իրենց սեփական ուժը շատ աննշան էր Հայաստանում)»։

Եւ սա կոչւում է անաչառ ու արդար կարծիք։ Եւ այս կարծիքը յայտնողը Քաջազնունին է — նա՛, որ փետրուարեան օրերին Հայաստանում է եղել եւ մօտից տեղեակ էր անցած-դարձած դէպքերին։

Նախ՝ ո՞րտեղից գիտէ նա, որ «բոլշեւիկները լաւ կռուեցին», ո՞ւր է տեսել նրանց «հերոսաբար կռուելը»։ Ասել չեմ ուզում, թէ բոլշեւիկները լաւ չէին կռւում — նրանց կռիւը յուսահատի կռիւ էր եւ տարօրինակ կը լինէր, եթէ հակառակը պատահէր, բայց Քաջազնունի՞ն ուր է տեսել նրանց կռիւը, որ այդպէս հիացած է։ Փետրուարեան 42 օրեայ կռիւների ամբողջ տեւողութեան ընթացքին նա

եղել է կամ կառավարութեան կենտրոնական շէնքում, կամ Հ. Յ. Դաշնակցութեան Ակումբում եւ կամ Բաշ Գառնիում՝ փախստականի պայուսակը մէջքին։ Ո՞րտեղից կարող էր տեսած լինել բոլշեւիկների «հերոսաբար» կռուիլը։

Քաջազնունին առարկում է. «Եթէ լաւ կռուէին, առաջին իսկ շաբաթուայ ընթացքում կը ջարդէին հակառակորդին թէ Ղամարլուի եւ թէ Ելենովկայի ճակատներում»։ Ինչի՞ վրայ է հիմնուած այս հաւատը։

Ղամարլուի ճակատում բոլշեւիկները մեզանից աւելի գերազանց ուժ ունէին. նրանց ձեռքին էին երկու լաւ զինուած ու դիւրաշարժ զրահապատ գնացքներ ընտիր թնդանօթներով, որոնց դէմ մենք ոչինչ չունէինք։ Նրանք տարել էին իրենց հետ մի ամբողջ գնացք ռազմամթերք, մի քանի բատարէա թնդանօթ, մեծաքանակ գնդացիրներ։ Նրանց հետ էին մասնագէտ եւ փորձուած զինուորականներ, բռնի կերպով տարուած հայկական գնդերը, ռուս զօրամասերը, կոմունիստական զինուած խմբերը։ Նրանց յետեւն էր բարեացակամ Շարուրը, ուր գործում էին «բոլշեւիկ» Աբաս Կուլի բէգի «կարմիր հարիւրեակները»։ Մեր տեխնիկական միջոցները — Քաջազնունին լաւ գիտէ — չափազանց թերի էին, փորձուած հրամանատարներ չունէինք ու նոր էինք զօրք կազմակերպում. ինչպէ՞ս պիտի կարողանայինք «առաջին իսկ շաբաթուայ ընթացքում» ջարդել հակառակորդին Ղամարլուի ճակատում։

Աւելի նպաստաւոր չէր դրութիւնը եւ Ելենովկայի ճակատում, ուր ապստամբութեան սկզբին ժողովուրդն իր առջեւ ունէր ո՛չ միայն բոլշեւիկներին, այլ եւ բնութեան թշնամութիւնը, անօրինակ ձիւն

ու փոթորիկ էր տիրում։ Բոլոր ճամբաները գոցուած էին եւ շարժումը դարձել էր ծայր աստիճանի դժուար։ Երբ եղանակը մի քիչ պարզուեց, բոլշեւիկներն արդէն ամրացել էին Ելինօվկայի ու շրջակայքի մալական գիւղերում եւ ստացել օժանդակ ուժեր։ Ապստամբութեան առաջին օրերին ոչ միայն Ելինօվկան, այլ Ջիբուխլուն էլ գրաւուած էին ժողովրդական ուժերի կողմից, բայց հէնց բնութեան այդ արհաւիրքները ստիպեցին նրանց քաշուել բոլշեւիկ մալականների վտանգաւոր շրջանից։

Բաջազնունին ասում է. «Բոլշեւիկների սեփական ոյժը շատ աննշան էր Հայաստանում։ Ո՞վ ասաց։ Ո՞րտեղից գիտէ նա այդ բանը։ Ինչքա՞ն էր բոլշեւիկների ոյժը, կարո՞ղ է արդեօք ասել։ Երեւանում, այո՛, նրանք մեծ ոյժ չունէին, բայց չէ՞ որ Հայաստանի միւս մասերի դրութեան եւ բոլշեւիկների ոյժի մասին Երեւանում, ոչ ոք ոչինչ չգիտէր, եւ ամէնից քիչ ինքը՝ Բաջազնունին գիտէր։

Ռազմական գործում ընդունուած է զօրքի քաջութեան մասին դատել նաեւ, նրա տուած զոհերի քանակով։ Բոլշեւիկների դէմ կռուող ապստամբ ժողովուրդը բազմաթիւ զոհեր տուեց կռուի մէջ, առաջաւոր դիրքերում։ Թշնամու գնդակներից ընկան ո՛չ միայն Թադխանոսի ու Գէորգեանի պէս ալեհեր ծերունիներ, որոնք հրացանը առած ճակատ էին գնացել, այլ եւ Մ. Գիւլնազարեանի, Յ. Լազարեանի, Ս. Մելիքեանի պէս ընտիր սպաներ, Շապահի պէս խմբապետներ, Ծամհուրի պէս մաուզերականներ։ Շատ են զոհերի թիւը։ Ո՞վ կարող է յիշել այն գիւղացիներին, մաուզերականներին, բանուորներին եւ արհեստաւորներին, որոնք ընկան գիւղերում եւ առաջաւոր դիրքերում։ Իսկ

վիրաւորնե՞րը։ Բաջազնունին 42 օրուայ պայքարի ընթացքին մի անգամ գէթ մտա՞ւ զինուորական հիւանդանոց, իմացա՞ւ, թէ ի՞նչ թիւ են կազմում կռուի դաշտում վէրք ստացածները, խօսեցրե՞ց նրանց, տեսա՞ւ, ի՞նչ տրամադրութիւններ ունին։

Շատ հեշտ է ասել. «վատ կռուեցին», «յուսալքուեցին», «հաւատ չունէին»... Անարդար եւ անկողմնակալ չլինելու համար հարկաւոր է ապացուցանել այդ, փաստեր ու թուեր յիշել, համեմատութիւններ անել, այլապէս... ես արդէն գործածեցի բառը։

Եւ յետոյ, մի քիչ էլ ուրիշի կարծիքն ու փաստերը հաշուի առնենք։ Մեր դատողութիւնը, իբրեւ դէպքերին մասնակցողների դատողութիւն, միշտ ենթակայական լինելու վտանգի մէջ է։ Այսպիսի պարագաներում աւելի ուղիղ է լսել դրսի մարդկանց կամ աւելի լաւ — հակառակորդի կարծիքը։ Ի՞նչ են մտածում Հայաստանի փետրուարեան ապստամբութեան եւ հայ ժողովրդի ցոյց տուած դիմադրութեան մասին իրենք՝ բոլշեւիկները։

Ես ունիմ կարծիքը Հայաստանի մի քանի անկուսակցական եւ շատ յարգելի հասարակական գործիչների, որոնց անունը, դժբախտաբար, չեմ կարող հրապարակել։ Նրանք ասում են, որ հայ ժողովրդի ցուցադրած կորովը ուղղակի ապշեցրել էր բոլշեւիկներին, կարմիր բանակի ռուս հրամանատարները հիացած էին հայ գիւղացիների վարած կռիւներից ու տոկունութիւնից։ Նոյն այդ գործիչների վկայութեամբ՝ Ղամարլուի ճակատից վերադարձած բոլշեւիկները համոզուած են եղել, որ Երեւանից քաշուելուց յետոյ ամենաուշը մի շաբաթում նորից կը գրաւեն քաղաքը եւ չափազանց զար-

մացել են ժողովրդի ցոյց տուած ոյժի ու դիմադրութեան վրայ:

Նոյն տպաւորութիւնն էր ստացել եւ Ց. Թումանեանը, որ ճակատում շփման մէջ էր մտել թէ բոլշեւիկների եւ թէ ժողովրդական մարտիկների հետ: Երեւանից Թաւրիզ եկողները ասում էին, որ նոյն կարծիքն է յայտնել եւ Օրջօնիկիձէն, Թիֆլիսում եւ Երեւանում արտասանած իր ճառերի մէջ:

Այս ամէնը ես յիշում եմ ոչ թէ Քաջազնունուն համոզելու համար. նրա պատասխանը պարզ է. «Ձեմ հաւատում ես այդ «նշանաւոր օտարականների» տեսածներին»: Քաջազնունին հաւատում է «միայն իր տեսածին ու գիտցածին», իսկ նրա «տեսածն ու գիտցածն» էլ զանազան ժամանակներում լինում է տարբեր: «Մերոնք վատ կռուեցին»... «ապստամբութիւնը յուսալքուեց, գոլորշիացաւ», ասում է նա այսօր, իսկ այն ժամանակ, ապստամբութեան օրերին, ինչպէս տեսանք, գրում էր Հայաստանում տիրող «Ընդհանուր ոգեւորութեան եւ յաղթելու կամքի» մասին: Ես գրում եմ նրանց համար, ովքեր իրենց աչքով «չեն տեսել» եւ ուզում են իմանալ ճշմարտութիւնը: Թող համեմատեն նրանք նաեւ իմ «տեսածն ու գիտցածը» Քաջազնունու «տեսածի ու գիտցածի» հետ եւ սեփական համոզում կազմեն:

Ի վերջոյ առաջ բերեմ նաեւ ապստամբ Հայաստանի դէմ կռուող բոլշեւիկեան ուժերի հրամանատար Վէլիկանովի հաղորդած տեղեկութիւնները հայ ժողովրդի դէմ գործող կարմիր զօրամասերի մասին*): Վէլիկանովը ցոյց է տալիս, որ, բացի վերև արդէն յիշուած ուժերից, Ղամարլուի ճակատում գործել են նաեւ 60-րդ բրիգադայի 178 եւ 180 գնդերը: Այս տեղից «մի անգամ Երեւանի վրայ արշաւելու փորձ արուեց, որ սկզբում յաջողութիւն էր խոստանում: 178 գունդն արդէն քաղաքի հարաւային ծայրում կռիւ էր մղում, բայց ուժերի սակաւութիւնը եւ խռովարարների զօրամասը մտած Աղբաշի կողմից, զօրաթեւը շրջապատելու սպառնալիքը հայ բանակի հրամանատար ընկ. Մօլկաչանովին ստիպեցին տանել իր զօրամասերը կրկին Արարատ կայարանի շրջանում գտնուող դիրքերը: Դրանից յետոյ Երեւանը գրաւելու փորձեր չարուեցին այլեւս»:

*) Տես «Խորհրդ. Հայաստան» 1923 թ. յուլ. 15 թիւ 152, «Հայաստանում 1920–21 թ. թ. 20-րդ դի-

Երեւի ընկ. Մօլկաչանովը Քաջազնունու կարծիքին չէր հայ ժողովրդի մարտունակութեան եւ այն ժամանակուայ տրամադրութեան մասին, թէ չէ նորից փորձ կ՚անէր Երեւանը գրաւելու:

Վէլիկանովը պատմում է.

«Մինչ վրացական գործողութեամբ զբաղուած 11-րդ բանակի հրամանատարութիւնը չէր կարողանում ապստամբութիւնը ճզմելու համար բաւականաչափ ուժեր ուղարկել Հայաստան, 18րդ դիվիզիայի պետ Տիրմախէրի հրամանատարութեան տակ կազմուած Դիլիջանի զօրախումբը, որ բաղկացած էր 53, 54 բրիգադաներից*), 179 գնդից եւ հայերի պարտիզանական զօրամասերից, մի քանի անգամ արշաւանք սկսեց Երեւանի կողմը, բայց այդ

վիզիայի ռազմական գործունէութիւնների համառօտ տեսութիւնը», Վէլիկանով:

*) Բօլշեւիկեան բրիգադան բաղկացած է 3 գնդից, իւրաքանչիւր գունդ՝ 3 գումարտակից:

գործողութիւնները յաջողութիւն չունեցան»։

Իսկ Քաջազնունին ասում է. «Բոլշեւիկների ոյժը շատ աննշան էր Հայաստանում»։

Նոյն Վէլիկանովի ասելով, Վրաստանը գրաւելուց յետոյ բոլշեւիկների Հայաստանի դէմ ուղարկած մասերը հետեւեալն էին. 179-րդ գունդը Վարթնաւ եւ Սխպտակ գիւղերում, 53 եւ 54 բրիգատները, 18-րդ կովկասեան գունդը եւ պարտիզանների հայկական զօրամասերը՝ Ախտայի ճակատում։ Բէլիյ Քլիւչից փոխադրեցին 20-րդ դիվիզիայի մասերը — 58-րդ բրիգատան Համամլու կայարանը, 172 եւ 176 գնդերը եւ 20-րդ կովկասեան գունդը՝ նոյնպէս Ախտայի ճակատ։ «Այս բոլոր զօրքերից կազմուեց այսպէս կոչուած Երեւանեան խումբը»։ Ես չեմ ծանրաբեռնի ընթերցողի ուշադրութիւնը Վէլիկանովի գրի առած օրեր տեւող «յամառ կռիւների» նկարագրութիւններով*). կարծում եմ, այսքանն էլ բաւական է համոզուելու համար, թէ որքա՜ն մակերեսային են եւ անարդար Քաջազնունու փաստերն ու եզրակացութիւնները։

17. Քաջազնունին լաւ խօսք չունի, եւ Լեռնահայաստանի մասին. այնտեղ էլ նա միայն յուսալքում, շփոթ, խուճապ ու վհատութիւն է տեսել։ «Կազմըւում էին, լուծւում, նորից կազմւում ու իրար փոխարինում զանազան անուններ կրող մարմիններ, որոնցից ոչ մէկն էլ իրական իշխանութիւն չէր ներկայացնում»։ «Երեւանի անկումից յետոյ, Լեռնահայաստանի խորհրդացումը՝ օրերի խնդիր էր միայն»։

*) Վէլիկանովը, ի միջի այլոց, արձանագրում է, որ յունիսի 30-ին «177-րդ գունդը գործողութիւն սկսելով դէպի Սօիւխ՝ շրջապատուեց եւ նահանջեց դէպի Օրտուբաթ՝ կորցնելով մօտ 150 հոգի սպանուած եւ վիրաւոր»։

Ներելի է հարցնել՝ այդ ի՞նչ բազմաթիւ մարմիններ էին Լեռնահայաստանում, որ բան ու գործ թողած՝ միայն կազմուելով ու լուծուելով էին զբաղուած։ Իրար փոխարինելու մի դէպք է պատահել այնտեղ — Երեւանից եկող Հայաստանի կառավարութիւնը փոխարինել է տեղական կառավարութեան, ուրի՞շ։ Ինչո՞ւ այդ յուսահատ — ողբերգական արտայայտութիւնը — «կազմւում էին, լուծւում, նորից կազմւում»...

«Երեւանի անկումից յետոյ, Լեռնահայաստանի խորհրդացումը՝ օրերի խնդիր էր միայն»— այդ դէպքում ինչո՞ւ էր Քաջազնունին այնպէս տաք կերպով յորդորում զանգեզուրցիներին կռուել բոլշեւիկների դէմ, ինչո՞ւ էր համոզում ամէնքին, որ տեղի չտան, զիջում չանեն եւ չարունակեն զէնքի պայքարը խորհրդային զօրքերի դէմ։ Այն ժամանակ նա չգիտէ՞ր, որ «Լեռնահայաստանի խորհրդացումը օրերի խնդիր էր միայն»։ Հիմա՞, Բուքրէշո՞ւմ միայն հասկացաւ այդ։ Եւ եթէ գիտէր, բարոյական ո՞ր իրաւունքով արինհեղութեան էր մղում մարդկանց, աշխատում էր տեւականացնել քաղաքացիական կռիւը։

III

ԱՅՆ ՈՐ ՔԱՋԱԶՆՈՒՆԻՆ ՉԻ ՏԵՍԵԼ

Այսպէս քայլ առ քայլ հետեւելով Քաջազնունու արձանագրած փաստերին ու մեկնութիւններին՝

ո՛չ մի մխիթարական բան չտեսանք մենք: Ո՛չ մի լուսաւոր շող: Ո՛չ մի յուսատու երեւոյթ: Ո՛չ մի կարգին կազմակերպութիւն: Ո՛չ մի խելքը գլխին մարդ: Ոչի՛նչ, կատարելապէս ոչի՛նչ չի արտադրել հայկական նզովեալ իրականութիւնը:

Հայոց միակ կազմակերպուած կուսակցութիւնը «մասսա՝ բնազդներով ուժեղ, բայց գիտակցութիւնով թոյլ», որ «քարշ է գալիս» օտարների փէշից եւ փոխանակ ղեկավարելու՝ ինքն է վազում ամբոխի յետեւից: Հայ հասարակութիւն կոչուածը մի անկազմակերպ խուժան է՝ անգիտակից ու թեթեւամիտ, որ մերթ ցարական կառավարութեան գիրկն է ընկնում, մերթ անգլիացիների, մերթ առաջինից է գանգատում, մերթ՝ վերջինից: Հայ գործիչները ապրում են «իլլուզիային մի անթափանցիկ մթնոլորտի մէջ», «ինքնաներշնչման հիպնոզի տակ կորցրել են իրականութեան գիտակցութիւնը եւ տարուել երազանքներով», անընդունակ «պատճառն» ու «նպատակը» միմեանցից տարբերելու: Հայոց բանակը «չորագեալցի բիճաներ», «բարոյալքուած ու յոգնած» ներքին կռիւների, աւերումների, թալանի ու խմբապետական դրութեան հետեւանքով: Հայկական խորհրդարանը — «Խորհրդարան չկար Հայաստանում», այլ մի «տարօրինակ ու վհատեցուցիչ» հիմնարկութիւն: Հայոց կառավարութիւնը՝ «թոյլ», «անտեղեակ», «անփոյթ», անհեռատես, թեթեւամիտ: Փարիզի Պատուիրակութիւնը՝ իր «աշխարհակալական ապշեցուցիչ պահանջներով» եւ «ցնորամիտ, տղայական ծրագիրներով» կոյր գործիք էր «հայկական Փարիզի» ձեռքին: Հայ գաղութները՝ խակ, անիմաստ ու չափազանցուած ծրագիրներով տարուող: «Սեւրի դաշնագիրը չյա-

ցրել էր բոլորիս աչքը, կաշկանդել միտքը, մթնացրել իրականութեան գիտակցութիւնը»...

«Պարծենալու շատ բան չունինք» մենք. «մեզ վիճակուած բեռը — պետութիւն կազմելու եւ պետական կեանքը ղեկավարելու գործը — մեր ուժերից շա՛տ վեր է եղել»: «Մենք միանգամայն անպէտք կառավարիչներ ենք եղել... Նախատեսելու ընդունակութիւն չենք ունեցել բնա՛ւ»:

«Մենք չարունակ սխալուած ենք եղել մեր հաշիւների մէջ ու չարունակ անակնկալների հանդիպած, անակնկալների միայն մեզ համար, որովհետեւ չենք գիտեցել նախատեսել: Մեր ամենամեծ թուլութիւնը այդ է եղել»:

«Ապա չենք ունեցել որոշ ու յստակ գիտակցութիւն մեր անելիքի մասին, չենք ունեցել մի ղեկավարող սկզբունք ու տեւողական, հետեւողական սիստեմ, գործել ենք, կարծես, յանկարծակի ու պատահական ներշնչումների տակ, տատանուել ենք, պատից-պատ ընկել՝ կէս-կուրօրէն շօշափելով ոտներիս տակի հողը:

«Չենք ճանաչել ու յաճախ գերագնահատել ենք մեր կարողութեան չափը, չենք հասկացել դժուարութիւնների մեծութիւնը, արհամարհել ենք հակառակ ուժերը եւ թեթեւամտութեան աստիճանի անփոյթ ենք եղել մեզ սպառնացող վտանգների հանդէպ:

«.. Չենք կարողացել տարբերել պետութիւնը կուսակցութիւնից ու կուսակցական մտայնութիւն ենք մտցրել պետական կեանքի մէջ»:

Մի խօսքով՝ «պետական մարդիկ չէինք մենք»:

Գոնէ մի հատ բացառութիւն, մի հատիկ արդար մարդ կա՞ր այս դարհուրելի Սոդոմ-Գոմորի մէջ:

Գուցէ ինքը՝ Քաջազնունին է գտնուել դուրս այս տգէտ, անկարող, կարճամիտ, անխղճմտանք եւ ինքնահաւան ամբոխից: Ո՛չ, նա մեզ այդ հաճոյքից էլ է զրկում. «անկարողների առաջին շարքում՝ ձեր կողքին ու ձեզ հետ միասին՝ եղել եմ եւ ես»...

Այսպէս էր դրութիւնը մինչեւ 1921 թ.ի ամառը, երբ հայ բոլշեւիկները՝ կարմիր բանակի սուինների վրայ յենուած՝ երկրորդ անգամ եկան Հայաստան եւ վերջ տուին այս անտանելի վիճակին: «Երախտապարտ պիտի լինինք բոլշեւիկներին. խորտակելով մեզ՝ նրանք, եթէ չասեմ փրկեցին, գէթ աւելի ապահով վիճակի մէջ դրին մեր կեանքի գործը»: Բոլշեւիկների գալուց յետոյ հայոց աշխարհի մռայլ հորիզոնը հետզհետէ սկսում է պարզուել:

«Տեսէ՛ք հետեւանքները, ոգեւորւում է Քաջազնունին: Երկու տարի ու կէս կառավարեցինք մենք երկիրը, մօտ երկու ու կէս տարի է, որ կառավարում են բոլշեւիկները:

«Մենք ունեցանք պատերազմներ Վրաստանի, Ազրբէջանի եւ Թուրքիայի դէմ: Բոլշեւիկները պատերազմ չունեցան: Մենք ունեցանք անընդհատ ու բազմաթիւ ներքին կռիւներ՝ Աղբաբա, Զօդ, Զանգի–Բասար, Վէդի–Բասար, Միլլի Զոր, Շարուր, Նախիջեւան, Զանգեզուր. բոլշեւիկները ներքին կռիւ չունեցան, բացի փետրուարեան ապստամբութեան կից կռիւները: Մենք շարունակ պահում էինք երկիրը զէնքի տակ... բոլշեւիկները ազատեցին ժողովուրդը այդ աղէտից»:

«Մեր ժամանակ ժողովուրդը կոտորւում էր կամ հիւծւում սովից..., իսկ այսօր լսում եմ, թէ Հայաստանը կշտացել է, համարեա կարիք չունի հացի: Եւ հաւատում եմ»:

«Մենք շատ աշխատեցինք, բայց չկարողացանք վերահաստատել քիչ–շատ կանոնաւոր հաղորդակցութիւն դրսի աշխարհի հետ... բոլշեւիկները բացին ճամբաները:

«Մեր ժամանակ Հայաստան կուրացել էր մթութեան մէջ... բոլշեւիկները առատ կերօսին բերին Բագուից եւ ազատեցին երկիրը խաւարի գերութիւնից»...

Ուրեմն, փառք եւ պատիւ բոլշեւիկներին:

Այսպէս է գրում պատմութիւնը Հայաստանի անդրանիկ վարչապետը:

«Անշուշտ, շատ բան չէ այս ամէնը. բայց չէ՞ որ այդ քիչն էլ մենք չկարողացանք անել», եզրակացնում է:

Բայց, իրօ՞ք, չկարողացանք, թէ՞ արուած է, բայց Քաջազնունին չի տեսել:

Այո՛, չի տեսել, դժբախտաբար: Չի ուզեցել տեսնել: Եթէ ուզենար, անշուշտ, այդպիսի անճիշտ բաներ չէր գրի: Եթէ ուզենար, անկախ Հայաստանի երկու տարուայ պետական կեանքի մէջ յիշատակութեան արժանի լուսաւոր երեւոյթներ էլ կը գտնէր եւ չէր լինի այնպէս անարդար ու անգութ, այնպէս նեղսիրտ դէպի մեր մօտաւոր անցեալը:

«Այդ քիչն էլ մենք չկարողացանք անել»...

Փորձենք մի անգամ յետադարձ ակնարկ ձգել Հայաստանի Հանրապետութեան երկու տարուայ կեանքի վրայ եւ տեսնենք — ո՛չ Քաջազնունու սեւ ակնոցներով — ի՞նչ է եղել այդ կեանքը: Բացասական կողմերով հետաքրքրուողի համար Քաջազնունու գիրքը բաւական է — տեսնենք ի՞նչ դրական աշխատանք է կատարուել Հայաստանում հայ ժողո–

վրդի ու մտաւորականութեան ձեռքով: Սկսենք ab ovo — հէնց սկզբից:

Ի՞նչ էր պատկերը Հայաստանի Հանրապետութեան իր կեանքի առաջին օրերին: Ահա թէ ինչպէս էր բնորոշում դրութիւնը Հայաստանի անդրանիկ նախարարապետ Քաջազնունին կառավարական յայտագրի մէջ 1918 թ. օգոստոս 2–ին, Հայաստանի Խորհրդի առաջին նիստում.

«Տնտեսական կեանքի ու ֆինանսական դրութեան կատարեալ քայքայում, դադարում ապրանքների արդիւնաբերութեան եւ փոխանակութեան, գինամթերքների ծայր աստիճան պակասութիւն, ամենաանհրաժեշտ առարկաների բացակայութիւն կամ սոսկալի թանգութիւն, ներմուծման բացարձակ ընդհատում, երկաթուղային հաղորդակցութեան դադարում, երթեւեկութեան ուրիշ միջոցների պակասութիւն. ապա հարիւր հազարներով հաշուուող անտուն եւ անսնունդ գաղթականութիւն, անապահով կացութիւն սահմանների վրայ եւ որպէս անխուսափելի հետեւանք այս բոլորի — անիշխանութիւն»: «Կառավարութիւնը գտնում է երկիրը այնպիսի վիճակի մէջ, որի բնորոշման համար մի բառ կայ միայն — կատաստրոֆիկ»:

Հարկ կա՞յ որեւէ բան աւելացնելու այս ինքնին պերճախօս նկարագրութեան վրայ: Պէ՞տք է ասել, որ Սեւանայ լճի շուրջը կծկուած 11,000 քառակուսի կիլոմէտր տարածութիւն կազմող Հայաստանը, իր կեանքի արշալոյսին, իրօք, «անձեւ քաօս ու աւերակների կոյտ» էր — գաղթականների, որբերի եւ հիւանդների մի թշուառ հանրակացարան:

Պէտք եղաւ յամառ, սիզիփեան աշխատանք: Տրուեցին անհաշիւ ու անփոխարինելի զոհեր, մին–

չեւ որ «քաօսը» ձեւ ու կերպարանք առաւ: Եւ 1920ին Հայաստանը արդէն իր դէմքը ունեցող պետութիւն էր, իսկ հայ ժողովուրդը սկսել էր կենդանանալ ու ոտքի կանգնել: Հայաստանում երկու տարուայ ընթացքին կատարուած աշխատանքի մասին մօտաւոր գաղափար կարող են տալ հետեւեալ տեղեկութիւնները:

Ընդհանուր դրութիւն.— 1918–ին Հայաստանի սահմանները անցնում էին Համամլու—Սեւ Ջուր—Նորագաւիթ գծով: 1920–ին Հայաստանի սահմանների մէջ էին մտնում Արտահանի, Կարսի, Կաղզուանի, Սուրմալուի շրջանները, իսկ Նախիջեւանի կցման գործողութիւնները լրանալու վրայ էին: Զանգեզուրը փաստօրէն Հայաստանի մասն էր կազմում: Զհաշուելով Թրքահայկական խնդիրը, մընում էին վիճելի Ղարաբաղի, Ախալքալաքի եւ Լոռու հարցերը, որոնց վերաբերմամբ, անշուշտ, վերջ ի վերջոյ ընդունելի ձեւ կը գտնուէր Վրաստանի եւ Ազրբէջանի հետ: Վրաստանի հետ կնքուած դաշնագրով ապահովուած էր Բաթում–Երեւան տրանզիտի ճանապարհը, եւ հայկական ապրանքները առանց լուրջ խոչընդոտի տեղափոխւում էին երկրից դուրս ու ներս:

Սահմանների ընդարձակումով տեղաւորուեց եւ գաղթականութիւնը, մեծ մասամբ գիւղերում: Գաղթականներից չունեւորները ստացան հող, լծկան, երկրագործական գործիքներ: Երկրում սկըսուեց շինարարութիւնը, եւ գիւղերն ու քաղաքները կեանք առին:

1919–ի վերջին եւ 1920–ի առաջին կէսին Հայաստան կազմակերպման եռուն շրջան էր ապրում: «Անձեւ քաօսից» հետզհետէ ձեւաւորւում էր ժողո–

վրդական հիմքերի վրայ հաստատուած պետութիւնը։ Ո՛չ մի պետական անցեալ չունեցած, քաղաքականապէս բոլորովին անփորձ հայ մտաւորականութիւնը կարողացաւ ստեղծել պետական իրաւակարգ, կեանքի կոչեց ընդհանուր ընտրական սկզբունքով կազմուած խորհրդարան, հիմնեց կենտրոնական իշխանութիւն, կազմակերպեց տեղական վարչութիւններ, պահակազօրք ու ոստիկանութիւն։ Հայաստանը ենթարկուեց վարչական նոր բաժանման — կազմուեցին Արարատեան, Շիրակի, Վանանդի եւ Սիւնեաց նահանգապետութիւնները։ Մշակուեց եւ գործադրութեան դրուեց տեղական ինքնավարութիւնների օրէնքը եւ մի շարք գաւառներում — Երեւան, Էջմիածին, Իջեւան — մտցուեցին տեղական ինքնավարութիւններ, իսկ միւս գաւառներում սկսուած էին արդէն նախապատրաստական աշխատանքները։ Վերակազմուեցին քաղաքային ինքնավարութիւնները՝ լայն ժողովրդական հիմքերով։ Էջմիածին, Աշտարակ, Ղամարլու, Դիլիջան, Ղարաքիլիսա, Ջալալ Օղլի մեծ գիւղերը վերածուեցին քաղաքների։ Քաղաքների ներկայացուցիչների համագումարի միջոցով հիմնուեց քաղաքների միութիւն։ 1920 թուականի առաջին կէսին Հայաստանի պետական բոլոր հիմնարկութիւններն արդէն ազգայնացուած էին եւ ամէն տեղ գործ էր ածւում հայերէն լեզուն։

Հայաստանի վարիչների թափած ջանքերի շնորհիւ էր, որ ամերիկեան կառավարութիւնն ու հասարակական կարծիքը ջերմ մասնակցութիւն ունեցան հայ ժողովրդի կեանքում։ Աւելի քան 10 միլիոն տոլարի արժողութեամբ ալիւր եկաւ Հայաստան։ Բերուեց նաեւ մեծ քանակութեամբ հա-

գուստ, սպիտակեղէն, դեղորայք, խտացրած կաթ, կակաօ եւ այլ կարգի նիւթեր։

Հայաստանի դռները լայնօրէն բացուեցին նաեւ հայ գաղութների առջեւ։ Արտասահմանում առաջ եկաւ բուռն հետաքրքրութիւնը դէպի նորակազմ պետութիւնը։ Երիտասարդութիւնն ու աշխատաւորութիւնը սկսեցին տեղափոխուել դէպի երկիր։ Գործի մարդիկ ձեռնարկեցին առեւտրական յարաբերութիւնների։ Բաղդադից մինչեւ Ֆրէզնօ գաղութահայութիւնը սկսեց կապել իր կապոցները հայրենիք վերադառնալու դիտաւորութեամբ։ Ըսկըսուեց նուիրահաւաքութիւն հայկական պետութեան օգտին — Դրամ, ոսկեղէն, գիրք, մեքենաներ ու գործիքներ, հագուստեղէն, դեղորայք, գրի մեքենայ, սաւառնակ, ինքնաշարժ — ամէն բան, որ կարող էր օգուտ բերել։ Հաւաքուած իրերը հետզհետէ սկսան հասնիլ Հայաստան։ Գաղութի եւ երկրի ժողովրդի զարկերակը խփում էր նոյն համաչափութեամբ։

Հայկական պետութիւնը սկսուեց ճանաչուել եւ միջազգային քաղաքական աշխարհում։ Տը փաքթօ ճանաչումից յետոյ մի շարք պետութիւնների կողմից նա ճանաչուեց եւ տը ժիւրէ։ Սեւրի դաշնագրով նա դարձաւ միջազգային համակեցութեան անձնաւորութիւն եւ գտնւում էր Ազգերի Դաշնակցութեան մէջ գտնուելու նախօրեակին։ Հայաստանի կառավարութեան յարաբերութիւնները օտար երկրների հետ դառնում էին օրէցօր աւելի կենդանի ու գործնական։ Օտար առաքելութիւններ էին գալիս Երեւան։ Հայաստանի տնտեսական պատեհութիւնները առաջ էին բերում ընդհանուր հետաքրքրութիւն։

1920 թուականի առաջին շրջանում Հայաստանի

Հանրապետութեան ընդհանուր դրութիւնը առնըւազն գոհացուցիչ էր:

Կրթական գործ.— 1918 թուին, Թուրքերի հեռանալուց յետոյ, Հայաստանի կրթական գործը գրեթէ հիմքից քայքայուած էր: Դպրոցների մեծ մասը փակուած էր կամ գործում էր մէջ ընդ մէջ. ուսումնարանները կարճ կամ երկար ժամանակով յատկացւում էին որբանոցներին ու գաղթականներին, իբրեւ հանրակացարան: Որոշ տեղեր էլ սովն ու համաճարակը թոյլ չէր տալիս կանոնաւոր պարապմունքներ ունենալու:

Հայաստանի կառավարութեան կազմակերպումից յետոյ, առաջին գործերից մէկը եղաւ դպրոցական քանդուած շէնքերի վերանորոգութիւնը, որի համար յատկացուեց մէկ միլիոն ռուբլի, որ այն ժամանակ մեծ գումար էր: Հաստատուեց հանրային կրթութեան եւ արուեստի նախարարութիւն՝ կենտրոնական ուսումնական խորհրդով: Ամբողջ Հայաստանը բաժանուեց 11 կրթական շրջանների եւ նշանակուեցին շրջանային տեսուչներ: Մշակուեց եւ գործադրութեան դրուեց կրթական ծրագիր: Խորհրդարանի կողմից քուէարկուեցին խոշոր գումարներ կրթական գործի համար: Եւ ահա ստացուած արդիւնքը.

1918–19 ուսումնական տարուայ ընթացքին Հայաստանը ունէր 133 տարրական դպրոց 383 ուսուցչով եւ 11,136 աշակերտով, իսկ 1919–20–ին 456 տարրական դպրոց (առանց Զանգեզուրի եւ Լօրիի) 1047 ուսուցչով եւ 41,188 աշակերտով:

Ըստ Լուսժողկոմի պաշտօնական տեղեկութիւնների 1922–23 ուս. տարուայ ընթացքին ամբողջ Հայաստանում, մէջը լինելով եւ Զանգեզուրն ու Լօ–

րին, կար 547 տարրական դպրոց, որից 467 հայկական, 41 թրքական, 23 ռուսական, 7 եզիտական, 4 յունական եւ 5 ասորական: Այդ դպրոցներում կար 47,870 աշակերտ–աշակերտուհի, որից 42,590 հայեր, մնացեալը՝ այլազգիներ եւ 1274 ուսուցիչ–ուսուցչուհի*): Ուրիշ խօսքով երեք տարուայ աղմուկից ու ժխորից յետոյ Խորհրդային Հայաստանի այսօրուայ վարիչները տարրական կրթութիւնը քանակի տեսակէտից, դրել են մօտաւորապէս նոյն վիճակի մէջ, ինչ որ 1919–20 ուս. տարում էր: Կըրթական–դաստիարակչական վիճակի մէջ, դժբախտաբար, թուեր չունինք:

1918–19–ին Հայաստանում կար 6 միջնակարգ (երկրորդական) դպրոց 177 ուսուցչով եւ 3,137 աշակերտով, 1919–20–ին 20 միջնակարգ դպրոց 305 ուսուցչով եւ 5,162 աշակերտով:

Կրթական գործը տարւում էր պետական լեզուով, բայց կառավարութիւնը քաջալերում էր եւ այլազգիների կրթութիւնը: 1919–20–ին Կարսի շըրջանում կար 16 թաթարական դպրոց: Մալականների եւ եզիտների գիւղերում էլ բացուած էին տարրական դպրոցներ:

1920 թ. յունուարի 31–ին, առաջին անգամ Հայաստանի հողի վրայ, բացուեց բարձրագոյն կըրթարան— հայկական առաջին համալսարանը՝ Ալէքսանդրապոլում, որը յաջորդ տարի փոխադրուեց Երեւան: Բացման օրը համալսարանը ունէր 8 ուսուցչապետ եւ 200 ուսանող: Երեւանում, Ալէքսանդրապոլում, Ղարաքիլիսայում եւ այլուր հիմ–

---

*) Տե՛ս «Խորհրդային Հայաստան» 1923 թ. նոյ. 29, Թիւ 267:

նուեցին հանրակրթական դասընթացքներ, ժողովըրդական համալսարաններ, մասնագիտական դըպրոցներ: Ծրագրուած էր բանալ մանկավարժական, տեխնիկական, կօօպերատիւ, արուեստագիտական, երաժշտական, գինուորական, երկրաչափական, գեղագործական վարժարաններ: Ալեքսանդրապօլում բացուեց երկրագործական դպրոց․ մէկ ուրիշը հիմնուեց Նոր-Բայազէթում: Քաջալերւում էր ֆիզիքական կրթութիւնը․ բօյ-սկաուտական կազմակերպութիւնը լայն ծաւալ էր ստացել Հայաստանում:

Ես, դժբախտաբար, ձեռքիս տակ չունիմ 1919-20 թ․ պետական բիւջէն, բայց եթէ հնարաւոր լինէր հրատարակել Հայաստանի Հանրապետութեան 1919–20 թ․ ելեւմուտքը, կ՚երեւար, թէ կառավարութիւնը ի՜նչ մեծ կարեւորութիւն էր տալիս կըրթական գործին, որը դրուած էր բոլորովին անկուսակցական՝ պետական հողի վրայ եւ դպրոցների դռները լայնօրէն բացուած էին քաղաքական ամէն դաւանանքի տէր մանկավարժների ու կրթական գործիչների առջեւ:

1920 թուականին, դարձեալ առաջին անգամ Հայաստանի հողի վրայ, տեղի ունեցաւ հայ արուեստագէտների· պատկերահանդէսը: Կառավարութիւնը՝ պետական թանգարանի հիմքը դնելու եւ արուեստը քաջալերելու նպատակով յատկացրեց բաւական պատկառելի մի գումար եւ գնեց նկարներ ու արձաններ: Նաեւ այն ժամանակուայ համար բաւական խոշոր գումար բաժանուեց, իբրեւ նպաստ, Թիֆլիսում ապրող հայ գրողներին:

Կառավարութիւնը զբաղուած էր նաեւ պետական թատրոնի եւ երաժշտանոցի բացման նախապատրաստական աշխատանքներով: Մեծ գումար-

ներ յատկացուեցին նաեւ դասագրքերի եւ այլ տեսակ գրքերի հրատարակութեան: 1920 թ․ նախահաշուի մէջ մտցուած էր 3,200,000 ռուբլի հայ հեղինակների երկերը հրատարակելու եւ 3,220,000 ռուբլի գիտական գրքեր թարգմանելու համար: Հնութիւնների պահպանման համար հիմնուած էր յատուկ բաժին հմուտ մասնագէտների ղեկավարութեամբ եւ մէկ միլիոն ռուբլի բիւջէով: Դպրոցական շէնքերի նորոգութեան եւ նորերը շինելու համար 1920-ի նախահաշուի մէջ դրուած էր 35,920,400 ռուբլի: Կառավարութիւնը պատրաստւում էր ընդհանուր եւ պարտադիր ուսում մտցնել եւ մշակում էր ծրագիր երկիրը հանրամատչելի գրադարան-ընթերցարանների ցանցով պատելու: Պետական գրադարանի համար արտասահմանում ստացուել կամ գնուել էին մի շարք մասնաւոր գրադարաններ, որոնց մէջ յիշատակութեան արժանի է Իշխ․ Արղութեան-Երկայնաբազուկի մօտ 20,000 կտոր գըրքից բաղկացած թանգարժէք գրադարանը՝ մի շարք հազուագիւտ հրատարակութիւններով:

Արդարադատութիւն․— Դատական գործերի տեսակէտից Հայաստանը 1918-ից առաջ ենթարկւում էր Թիֆլիսին: Հայաստանում կար միայն մի շրջանային դատարան եւ մի քանի հաշտարար դատարաններ: Վճռաբեկ ատեան գոյութիւն չունէր: Դատավարութիւնը կատարւում էր ռուսերէն լեզուով: Անկախութիւնից յետոյ կազմակերպուեց արդարադատութեան նախարարութիւն: 1918 թ․ դեկտ․ 5ի օրէնքով հիմնուեց բարձրագոյն դատարան քաղաքացիական, քրէական եւ վարչական բաժիններով: Այս գործադրութեան մէջ մտցուեց երդուեալ ընթերականների դրութիւնը (ժիւրի): Ամբողջ դա-

տաստանական գործը ազգայնացուեց եւ վերածուեց հայերէնի: Հիմնուեցին շրջանային դատարաններ Երեւանում, Շիրակում եւ Կարսում եւ հաշտարար դատարաններ բոլոր գաւառներում: Մշակուեց եւ հրատարակուեց իրաւաբանական բառերի հայերէն բառարան, որ մինչեւ այսօր էլ գործածութեան մէջ է եւ նմանը չունի: Հիմքը դրուեց հայկական օրէնսդրութեան, մշակուեցին օրէնքների նախագծեր ու սկսուեցին թարգմանուել արեւմտեան օրէնսգըրքերը:

Ֆինանս, առեւտուր, արդիւնաբերութիւն.— 1918-ի աշնանը Հայաստանում առեւտրա-արդիւնաբերական կեանքը մեռած էր, իսկ պետական ֆինանսներ էին կազմում այն բաները, որ կառավարութիւնը բերել էր հետը Թիֆլիսից: Ֆինանսների նախարարութիւնը բառիս բուն նշանակութեամբ ըստեղծուեց ոչնչից: Պետական ֆինանսների հիմք կազմեց, անդրկովկասեան բոներից զատ, պետականացուած բամբակը եւ տուրքը անշարժ կալուածքների, կօնեակի, գինու եւ մի քանի այլ նիւթերի վրայ: Բաց թողնուեցին հայկական դրամներ: Արտասահմանում պատրաստուեց 300 միլիոնի թղթադրամ: Երեւանում եւ երկրի զանազան վայրերում հիմնուեցին պետական գանձարաններ: Կազմակերպուեց մաքսային գործը: Որոշ դրութիւն ստեղծուեց առեւտրի եւ ապրանքափոխութեան համար: Մշակուեց եւ խորհրդարանից անցաւ 1919-ի պետական բիւջէն: Մշակուեց եւ խորհրդարան մտցուեց 1920-ի պետական բիւջէն: Հիմք դրուեց ոսկու ֆօնտի եւ ձեռնարկուեց 20 միլիոն տոլարի փոխառութեան: 1919-ի երկրորդ կէսից սկսած Հայաստանում առեւտուրն արդէն կենդանացել էր: Արտա-

սահմանից սկսուեցին ներածուել ապրանքներ, Բագուից՝ նաւթ: Երկրից արտահանւում էին հում նիւթեր — բամբակ, կօնեակ, բուրդ, կաշի, մորթի, գինի, աղ: Բացուեցին արհեստանոցներ ու գործարաններ՝ սապոնի, կաշու, կօնեակի, ծխախոտի եւայլն: 1919-ի վերջը Հայաստանում արդէն բանում էր 5 ծխախոտի գործարան: Լայն վարկեր բաց թողնուեցին կօօպերատիւներին — «Հայկօօպ»-ին, «Երկաթկօօպ»-ին: Հրաւիրուեց կօօպերատիւ միութիւնների համագումար: Հիմնուեցին մանր վարկի հաստատութիւններ*): Ընդունուեց յառաջատուական տուրքի սկզբունքը: Պետականացուեց Շուստօվի կօնեակի գործարանը («Արարատ» պետական գործարան) եւ հիմք դրուեց կօնեակի պետական տնտեսութեան: Հաստատուեցին Երեւանում եւ գաւառում պետական պահեստներ, Թիֆլիսում եւ Բաթումում՝ ֆինանսական եւ առեւտրական ներկայացուցչութիւններ:

Գիւղատնտեսութիւն.— 1919 թ. յուլիս 29-ին հիմնուեց գլխաւոր գիւղատնտեսական վարչութիւնը, որը յետոյ վերածուեց գիւղատնտեսութեան եւ պետական գոյքերի նախարարութեան՝ երկրագործական, անտառային, ջրային, վիճակագրական, անասնաբուժական եւ պետական գոյքերի բաժիններով: Նոյն տարուայ սեպտեմբերին Երեւանում հիմնուեց երկրագործական գործիքների կենտրոնական պահեստ իր գաւառական բաժանմունքներով,

---

*) 1920-ին Հայաստանում գործում էին 280 կօօպերատիւներ 111,957 անդամներով, որ ասել է մօտ կէսը մտնում էր կօօպերատիւ շարժման ցանցի մէջ:

որտեղից գիւղացիութիւնը մատչելի գներով ստանում էր գութան, հնձելու մեքենայ, մանգաղ, գերանդի, ծծումբ, պղնձի արջասպ եւայլն։ Հոկտեմբերին ձեռնարկուեց ընդհանուր վիճակագրութիւն 13 մասնագէտների ղեկավարութեան տակ։ Ալեքսանդրապոլում հիմնուեց դաշտային մկների դէմ պայքարող կայան եւ մկնդեղ պատրաստելու գործարան։ Թիֆլիսից գործի կանչուեցին փորձուած մասնագէտներ։ Վերանորոգուեցին մէտէօրօժիկ կայանները եւ հաստատուեցին նորերը։ Կազմակերպուեցին շրջանային գիւղատնտեսական եւ անտառային վարչութիւններ եւ նշանակուեցին մասնագէտ գիւղատնտեսներ ու անտառաբաններ, իբրեւ շրջանային տեսուչներ։ Արտասահմանից բերուեցին հնձելու մեքենաներ, հերկելու տրակտորներ, կաթնատնտեսական գործիքներ, կալսելու եւ քամելու մեքենաներ, մեծ քանակութեամբ ծծումբ այգիների համար, 500 փութ բանջարանոցային սերմ եւ այդ ամէնը աժան գներով բաշխուեց գիւղացիներին։ Սեւանայ լճի եզերքին հիմք դրուեց ձկնաբուծական գիտական կայանի՝ մասնագէտի ղեկավարութեամբ։ Հրատարակուեց անտառային եւ հողային օրէնք՝ հիմք ունենալով հողերի պետականացման եւ համայնացման սկզբունքը։ Կազմակերպուեցին հողային կոմիտէներ, որոնք Նոր-Բայազէտի, Կոտայքի, Ծաղկաձորի, Էջմիածնի շրջաններում պետականացրին կալուածատիրական, վանքապատկան ու լքեալ հողերը եւ ձեռնարկեցին հողաբաժանման։ Նման կոմիտէներ ստեղծուեցին եւ միւս գաւառների համար։ Ձեռնարկուեց պետական օրինակելի կաթնատնտեսութեան Կարսի շրջանում։ Մշակուեցին ծրագիրներ բամբակի, բանջարանոցա-

յին բոյսերի, պտուղների եւ հացահատիկների փորձնական դաշտերի։ Նպաստներ տրուեցին մեղուաբոյծներին իրենց մեղուանոցները բարելաւելու կամ նորերը հաստատելու համար։ 15 միլիոն ռուբլի նըպաստ բաժնուեց այգեգործներին։ 20 միլիոն ռուբլի, սերմացու եւ ալիւր տրուեց բամբակամշակութիւնը քաջալերելու նպատակով։ Աւելի քան հարիւր աշխատաւորական ընկերութիւնների ու կօօպերատիւների տրամադրուեց սերմացու եւ սերմ հաւաքական երկրագործութիւնը խրախուսելու համար։ Սուրմալուի շրջանից բերուեցին հմուտ ծխախոտագործներ եւ պետական նպաստով հիմք դրին ազնիւ տեսակի ծխախոտի մշակութեան։ Արտահանի եւ Օլթու շրջանի թուրքերից ու քրտերից գնուեց մեծ քանակութեամբ լծկան ու կով եւ աժան գներով ծախուեց չունեւոր գիւղացիութեան։ 1920 թ. կատարուած ցանքսի եւ պետական օժանդակութեան չափը ցոյց տալու համար առաջ բերենք հետեւեալ թուերը։

Ըստ գիւղատնտեսական նախարարութեան վիճակագրական բաժնի տեղեկութիւնների 1920-ի գարնանը կառավարութիւնը բաժանել է ժողովուրդին 322,660 փութ հացահատիկ հետեւեալ ձեւով· Երեւանի գաւառ 52,372 փութ· Շիրակ՝ 74,605 փ· Էջմիածին՝ 33,622 փ·, Ղարաքիլիսա՝ 46,932 փ·, Նոր Բայազէտ՝ 19,993 փ·, Դիլիջան՝ 22,098 փ·, Սուրմալու՝ 5,451 փ·, Դարալագեազ՝ 732 փ·, եւ Կարս՝ 76,855 փ·։ Բաժանուած սերմացուն կազմըւած էր հետեւեալ տեսակներից· գարի 206,580 փութ, ցորեն 65,431, կորեկ՝ 15,225, չալթուկ (բրինձ) 4,026 փ·, հաճար 2,677 փ· կտաւատ՝ 1,300 փ·, գետնախնձոր՝ 24,204 փ·, եգիպտացորեն՝

12,368 փ., բանջար՝ 534 փ., դանդար՝ 315 փ., բանջարանոցային սերմեր՝ 500 փ.: Կառավարութեան տուած նպաստով եւ սերմացուով ցանուեց 1517,5 դեսեատին բամբակ եւ 61 դեսեատին ծխախոտ:

Կառավարութիւնը մասնաւոր ուշադրութիւն դարձրեց ոռոգման եւ հանքային գործի վրայ: Խոշոր գումարներ յատկացուեցին եւ նորոգուեցին Էջմիածնի, Սուրմալուի, Զանգիբասարի, Երեւանի եւ Սարտարապատի շրջանի առուները — վերանորոգուեց 70 առու, որոնցից ջուր էին ստանում հարիւրից աւելի գիւղեր: Ձեռնարկուեց Էջմիածնի կիսատ մնացած առուի շինութեան — ա՛յն, որ յետոյ բոլշեւիկները լրացրին՝ այնպէ՛ս աղմուկով: Խորհրդարանի քուէարկած 4 միլիոն ռուբլի վարկով կատարուեցին ուսումնասիրութիւններ Հայաստանի ջրային ուժի եւ ոռոգման միջոցների: 70 մասնագէտներ Կովկասի ամենաառաջին ջրագէտների անմիջական ղեկավարութեան տակ, հետազօտեցին Հրազդանի, Քասախի, Արարան գետի, Գառնի գետի, Ախուրեանի եւ Սեւանայ լճի աւազանները, այլ եւ գոյութիւն ունեցող ոռոգման դրութիւնը: Իբրեւ արդիւնք այս գրեթէ մէկ տարի տեւող դաշտային աշխատանքների կազմուեցին ծրագիրներ մօտ 200,000 դէսեատին նոր ոռոգելիք հողերի եւ մօտ 225,000 ձիու ոյժ ելեկտրակայանների: Այդ ծրագիրներն են, որ, բոլշեւիկներն այսօր օգտագործում են կոնցէսիաներ առաջարկելիս կամ ներքին աշխատանքներ դնելիս: Կառավարութիւնը ձեռք բերեց նաեւ Սարդարապատի դաշտի 46,000 դեսեատին հողի ոռոգման գործադրական յատակագիծը — ա՛յն, որ բոլշեւիկներն այժմ ուզում են իրագործել:

Հայաստանի հանքերի շահագործման համար կառավարութիւնը ձեռնարկեց մի շարք արժէքաւոր ուսումնասիրութիւններ հմուտ մասնագէտներ Տէր Միքայէլեանի, Տէր-Դաւթեանի, Կարապետեանի, Թուրեանի եւ ուրիշների մասնակցութեամբ: Մասնագէտների յանձնախմբերը այցելեցին Կաղզուանի աղահանքերը, Փէնեաքի ածխային շրջանը, Շարուրի արճճա-արծաթային հանքերը: Առանձին յանձնախումբ հետազօտեց Սեւանայ լճի շրջանը: Հետախուզութիւններ կատարուեցին Ծաղկաձորի, Կոտայքի, Շիրակի, Արարանի, Նոր-Բայազէդի կողմերը: Կազմուեցին մի շարք գործադրական յատակագծեր: Մշակուեց եւ խորհրդարան մտցուեց հանքային ընդարձակ օրինագիծ, որ լայն տեղ էր տալիս մասնաւոր նախաձեռնութեան: Աղի արտադրութիւն ու բաշխումը պետականացուեց. Կաղզուանի հանքերից ստացւում էր ամսական 70,000 փութ աղ:

Հաղորդակցութեան միջոցներ.— 1918-ի դէպքերի ժամանակ Հայաստանի երկաթուղու եւ խճուղիների մեծ մասը փչացել էր: Կամուրջները քանդուել էին, կայարաններից շատերը՝ այրուել ու կողոպտուել, հեռագրաթելերն ու սիւները կտրտըուել: Անկախութեան առաջին ամիսները Հայաստանը ունէր 7 քիլոմէտր տարածութեամբ երկաթուղի, 2 հատ շոգեշարժ եւ 20 խարխլած վագոն: Թուրքերը հեռանալիս սրբեցին տարին իրենց հետ ամէն ինչ— շոգեշարժները, վագոնները, արհեստանոցները, կայարանների կահաւորութիւնը, հեռախօսի եւ հեռագրի գործիքներն ու թելերը, նոյն իսկ, շատ տեղ, դռներն ու պատուհանները: Ալեքսանդրապոլի գեղեցիկ կայարանը իր յարակից շէնքերով փչացել էր ռազմամթերքի պայթիւնից: Գրեթէ բոլոր ջրամ-

բարներն ու ջրհան մեքենաները քանդուած էին։

1920-ին Հայաստանը ունէր 418 վէրստ երկաթուղի, 38 շոգեշարժ եւ 580 վագոն լայն գծի եւ 2 շոգեշարժ ու 50 վագոն նեղ գծի համար։ Ալեքսանդրապոլում հիմնուած էր երկաթուղային կենտրոնական վարչութիւն Տէր Միքայէլեան ու Զոհրաբեան ինժէնէրների պէս փորձուած մասնագէտների գլխաւորութեամբ։ Բոլոր կամուրջներն ու կայարանները վերանորոգուած էին, հեռագրական ու հեռախօսային կապը վերականգնած, երկաթուղային պաշտօնէութիւնը կազմակերպուած, գործավարութիւնը հայացուած։ Ալէքսանդրապոլում հաստատուեց երկաթուղային կենտրոնական արհեստանոց, ուր նորոգւում էին շոգեշարժներն ու վագոնները։ Բացուեցին երկաթուղային դասընթացքներ մասնագէտներ պատրաստելու համար։ Հայ ճարտարապետների ջանքերով վերականգնուեց Ալեքսանդրապոլի կայարանը։ Երկաթուղային երթեւեկութիւնը կանոնաւորուեց եւ հասաւ նախապատերազմական վիճակի։ Երեւանի ու Թիֆլիսի միջեւ բանում էր օրական մի քանի գնացք եւ ամբողջ տարածութիւնը կտրում էր 19 ժամից։ 1919ի առաջին երեք ամիսներում Հայաստանի երկաթուղիները հազիւ 250,000 փութ ապրանք էին կարողացել տեղափոխել. մայիս-յունիս եւ յուլիս ամիսներին փոխադրել էին մէկ միլիոնական փութ, սեպտեմբեր-հոկտեմբերին 15 միլիոնական, նոյեմբերին 21 միլիոն, իսկ ամբողջ տարուայ ընթացքին՝ շուրջ 300 միլիոն փութ։

Նոյնը պէտք է ասել եւ պոստ-հեռագիր-հեռախօսի մասին. աւեր ու քաոս էր մնացել մեր ձեռքը։ Մինչեւ 1920 թ. վերանորոգուեց 657 վերստ հեռագրագիծ 1694 վերստ երկաթալարերով։ 1919-ի ա-

ռաջին կէսին պոստ-հեռագրատներ բացուեցին 15 կենտրոններում եւ արդէն գործում էր 1369 վերստ հեռագրագիծ 3250 վերստ երկաթալարով։ Նոյն տարուայ երկրորդ կիսին հիմնապէս նորոգուեց Երեւան-Ալեքսանդրապօլ-Կարս գիծը եւ Երեւան-Կարս ու Երեւան-Ղարաքիլիսա հեռագրական ուղիղ կապ հաստատուեց։ Նոյն միջոցին սկսուեց Նոր-Բայազէտ-Ղարանլուղ-Բէշիշքէնտ, ինչպէս նաեւ Նոր-Բայազէտ-Բասարգէչար եւ Իջեւան-Թավուզ-ղալա հեռագրագծերի կառուցումը, որ եւ աւարտուեց 1920-ի սկզբին։ Հաստատուեց նաեւ հեռագրական հաղորդակցութիւն Աշտարակի եւ Ալիքուչակի միջեւ եւ հեռախօսային կապ Երեւանի եւ Աշտարակի միջեւ։ Ենթադրւում էր Երեւան-Աշտարակ-Ալիքուչակ գիծը շարունակելով՝ կապել Ալեքսանդրապօլի եւ Կարսի հետ եւ այդպիսով այդ կէտերի հետ ունենալ հեռագրական երկու ճանապարհ։ 1919-ին Հայաստանի պոստ-հեռագրատները ուղարկել են 976,664 նամակ ու կապոց եւ ստացել են 854,166։ Տրուել է 392,154 հեռագիր՝ 6,127,038 բառից բաղկացած։ Մի քանի վայրերի մէջ պօստը փոխադրւում էր աւտոմօբիլով։ Կառավարութեան ծրագիրն էր Հայաստանի բոլոր գիւղերը իրար հետ կապել հեռախօսով եւ գործի փոխադրութեան մէջ մտցնել թեթեւ աւտոմօբիլային գործառնութիւն։

Բանակը.— Անկախութիւնից առաջ հայկական բանակ չկար։ Ազգայնացած զօրամասերը կազմում էին ռուս բանակի մէկ հատուածը եւ ուրոյն կազմակերպութիւն չունէին։ Հայկական բանակի կազմակերպումը ամբողջապէս Հայաստանի կառավարութեան գործն էր։ Երկրի առանձնայատուկ պայմանների պատճառով կառավարութիւնը ստիպուած

էր պահել մեծ քանակութեամբ զօրք, որ թէեւ մի
կողմից խիստ աննպաստ էր անդրադառնում ժողո-
վրրդի տնտեսութեան վրայ, միւս կողմից ապահո-
վում էր պետութեան սահմանները դրսից եւ կարգն
ու անդորրութիւնը ներսում:

Հայկական բանակի կազմակերպումը հիմնուած
էր երկու սկզբունքների վրայ — միայուն զօրք՝
պարտադիր զինուորական ծառայութեամբ եւ երկ-
րապահ գնդեր՝ միլիցիոն հիմքերով: Բանակը, որ
երբեմն հասնում էր մինչեւ 60,000-ի, ունէր բոլոր
մասերը — հետեւակ, այրուձի, հրետանի եւ տեխ-
նիկական բաժիններ: Ունէր երկու զրահապատ գը-
նացքներ, որոնցից մէկը շինուել էր Հայաստանի
արհեստանոցում հայ մասնագէտների ձեռքով: Օ-
դային բաժինը սաղմնային վիճակում էր: Առանձնա-
պէս ուժեղ էր հրետանին, որ ունէր հարիւրի չափ
ընտիր թնդանօթ եւ առատ ռազմամթերք: Դաշտա-
յին, վարչական պարենաւորման բաժինները գտնը-
ւում էին փորձուած եւ մասնագէտ զինուորականնե-
րի ղեկավարութեան տակ — Զօր. Նազարբէգեան,
զօր. Հախվէրդեան, զօր. Ղամազեան, զօր. Արա-
րատեան, զօր. Լօմիզէ, գնդ. Վէքիլեան եւայլն:
Գործօն զօրամասերի գլուխը կանգնած էին դեռ
ռուսական բանակում աչքի ընկած զինուորականներ
— զօր. Սիլիկեան, Փիրումեան, Ծէլկօվնիկեան եւ-
այլն: Գնդերի ու գումարտակների մէջ կային երի-
տասարդ ու քաջ սպաներ, որոնք անցել էին ռուսա-
կան ու թրքական զինուորական դպրոցներ եւ եփ-
ուել-կոփուել էին պատերազմի դաշտում: Մի շարք
մասնագէտ զինուորական տեխնիկներ ոչնչից ստեղ-
ծեցին աւտոմօբիլային բաժին, անթել հեռագիր,
հեռագրա-հեռախօսային բաժին, զինուորական ար-

հեստանոցներ, վառօդի գործարան, կազմակեր-
պեցին կենտրոնական հիւանդանոց՝ շրջանային
հիւանդանոցներով, սանիտարական մաս: 1919-ին Սե-
ւանայ լիճը իջեցուեց առաջին զինուորական նաւա-
կը՝ «Աշոտ Երկաթ»՝ 1 թնդանօթով, 2 գնդացիրով
եւ լուսարձակով: Հիմք դրուեց մի ուրիշ՝ աւելի մեծ
նաւի: Կազմակերպուեց ապրանքների տեղափոխու-
թիւնը նաւերով: Երեւանում հիմնուեցին սպայա-
կոյտի դասընթացքներ. Ալեքսանդրապօլում եւ Ղա-
րաքիլիսայում՝ ենթասպայական վարժարաններ:
Նախապատրաստական աշխատանքները վերջացած
էին զինուորական միջնակարգ դպրոց բանալու, ըն-
տիր զինուորական մեծ պալատ սարքելու համար:
խաւորապէս, որոնց համար: Լուրջ ուշադրութեան
առարկայ եղաւ զինուորների դաստիարակութեան
գործը. զօրամասերում կատարւում էին պարբերա-
կան դասախօսութիւններ գիտական եւ քաղաքական
հարցերի մասին: Զինուորների համար հրատարակ-
ւում էր «Ռազմիկ» շաբաթաթերթը գրական-քաղա-
քական եւ ռազմագիտական բովանդակութեամբ:
Լոյս տեսան մի շարք հանրամատչելի հրատարակու-
թիւններ, ինչպէս նաեւ զինուորական օրէնսգրքեր:
Նախարարութեան մէջ աշխատում էր մասնագէտնե-
րից կազմուած մի առանձին յանձնախումբ զին-
ուորական-գիտական տերմինօլօգիան հայացնելու,
զինուորական օրէնքներ եւ զանազան գրքեր հրատա-
րակելու համար: Հիմնադրուեց զինուորական դրա-
մարան: Յաջողուեց Անգլիայից ստանալ 40,000 զին-
ուորի հագուստ, պարէնաւորում եւ ռազմամթերք
մէկ միլիոն ֆունտ ստերլինգ արժողութեամբ: Ռու-
սաստանից ստացուեց երեք միլիոն մօսինի փամ-
փուշտ:

Սխալւում են նրանք, որոնք ինչ որ խմբական ու

խմբապետական յատկութիւններ են վերագրում հայկական բանակին: Խմբեր ու խմբապետներ գոյութիւն ունէին Հայաստանում եւ առաջ էին քաշւում, մանաւանդ, ներքին կռիւների ժամանակ — մայիսեան շարժում, «մաքրագործման» քաղաքականութիւն եւայլն — բայց կանոնաւոր բանակի հետ կապ չունէին նրանք: Կանոնաւոր բանակում միայն երկու խմբապետ պաշտօն ու մասնակցութիւն ունէին — Դրօն եւ Սեպուհը, բայց սրանք էլ իրենց զինուորական հմտութեամբ, փորձառութիւնով եւ կարգապահութեամբ յետ չէին մնում ամենալաւ զինուորականներից:

Կովկասեան երեք հանրապետութիւններից Հայաստանի բանակը համարւում էր — եւ իրաւամբ— առաջնակարգը իր մարտունակութեան տեսակէտից: Նա պատւով կատարեց իր վրայ դրուած բազմապիսի ծանր պարտականութիւններ, եւ յանցանք է դատապարտութեան վճիռ արձակել նրա մասին միայն Կարսի օրինակով: Կարսը մի աղէտ էր՝ նման այն աղէտներին որոնց ենթարկուեցին եւ եւրոպական լաւագոյն բանակները — ռուսականը, բուլղարականը. էլ չեմ խօսում յունականի մասին, որի կատաստրօֆիկ պարտութեան յիշողութիւնը դեռ շատ թարմ է: Պատահում են դէպքեր, երբ ամենալաւ կազմակերպուած ու պարէնաւորուած բանակները, յանկարծ, մատնւում են խուճապի, կորցնում են դիմադրական կորովը ոչխարի հօտի վերածուած՝ տարածւում են թշնամու ոտքի տակ: Ի՞նչն է դրա պատճառը— թո՛ղ պատասխանեն ընկերաբանները, հոգեախտագէտները: Փաստը մնում է փաստ: Եւ միայն — կամ գլխաւորապէս — հոգեախտաբանական վիճակով կարելի է բացատրել եւ հայոց բանա-

կի վարմունքը Կարսի շուրջ, բայց ո՛չ երբեք հայ ժողովրդի անընդունակութեամբ կամ սոսկ նրա վարիչների ապիկարութեամբ: Ամբոխն է այդպէս դառնում. լուրջ մարդիկ պէտք է կարողանան տարբերութիւն դնել ախտաւոր եւ բնականոն երեւոյթների մէջ:

Աշխատանք.— Հայաստանում պետական գործ էր համարւում եւ աշխատանքի կազմակերպումն ու աշխատանքի պաշտպանութիւնը: Աշխատանքի կազմակերպումը առաջ եկաւ գաղթականների խնամատարութեան գործից: Աշխատանքի վարչութեան ղեկավարութեան տակ հետզհետէ ամբողջ Հայաստանում հիմնուեցին աշխատանոցներ, որոնց մէջ մի քանի տասնեակ հազար մարդ գործ եւ ապրուստ էր գտնում: Արդէն 1919-ին Երեւանում կար 26 ջուլհականոց, որոնց մէջ բանում էին 2500-ից աւելի աշխատաւորներ: Նոյնքան կար Ալեքսանդրապոլում: Ջուլհականոցներ հիմնուեցին եւ Կարսում, Ջալալ-Օղլիում, Դիլիջանում, Վաղարշապատում, Աշտարակում, Գորիսում: Երեւանում կար մօտ 30 պետական տաղձագործարան, այլ եւ կար ու ձեւի արհեստանոցներ, մանարաններ, կօշկակարութեան, գորգագործութեան, կաւեղէնի արհեստանոցներ: Ծրագրուած էր Երեւանում բանալ կաւագործական վարժարան, իսկ Իւվայում՝ մեծ կաւագործարան, Սարըղամիշում եւ Դիլիջանում հիմնուեցին սղոցարաններ, կահագործարան, փայտեղէնի արհեստանոցներ: Սարըղամիշում պատրաստւում էին շէնքերի փայտեայ մասեր, փայտից քաշւում էր ալքօլ եւայլն:

Աշխատանքի պաշտպանութեան նախարարութիւնը մշակեց աշխատանքի հիմնական օրէնք, անց-

կացրեց 8 ժամուայ աշխատանքի օրը, մացրեց չըր-
ջանային տեսչութիւններ, աշխատանքի պայմաննե-
րը բարեկարգելու նպատակով, ձեռնարկեց արհես-
տակցական միութիւնների համագումարի կազմա-
կերպման եւայլն:

Պետական վերահսկողութիւն.— Պետական եկե-
մուտքի վրայ իրական հսկողութիւն ունենալու համար
խորհրդարանը հաստատեց պետական վերահսկողու-
թեան վարչութիւն: Պետական վերահսկիչը ընտըր-
ւում էր խորհրդարանի կողմից, սովորաբար, չէ-
զոք կամ կառավարութեան հակառակորդ կուսակ-
ցութեան մարդկանցից: Պետական վերահսկիչը
քննում էր պետական հիմնարկութիւնների եւ զոր-
ծակալների հաշիններն ու դրամական գործառնու-
թիւնները եւ ինքը հաշուետու էր խորհրդարանին:
Դրամական յատկացումները անցնում էին պետա-
կան վերահսկողութեան ձեռքից, առանց որի ստո-
րագրութեան վարկերը անվաւեր էին եւ չէին կարող
բաց թողնուել պետական գանձարանից:

Ահա մի քանի, շատ շտապ կերպով հաւաքուած
տեղեկութիւններ Հայաստանի Հանրապետութեան
երկամեայ կեանքում տեղի ունեցած պետական դը-
րական աշխատանքի մասին: Մի շարք բաներ, ինչ-
պէս գաղթականների խնամատարութիւնը, որբերի
հոգերը, երկրի եւ գաղութների յարաբերութիւննե-
րը չեն արձանագրուած դիտմամբ: Մի շարք բաներ
էլ անխուսափելի կերպով դուրս են մնացել, որով-
հետեւ ես, դժբախտաբար, ձեռքիս տակ չունէի ան-
հրաժեշտ աղբիւրները:

«Անշուշտ,— ասենք Քաջազնունու խօսքով —

շատ բան չէ՛ այս ամէնը, բայց չէ՞ որ այդ քիչն էլ»
Քաջազնունին չի տեսել:

Շատ բան չէ, այո՛, բայց չպէտք է մոռանալ, որ
Հայաստանի Հանրապետութիւնը միայն երկու տար-
ուայ կեանք ունեցաւ եւ այն էլ ի՜նչ կեանք: Այդքան
կարճ ժամանակամիջոցում «անձեւ քաոսի ու աւե-
րակների կոյտի» մէջ հազիւ այդչափն էր հնարաւոր
անել: Եւ այդքանն էլ քիչ չէ ցոյց տալու համար,
որ հայ ժողովուրդը ընդունակ է սեփական պետու-
թիւն կազմակերպելու եւ պահելու:

Քաջազնունին լաւ գործ չի տեսել Հայաստա-
նում: Ինչո՞ւ: 1919-ի սկզբին նա Հայաստանից մեկ-
նեց Ամերիկա՝ թողնելով իր յետեւը «քաոս» եւ «ա-
ւերածութիւն»: Մէկ ու կէս տարի արտասահմանում
պտըտելուց յետոյ, 1920-ի աշնանը վերադարձաւ Հա-
յաստան, երբ հայ-թրքական պատերազմը արդէն
հասել էր իր ճակատագրական գծին, եւ դարձեալ
տեսաւ «քաոս» ու «աւերածութիւն»: Ի՞նչ էր կա-
տարուել իր բացակայած մէկ ու կէս տարուայ ժա-
մանակամիջոցում. նա չի տեսել, եւ նրա գլխում
այնպէս է տպաւորուած, որ ո՛չ մի դրական պետա-
կան գործ չի կատարուել Հայաստանում:

Բնականաբար, եթէ Քաջազնունին ազատ լինէր
կանխակալ գաղափարներից, նախ քան իր գիրքը
հրատարակութեան տալը աչքէ կ'անցկացնէր եւ ի'ր
յիշողութեան մէջ կը թարմացնէր իրական փաստերն
ու իրողութիւնները, որի համար նիւթ կը գտնէր
թէկուզ Հ. Հ. Պատուիրակութեան արխիւներում:
Բայց նա այդ չի արել: Այդ պատճառով նրա գիրքը
ստացել է զրպարտութեան բնոյթ — զրպարտու-
թիւն հայ ժողովրդի ու մտաւորականութեան հաս-
ցէին:

Ես գրում եմ՝ «Հայ ժողովրդի ու մտաւորականութեան» եւ ոչ Հ. Յ. Դաշնակցութեան, որովհետեւ Քաջազնունին կուսակցական տարբերութիւններ չի դնում եւ ամէնքին էլ միեւնոյն ջրով է լուանում: Ուստի, չափազանց տարօրինակ է ցնծութիւնը այն տարրերի, որոնք Քաջազնունու գիրքը համարում են երկնքից իջած մի գանձ իրենց կուսակցական նպատակներին հետամուտ լինելու համար: Զարմանալի է ցինիզմը եւ արժանապատուութեան բացակայութեան աստիճանը այդ տարրերի մէջ, որովհետեւ եթէ Քաջազնունու համար Դաշնակցութիւնը այլեւս «անպէտք գործիք» է, այդ տարրերը երբե՛ք չեն էլ եղած պէտքական գործիք — միշտ էլ եղած են հակապետական եւ արհամարհելի:

IV

«ՄԵՐ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ»

Մեր իրականութիւնը այնպէս մռայլ ու յուսահատական գոյներով նկարագրելուց յետոյ, Քաջազնունին յանգում է այն եզրակացութեան, որ «Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս» եւ որ նրա գործը պէտք է շարունակեն —եւ արդէն իսկ շարունակում են հայ բոլշեւիկները: Թողնենք, առայժմ, Դաշնակցութիւնը հանգիստ եւ տեսնենք Քաջազնունու դատողութիւնները բոլշեւիզմի եւ բոլշեւիկների մասին:

Քաջազնունին անվիճելի է համարում, որ հայկական բոլշեւիզմը արտաքին ուժ է Հայաստանի համար. «բոլշեւիզմը հայկական ռէժիմ չէ... հայկական բոլշեւիզմը շարունակութիւնն է ու մի փոքրիկ մասը ռուսական բոլշեւիզմի»: «Խորհրդային իշխանութիւնը անհարազատ է ու անհամապատասխան հայկական իրականութեան»: «Բոլշեւիկեան սիստէմը իր ամբո՛ղջ էութեամբ անընդունելի է մեզ համար»: «Բոլշեւիկեան սիստէմը չի կարող վերաշինել մեր աւեր երկիրը, ապահովել նրա տնտեսական զարգացումը»: Հայկական «ազգային կազմը աննպաստ է, հակառակ է որեւէ տիկտատուրայի... մեր երկրում կայուն տիկտատուրա կարող է իրականացնել միայն դրսի օտար ուժը, բայց ո՛չ երբեք տեղականը»: «Խորհրդային Հայաստանի ո՛չ քաղաքական վիճակը, ո՛չ վարչաձեւը, ո՛չ էլ ներքին սոցիալ-տնտեսական քաղաքականութիւնը չեն կարող բաւարարել մեզ»: «Կրկնել չեմ ուզում, թէ որ աստիճանի անհամապատասխան է խորհրդային ռէժիմը Հայաստանի իրական պահանջներին. այս խնդիրը ինձ համար չի վերցնում ո՛չ մի վէճ»:

Այս խնդիրը մեզ համար էլ չի վերցնում ո՛չ մի վէճ.— Բոլշեւիզմը եւ հայ բոլշեւիկները արտաքին ուժ են, իրենց բռնապետական իշխանութիւնը պահում են օտար սուինններով եւ անհարազատ ու անհամապատասխան հայկական իրականութեան համար: Այս կէտում կատարելապէս համաձայն ենք Քաջազնունու հետ:

Ո՛չ այնքան վճռականութեամբ, բայց եւ այնպէս Քաջազնունու հետ համաձայն ենք եւ յաջորդ հարցում.— այսօր, «տուեալ կոնկրէտ պայմաններում», «Հայաստանը պէտք է ունի բոլշեւիկներին»: Պէտք ունի, որովհետեւ հայ ժողովուրդը դրուած է մի ծանր երկընտրանքի առջեւ. «Բոլշեւիկները կամ միլլիականները — ուրիշ ընտրութիւն չունինք անելու»: Մենք գիտենք, հակառակ Քա-

ջաղնունու կասկածների, որ այդ երկրնտրանքի առ-
ջեւ հայ ժողովրդին դրել են հէնց իրենք՝ բոլշեւիկ-
ները, բայց եւ այնպէս «ուրիշ ընտրութիւն չունինք
անելու»: Վերջերս ընդհանուր գործածութիւն է
ստացել «անհրաժեշտ հարկադրանք» խօսքը — ա-
ռաջ ասում էին՝ «փոքրագոյն չարիք» .—.Հայաստա-
նը կանգնած է ճիշդ այդ անհրաժեշտ հարկադրան-
քի հանդէպ եւ ստիպուած է լուռ ու անտրտունջ վի-
զը ճկել թշնամու առաջ՝ համոզուած՝ որ այս դը-
րութիւնը ժամանակաւոր է եւ հեռու չէ իսկական
ազատութեան րոպէն:

Մինչեւ այստեղ հասկանալով եւ հիմնական
խնդրում համաձայնելով Քաջազնունու հետ՝ սրան-
նից յետոյ մենք բացարձակապէս դադարում ենք ի-
րար հասկանալ: Եւ, իրօք, տարօրինակ, անտրա-
մաբան եւ անհասկանալի բաներ է ասում նա:

«Ես, գրում է նա, չեմ ճանաչում հայ բոլշե-
ւիկներին, չունեմ անձնական ծանօթութիւններ,
հեռուից էլ հնարաւորութիւն չունեմ հետեւելու նը-
րանց գործունէութեանը, չգիտեմ իշխող տրամադրու-
թիւնը»: Զգիտցած բանի մասին ընդունուած է չխօ-
սել, եւ սպասելի էր, որ Քաջազնու պէս մէկը այդ-
պէս էլ վարուէր: Բայց ահա, այսպիսի վճռական
խոստովանութիւնից յետոյ, նա գալիս է ո՛չ պա-
կաս վճռականութեամբ յայտարարելու, որ՝ «Հայ
բոլշեւիկները Դաշնակցականներ են, միակ Դաշ-
նակցականները», որ «հայ բոլշեւիկները մեր ժա-
ռանգներն են, որ շարունակելու են — ու արդէն
շարունակում են — մեր գործը... Մենք մերը ա-
րինք, լրացրինք մի որոշ շրջան. շարունակութիւնը
նրանց է պատկանում»:

Մարդ ուղղակի մնում է շուարած: Ի՞նչպէս թէ:

Մարդ Աստծոյ, ասում ես՝ «չեմ ճանաչում հայ
բոլշեւիկներին», էլ, ուրեմն, ինչպէ՞ս կարող ես ա-
սել, թէ «Հայ բոլշեւիկները Դաշնակցականներ են»
եւ «շարունակում են մեր գործը»: Երկուից մէկը,
կամ հայ բոլշեւիկներին չես ճանաչում եւ, ուրեմն,
նրանց մասին կարծիք չես կարող յայտնել, կամ եթէ
ասում ես, որ նրանք այժմ կատարում են Դաշնակ-
ցութեան դերը, ճանաչո՛ւմ ես, գիտե՛ս բոլշեւիկնե-
րին եւ առաջին ասածդ հէնց այնպէս՝ աննպատակ
արտասանուած խօսքեր են: Հակասութիւնը ակըն-
յայտնի է, չէ՞:

Սակայն, արդար չէ Քաջազնունուց հետեւողա-
կանութիւն պահանջել, երբ նա խօսում է բոլշեւիկ-
ների մասին: Նա այնքա՜ն հաւատացած է հայ բոլ-
շեւիկների փրկարար առաքելութեան, այնքա՜ն
տարուած է իր idee fixe-ով, որ նոյն իսկ չի էլ
նկատում իր հակասական եւ պարադօկսալ դա-
տողութիւնները, չի էլ զգում, թէ որքա՜ն անհիմն
ու անլուրջ են իր փաստարկութիւններից շատը:

Այսպէս, մէկից աւելի անգամներ եւ առարկու-
թիւն չվերցնող ոճով նա՛ յայտարարում է, որ բոլ-
շեւիկները Հայաստանի համար օտար ուժ՚իմ են,
դրսից եկած, «անհարազատ» ուժ, որ կը մնայ իշ-
խանութեան գլուխ այնքա՛ն ժամանակ, որքան ժա-
մական կարմիր դրօշը կը ծածանէ Մոսկուայում:
Եւ, յանկարծ, այդ օտար ու անհարազատ ուժը
դառնում է ժառանգն ու գործերի շարունակողը դե-
բաղանցապէս «հայկական ուժ» Դաշնակցութեան:
Ինչպէ՞ս հաշտեցնել այս աղաղակող, աչք ծակող
հակասութիւնը:

Եթէ Քաջազնունին ասէր, թէ՝ թէեւ հայ բոլ-
շեւիկները մինչեւ այժմ եղել են օտար ուժ, բայց

այսուհետեւ կը միանան հայ իրականութեան հետ
ու կը դառնան ազգային գործօն — նրան կարելի էր
հասկանալ։ Անկախ նրանից, թէ որքան կոմունիս-
տական վարդապետութիւնն ու բոլշեւիկները ընդու-
նակ են ազգային արտայայտութիւններ ստանալու,
Թաջազնունու այդ կարծիքը կը լինէր հետեւողական
եւ կ'ունենար որոշ իմաստ։ Բայց Թաջազնունին
այդպիսի բան չի ասում․ ընդհակառակը, նա գիտէ,
որ «բոլշեւիզմը հայկական ռէժիմ չէ», բայց եւ
այնպէս, հակառակ բնութեան ու բանականութեան
բոլոր օրէնքներին, պնդում է, որ այդ ոչ-հայկական
ռէժիմը բռնելու է հայկական ռէժիմ Դաշնակցու-
թեան տեղը։

Կարելի է ենթադրել, որ օտար միջավայրում եւ
օտար նպատակների համար ծնունդ առած մի կազ-
մակերպութիւն, ընկնելով հայրենի միջավայրի
մէջ, հետզհետէ կերպարանափոխուի եւ վերածուի
այդ միջավայրին համապատասխան ույժի։ Շատ հե-
ռուն չգնանք, հէնց մեր աչքերի առջեւ կատարուեց
նման մի այլափոխութիւն։ Վրաց սօցիալ-դէմօկրա-
տիան, որ յեղափոխութիւնից առաջ ապազգային—
աշխարհաքաղաքացիական կուսակցութիւն էր, ի
վերջոյ դարձաւ ազգային-սօցիալիստական մի կազ-
մակերպութիւն՝ գրաւելով առաջնակարգ դիրք Վը-
րաստանի պետական կեանքում։ Կա՞ն նման նշաններ,
Թաջազնունին կարո՞ղ է ասել, որ հայ բոլշեւիկներն
էլ բռնել են էվօլիւցիայի ճամբան։ Եթէ կարող է եւ
եթէ, իրօք, հայ բոլշեւիկները վերածնուեն ու դառ-
նան հայ իրականութեան օրգանական մի մասնիկը,
մենք էլ կը փոխենք մեր վերաբերումը նրանց հան-
դէպ։ Բայց այդպիսի նշան գոյութիւն չունի, եւ Թա-
ջազնունին ինքն էլ ընդունում է, որ հայ բոլշեւիկ-

ները չարունակում են մնալ, ռուսական բոլշեւիկնե-
րի մի մասը։

Այդ բանը հաստատում են եւ իրական փաստերը։
Հայ բոլշեւիկները մնում են արտաքին գործօն եւ
նրանց այս կամ այն վարքագիծը ամբողջապէս պայ-
մանաւորուած է Մոսկուայով։ Նրանց քաղաքակա-
նութեան «խոհեմ» կամ «ծայրայեղ» արտայայտու-
թիւնները կախուած են միայն նրանից, թէ ի՞նչ հը-
րահանգ կը տայ Պօլիտբիւրօն Մոսկուայից, եւ ո՛չ
մի առնչութիւն չունին հայ իրականութեան հետ։
Հայ իրականութիւնը՝ իրեն համար, բոլշեւիկները՝
իրենց համար։ Այս հանգամանքը խորապէս զգում
եւ գիտակցում է հայ աշխատաւորութիւնը։ Եւ
տեսէք արդիւնքը․ երեք տարի է հայ բոլշեւիկները
իշխում են Հայաստանում, բայց օրգանական ի՞նչ
կապ է ստեղծուել նրանց եւ ժողովրդի միջեւ։ Հէնց
բոլշեւիկների իրենց հրատարակած վիճակագրական
տուեալները հաստատում են, որ կոմունիստների
թիւը Հայաստանում 1923-ին աւելի պակաս է, քան
նախկին տարիներին։ Գիւղացիութիւնը ամբողջա-
պէս դուրս է բոլշեւիկների գաղափարական շրջա-
պատից եւ ընդդիմադիր դիրքում է գտնւում։ Մտա-
ւորականութեան ճնշիչ մեծամասնութիւնը «հակա-
յեղափոխական» է ու «մանր-բուրժուական»։ Բան-
ւորութեան մէջ եւս բոլշեւիզմը իշխող չէ եւ հե-
տըզհետէ կորցնում է իր հեղինակութիւնը։ Նոր սե-
րունդը չի ոգեւորւում կոմունիստների գաղափար-
ներով։ Խորհրդային իշխանութիւնը, բացի կարմիր
բանակից ու չէկայից, Հայաստանում շատ քիչ յե-
նարան ունի իր ոտքի տակ։ Եւ այս իշխանութիւնն
է, որ Թաջազնունու կարծիքով, հայ քաղաքական
կեանքի միակ ղեկավարն է լինելու այսուհետեւ։

Բոլշեւիզմը հայկական ռէժիմ չէ: Հայաստանի համար նա, ըստ էութեան, նոյնն է, ինչ որ էր ցարական կառավարութիւնը: Եւ ինչպէս որ «տուեալ կոնկրէտ պայմանների մէջ» ցարական Ռուսաստանն էլ «անհրաժեշտ» էր հայ ժողովրդին, այնպէս «անհրաժեշտ է» այսօր եւ բոլշեւիկեան իշխանութիւնը: Եւ ինչպէս Դաշնակցութիւնը՝ «միշտ լինելով ու մնալով հայ քաղաքական ազատագրման մարտիկը» եւ ձգտելով «անկախ պետութեան»՝ «տուեալ կոնկրէտ պայմանների մէջ» չի կռուել ցարական ռէժիմը տապալելու նպատակով, այնպէս չի կռւում եւ այսօր: Բայց ինչպէս ցարական ռէժիմը օտար եւ, վերջին հաշուով, թշնամի ոյժ էր հայ աշխատաւորութեան, այնպէս եւ օտար ու թշնամի է բոլշեւիզմը: Եւ ինչպէս ցարական կառավարութիւնը չէր կարող Դաշնակցութեան ժառանգն ու գործերի շարունակողը լինել, այնպէս չի կարող եւ «Մեասնիկեանի ու Լուկաշինի կառավարութիւնը»: Այս հողի վրայ, քանի բոլշեւիկները կամ ինքը Քաջազնունին աւելի լուրջ նիւթ չեն ներկայացնի, վէճը պէտք է համարել սպառուած: Քաջազնունու ոչընչով չհիմնաւորուած եւ իր իսկ դատողութիւններով հերքուող հաւատը բաւական չէ հայ բոլշեւիկներին Դաշնակցութեան ժառանգը դարձնելու համար:

Հարցի ծանրութեան կենտրոնը, իմ կարծիքով, գտնւում է ո՛չ թէ բոլշեւիկ-դաշնակցական ժառանգական վէճի, այլ բոլշեւիկների ներկայումս ունեցող քաղաքական արժէքի մէջ: Եւ այստեղ է մեր եւ Քաջազնունու հասկացողութիւնների հիմնական տարբերութիւնը: Դաշնակցութիւնը, ինչպէս եւ հայ ժողովուրդը, բոլշեւիկեան իշխանութեան վրայ նայում է երբեւ անցողական, ժամանակաւոր դրու-

թեան, այնինչ Քաջազնունին համոզուած է, որ
վաղն էլ նոյնն է լինելու, ինչ որ այսօր— վաղը «շատ
էլ չպիտի տարբերուի այսօրուանից»—, թէեւ իր այդ
համոզումը ոչնչով չի պատճառաբանում: Քաջազ-
նունին հաւատում է — սահման չունի Քաջազնունու
հաւատը — որ բոլշեւիկները նստել են Ռուսաստա-
նում ու Հայաստանում եւ դեռ երկար ժամանակ
նստած պիտի մնան: Նրան չի մտահոգում քաղաքա-
կան եւ, մանաւանդ, տնտեսական-ֆինանսական այն
սարսափելի վիճակը, որի ճանկերում գալարւում է
Խորհրդային Ռուսաստանը: Նա մոռանում է ռուսա-
կան յարատեւ սովը, արդիւնաբերութեան անկումը,
գիւղատնտեսութեան քայքայումը, «Նէպի» առաջ
բերած այլասերումը կոմունիստական շարքերում:
Նա չի տեսնում, որ Խորհուրդների վերջին ընտրու-
թիւնների ժամանակ գրեթէ ամբողջ գիւղացիութիւ-
նը, այսինքն Ռուսաստանի ազգաբնակութեան
90%-ը իր քուէն տուեց, այսպէս կոչուած, անկու-
սակցականներին: Հէնց Խորհրդային Հանրապետու-
թիւնների կենտր. օրգան «Իզվէստիա»յի պաշտօնա-
կան հաղորդագրութեան համաձայն Խորհրդային
երկրների գիւղական Խորհուրդների պատգամաւոր-
ների ութ ու կէս տոկոսը միայն կոմունիստներ են:
Նա մոռանում է, որ մօտ միլիոնի հասնող կոմունիս-
տական կուսակցութիւնը այժմ վեր է ածուել 350,-
000 հոգինոց սակաւապետութեան: Ուրիշ շատ բա-
ներ էլ մոռանում է Քաջազնունին Ռուսաստանի ներ-
կայ իրականութիւնից եւ տեսնում է միայն, որ բոլ-
շեւիկները պինդ կպած են իշխանութեան: Եւ ոչ
միայն այդքան. նա այդ բոլշեւիկներին համարում է
նոյնիսկ «իսկական ռուս մարդիկ՝ ռուս ազգային
հոգեբանութիւնով լեցուն ու ռուս ազգային իդէալ-

ներով տարուած» եւ դարձեալ մոռանում է, որ այդ «ռուս ազգային իդէալներով տարուած» մարդկանց Ռուսաստանը, ռուս ժողովրդի 95%-ը չի ընդունում, չի ուզում ճանաչել, թշնամի է:

Թէ որքա՛ն անհիմն են ու վերացական Քաջազնունու դատողութիւնները, առանձին պայծառութեամբ ցոյց է տալիս նրա հետեւեալ հաւատը. «Ես, ասում է նա, չեմ ճանաչում հայ բոլշեւիկներին... Սրտիս խորքում մի յամառ հաւատ ունիմ, թէ նըրանք էլ ինձ պէս եւ իմ չափ հայ մարդիկ են...»

Այս ընդգծած տողերով Քաջազնունին արդէն իսկ սպանում է ինքն իրեն, խաչ է քաշում իր բոլոր ասածների վրայ, հրապարակ է հանում իր փաստարկութիւնների կատարեալ սնանկութիւնը, եւ մի աւելորդ անգամ հաստատում, թէ հողից կտրըուած, ամպերի մէջ սաւառնող ուտոպիստ է եւ ոչ կեանքի գործիչ: Նա ցոյց է տալիս, որ ո՛չ միայն հայ բոլշեւիկների մասին գաղափար չունի, այլեւ տեղեակ չէ, առհասարակ, բոլշեւիկների Ռուսաստանի ներկայ վիճակի, ռուս ժողովրդի ապրումների եւ Մոսկուայի վարիչների մտայնութեան ու քաղաքականութեան մասին: Նա «սրտի խորքում յամառ հաւատ ունի» — ասուած է, հաւատը լեռներ կը շարժէ, բայց ասուած է նաեւ, թէ 20-րդ դարում այլեւս հրաշքներ չեն պատահում: Քաջազնունին նստած իր առանձնասենեակում եւ ամուր ապաւինելով հաւատին՝ հրաշքի է սպասում...

Ի՞նչ է, ըստ էութեան, Քաջազնունու ծրագիրը: Նա առաջարկում է, որ Դաշնակցութիւնը վերանայ ասպարէզից եւ հրապարակը թողնի հայ բոլշեւիկներին: Գործնականի մէջ սա նշանակում է, որ հայ ազգը պէտք է հակուի բոլշեւիկների կողմը, դառ-

նայ «ռուսօֆիլ», ռուսական քաղաքականութեան ջատագով: Սա նշանակում է վերականգնել ազգովին մէկ քաղաքականութիւն վարելու արդէն փորձուած եւ սնանկ յայտարարուած եղանակը: Սա նշանակում է նորից Կովկասում հայ ժողովուրդին դնել հարեւան ժողովուրդների հանդէպ կասկածելի ու թշնամական դիրքի մէջ: Սա նշանակում է դարձեալ հայերին գործիք ծառայեցնել այս անգամ բոլշեւիկեան անուն կրող ռուս դիւանագիտութեան ձեռքին: Սա նշանակում է կրկնել 1914 եւ 1918 թուականների պատմութիւնը: Սա նշանակում է, վերջապէս, հայ ժողովրդին նոր նոր փոթորիկների ու նոր արկածախնդրութիւնների գիրկը նետել — փոթորիկներ, որոնց աղբիւրը ռուս-թրքական եւ ռուս-թուրք-կովկասեան փոխյարաբերութիւններն են:

Քաջազնունին ուզում է հայ ժողովրդին ազատ պահել Ռուսաստանում ու Կովկասում ծագելիք շարժումներից ու կռիւներից. «Հայ ժողովուրդը շատ է տուժած, շատ է յոգնած ու ուժասպառ... Մենք չկանք: Հայ ժողովուրդը կատարեալ իրաւունք ունի մի րոպէ շունչ քաշելու եւ իր վէրքերը բուժելու մասին մտածելու»: Եւ դրա համար ի՞նչ է ասում. — Առաջարկում է ազգովին նետուել ռուս բոլշեւիկների գիրկը: Բայց չէ՞ որ շարժումների ու կռիւների աղբիւրը հէնց ռուս բոլշեւիզմն է: Չէ՞ որ բոլշեւիկների յարձակողական ու բռնակալ քաղաքականութիւնն է, որ կարող է փոթորիկ ու արկածախնդրութիւն առաջ բերել Կովկասում: Չէ՞ որ, վերջապէս, ռուս-թրքական ընդհարումներն էլ, եթէ տեղի պիտի ունենան, հետեւանք են լինելու ռուս-թրքական մրցակցութեան Կովկասում: Ինչ-

պէ՞ս է ուզում Քաջազնունին փոթորիկներից դուրս պահել Հայաստանը, ամբողջովին կապելով նրան բոլշեւիկեան Ռուսաստանի հետ, այսինքն հայ ժողովրդին դարձնելով կողմ, ընդդէմ կովկասեան ժողովուրդների ու Թուրքերի։

1914-ին, երբ Կովկասի մեր ազգային գործիչները հայ ժողովրդի քաղաքական բախտը կապեցին ռուսական զէնքի յաղթութեան հետ, Քաջազնունին միանգամայն իրաւացի կերպով բողոքում էր ազգովին մէկ քաղաքականութիւն որդեգրելու եղանակի դէմ։ Հզօր պետութիւններից մէկն էր, եւ ո՛չ ոք չէր կասկածում պատերազմի հետեւանքների մասին, բացի Քաջազնունու պէս ծայրայեղօրէն կասկածոտ մարդկանցից։ Այն ժամանակ հայ գործիչների համար ներելի էր սխալուել— ամբողջ աշխարհ սխալուեց։ Բայց այժմ նորից նոյն ճանապարհով գնալ— հայ ժողովրդի ճակատագիրը կապել (լա՛ւ հասկացէք) 1923 թուականի ռուս զօրքի յարափոփոխ զօրութեան, բոլշեւիկների ենթադրեալ ոյժի ու մաքիաւելիական քաղաքականութեան հետ, ներելի չէ ո՛չ միայն Քաջազնունու պէս զգոյշ ու կասկածամիտ գործիչների, այլեւ հասարակ քաղաքացիների համար։ Եւ թւում է, որ հասարակ քաղաքացիները — մասսան — արդէն իսկ հասկացել են այդ ճշմարտութիւնը, բայց այս անգամ էլ Քաջազնունիներն են յամառում եւ խարխափելով անըմբռնելի հակասութիւնների մէջ՝ հրամցնում են մեզ այն քաղաքականութիւնը, որը արդէն մահուան է դատապարտուած կեանքի, ժողովրդի եւ նոյնիսկ իրենց կողմից։

Հայաստանում այս բանը հասկացել են։ «Այստեղ՝ ժողովուրդը, հաղորդում է Երեւանից մի ծա-

նօթ հասարակական գործիչ, անհանգստութեամբ է դիտում այն պաղութիւնը, որը առաջ է եկել Լօզանի կոնֆերէնցիայից յետոյ ռուսների եւ Թուրքերի յարաբերութիւնների մէջ։ Խօսւում է նոյնիսկ պատերազմի մասին։ Ամէնքը համոզուած են, որ եթէ պատերազմ ծագի՝ ռուսները կը պարպեն Հայաստանը։ Կարմիր բանակի հրամանատարական կազմին մօտ մարդիկ հաւաստիացնում են, որ ռուսները իբրեւ դիմադրութեան առաջին գիծ ընտրել են Սեմեօնովկայի լեռնանցքը եւ այդ պատճառով այս գծից դէպի հարաւ գտնուող պահեստներից բոլոր ռազմամթերքը, ծանր թնդանօթները եւ, առհասարակ, ամէն դժուար փոխադրելի նիւթ տեղափոխել են դէպի թիկունք… Պատերազմի դէպքում Հայաստանի յոյսը միայն 2000-նոց հայ զօրամասի վրայ է… Հարկաւոր է ընդհանուր լեզու գտնել մեր հարեւանների հետ… հարկաւոր է լուրջ միջոցներ ձեռք առնել Թուրքերի հետ հաշտեցողութեան գալու համար»…

Քաջազնունին սրան մի պատասխան միայն կարող է տալ.— «Գիտե՞ս ինչ. ես չեմ հաւատում քո ունեցած տեղեկութիւններին»։ Բայց դա պատասխան չէ։

Քաջազնունու հաւատալը կամ չհաւատալը դեռ բաւական չէ, որպէսզի այս կամ այն երեւոյթը գոյութիւն չունենայ։

Հայաստանում հասկացել են, որովհետեւ տեսնում են, զգում են իրենց կաշու վրայ, որ բոլշեւիկների գիրկը ընկնելը մահացու վտանգ է ներկայացնում եւ աղերսում են «ընդհանուր լեզու գտնել» հարեւանների հետ, «հաշտեցողութեան գալ» Թուրքերի հետ— այսինքն կեանքի մէջ կիրառել այն քաղաքականութիւնը, որի անհրաժեշտութիւնը դի-

տակցում եւ պաշտպանում էր եւ ինքը՝ Քաջազնունին, երբ Հայաստանում էր, բայց որից հրաժարուել է արտասահմանում...

Չերկարացնենք. այժմ շատերն արդէն հասկացել են — Քաջազնունին էլ համաձայն է տեսակէտօ–բէն — որ քաղաքական շերտաւորումը մեր իրականութեան մէջ կենսական անհրաժեշտութիւն է: Համարում է ընդհանուր տեղիք, անվիճելի ճշմարտութիւն, որ, մանաւանդ ներկայ խառնակ ու բարդ հանգամանքներում, վնասակար է ազգովին մէկ ոյժի հետ կապուելը: Բարդ ու բազմակնճիռ դրութիւնը պահանջում է եւ բազմաճիւղ քաղաքականութիւն, ազգային–քաղաքական աշխատանքի բաժանում: Կովկասի եւ, ընդհանրապէս, Առաջաւոր Ասիայի դրութիւնը մեծապէս փոխուել է համեմատած այն օրերի հետ, երբ այնտեղ իշխում էր կայսերական Ռուսաստանը իր հուժկու բանակով եւ միջազգային անվիճելի հեղինակութեամբ: Այսօր ռուսական ոյժը Կովկասում մեծ չափով թուլացել է, դրան հակառակ տեղական ժողովուրդների կենտրոնախոյս ձգտումները անսահման լարման են հասել, անկախութեան տենչը, հետեւաբար եւ հակառուս տրամադրութիւնը գործօն քաղաքականութեան առարկայ: Կովկասեան ժողովուրդների աչքին թշնամի է համարւում ո՛չ միայն Ռուսաստանը, որ բռնացել է իրենց կամքին, խորտակել իրենց պետութիւնը եւ յամառում է մնալ Կովկասում, այլեւ բոլոր նրանք, որոնք բարեկամ եւ աջակից են Ռուսաստանին:

Զգալի կերպով տարբեր է այժմ եւ Թուրքիայի դերը Առաջաւոր Ասիայում: Որ Թուրքիայում շարունակւում է զարգանալ քայքայման պրոցէսը, հա-

գիւ թէ կարելի լինի հերքուել, բայց անհերքելի է եւ այն, որ 1914 թուականի՝ մեծ պետութիւնների հլու կամակատարը հանդիսացող Թուրքիայի փոխարէն, այժմ կանգնած է Եւրոպայի երեսին ապտակներ հասցնող, յանդուգն եւ յաղթողի հոգեբանութեան տէր Թուրքիան, որը բոլշեւիկեան յեղափոխութեան ընթացքին ո՛չ միայն ուժեղացրել է իր դիրքը հանդէպ Մօսկօվի, այլեւ խորը արմատներ է ձգել ամբողջ Ռուսաստանի մահմեդականութեան եւ մասնաւորապէս, կովկասեան ժողովուրդների մէջ: Ռուսաստանի, Թուրքեստանի եւ Կովկասի մահմեդականութեան համար Թուրքիան թշնամի չէ, այլ ազատարար է ու ցանկալի բարեկամ: Վրաստանի համար Թուրքիան դրական գործօն է հակառուս պայքարի ընթացքին: Աւելորդ է ասել, որ Թուրք–կովկասեան յարաբերութիւնները շատ աւելի խնամի են ու գործնական, քան ենթադրում են շատերը:

Այս բոլորի վրայ աւելանում է եւ եւրոպական գործօնը, որի վերջնական ձեւակերպումը այսօր դեռ կարելի չէ նախատեսել: Դժուար է մօտաւոր չափով իսկ նախատեսել, թէ ինչ կարող է պատահել, որ մօտիկ ապագայում, ինչպէս հաւատում է Քաջազնունին, իրօք, ո՛չ մի փոփոխութիւն տեղի չի ունենայ, բայց անհաւանական չէ եւ հակառակը: Եւ հէնց Քաջազնունու ջատագոված «նախատեսութեան» տեսակէտից անհրաժեշտ է, որ հայ ժողովուրդը յիմար կոյսերի վիճակում չգտնուի:

Քաջազնունին Հայաստանի գործիչների ամենամեծ թերութիւնը համարում է նախատեսելու կարողութիւնից զուրկ լինելը. մենք «չենք գիտեցել նախատեսել: Մեր ամենամեծ թուլութիւնը այդ է ե-

ղել»։ Բայց իր գրքի մէջ ամէն քայլափոխին նա աշխատում է հերքել նախատեսութեան անհրաժեշտութիւնը։ Տարուած մի տեսակ կոյր ֆատալիզմով՝ նա թողնում է հարցերը իրենց տարերային զարգացման․ թո՛ղ լինի, ինչ որ լինելու է։ Մի հանգամանք, որ բղխում է նրա անսահման հաւատից դէպի բոլշեւիզմի ոյժն ու տեւականութիւնը։

Եւ հէնց ներկայ խնդրում։ Քաջազնունին, ի հարկէ, չէ կարող կատարելապէս վստահ լինել, որ դրութիւնը Կովկասում բոլորովին ամուր է։ Ինչքան էլ մոլեռանդ հաւատացող լինի, այնուամենայնիւ նրա հոգին էլ պէտք է կրծէ կասկածը․ հապա եթէ Կովկասում առաջ գայ տակնուվրայութիւն, ի՞նչ պիտի լինի մեր վիճակը, ի՞նչ դիրք պիտի բռնենք մենք։ Եւ հակառակ այս կասկածին, նա չի տատանւում պատասխանելու․

— «Ի հարկէ Ռուսաստանը եւ ո՛չ Թուրքիան․ ի հարկէ, բոլշեւիկները եւ ոչ միլլիականները»։ «Մի բան շահած կը լինի՞նք մենք՝ հայերս, եթէ Մոսկուային փոխարինէ Անգօրան»։ «Այն օրը, երբ կարմիր բանակը հեռանայ Անդրկովկասից ու մենք մնանք մենակ Թուրք–Թաթար–վրացական բլոկի հանդէպ — այն օր Հայաստանի գոյութիւնը վըտանգուած կը լինի մեծապէս»։

Ծամծմուած ու մաշուած ճշմարտութիւններ են դրանք։

Մենք էլ հէնց այդ ենք ասում․ «Այն օրը, երբ կարմիր բանակը հեռանայ... Հայաստանի գոյութիւնը վտանգուած կը լինի մեծապէս»։ Եւ հէնց այդ մտահոգութեամբ է, որ վախենում ենք 1918–ի դըրութեան մէջ ընկնելուց, սարսափում ենք, որ մենակ կը մնանք»... Կարմիր բանակը ո՛չ մեր ցանկութեամբ է նստել Կովկասում, ո՛չ էլ մեր կամքով կը հեռանայ։ Բայց կարող է ստեղծուել այնպիսի դրութիւն, որ նա չկամենայ կամ չկարողանայ մընալ։ Ռուս բանակի հեռանալու պատճառ կարող են լինել Ռուսաստանի ներքին հանգամանքները։ Կարող են նրան ստիպել հեռանալու արտաքին պայմանները։ Կարող են քշել կովկասեան ժողովուրդները։ Կարող է, վերջապէս, ռուս–թրքական բաղխում առաջ գալ եւ ռուս բանակը քաշուի։ Ռուս բանակի հեռանալը կարող է մշտատեւ չլինել։ Նա կարող է ե՛ւ ռազմագիտական նպատակներով նահանջել ու վերադառնալ, ինչպէս յաճախ պատահում է պատերազմի ժամանակ։ Կարո՞ղ է Քաջազնունին, բացի իր հաւատից, ուրիշ, աւելի լուրջ տուեալներով ապացուցանել, որ այս կարելիութիւնները չկան մեր առջեւ ոչ–հեռաւոր ապագայում։

Չի կարող, դժբախտաբար։

Արդ՝ եթէ չի կարող, եթէ հայ ժողովրդի համար «մենակ մնալու» վտանգը անիրական չէ— մենակ՝ թշնամի շրջապատի մէջ — ի՞նչ յոյսով եւ համարձակութեամբ մղում է նա բովանդակ հայ ազգը բոլշեւիկների գիրկը։ Չէ՞ որ դրանով հայ ժողովուրդը թշնամի կը լինի ո՛չ միայն արտաքին ոյժի՝ Թուրքիայի, այլեւ իր հարեւանների՝ իրենց ազատութեան համար կռուող կովկասեան ազգութիւնների աչքին։ Արդեօք շատ աւելի խելացի ու հեռատես քաղաքականութիւն չէ՞ր լինի, եթէ մենք աշխատէինք մեր քայլերը համաձայնեցնել մեր հարեւանների քայլերին եւ «մենակ մնալու» փորձութեան ժամին, գոնէ սրանց բարեկամութիւնն ապահոված լինինք։

Քաղաքականութիւնը հաշիւ է։ Հաշուենք եւ

տեսնենք, ի՞նչն է աւելի շահաւոր մեր ժողովրդի համար: Ասենք թէ նաեւ մեր «դաւաճանութեամբ» ռուսը հեռացաւ Կովկասից եւ յետոյ նորից եկաւ, ի՞նչ կարող է լինել հետեւանքը: Հաւանաբար մի քանի տասնեակ կամ մի քանի հարիւր «դաւաճան» ղեկավարներ կախաղան պիտի բարձրանան, հրացանի պիտի բռնուեն կամ Սիբիր աքսորուեն: Ժողովուրդը կը մնայ անձեռնմխելի. գոնէ մինչեւ այժմ այդպէս է վարուել ռուսը:

Երեւակայենք մենք հակառակը. մենք թշնամանում ենք մեր հարեւաններին հետ եւ դառնում ենք ռուսական քաղաքականութեան հետեւողներ: Ի՞նչ կը պատահի, եթէ ռուսը կամայ կամ ակամայ հեռանայ Կովկասից: Հաւանաբար, մեր հարեւանները կը խփեն նրա թիկունքին եւ միաժամանակ կը հարուածեն նաեւ մեզ, իբրեւ ռուսական գործակալների: Հայ ժողովուրդը կը մնայ երկու կրակի մէջ, որովհետեւ հիւսիսի հարեւաններից զատ՝ նա իր դէմ կ՚ունենայ եւ հարաւի հարեւանին:

Ինքնապաշտպանութեան բնազդը հայ ժողովրդին պէտք է թելադրէ բարեկամանալ ամենավտանգաւոր թշնամու հետ: Քաջազնունին ասում է— անհնար է այդ, որովհետեւ մինչեւ այժմ չի յաջողուել: Մինչեւ այժմ չյաջողուելը դեռ անհնարինութեան նշան չէ: Մի բան որ անհրաժեշտ է, հազար անգամ պէտք է փորձել: Եթէ համապատասխան տրամադրութիւն չկայ, պէտք է նախապատրաստել: Եթէ կան առարկայական արգելքներ, պէտք է աշխատել վերացնել: Դժուար է այդ, ճի՛շտ է, բայց ա՛յդ է ուղիղ ճանապարհը: Ուրիշ ճանապարհ, այսօր, չկայ: Այն, որ Քաջազնունին է ցոյց տալիս, ահաւոր ճանապարհ է: Այդ ճանապարհով կարող են դը-

նալ միայն յուսահատուածներն ու գլուխ կորցրածները:

Քաջազնունին ասում է. «Ռուսաստան եւ ոչ Թուրքիա»: Իսկ մենք ասում ենք. ո՛չ Ռուսաստան եւ ո՛չ Թուրքիա, որովհետեւ եթէ մէկը լինի, միւսը անխուսափելի կերպով պիտի գայ: Բայց ցաւը այն է, որ առանց մեր համաձայնութիւնը հարցնելու էլ մէկը կարող է գնալ եւ միւսը գալ: Ի հարկէ, մենք չենք ուզում, որ Թուրքիան գայ. բայց եթէ նա, այնուամենայնիւ, առանց մեզանից արտօնութիւն խնդրելու, գա՞յ. եթէ նրան բերեն հէնց մեր հարեւանները, ի՞նչ կը հրամայէ այդ պարագային Քաջազնունին՝ ի՞նչ ունի հայ ժողովուրդը, միանայ ռուսների հետ ու կռուի՞ ելնէ թուրքերի, վրացիների, ադրբէջանցիների, լեռնցիների դէմ— ի՞նչ անի:

Այդ օրուայ համար է— եւ Քաջազնունին համաձայն է, որ այդ օրը կարող է գալ — մենք ասում ենք. «Մի՛ կրկնէ՛ք հին սխալը. մի՛ դարձրէք հայ ժողովրդին գործիք ռուս դիւանագիտութեան ձեռքին. բաւական է. մե՛նք չկանք»: Այդ հեռանկարը աչքի առաջ ունենալով է, որ մենք անվերջ կրկնում ենք. «Մահուան չափ վտանգաւոր է մենակ մնալը. ընդհանուր լեզու գտնենք, համաձայնութեան գանք մեր հարեւանների հետ»:

Քաջազնունին պնդում է, թէ մենք չենք կարող ընդհանուր լեզու գտնել հարեւանների հետ: Մենք անցեալում անընդունակ ենք եղել, ապագայում էլ չպիտի կարողանանք խաղաղ կենակցութիւն ստեղծել վրացիների ու ադրբէջանցիների հետ, մինչդեռ բոլշեւիկները... «Այդ կենակցութիւնը կայ արդէն — Անդրկովկասեան պետութիւնների մէջ — ո՛չ մի-

այն խաղաղ կենակցութիւն, այլ նոյնիսկ շատ սերտ դաշնակցութիւն»: Պարապ բան է, առարկել Բաչազնունուն, որ «այդ կենակցութիւնը» գոյութիւն չունի, որովհետեւ խաղաղ կենակցութիւն կարելի չէ ստեղծել ժողովրդի կամքին հակառակ, բռունցքով ու սուինով: Կարելի է մի առժամանակ խեղդել հակամարտութիւնները, կարելի է ստիպել, որ մարդիկ լռեն, բայց երեւակայութիւն է խօսել խաղաղ կենակցութեան մասին այնտեղ, ուր ամէն զգացմունք, ամէն միտք, ամէն խօսք խեղդուած է բռնի ուժով եւ ուր գոյութիւն չունի ո՛չ մի ազատութիւն:

Ի՞նչ է, իրօք, այսօրուայ Անդրկովկասը. իսկապէս դաշնակցական հանրապետութի՞ւն է, թէ՝ նախորդ փոխարքայութեան երկրորդ չարափոխուած տպագրութիւնը: Բաչազնունու համար այստեղ էլ տարակոյս չկայ. դրութիւնը շատ աւելի լաւ է, քան էր փոխարքաների օրով: Նա տարւում է երեւոյթների արտաքին շպարով, բոլշեւիկների գրած ու արտասանած խօսքերով: Կայ ինչ որ Անդրկովկասեան Դաշնակցական Հանրապետութիւն, կայ տեղական կառավարութիւն, յայտարարւում են ազգային-կուլտուրական իրաւունքները հաստատող տէկրէտներ, խօսւում է իշխանութեան եւ հաստատութիւնների ազգայնացման, ազգային զօրքի կազմակերպման եւայլն բաների մասին: Բայց ի՞նչ է այս ամէնի իրական բովանդակութիւնը — գիտէ՞ Բաչազնունին: Գիտէ՛: Նա $2\frac{1}{2}$ ամիս ապրել է բոլշեւիկեան տիկտատուրայի տակ եւ լսել է է՛լ աւելի շռնդալից խօսքեր. կարո՞ղ է երաշխաւորել, որ այսօրուայ խօսքերը այլ բան են ասում, քան այն, որոնց ինքը ականջալուր է եղել իր ժամանակին: Կարո՞ղ է հերքել այն պնդումները, որոնց համաձայն Անդր-

կովկասում ոչ անկախութիւն կայ, ոչ ինքնավարութիւն, այլ Մոսկուայի Պոլիտբիւրոյի եւ Չէկայի կամայականութիւնը: Որ Կովկասն այսօր շատ աւելի ճնշուած վիճակի մէջ է, քան էր, օրինակ, Վօրոնցով-Դաշկովի ժամանակ: Որ այդ ճնշող վիճակը ինչպէս պնդում են վրացի կոմունիստները եւ նոյնինքն Ստալինը կոմ. կուսակցութեան XII համագումարին ներկայացրած իր զեկուցման մէջ, ոչ միայն հետեւանք է կոմունիստական տիկտատուրայի, այլ և մեծ ռուսերու յարձակողական նացիոնալիզմի: Որ բոլշեւիկեան նացիոնալիզմը չափազանց նեղմիտ է ու անհանդուրժող, աւելի դաժան, քան էր ցարական նացիոնալիզմը: Որ, այսպէս կոչուած, ինքնավար հանրապետութիւնների քաղաքական եւ տնտեսական բոլոր իրաւունքներն ու միջոցները կենտրոնացած են Մոսկուայի ձեռքին: Կարո՞ղ է նա վստահ կերպով ասել, թէ ո՞ւր կը յանգի բոլշեւիզմի քաղաքական էվօլիւցիան, երբ իր իսկ աչքի առջեւ, 2–3 տարուայ մէջ, ծայրայեղ ապակենտրոնացումից Ռուսաստանը վերածուեց ծայրայեղ կենտրոնապաշտ պետութեան: Բաչազնունին խաբւում է արտաքին երեւոյթներից. մէկ բան, որ ներելի է գաղութահայ գործիչներին, բայց բնաւ ներելի չէ Բաչազնունու համար:

Սակայն, այս տողերի նպատակը Բաչազնունու ասածը հերքելը չէ: Թերեւս եւ, իրօք, խորհըրդային պետական կազմակերպութեան մէջ կան ազգային ազատութեան որոշ յատկանիշներ, որոնք նպաստաւոր հանգամանքներու, կարող են լայնանալ ու վերածուիլ իսկական ազատութեան, ինչպէս հաւատում է Բաչազնունին: Չեմ վիճում — թերեւս: Ինձ զարմացնողը այդ չէ: Ինձ զարմացնում է այն

արտասովոր թափը, այն անվերապահ հաւատը, որով Քաջազնունին պնդում է, թէ խորհրդային կարգը ապահովում է ինչ որ մինիմումը ազգային ազատութեան. ա՛յն ժամանակ, երբ ինքը իր աչքով տեսել է միայն ժխտումը այդ ազատութեան, իսկ նրանից յետոյ, բացի բոլշեւիկեան թերթերի լուրերից, ոչ մի առիթ չի ունեցել ականատես լինելու հակառակ փաստերի: Այս է, որ ինձ համար տարօրինակ ու զարմանալի է թւում: Ինքնաներշնչման ի՜նչ ջանք թափած պէտք է լինի մարդ, որպէսզի կարողանայ յանգիլ այսպիսի կոյր հաւատի:

Նոյնը Հայաստանի վերաբերմամբ: Նա շատ լաւ գիտէ, որ «Խորհրդ. իշխանութիւնը անհարազատ է ու անհամապատասխան հայկական իրականութեան». գիտէ, որ «բոլշեւիկների տնտեսական սխալը՝ մասնաւոր սեփականութեան իրաւունքի բացասումը՝ անվիճելիօրէն կործանարար է այսօրուայ Հայաստանի համար», բայց եւ այնպէս յամառօրէն պնդում է, որ միայն հայ բոլշեւիկներն են ընդունակ կառավարելու Հայաստանը եւ շարունակելու Դաշնակցութեան գործը:

Այստեղ ո՛չ տրամաբանութիւն կայ, ո՛չ էլ քաղաքական իմաստութիւն:

Եթէ բոլշեւիզմը այդքան վատ է, որ ո՛չ երկիրը կարող է վերաշինել, ոչ էլ համապատասխան է Հայաստանի իրական պահանջներին, էլ ինչո՞ւ համար է նա այդքան թանգագին ու անհրաժեշտ, ինչո՞ւ համար է ուզում Քաջազնունին այդ ռէժիմը յաւերժացնել Հայաստանում:— Միայն նրա համար, որ պիտի պաշտպանէ հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը Թուրքի՞ց: Բայց նախ, ինչպէս տեսանք, այդ պաշտպանութիւնը շատ էլ հաստատուն

չէ.— Քաջազնունին գոնէ չի կարող իր անձնական հաւատից զատ ուրիշ համոզեցուցիչ փաստ բերել, որ բոլշեւիկները, պատերազմի դէպքում, պիտի պաշտպանեն Հայաստանը: Երկրորդ՝ այդ ի՞նչ ֆիզիքական գոյութեան պաշտպանութիւն է, երբ բոլշեւիկները տարիներ ու տարիներ պիտի քայքայեն երկրի տնտեսութիւնը, սպառեն ժողովրդի կենսական ուժերը եւ մղեն նրան դէպի պանդխտութիւն ու այլասերում: Նոյն «ֆիզիքական գոյութեան» վըտանգումը չէ՞ այս: Թիֆլիսի բոլշեւիկեան թերթերը հաղորդում են, որ տնտեսութեան քայքայման հետեւանքով 30,000 զանգեզուրցիներ գաղթել են Բագու, Անդրկասպեան երկիր եւ Ռուսաստանի ներսերը: Տնտեսական պատճառներով արտագաղթ է տեղի ունենում եւ ուրիշ վայրերից — Վայոց Ձորից, Շիրակից, Արարատեան Դաշտից, Իջեւանից: Կառավարութիւնը դիմումներ է ստանում զանազան կողմերից, որ իրաւունք տրուի գաղթելու Հիւսիսային Ամերիկա, Բրազիլիա, Բալկանները: Էլ չեմ ասում այն մասին, որ Հայաստանի սահմանները չինական հաստ պարիսպներով շրջապատուած են արտասահմանի աւելի քան 700,000 հայերի առջեւ, որոնք զանգուածօրէն յայտարարուած են «բուրժուա» ու «հակայեղափոխական»: Սա նոյն «ֆիզիքական բռնաջնջումը» չէ՞, որ բոլշեւիկները — գիտակցօրէն թէ անգիտակից — սիստեմատիկ կերպով գործադրում են հայ ժողովրդի նկատմամբ: Ա՞յս է այն ույժը, որին վիճակուած է Դաշնակցութեան ժառանգը հանդիսանալ: Ա՞յս ուժին է ուզում Քաջազնունին յանձնել հայ ժողովրդի ճակատագրի ղեկավարութեան գործը: Յանցագործութիւն չէ՞ արդեօք սա:

Կրկնում եմ․ հասկանալի է, երբ Քաջազնունին, կամայ-ակամայ հաշտւում է ստեղծուած դրութեան հետ, իբրեւ ժամանակաւոր երեւոյթի, իբրեւ չարիքներից փոքրագոյնի, բայց երբ նա հէնց իր տեսակէտից անհարազատ ու վատ, բռնութեամբ դըրսից եկած եւ միայն արտաքին ուժի վրայ յենուելով իր գոյութիւնը պահող կործանարար մի ռէժիմ՝ դարձնում է անսահման ժամանակների համար Հայաստանի իշխանութիւն եւ պահանջում է, որ հայ ժողովուրդը գլուխ խոնարհի, այդ կործանարար ռէժիմի օրը օրհնի,— մնում է անհասկանալի, անբնական ու տարօրինակ։

Բարեբախտաբար, ոչ միայն մեզ, այլեւ հայ ժողովրդի ճնշիչ մեծամասնութեան համար էլ անհասկանալի է ու զարմանալի Քաջազնունու ջատագովութիւնը բօլշեւիկների հասցէին։ Հայ ժողովուրդը ե՛ւ Հայաստանում, ե՛ւ գաղութների մէջ դիտէ շատ լաւ, որ—

«Բօլշեւիզմը հայկական ռէժիմ չէ… հայկական բօլշեւիզմը շարունակութիւնն է ու մի փոքրիկ մասը ռուսական բօլշեւիզմի»։

V

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Մեր անցեալն ու ներկան քրքրելուց յետոյ՝ Քաջազնունին եզրակացնում է, որ «Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս» եւ որ, ուրեմն, պարտաւոր է խարակիրի անել՝ ինքնասպանութիւն գործել։ Եւ իր այս կարծիքը հիմնաւորելու համար բե-

րում է երկու կարգի պատճառներ — առարկայական ու ենթակայական։

Առարկայական պատճառները հետեւեալն են․

1․ «Մեր կուսակցութիւնը արել է արդէն իր ամբողջ անելիքը ու սպառել է իրան։ Կեանքի նոր պայմանները առաջադրում են հրամայականօրէն նոր պահանջներ․ այդ նոր պահանջներին մենք անընդունակ ենք պատասխան տալու»։

2․ Դաշնակցութիւնը չի կարող յարմարուել նոր պայմաններին․ «երեսուն տարուայ կուսակցական կեանքը դրել է մեր վրայ իր անջնջելի դրօշմը, հաստատել է աւանդներ ու սովորութիւններ, որոնցից մենք չենք կարող ազատուել»։

3․ Նոր պայմաններից գլխաւորն այն է, որ «Հայաստանը պիտի դաշնակցի Խորհրդային Ռուսաստանի հետ», իսկ «մեր կուսակցութիւնը չի կարող դաշնակցել բօլշեւիկեան իշխանութեան հետ»։

4․ «Խորհրդային իշխանութիւնը չի ուզում ճանաչել ո՛չ քաղաքական ազատութիւններ, ո՛չ էլ քաղաքական իրաւունքների հաւասարութիւն», որով «իբրեւ օրինական օպօզիցիա մենք տեղ չունենք Հայաստանում»։

5․ «Ստորերկրեայ, դաւադրական գործունէութիւն չպիտի անենք» Հայաստանի խորհրդային իշխանութիւնը պայթեցնելու նպատակով, որովհետեւ «բօլշեւիզմը հայկական ռէժիմ չէ եւ Հայաստանում չէ, որ պիտի տապալուի»։

6․ «Խօսքով պայքարել դրսից ու գաղութներում հակաբօլշեւիկեան պրօպագանդ անել, երբ ներսից պայթեցնելու փորձեր չպիտի ցանկանանք անել,— անիմաստ ու անվայել բան է»։

7․ Մնալով քաղաքականապէս հակառակ բանա-

կում՝ Դաշնակցութիւնը չի կարող դրսից օժանդակել Հայաստանի տնտեսական վերաշինութեան։

8. Դաշնակցութիւնը «պարտուած է ու կորցրած իր հեղինակութիւնը, երկրից դուրս է արուած, չի կարող վերադառնալ տուն, իսկ գաղութներում գործ չունի անելու»։

9. «Դաշնակցութիւնը վարել է հայ քաղաքական դատը ու բերել է քաղաքականապէս ազատագրուող հայ ժողովուրդը, հասցրել մինչեւ մի որոշ տեղ. այստեղ նրան փոխարինելու է՝ մինչեւ հետեւեալ կայանը՝ հայ բոլշեւիկը»։

10. Մի խօսքով, «Դաշնակցական կազմակերպութիւնը դատապարտուած է մահուան (աւելի ճիշտ՝ մեռած է արդէն), իսկ նրա տեղը բռնել են բոլշեւիկները, «հայ բոլշեւիկները մեր ժառանգներն են», «հայ բոլշեւիկները — Դաշնակցականներ են, միակ Դաշնակցականները այսօր»...

Իբրեւ ենթակայական պատճառներ Դաշնակցութեան ինքնասպանութեան անհրաժեշտութեան Քաջազնունին առաջ է բերում հետեւեալ կէտերը.

1. «Կուսակցութիւն չկայ այլեւս։ Կան միայն նախկին կազմակերպութեան բեկորներ, որ իներցիայի ուժով շարունակում են կրել զանազան անուններ եւ իրար թղթեր գրել, բայց կեանք չկայ, որովհետեւ չկայ գործ, չկայ հաւատ ու ոգեւորութիւն»։

2. «Այն օրուանից, երբ մենք իշխանութեան գլուխն անցանք, կուսակցական մթնոլորտը թունաւորուեց»։

3. Կուսակցութիւնը այլեւս չի ապրում. «մի՞թէ մենք ապրում ենք այսօր... Մի՞թէ չենք տեսնում,

որ քայքայման պրոցէսի մէջ ենք արդէն եւ որ քայքայման պատճառները՝ արտաքին ու պատահական չեն, այլ ներքին են՝ օրգանական»։

4. «Երիտասարդութիւնը, նոր սերունդը մեզ հետ չէ այլեւս, ինչպէս էր 20–25 տարի առաջ»։

5. «Մեր կուսակցութիւնը քայքայւում է, որովհետեւ կորցրել է իր raison d'etre-ը»։

6. «Մի քանի տասնեակ, առ առաւելն մի քանի հարիւրեակ մարդ» կուսակցութիւնը դարձրել են իրենց համար «փէշակ», այլապէս ասած՝ Դաշնակցութիւնը այլեւս չի ծառայում հայ ժողովրդի, այլ «մի քանի հարիւր մարդկանց» շահերին։

7. Եւ, վերջապէս «ամէնից պերճախօս ապացոյցն» է «խորհրդաժողովում ընդունուած բանաձեւը»՝ «հակասական, ոչինչ չասող, ոչնչի չպարտադրող ու ամէն բան պարունակող», «զուրկ շիտակութիւնից ու տրամաբանութիւնից»։

Ահա սրանք են այն գլխաւոր պատճառները, որոնց վրայ հիմնուած Քաջազնունին եզրակացնում է, որ «Հ. Յ. Դաշնակցութիւնը այլեւս անզօր ու անպէտք գործիք է», «անելիք չունի» եւ, ուրեմն, պարտաւոր է վերջ տալ իր գոյութեան, որովհետեւ, ասում է նա, «լինում են դրութիւններ, որոնցից միակ պատուաւոր ելքը՝ ինքնասպանութիւնն է»։

Տեսնենք, որքա՞ն լուրջ ու հիմնաւոր են Քաջազնունու այս պատճառաբանութիւններն ու եզրակացութիւնները։

Անցեալի մասին Քաջազնունին, ըստ երեւոյթին, դրական կարծիք ունի,— «Անցեալում Հ. Յ. Դաշնակցութիւնը պէտք էր Հայաստանին ու հայ ժողովուրդին»— բայց պարզ չէ, թէ ո՞ր անցեալի մասին է խօսքը։ 1914-ից յետոյ, օրինակ, Դաշնակցու-

թիւնը պէ՞տք էր հայ ժողովրդին: Մի կողմից, կարծես թէ պէտք էր, բայց միւս կողմից, մենք արդէն տեսանք, թէ Քաջազնունին ի՞նչպէս է գնահատում Դաշնակցութեան բռնած դիրքը կամաւորական շարժման եւ յետագայ դէպքերի ընթացքում:

1918-ից յետոյ Դաշնակցութիւնը պէ՞տք էր:

1918-ից յետոյ նրա գոյութիւնն արդէն աւելորդ էր. «Երբ 1918 թ. յունիսին ստորագրեցինք Բաթումի դաշնագիրը, ո՛րով հրապարակ էր իջնում եւ միւս պետութիւնների կողքին իր համեստ տեղը գրաւում հայ անկախ պետութիւնը եւ երբ նոյն թուականի օգոստոսին բացինք հայ Խորհրդարանը, որով նորածին պետութիւնը իրական ձեւ ու մարմին էր ստանում — ահա ա՛յն ժամանակ արդէն մենք պիտի կազմալուծէինք ու տեղ տայինք նոր քաղաքական խմբակցութիւնների. մեր պատմական միսիան վերջացած էր արդէն... Եւ ի՜նչ գեղեցիկ վախճան կը լինէր դա», բացագանչում է Քաջազնունին գեղասիրական յափշտակութեան մէջ...

Ըստ Քաջազնունու, ուրեմն, Դաշնակցութեան «պէտքական» անցեալը տեւում է մինչեւ 1918 թ. յունիս կամ, ամենաուշը, օգոստոս ամիսը: Սրանից յետոյ նրա կեանքը եղել է աւելորդ, ապօրինի, մի տեսակ մաքսանենգութեամբ անցկացուած, աշխարհի ու մարդկային բոլոր օրէնքների ու տրամադրութեան դէմ: 1918-ին Դաշնակցութիւնը պէտք է հանդիսաւոր կերպով ինքնասպանութիւն գործէր, եւ «ի՜նչ գեղեցիկ վախճան կը լինէր դա»:

Ենթադրենք մի րոպէ, որ Քաջազնունու երեւակայութիւնները իրականանային եւ Դաշնակցութիւնը լուծուէր 1918 թ. յունիս-օգոստոս ամիսներին— ի՞նչ կը լինէր հետեւանքը:

Այս հարցին պատասխանելու համար հարկաւոր է վերյիշել 1918 թուի դէպքերը եւ Հայաստանի վիճակը, որը Քաջազնունին բնորոշել էր «քաօս ու աւերածութիւն»: Քաօս ու աւերածութիւն ո՛չ միայն նիւթական տեսակէտից, այլեւ հոգեկան-բարոյական կողմերով: Հայ ժողովրդի ու, մասնաւորապէս, մտաւորականութեան ինքնազգացումն այնպէս էր, որ ո՛չ միայն «նոր քաղաքական խմբակցութիւններ» չէին կարող առաջ գալ, այլ եղածների մեծ մասն էլ հազիւ շունչ էր քաշում: Մի կուսակցութիւն կար այդ ժամանակ Հայաստանում, որ մասսայական բնոյթ ունէր եւ, համեմատաբար, չէր կորցրել հոգեկան հաւասարակշռութիւնը. Հ. Յ. Դաշնակցութիւնն էր այդ, որ գրեթէ նոյնացած էր ժողովրդի հետ: Երեւանում եւ գաւառական մի-երկու վայրերում գոյութիւն ունէին հայ ժողովրդական ու սոցիալիստ-յեղափոխական խմբակներ: Ալեքսանդրապօլում կազմուել էր «անկախ» սոցիալիստների խումբը: Կային փոքրաթիւ սահմանադիր-ռամկավարներ եւ հատ ու կէնտ բոլշեւիկներ: Ուրիշ կազմակերպուած քաղաքական ոյժ գոյութիւն չունէր Հայաստանում:

Դրութիւնը աւելի փայլուն չէր եւ Թիֆլիսում: Այստեղ եւս Դաշնակցութիւնից զատ լայն կազմակերպուած կուսակցութիւն չկար: Ճիշտ է, Թիֆլիսում բաւական թիւ էին կազմում ոչ-Դաշնակցական մտաւորականները, բայց նրանց մեծ մասը գտնըւում էր ռուսական կուսակցութիւնների մէջ — սոցիալ-դէմօկրատներ, սոցիալիստ – յեղափոխականներ — եւ օրգանական կապ չունէր հայ իրականութեան հետ: Հայկական բուրժուազիան էր, որ համեմատաբար աւելի էր հետաքրքրութիւն ցոյց տա-

լիս դէպի ազգային գործերը, բայց նա էլ կազմակերպուած չէր. նորածին Հայ ժողովրդական կուսակցութիւնը սահմանափակ շրջանից դուրս չէր գալիս: Դաշնակցութիւնն էր ազգային կեանքին բովանդակութիւն եւ ընթացք տուողը: Եթէ չհաշուենք պ. Մ. Պապաջանեանին եւ Հայ ժողովրդական կուսակցութեան անդամներից մի քանիսին, որոնք յունիսի 4–ից յետոյ սկսել էին կանգնելով խօսել իրենցից կառավարութիւն կազմելու մասին, Դաշնակցութեան հետ մրցող չկար հրապարակի վրայ: Յետագայ դէպքերը ցոյց տուին, որ այդ պարոններն էլ լուրջ նպատակներ չունէին, որովհետեւ հէնց որ Ազգային Խորհուրդը Երեւան փոխադրելու հարց ծագեց, նրանք բոլորն էլ շտապեցին յետ քաշուել:

Լաւ էր, թէ վատ, 1918–ին հայ իրականութեան միակ կազմակերպուած ազգային ուժը — ե՛ւ Հայաստանում, ե՛ւ Հայաստանից դուրս — Հ. Յ. Դաշնակցութիւնն էր:

1918 թ. յունիսի 4–ին ստորագրուեց հայ–տաճկական հաշտութեան դաշինքը, եւ հազար դժուարութիւններով կազմուած կառավարութիւնը մեկնեց Երեւան (Թիֆլիսի մտաւորականութիւնը խուսափում էր Երեւան գնալուց): Օգոստոսի 1–ին բացուեց Հայաստանի Խորհուրդը: Յունիս–օգոստոս եւ յետագայ ամիսներին Հայաստանի Հանրապետութեան կէսից աւելին բռնուած էր տաճիկ զօրքերով, մնացեալ մասը խճողուած ու խռովայոյզ վիճակի մէջ էր: 7 վերստ հեռու, տաճկական առաջաւոր դիրքերից Երեւանի վրայ էին ուղղուած թշնամու թնդանօթները: Հայ ժողովուրդը ապրում էր գերագոյն տագնապի օրեր: Մտաւորականութիւնը կծկը–

ւել ու խեղճացել էր: Հոգեկան հաւասարակշռութիւնն ու կորովը պահած գործիչները մատների վրայ էին համարւում.— մի Արամ, մի Դրօ, մի Կարճիկեան... Դաշնակցութիւնն էր, որի վրայ էին յառած ամէնքի հայեացքները...

Հիմա Քաջազնունին ցաւում է, որ ա՛յն ժամանակ, ա՛յդպիսի պայմանների մէջ, Դաշնակցութիւնը չէր յայտարարել իրեն կազմալուծուած ու հրապարակից չէր քաշուել. «ի՜նչ գեղեցիկ վախճան կը լինէր»: Բարի՛. Դաշնակցութիւնը լուծուեց, չկա՛յ: Յետո՞յ, ի՞նչ պիտի լինէր հետեւանքը: Ո՞րն էր այն ուժը, որ պիտի փոխարինէր նրան: Ո՞րն էր այն տարրը, որից դուրս պիտի գային «նոր քաղաքական խմբակցութիւնները», որոնք պիտի բռնէին Դաշնակցութեան տեղը:

Անշուշտ, այդ «նոր քաղաքական խմբակցութիւնները» չպիտի կազմուէին Դաշնակցական գործիչներից. այդ բոլոր Արամները, Ռուբէնները, Դրօներն ու Կարճիկեանները, Քաջազնունիներն ու Սահակեանները նոր պայմանների համար այլեւս անպէտք էին. չէ՞ որ «նոր գինին չի կարելի լցնել հին տիկերի մէջ»: Ապա, ուրեմն, ո՞վքեր էին նրանք, որոնց պիտի ժառանգութիւն թողնէր Դաշնակցութիւնը իր կեանքի գործը՝ ինքնասպանութիւն գործելուց առաջ:

Քաջազնունուն այդ հարցը շատ չի զբաղեցնում. նա համոզուած է, որ 1918 թ. յունիս–օգոստոսեան օրերին «յեղափոխական Դաշնակցութեան» փոխարէն կը կազմուէր «պետական Դաշնակցութիւնը» եւ չի նկատում, որ դա լոկ խօսք է. եւ որ Դաշնակցութեան լուծումից յետոյ — եթէ նոյն իսկ ենթադրենք, որ հնարաւոր լինէր այդպիսի լուծում — ո՛չ մի գոր–

ծոն կազմակերպութիւն չէր կարող ստեղծուել այն
օրերի «քաօսի ու աւերածութեան» մէջ: Այսպէս
կարող են մտածել միայն ուտոպիստները — մար-
դիկ, որոնք կեանքի երեւոյթները չափում-կշռում
են իրենց երեւակայութեան մէջ գոյութիւն ունեցող
տուեալներով. լուրջ, պետական գործիչը այդպիսի
ցնորքներով չի տարուի: Իրատես մարդը կը հասկա-
նայ, որ կարելի չէ երեսնամեայ բեղուն գործու-
նէութիւն ունեցող ժողովրդական մի կազմակեր-
պութիւն մի ակնթարթում փոխարինել նորով, այն
եւս պատերազմի ընթացքին: Նոյնիսկ հեքեաթների
մէջ այդպիսի հրաշքներ սակաւ են պատահում:

Քաջազնունու մտքի ամենամեծ հերքումը հէնց
այն է, որ 1918 թ. յունիս-օգոստոս ամիսներին Հա-
յաստանում մի՛ հատիկ մարդ չգտնուեց, նոյնիսկ
հակադաշնակցականներից, որ մտածէր Դաշնակ-
ցութեան մահուան մասին: Ընդհակառակը, բոլոր
հոսանքներն ու խմբակները անխտիր համախմբուել
էին Դաշնակցութեան շուրջը եւ երկրի փրկութեան
յոյսը կապել նրա հետ: Եթէ մեզանից մէկը այն օրե-
րին առաջարկէր Դաշնակցութիւնը լուծուած յայ-
տարարել, նրան խելագար կամ ոճրագործ կը հա-
մարէին: Եւ իրաւունք էլ կ'ունենային: Դաշնակցու-
թիւնը այն ժամանակ հարկաւոր էր ժողովրդին,
ինչպէս հարկաւոր է եւ այժմ:

Այդպէս էր համոզուած եւ ինքը՝ Քաջազնունին
ո՛չ միայն 1918-ի յունիսին, այլեւ 1922 թ. յունի-
սին, երբ «Ճակատամարտ»-ի մէջ գրում էր. «Ամէն
մի հարուած, որ ուղղուած է հայ ժողովրդի ու
հայկական դատի դէմ — որտեղից էլ գայ այն՝ դրը-
սից թէ ներսից, աջից թէ ձախից — Դաշնակցու-
թիւնը ընդունում է առաջին հերթին իր կրծքի վը-

րայ: Եւ եթէ մի սեւ օր, Դաշնակցութեան կրծքին
հասցրած հարուածը մահացու լինի (ինչպէս մար-
գարէանում են այսօր բոլշեւիկները, նա կը լինի
մահացու, ներկայ պատմական շրջանում, նաեւ
հայկական դատի համար»*): Ուրեմն, դեռ մի տա-
րի առաջ Քաջազնունին ոչ միայն ըմբռնում էր, որ
Դաշնակցութիւնը 1918-ին չպիտի ինքնասպանու-
թիւն գործէր, այլեւ գիտէր, որ նրա դէմ ուղղուած
ամէն մի մահացու հարուած կը լինէր մահացու նա-
եւ հայկական դատի համար: Այժմ Քաջազնունին
ափսոսում է, թէ ինչո՞ւ Դաշնակցութիւնը ձեռքից
փախցրեց այնպէ՛ս «գեղեցիկ» մեռնելու առիթը:
Ժամանակները փոխւում են, փոխւում են եւ մար-
դիկ...

Բայց թողնենք այս հակասութիւնները. տես-
նենք, իրօ՞ք Դաշնակցութիւնը 1918-ին պէ՞տք է
լուծուած լինէր: Ի՞նչը պիտի հարկադրէր նրան
այդպէս վարուելու:

Քաջազնունին պատասխանում է. «Որովհետեւ
մեր պատմական միսիան վերջացած էր արդէն»:
Բայց ո՞րն է Դաշնակցութեան «պատմական մի-
սիան»: Քաջազնունին ասում է եւ քանիցս կրկնում,
թէ Դաշնակցութեան «պատմական միսիան», «հայ
քաղաքական դատի» լուծումն է, ուրիշ խօսքով Հա-
յաստանի անկախութեան իրագործումը: Հասե՞լ է
Դաշնակցութիւնը իր այդ նպատակին, անկա՞խ է
Հայաստանը: Քաջազնունին այս հարցին էլ բացա-
սաբար է պատասխանում. ո՛չ, չի՛ հասել: Հայաս-

*) Տե՛ս, «Ճակատամարտ», 1922 թ. յունիս 4,
Յ. Քաջազնունի «Ի՞նչ պիտի լինի մեր քաղաքակա-
նութիւնը»:

տանը անկախ չէ եւ լաւագոյն դէպքում, Ռուսաստանի մէկ ինքնավար նահանգն է: Արդ՝ ինչպէ՞ս կարելի է խօսել «պատմական միսիան» վերջացնելու մասին: Եւ քիչ յետոյ, Քաջազնունին ինքն էլ է ընդգում իր կարծիքի հիմք չունենալը, բայց գտնում է իրեն համար ընդունելի բացատրութիւն, որ մի որոշ շրջանի համար է, որ մեր «պատմական միսիան» վերջացած է. յաջորդ շրջանը պատկանում է բոլշեւիկներին:

Անկախ այս բանից, Քաջազնունին գործում է մի հիմնական սխալ, որից բղխում է եւ նրա եզրակացութիւնների սխալը: Նա մէկից աւելի անգամներ կրկնում է եւ ընդգծում է, որ «Հ. Յ. Դաշնակցութիւնը ... միշտ եղել է ու միշտ մնացել... հայ քաղաքական ազատագրման մարտիկը». «Իմ ըմբռնումով մեր կուսակցութեան ամբողջութիւնը հայ քաղաքական դատի մէջ է»: Եւ որովհետեւ Քաջազնունին համոզուած է, որ «հայ քաղաքական դատը», մի որոշ ժամանակի համար, փակուած է, ապա եւ առանց տատանուելու յայտարարում է, որ Դաշնակցութիւնն այլեւս «անպէտք գործիք» է: Բայց խնդիրն էլ հէնց այն է, որ Քաջազնունին չարաչար սխալւում է. «հայ-քաղաքական դատը» երբեք չի եղել ու ներկայումս էլ չէ Դաշնակցութեան միակ նպատակը: Դաշնակցութեան ծրագիրն ու գործունէութիւնը իրաւունք չեն տալիս այդպէս մտածելու: Ճիշտը այն է, որ Դաշնակցութիւնը միշտ գիտակցել է, թէ քաղաքական ազատագրութիւնը նախապայման է կազմում իր միւս նոյնքան կարեւոր նպատակների հետապնդման համար, եւ այդ է պատճառը, որ նրա գործունէութեան ընթացքում գլխաւոր տեղը բռնում է ազգային-քաղաքական կռիւը: Հէնց

իր հիմնադրութեան առաջին օրերից սկսած Հայաստանի քաղաքական ազատութեան հարցի հետ միասին Դաշնակցութիւնը դրել է եւ ընկերային-տնտեսական նպատակներ:

Այն էլ պէտք է ասել, որ Քաջազնունին բացառութիւն չի կազմում. մեր կուսակցութեան գրկում միշտ, բայց յաջողութեան օրերին մանաւանդ, գոյութիւն են ունեցել մարդիկ, որոնց հետաքրքրել են բացառապէս ազգային-քաղաքական խնդիրները: Այդպիսիները Դաշնակցութեան մէջ մնացել ու գործել են միայն «հայ քաղաքական դատի» համար, ընկերային ու ընկերվարական հարցերը օտար են եղել նրանց հոգուն ու մտքին: Գտնուել են եւ այնպիսիներ, ինչպէս հիմա Քաջազնունին, որոնք չեն էլ նկատել այդ ուրիշ հարցերը: Սրանք ամբողջովին Դաշնակցականներ չեն եղել ու չեն: Եթէ Հայաստանի քաղաքական ազատագրութիւնը յաջողուէր, նրանք, անշուշտ, պիտի հեռանային մեր շարքերից երթալու համար իրենց էութեանը աւելի համապատասխան միջավայրի մէջ:

Տարօրինակը այդ չէ: Տարօրինակը այն է, որ Քաջազնունին երկար տարիներ մասնակցելով հանդերձ Դաշնակցութեան կեանքի բազմապիսի արտայայտութիւններին՝ նկատել եւ ընդունել է միայն «քաղաքական դատը»: Դաշնակցութեան գործունէութեան սոցիալ-տնտեսական ու կուլտուրական կողմերի վրայ նա աչք է գոցում, իսկ պետական գործունէութիւնից էլ տեսել է միայն բացասական փաստերը: Ամենագլխաւորը նա մոռացել է:

Քաջազնունին մոռացել է, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը ընկերվարական կուսակցութիւն է ընկերվարական կուսակցութեանց բոլոր էական յատկա-

նիչներով, եւ «Հայ քաղաքական դատը», որ նրա ծրագրի առաջին մասն է կազմում, մի քայլ է միայն նրա գործունէութեան մէջ, սոսկ մի հանգրուան դէպի միւս հիմնական նպատակների աստիճանական իրագործումը*):

Եթէ Դաշնակցութիւնը տեսնենք եւ ընդունենք այնպէս, ինչպէս նա կայ, անհիմն եւ աւելորդ կը դառնայ Քաջազնունու ափսոսանքը, որ նա 1918–ին չի մեռել: Ընդհակառակը, այդ օրուանից, Հայաստանի անկախութեան իրականացումից յետոյ միայն՝ կանգնելով հայկական ազատ հողի վրայ, Դաշնակցութիւնը պէտք է անցնէր իր ծրագրի յաջորդ գլխաւոր կէտին՝ պետական ու սոցիալ–տնտեսական շինարարութեան: Ծիսակատարութեան կամ ուրիշներին խաբելու համար չէ, որ Դաշնակցութեան ծրագրի մէջ գրուած է ե՛ւ այդ մասը:

*) Վերջերս առանձնապէս մեծ եռանդ են թափում եւ հայ բոլշեւիկները ապացուցանելու համար, որ Դաշնակցութիւնը սոցիալիստական կուսակցութիւն չէ: Նրանք իրենց թերթերում շարունակ գրում են, որ Դաշնակցութիւնը Վիէննայում «հրաժարուել է սոցիալիզմի ձեւական լօզունգներից անգամ», անշուշտ, նպատակ ունենալով մոլորութեան մէջ ձգել Հայաստանի աշխատաւորութիւնը: Այս ի՛նչ Վիէննայում կուսակցութիւնը առանձնապէս շեշտեց՝ սոցիալիստական աշխատանքին աւելի լայն ու գործօն թափ տալու անհրաժեշտութեան վրայ եւ բազմանդամ պատուիրակութիւն ուղարկեց մասնակցելու Համբուրգի Միջազգային Խորհրդաժողովին, ուր կազմուեց Աշխատաւորական Ինտէրնացիոնալը, որի անդամն է Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Քաջազնունին սրան էլ է առարկում. «Նոր գինին չի կարելի լցնել հին տիկերի մէջ»: Դաշնակցութիւնը չի կարող յարմարուել նոր պայմաններին: «Քաղաքական (ու, մանաւանդ, յեղափոխական) կուսակցութիւնները չեն կարող կերպարանափոխուել անվերջ»:

Քիչ առաջ տեսանք, որ կերպարանափոխութեան խնդիր չկայ բնաւ: Դաշնակցութիւնը հէնց սկզբից եղել է այն գինին, որ հայկական տիկերին համապատասխան զօրութիւն է ունեցել, եւ հէնց դրա մէջ է նրա ոյժն ու կենսունակութիւնը: Մի տարի առաջ Քաջազնունին այսպէս էր բնորոշում Դաշնակցութեան իշխանութիւնը. «Նա երկրի իշխանութիւն է, կապուած երկրի ու ժողովրդի հետ անքակտելի կապերով, իր բոլոր ջիղերով, իր միս–մարմնով:... Հայաստանի կեանքը նրա իսկ կեանքն է եւ մահը՝ նրա մահը: Նա մի անբաժան օրգանն է այն հաւաքական մարմնի, որի անունն է «հայ ժողովուրդ»— միշտ արթուն, միշտ գործօն ու միշտ էլ զգայուն»*): Այսպիսի մի կուսակցութիւն, որ ասել է նոյն ինքն ժողովուրդը, շատ հեշտութեամբ կարող է յարմարուել «նոր պայմանների»: Լինելով անմիջական արդիւնք հայ միջավայրի՝ հանդիսանալով— դարձեալ ըստ Քաջազնունու վկայութեան — նրա միակ կազմակերպուած ոյժը՝ Դաշնակցութիւնը անհամեմատ աւելի շուտ կարող էր ըմբռնել այդ «նոր պայմանները», քան ուրիշ ոեւէ կուսակցութիւն, եւ ունենալով որոշ ու յստակ քաղաքական եւ ընկերային ծրագիր՝ ուրիշներից աւելի պակաս

*) Տես «Ճակատամարտ», 1923 թ. յունիս 4:

ցնցումներով ընթացք կը տար հայ կեանքին:

Բայց Քաջազնունին սրան էլ պատասխան ունի. «Սասունի լեռներից ու Վարագի բարձունքներից մենք իջել ենք Արարատեան դաշտը: Վարագում ու Սասնում «վըռշիկ» են հագնում ու «տասնոց» գործածում, իսկ Արարատեան դաշտում «բանում է երկաթուղին, շարժւում են բանակներն ու խօսում են արագաձիգ թնդանօթները»: Այսպիսի պայմաններում ի՞նչ կարող է անել «հնաեւակլի վըռշիկն» ու «մեր տղաների տասնոցը»:

Քաջազնունին մոռանում է, որ բոլոր Դաշնակցականները «վըռշիկ»-ով ման չեն եկել: Հէնց ինքը միշտ եւրոպական կօշիկ է հագել ու երկաթուղիով ճամբորդել: Ուզում եմ ասել, որ «հայդուկային հոգեբանութիւնը» Դաշնակցութեան յատկանիշը չէ: Եթէ Դաշնակցութեան շարքերում կային ու կան «տասնոցաւոր»ներ ու «վըռշիկաւոր»-ներ, կային ու կան ոչ պակաս թւով եւ բարձր կրթութեան տէր մարդիկ, առաջնակարգ մասնագէտներ, քաղաքական ու քաղաքային գործիչներ, խորհրդարանի անդամներ— հասարակական ու պետական գործունէութեան դպրոցն անցած մարդիկ: Առէք հայոց գրականութիւնը, գեղարուեստը, գիտութիւնը, հասարակական կեանքը, կրթական գործը — բոլոր ասպարէզներում, առաջին շարքերի վրայ, Դաշնակցականներն են: Այն չափով, ինչ չափով որ հայ միջավայրը ընդունակ է եղել հասարակական-քաղաքական կեանք ստեղծելու, այդ չափով եւ Դաշնակցութիւնը համապատասխանել է մեր պայմաններին:

Հէնց Դաշնակցութեան պատմութեան օրինակով Քաջազնունին կարող էր ցոյց տալ հայ կեանքի ձեւափոխութեան աստիճանները: Վերջին 30-35

տարուայ ընթացքին տեղի են ունեցել մէկից աւելի դէպքեր, երբ մեր իրականութեան մէջ առաջ են եկել «նոր պայմաններ», եւ Դաշնակցութիւնը, իբրեւ կենդանի ու ժողովրդական ոյժ, միշտ էլ կարողացել է ըմբռնել դրութիւնը եւ յարմարուել այդ պայմաններին: Եւ 1908 թուականին Դաշնակցութիւնը այն չէր, ինչ որ էր, ասենք, 1900-ին եւ 1918-ին. այն չէր, ինչ որ էր 1908-ին: Կեանքը փոխւում է. առաջ են գալիս նոր դրութիւններ. ամէն կենդանի կազմակերպութիւն՝ պահպանելով իր հիմնական բնոյթը՝ համակերպւում ու յարմարւում է այդ դրութիւններին: Ինչո՞ւ Դաշնակցութիւնը բացառութիւն է կազմելու — դժուար է հասկանալ:

Քաղաքական ու յեղափոխական կուսակցութիւնների աստիճանական էվօլիւցիայի բազմաթիւ օրինակներ կան եւ ընդհանուր պատմութեան մէջ: Ահա անգլիական Ուիկ (ազատական) եւ Թօրի (պահպանողական) կուսակցութիւնները: Կարլոս Երկրորդի օրերից սկսած՝ երեք դար է, որ գործում են նրանք քաղաքական կեանքի ասպարիզում: Քանի՜ քանի ձեւափոխութիւնների ու վերափոխութիւնների են ենթարկուած. քանի՜ անգամներ «վըռշիկը» փոխել են «տասնոցի» եւ ընդհակառակը. քանի՜ անգամներ «յարմարուել են նոր պայմաններին», բայց եւ միշտ մնացել են կենդանի ու գործօն՝ օրգանական մասը Անգլիայի պետականութեան: Առնենք աւելի նոր օրինակներ: Չեխական ընկերվարական կուսակցութիւնը շատ կողմերով յիշեցնում է Դաշնակցութիւնը: Նա էլ ապրել է «վըռշիկ»-ի շրջանում, բայց այսօր Չեխօ-Սլօվակ հանրապետութեան ամենապետական կազմակերպութիւններից մէկն է: Անկախութիւնից յետոյ, Չէխօ-Սլօվակիա-

յում ոչ ոք չմտածեց ինքնապաշտպանութեան մասին. միայն «վոշիկ»-ի պայմանների համար ստեղծուած կազմակերպութիւնը յարմարեցուեց երկաթուղու ու սաւառնակի պայմաններին:

Ահա ձեզ եւ Լեհական Ընկերվարական կուսակցութիւնը, որ իր աշխարհահայեացքով, իր կազմակերպութեամբ ու յեղափոխական գործելակերպով Դաշնակցութեան հարազատ քոյրն է: Նա էլ է հայդուկային խմբեր պահել. նա էլ է տեռորներ կատարել, նա էլ է ունեցել իր «Վարդան» ու «Սասունը»: Բայց հէնց որ Լեհաստանը դարձաւ անկախ պետութիւն, նա եւս դարձաւ պետական կուսակցութիւն եւ այն էլ շատ ուժեղ կուսակցութիւն:

Ահա, վերջապէս, բոլշեւիկները. իրենց կարճատեւ գոյութեան ընթացքին քանի՛-քանի՛ Վարդաններ ու Սասուններ անցան: Երէկ «զինուորական կոմունիզմ» էին իրականացնում, այսօր՝ Նէպին են երկրպագում: Երէկ կանգնած էին ծայրայեղ ապակենտրոնացման վրայ, այսօր նոյնքան ծայրայեղ կենտրոնապաշտներ են: Երէկ համաշխարհային յեղափոխութեան մասին էին երազում, այսօր եւրոպական իմպէրիալիստների ու Փաշիստների շեմքերն են մաշում: «Վոշիկ»-ը, «Թնդանօթը», «տասնոցն» ու «երկաթուղին» բոլշեւիկների մօտ ապրել են եւ ապրում են գրկնդխառնուած, մէկը միւսի կողքին կամ յաջորդելով: Քաջազնունին այդ գտնում է բընական: Դաշնակցութիւնն է նրա աչքին ծուռ երեւում: Դաշնակցութիւնն է միայն, որ չի կարող ենթարկուել կեանքի էվօլիւցիային: Դաշնակցութիւնն է, որ պէտք է մեռնի, որովհետեւ մի ժամանակ «վոշիկ» է հագել, իսկ այժմ եւրոպական կօշիկներ պէտք է գործածել: Ներեցէ՛ք— այստեղ ո՛չ անա-

չառութիւն կայ եւ ո՛չ տրամաբանութիւն:

Թէ որքա՛ն ենթակայական է Քաջազնունու վերաբերումը դէպի Դաշնակցութիւնը, ցոյց է տալիս ե՛ւ այդ այն, որ նա միեւնոյն վիճակը Դաշնակցութեան նկատմամբ մի ձեւով է գնահատում, բոլշեւիկների նկատմամբ՝ ուրիշ ձեւով: Դաշնակցութիւնը պարտաւոր է մեռնել, որովհետեւ նրա «պատմական միսիան», այսինքն «հայկ. քաղաքական դատի» հարցը մի որոշ շրջանի համար փակուած-վերջացած է: Իսկ բոլշեւիկնե՞րը.— նրանք պէտք է ապրին. ապագան նրանց է, թէեւ բոլշեւիկների «պատմական միսիան» էլ փակուած է: Քաջազնունին գիտէ, որ բոլշեւիկեան յեղաշրջումը տեղի ունեցաւ կոմունիստական դրութիւն հաստատելու նպատակով. կոմունիստական հասարակակարգ մտցնել է եւ կոմունիստական կուսակցութեան անմիջական նպատակը: Քաջազնունին գիտէ նոյնպէս — իրենք բոլշեւիկներն էլ արդէն գիտեն — որ կոմունիստական կարգի իրագործումը գէթ մի որոշ ժամանակաշրջանի համար, անհնար է. այդ պատճառով բոլշեւիկեան-կոմունիստական իշխանութիւնը չինում է բուրժուական տնտեսական դրութիւն, վերադարձնելով Ռուսաստանը անհատական սեփականատիրութեան եւ կապիտալիզմի ծոցը: Ուրիշ խօսքով, այսօր կոմունիստական իշխանութիւնը կորցրել է իր գոյութեան իմաստը — անհամեմատ աւելի մեծ չափով, քան Դաշնակցականը: Եթէ Քաջազնունին ուզէր լինել հետեւողական եւ սակարկութեան մէջ չմտնէր ինքն իր հետ, պէտք է ասէր.— 1921 թ. մարտի 15-ին, այսինքն՝ այն օրը, երբ Լէնինը յայտարարեց զինուորական կոմունիզմի սնանկութիւնը եւ հիմք դրեց Նէպին՝ տնտեսական նոր քաղաքա-

կանութեան, բոլշեւիկեան իշխանութիւնը պարտաւոր էր գործել ինքնասպանութիւն։ Բայց Դաշնակցութեան հանդէպ այնքան անողոք եւ ուղղագիծ Քաջազնունին դառնում է թոթովախօս ու ներողամիտ, երբ խնդիրը վերաբերւում է բոլշեւիկներին։

Բայց անկախ այն բանից, կարո՞ղ է արդեօք էվօլիւցիայի ենթարկուել թէ ոչ, Դաշնակցութիւնը, Քաջազնունու կարծիքով, պէտք է մեռնի, որովհետեւ «Հայաստանը պիտի դաշնակցի Խորհրդային Ռուսաստանի հետ», իսկ «մեր կուսակցութիւնը չի կարող դաշնակցել բոլշեւիկեան իշխանութեան հետ»։

Այստեղ էլ Քաջազնունին աչքաթող է անում մի քանի հանգամանքներ։ Նախ, ըստ էութեան, ինչո՞ւ Դաշնակցութիւնը կամ, աւելի ճիշտ, Դաշնակցական իշխանութիւնը չի կարող դաշնակցել բոլշեւիկեան իշխանութեան հետ։ Բազմաթիւ դէպքեր կան, որ խորհրդային իշխանութիւնը դաշնակցել է ու ձգտում է դաշնակցել ո՛չ միայն ընկերվարական, այլեւ բուրժուական ու կղերական ուժերի հետ։ Մի կողմ դնենք բոլշեւիկ-գերմանական կամ բոլշեւիկ-իտալական դաշինքը։ Քաջազնունին կարող է առարկել, թէ Իտալիան ու Գերմանիան մեծ պետութիւններ են, եւ բոլշեւիկները որոշ հաշիւներ ունին նրանց հետ դաշնակցելու։ Ահա փոքրիկ Էստօնիան, աւելի փոքր Լիտուան, որոնց գեր-բուրժուական կառավարութիւնները դաշնակից են բոլշեւիկներին։ Ահա փաշայական Թուրքիան, ահա աւատապետական Պարսկաստանը, ահա խանական Բուխարան, Թուրքեստանը, որոնք բոլորն էլ դաշնակցել են խորհրդային Ռուսաստանի։ Ըստ էութեան, ուրեմն, դաշինքի ո՛չ մի արգելք չկայ Դաշնակցականների ու

բոլշեւիկների միջեւ, եթէ երկու կողմերն էլ ունին փոխադարձ շահեր։ Եթէ Հայաստանի Հանրապետութեան ու Խորհրդային Ռուսաստանի միջեւ ժամանակին դաշինք չկնքուեց, պատճառը այն չէր, որ Հայաստանի իշխանութեան գլուխը Դաշնակցականներն էին գտնւում, այլ որովհետեւ հայ բոլշեւիկները հայ ժողովրդի շահերը ստորադասեցին իրենց կուսակցական հաշիւներին եւ արգելք եղան դաշինքի կնքումին։ Եթէ Հայաստանում կառավարութիւնը կազմուած լինէր ոչ թէ Դաշնակցականներից, այլ, ասենք, հայ-ժողովրդականներից կամ ռամկավարներից, բոլշեւիկները պիտի դաշնակցէի՞ն նրանց հետ։ Ո՛չ, անտարակոյս։ Իրենցից զատ ո՛չ մի իշխանութեան հետ հայ բոլշեւիկները չէին դաշնակցի, որովհետեւ իրենք էին փափաքում դառնալ իշխանութիւն։ Ուրեմն, ի՞նչ կը հրամայէ Քաջազնունին. բոլշեւիկների այդ փափաքի հանդէպ բոլոր հայ կուսակցութիւնները ինքնասպանութի՞ւն պիտի գործեն։

Երկրորդ՝ այդ ո՞րտեղից է Քաջազնունու հաւատը, թէ Ռուսաստանը երկար ժամանակ պէտք է մնայ խորհրդային իշխանութեան տակ։ Ռուսաստանի ներքին վիճակը, յամենայն դէպս, այդպիսի երաշխիքներ չի տալիս։ Չեմ ուզում մարգարէութիւններ անել, բայց եւ չեմ կարող չզարմանալ Քաջազնունու այդքան թեթեւ վերաբերումի վրայ։ Կարող է պատահել, որ բոլշեւիկները դեռ երկար ապրին, ինչպէս հաւատում է նա, բայց կարող է եւ հակառակը տեղի ունենալ։ Եւ եթէ պատահի վերջինը, կարծում է՞ արդեօք Քաջազնունին, որ հայ բոլշեւիկները ընդունակ կը լինին ընդհանուր լեզու գտնելու նաեւ ոչ-խորհրդային Ռուսաստանի հետ։ Եթէ

չի կարծում, ապա ինչո՞ւ է շտապում հրապարակից վերացնել կազմակերպուած մի ոյժ, առանց նրան փոխարինող մի ուրիշը ունենալու:

Քաջազնունին խորհրդային ռէժիմի շուտափոյթ անկումին չի հաւատում, բայց եթէ նա ընկնի էլ, նրա կարծիքով, կարիք չկայ, որ Դաշնակցութիւնը ապրի. նոր կուսակցութիւն երեւան կը գայ ուրիշ Ռուսաստանի հետ գործ ունենալու համար: Ինչո՞ւ սակայն: Ի՞նչու նոր կուսակցութիւն ստեղծել, երբ այդպիսին արդէն գոյութիւն ունի: Հե՞շտ բան է կուսակցութիւն ստեղծելը: Եւ ի՞նչ հիմք կայ, որ պէտք եղած ժամանակ կը ստեղծուի այդ կուսակցութիւնը: Եթէ այդպէս հեշտ է կուսակցութիւնների ստեղծումը, ինչո՞ւ հայ իրականութեան մէջ մինչեւ այժմ Դաշնակցութիւնից զատ չի ստեղծուել ուրիշ ժողովրդական լայն կուսակցութիւն: Կուսակցութիւնները ծնւում եւ մեռնում են կեանքի իրական պահանջների թելադրանքով եւ ո՛չ սրա կամ նրա ցանկութեամբ: Քանի՛ քանի՛ հայ կուսակցութիւնների անուն կարելի է տալ, որոնք ծնուեցին ու մեռան սունկի պէս: Բայց Դաշնակցութիւնը կար եւ մնում է: Ի՞նչ է դրա պատճառը: Մի տարի առաջ Քաջազնունին գիտէր այդ պատճառը, երբ «Ճակատամարտ»ի մէջ գրում էր, թէ՝ «Դժբախտաբար, այդպիսի կազմակերպուած ոյժ չկայ ասպարիզում եւ դարձեալ Դաշնակցութիւնն է, որ պիտի ճգնի անել իր լաւագոյնը»: Մի տարուայ մէջ, Քաջազնունու աչքին, Դաշնակցութիւնը դարձել է «մեռած»... Անհասկանալի է մի քիչ:

Ենթադրենք, սակայն, որ խորհրդային ռէժիմը մի անորոշ ժամանակուայ համար դեռ կեանք ունի եւ որ Դաշնակցականների ու բոլշեւիկների միջեւ

որեւէ համաձայնութիւն չի կարող լինել: Ի՞նչ է հետեւում դրանից: Դրանից հետեւում է այն, որ մի անորոշ ժամանակուայ համար էլ հայ բոլշեւիկները կը մնան Հայաստանում եւ կը շարունակեն իրենց գործը, իսկ Դաշնակցութիւնը առաջ կը տանէ ի՛ր գործը: Մի՞թէ անպատճառ հարկաւոր է, որ Դաշնակցականները լինին իշխանութեան գլուխ: Ընդհակառակը, Դաշնակցութեան համար անցեալում դժբախտութիւն էր իշխանութիւնը եւ անհամեմատ աւելի օգտակար կը լինէր եւ ապագայում էլ կը լինի, եթէ նա մնայ ո՛չ-կառավարական կուսակցութիւն, իբրեւ օպօզիցիա: Բայց «Խորհրդային իշխանութիւնը չի ուզում ճանաչել ոչ քաղաքական ազատութիւններ, ո՛չ էլ քաղաքական իրաւունքների հաւասարութիւն» եւ, ուրեմն, «իբրեւ օրինական օպօզիցիա տեղ չունինք Հայաստանում»:

Այս փաստը աչքի առաջ ունենալով՝ պէտք էր սպասել, որ Քաջազնունին արդար զայրոյթով լեցուած՝ բուռն քննադատութեան ենթարկէր բոլշեւիկների այդ վայրենի քաղաքականութիւնը, սակայն նա ո՛չ մի վատ խօսք չի ասում նրանց հասցէին եւ առաջարկում է... լուծել Դաշնակցութիւնը: Ժխտո՞ւմ է արդեօք նա օպօզիցիայի օգտակարութիւնը — ո՛չ: Չի ժխտում, բայց օպօզիցիա հարկաւոր չէ, որովհետեւ բոլշեւիկները չեն ուզում: Զարմանալի է այս եզրակացութիւնը:

Անցեալում, երբ «Հ. Յ. Դաշնակցութիւնը պէտք էր Հայաստանին ու հայ ժողովրդին», Քաջազնունին այդպէս չէր մտածում: Երբ ցարական կառավարութիւնը չէր հանդուրժում «օրինական օպօզիցիա», նա դուրս էր գալիս որպէս ոչ-օրինական օպօզիցիա եւ պայքար էր մղում օրինական օպօզի-

ցիայի իրաւունքներ ձեռք բերելու համար: Այդպէս, եւ աւելի կոպիտ, վարւում էր նա եւ Տաճկաստանի վերաբերմամբ. «վոշիկաւոր» ու «տասնոցաւոր» խմբեր էր ուղարկում այնտեղ: Բոլշեւիկների վերաբերմամբ ո՛չ միայն այդքան համարձակ չէ, այլ «օրինական օպօզիցիան» էլ շատ է համարում: Ինչո՞ւ այդպէս:

Քաջազնունին ասում է, թէ «բոլշեւիկները պէտք են Հայաստանին», ապա, ուրեմն, «ստորերկրեայ, դաւադրական գործունէութիւն չպիտի անենք» նրանց դէմ, մանաւանդ որ «բոլշեւիզմը հայկական ռէժիմ չէ եւ Հայաստանում չէ, որ պիտի տապալուի»: Շատ բարի: Բոլշեւիկները պէտք են Հայաստանին: Ընդունենք այդպէս եւ համաձայնուենք, որ Հայաստանի խորհրդային ռէժիմը պայթեցնելու «փորձեր չպէտք է անել»: Դրանից հետեւո՞ւմ է, որ բոլշեւիկներից զատ ուրիշ ոչ մի կուսակցութիւն չպէտք է գոյութիւն ունենայ: Ի՞նչ տրամաբանութեամբ:

Եթէ բոլշեւիկները լրացնէին հայ կեանքի բոլոր պահանջները, դեռ հասկանալի է, բայց Քաջազնունին հէնց ինքը հաստատում է, որ բոլշեւիզմը անհարազատ է ու կործանարար Հայաստանի համար, որ նա միայն մի դեր է կատարելու — պաշտպանելու է հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը Թուրքերից: Հայ ժողովրդի սօցիալ-տնտեսական ու կուլտուրական պահանջների համար բոլշեւիզմը չարիք է: Իր մենատիրութեան մէջ բոլշեւիկեան իշխանութիւնը քայքայում է Հայաստանը թէ՛ տնտեսապէս եւ թէ բարոյապէս... Եթէ այս ընդունում ենք — իսկ Քաջազնունին ընդունում է — ապա ի՞նչպէս կարելի է թոյլ տալ, որ նրանք սանձարձակ

կերպով շարունակեն իրենց շահատակութիւնները եւ ոչնչով չհակազդել: Ինչպէ՞ս կարելի է չպայքարել դրա դէմ: Այդ ո՞ր օրուանից է, որ «մի՛ հակառակ կալ չարի՛ն» սկզբունքը դարձել է մեզ համար պատգամ:

Ամէն պայքար անպատճառ «իշխանութիւնը պայթեցնելու նպատակով» չի արւում: Կարելի է բոլշեւիկեան ռէժիմի բացասական կողմերի դէմ կռուել առանց ռէժիմի տապալման պայման դնելու: Հերքել այդպիսի պայքարի դերը, նշանակում է, առհասարակ, հերքել գաղափարական բախումների նշանակութիւնը: Որքան եւ նսեմացնելու լինինք Դաշնակցութեան բոլշեւիկների դէմ մղած պայքարի արժէքը, այնուամենայնիւ անկարելի է ուրանալ նրա դրական արդիւնքները: Այն, որ այսօր Հայաստանում դրութիւնը աւելի տանելի է, քան առաջ, այն որ այնուամենայնիւ ինչ որ շինւում է եւ ժողովուրդը քիչ-շատ հանգիստ է, այն, որ հայ բոլշեւիկները աւելի տեղ են տալիս կուլտուրական ու տնտեսական ձեռնարկներին, որ ստիպուած են երբեմն հաշուի առնել եւ գաղութներն ու գաղթականութիւնը — անկասկած որոշ բաժին ընկնում է եւ Դաշնակցութեան քննադատութիւնների ու պայքարի վրայ: Ի զուր է Քաջազնունին այդքան արհամարհանքով վերաբերւում դէպի Դաշնակցական մամուլն ու պրօպագանդը — նա եւս իր դերն ունի. խիստ կարեւոր դերը: Ամէն մի օպօզիցիա, եթէ նա ուղղուած չէ ժողովրդի դէմ, առողջ եւ օգտակար երեւոյթ է: Հակառակ Քաջազնունու պնդումի, ո՛չ միայն չպէտք է դադարեցնել հակաբոլշեւիկեան պայքարը, այլեւ եթէ հայ իրականութեան մէջ գոյութիւն չունենար ընդդիմադիր կուսակցութիւն,

պէտք էր ստեղծել այդպիսին: Ուր չկայ գաղափարների չփում ու պայքար, այնտեղ ճահիճ ու մեռելութիւն է տիրում: Եւ այս տեսակէտից Դաշնակցութեան դերը շատ խոշոր է եւ բարերար:

Կարող են առարկել, թէ քանի որ բոլշեւիկները քաղաքացիական ազատութիւն չեն ընդունում, ամէն մի «օրինական օպօզիցիա», վերջ ի վերջոյ, կը վերածուի յեղափոխական օպօզիցիայի: Կարո՛ղ է պատահել: Բայց այդ մասին թո՛ղ բոլշեւիկները մտածեն, եւ Բաջազնունու յորդորները նրա՛նց պէտք է ուղղուէին եւ ոչ մեզ: Բաջազնունին ճիշտ է ասում. «Փետրուարեան ապստամբութիւնը բոլշեւիկների գործն էր ամբողջովին, բնական հետեւանք նրանց բռնութիւնների»: Դեկտ. 2-ին, երբ մենք յօժար կամքով փոխանցում էինք իշխանութիւնը բոլշեւիկներին, ամէնքս միայն մի մտահոգութիւն ունէինք — երկիրը փրկել քաղաքացիական կռուից: Ոչ ոք մեզանից մտքովը անգամ չէր անցնում ապստամբուելու մասին, բայց եւ այնպէս բոլշեւիկները առաջ բերին ապստամբութիւն ու քաղաքացիական կռիւ: Նոյնը կարող է պատահել եւ հիմա. ամբողջապէս բոլշեւիկներից է կախուած «օրինական օպօզիցիան» յեղափոխութեան վերածելը: Մեր դիրքը այսօր էլ նոյնն է, ինչ որ էր դեկտ. 2-ին:

Այո՛, օպօզիցիան վտանգաւոր է այն երկրում, ուր բռնապետի կամքից դատ ուրիշ կամք գոյութիւն չունի իր առջեւը, բայց աւելի՛ վտանգաւոր է, երբ այդ բռնապետը մինակ է թողնուած իր քմահաճոյքին հետ, եւ իր առջեւը չունի հակազդող ոչ մի ոյժ: Այսօր, Դաշնակցութեան պաշտօնը այդ հակազդող ու սթափեցնող ոյժի մէջն է եւ նա չի կարող հրաժարուել այդ դերից ո՛չ երկ-

րում, ո՛չ էլ արտասահմանում: Մենք չենք ձգտում կրկնելու փետրուար 18-ը. քաղաքացիական կռուին մենք թշնամի ենք, ինչպէս թշնամի ենք եւ տիկտատուրայի: Նպատակ չունինք եւ Հայաստանի իշխանութիւնը տապալելու, որովհետեւ Բաջազնունուց ոչ պակաս գիտենք, որ Հայաստանի Խորհրդային իշխանութեան ճակատագիրը կը լուծուի Մոսկուայում, բայց եւ չենք համակերպի սանձարձակապետութեան, ծունկի չենք իջնի բռնութեան առջեւ, ինչ եւ լինի այդ բռնութեան անունը:

Բաջազնունին շատ է ուղղամիտ. միջին ճանապարհ գոյութիւն չունի նրա համար: «Երբ ներսից պայթեցնելու փորձեր չպիտի ցանկանանք անել, ասում է նա, անիմաստ եւ անվայել բան է խօսքով պայքարել դրսից»: Ինչո՞ւ է անիմաստ ու անվայել: Չէ՞ որ գրաւոր ասուած խօսքը եւ գրուած գիրքն ու թերթը ներս էլ կ'երթայ: Այդ ո՞ր օրուանից է խօսքն ու տպագրական պրօպագանդը դարձել են անիմաստ ու անվայել: Եւ ինչո՞ւ պրօպագանդ կարելի է անել միայն «պայթեցնելու» համար. ուրիշ թերութիւններ չունի՞ բոլշեւիկեան ռէժիմը: Ցարական ռէժիմի օրով հարիւրաւոր ընդդիմադիր թերթեր էին հրատարակւում: Ո՛չ մէկը այդ թերթերից «պայթեցնելու փորձեր» չէր անում, բայց եւ այնպէս կարելի՞ է հերքել նրանց դրական դերը ռուս հասարակական կեանքում:

Այո՛, շատ ցաւալի է, որ Հայաստանը բռնապետութեան ճիրաններում է գտնւում եւ խօսքի ու մամուլի ազատութիւնը խեղդուած է բոլշեւիկների ձեռքով.— Բայց այդ որ օրուանից է, որ բոլշեւիկների կամքը օրէնք է դարձել մեզ համար: Չեն թոյլ տալիս երկրի ներսը թերթ հրատարակել, պէտք է

հրատարակել դուրսը։ Աւելի քան 700,000 հայ ունինք գաղութներում՝ հայ ժողովրդի մէկ երրորդը։ Դրանց պէտք չէ՞ ասել ճշմարտութիւնը Հայաստանի արդի վիճակի ու բոլշեւիկների դերի մասին։ Արտասահմանի մամուլը ազդեցութիւն չի՞ անում բոլշեւիկների վրայ։ Արտասահմանի գիրքն ու թերթը մտնելով երկիր եւ անցնելով գիւղացու ու բանւորի ձեռքը՝ օգուտ չե՞ն բերի։

«Ի՞նչ նշանակութիւն պիտի ունենան մեր թերթիկները, որ գաղտագողի պիտի կարդայ մի քանի հարիւր մարդ՝ հանդէպ այն հսկայ գրականութեան, որով բոլշեւիկները ողողում են երկիրը», հարցնում է Բաջազնունին։ Բաջազնունին իր անձնական փորձից պէտք է գիտենայ, որ բոլշեւիկեան «հսկայ գրականութիւնը» երկրում չի կարդացւում. բոլշեւիկեան թերթերին ժողովուրդը չի հաւատում։ Հէնց ինքը՝ Բաջազնունին երկուս ու կէս ամսուայ ընթացքում բոլշեւիկեան ռէժիմի տակ, քանի՞ անգամ է բոլշեւիկեան թերթ կարդացել։ Եթէ նա հետեւէր բոլշեւիկեան թերթերին, կը տեսնէր, որ այնտեղ ամէն օր գանգատներ են արձանագրւում, թէ կոմունիստական մամուլը չի տարածւում։ Բաւական է ասել, որ խորհր. բոլոր երկրներում բոլոր թերթերի սպառումը երկու միլիոնից այն կողմ չի անցնում, այսինքն աւելի քիչ, քան ցարական ռէժիմի ժամանակ Մոսկուայի երկու մեծ թերթերն էին սպառւում։ Այսպիսի հանգամանքներում դրսից եկած ամէն թուղթ ագահութեամբ կը կլանուի ժողովրդի կողմից։

Դարձեալ փորձից գիտենք եւ այն, թէ ի՞նչ ազդեցութիւն է անում արգիլուած գրականութիւնը զանգուածների վրայ։ Մի Հէրցէնի «Կոլոկոլ» Ռուսաստանում, մի «Դրօշակ» Հայաստանում— քանի՞ մարդ էր կարդում այդ թերթերը, բայց նրանց թողած տպաւորութիւնը անջնջելի էր, նրանց հմայքը ժողովրդի աչքին ահագին էր։ Այնտեղ, ուր կայ բռնութիւն, ուր հասարակական միտքը ճնշուած է եւ գոյութիւն չունի ազատ խօսք, գաղտնի պրոպագանդն ու գաղտնի մամուլը անխուսափելի են։ Բոլշեւիկները առաջինը չեն, ոչ էլ վերջինը — բոլոր բռնապետական ռէժիմների ճակատագիրն էլ նոյնն է։ Եւ բոլշեւիկները շատ լաւ — աւելի լաւ, քան Բաջազնունին,— ըմբռնում են գաղտնի պրոպագանդի հոգեբանական արժէքը եւ ամէն միջոցով կռւում են նրա դէմ։

Բայց, ասում է Բաջազնունին, գաղտնի պրոպագանդի համար «զանգուածներին ոգեւորելու ընդունակ բանաձեւեր» չկան։ Արդեօ՞ք չկան։

Ի հարկէ, եթէ Բաջազնունու պէս մտածենք, որ բոլշեւիկները պիտի մնան երկար, 20–30 տարի, որ թրքական վտանգը նոյնպէս դամոկլեան սրի պէս կախուած պիտի մնայ երկար ժամանակ — «բանաձեւ»-ի խնդիրը կը դժուարանայ։ Բայց մենք արդէն տեսանք որ Բաջազնունու հաւատը իրական տուեալներով հիմնաւորուած չէ եւ որ փաստերը աւելի շատ հակառակն են հաստատում։ Դիկտատուրան չի կարող շատ երկար տեւել. նա կամ պէտք է պայթի, կամ վերածուի ուրիշ ռէժիմի, թէկուզ այնպիսի ռէժիմի, որպիսին էր ցարական ինքնակալութիւնը։ Մեր համոզումով բոլշեւիկները կ՚անհետանան առաջին ձեւով, բայց չի ժխտւում եւ երկրորդ հնարաւորութիւնը։ Երկու դէպքի համար էլ մասսաները պէտք է լինին պատրաստ եւ, ուրեմն, պէտք է գիտենան ու գիտակցեն իրենց շուրջը կատարուող ե-

րեւոյթները: Վերջապէս, նոյն այդ մասայի գիտակից վերաբերմունքը անհրաժեշտ է եւ կոմունիստական դիկտատուրայի ազդեցութիւնը մեղմացնելու համար: «Բանաձեւ» չէ սա, հապա ի՞նչ է:

«Բանաձեւեր չկան», ասում է Քաջազնունին, բայց բոլշեւիկեան ռէժիմը ինքնին արդէն մի աղաղակող «բանաձեւ» է: Բռնապետութիւնն ու պայքարը «բանուոր–գիւղացիական» անունը չահագործող սակաւապետութեան ստեղծած կարգերի դէմ բաւական չե՞ն «զանգուածներին ոգեւորելու» համար: Բոլշեւիկեան սօցիալ–տնտեսական «կործանարար» քաղաքականութիւնը, նրանց կրթական ու դաստիարակչական այլասերող սկզբունքները, նրանց դրած անօրինակ հարկերը, քաղաքացիական ազատութիւնների արգելքը, նրանց խուժանավար ու անբարոյական մամուլը՝ ցնցող «բանաձեւեր» չեն, հապա ի՞նչ են: Հակաբոլշեւիկեան «բանաձեւ» հայ իրականութեան մէջ— որքա՛ն կ'ուզէք. շատ էլ մատչելի զանգուածների գիտակցութեան ու ոգեւորիչ:

Քաջազնունին կարող է առարկել, թէ այդ կարգի պայքարն ու պրօպագանդը կարող է տանել դէպի ժողովրդական ըմբոստացում բոլշեւիկների դէմ, մինչդեռ հէնց այդ է, որ չպէտք է անել: Այդ էլ ամբողջապէս կախուած է բոլշեւիկներից, եւ Քաջազնունին նրա՛նց քաղաքացիական պարտաճանաչութեան ու խղճին կոչում պէտք է անէ: Եթէ բոլշեւիկները չուզենան, ըմբոստութիւն չի լինի: Յամենայն դէպս, մենք խռովութիւնների ջատագովներ չենք եւ ժողովրդին խորհուրդ չենք տայ ըմբոստանալու: Ընդհակառակը, մենք համոզուած թշնամիներ ենք քաղաքացիական կռիւների, բայց եւ համա–

կերպութեան ու սորկութեան քարոզիչներ չենք: «Սուր քո եւ պարանոց մեր» սկզբունքը մերը չէ:

Ինչ խօսք, մենք մեծ ուրախութեամբ կը հրաժարուենք «գաղտնի պրօպագանդից», բայց դրա համար պէտք է ունենանք «բաց պրօպագանդի» իրաւունք: Այդ է, որ բոլշեւիկները չեն տալիս: Մենք այն մխիթարութիւնն էլ չունինք, ինչ որ ունի Քաջազնունին: Նա տպել է իր գիրքը, դիմել է բոլշեւիկներին, որ աջակցին այդ գիրքը տարածելու Հայաստանում, եւ յոյս ունի, որ իր խօսքը կը հասնի Հայաստանցի մարդուն: Մենք այդ յոյսից էլ զուրկ ենք, որովհետեւ հաստատ գիտենք, որ ո՛չ միայն բոլշեւիկների, այլեւ Քաջազնունու կարծիքների դէմ գրած մեր խօսքը թոյլ չի տրուի նոյն Հայաստանցի մարդուն հասցնելու: Եւ այն կարծիքի էլ չենք, որ մեր գրածը ո՛չ մի արժէք չպիտի ունենայ բոլշեւիկեան «հսկայ» մամուլի առջեւ: Ի՞նչ անենք, ուրեմն:

Քաջազնունին ասում է. լռեցէ՛ք, պապանձուեցէ՛ք. «անիմաստ ու անվայել բան է» «խօսքով պայքարել դրսից»: Վե՛րջ տուէք ձեր կեանքին, որովհետեւ այդ է հայ բոլշեւիկների սրբազան կամքը: Իսկ նոյն պահուն ինքը դիմում է անում բոլշեւիկներին եւ խնդրում է, որպէսզի Դաշնակցութեան դէմ հրատարակած իր գիրքը տարածուի Հայաստանում: Բոլշեւիկների դէմ «խօսքով պայքարելը դըրսից», «անիմաստ ու անվայել բան է». Դաշնակցութեան դէմ «խօսքով պայքարելը դրսից» ե՛ւ իմաստուն է, ե՛ւ վայելուչ: Այս տրամաբանութիւնը դժուար է հասկանալ:

Անհասկանալի է նոյնպէս եւ Քաջազնունու այն կարծիքը, թէ՝ մնալով քաղաքականապէս հակառակ

բանակում, Դաշնակցութիւնը չի կարող օժանդակել Հայաստանի տնտեսական վերաշինութեան: Ինչո՞ւ: Որովհետեւ, ասում է նա, Դաշնակցութիւնը չի կարող ո՛չ առեւտրական կազմակերպութեան վերածուել, ո՛չ էլ արդիւնաբերական կամ բարեգործական հիմնարկութիւն դառնալ:

Իսկ եթէ Դաշնակցութիւնը չլինէր լեգալ երկրում, կարո՞ղ էր Հայաստանի վերաշինութեան օժանդակել եւ դրա համար առեւտրական եւ արդիւնաբերական կազմակերպութի՞ւն պիտի դառնար, խանութնե՞ր պիտի բանար, գործարաննե՞ր պիտի հիմնէր, թէ՞ բարեգործական ընկերութեան պիտի վերածուէր: Առեւտրի եւ արդիւնաբերութեան օժանդակել չի նշանակում անպատճառ խանութպան ու գործարանատէր լինել: Այսօր Ռուսաստանի կոմունիստների գլխաւոր ճիգը առեւտրի ու արդիւնաբերութեան զարկ տալն է, բայց ի՞նչ է՝ Լէնինը գործարանի կառավարի՞չ է դարձել, Տրոցկին վաճառականի՞ է փոխուել, Կոմկուսն ու Պոլիտբիւրօն բաժնետիրական ընկերութիւնների են ձեւափոխուած:. Ինչո՞ւ այդքան վուլգար բացատրութիւն: Խօսքով, գաղափարական պրօպագանդով կարելի չէ՞ աջակցել երկրի վերաշինութեան: Երբ Դաշնակցութիւնը իր մամուլով ու բանաւոր քարոզով տարիներ շարունակ գաղութների ուշադրութիւնը կապուած է պահում Հայաստանին, յորդորում է, որ արտասահմանի հայերը հետաքրքրուեն երկրի տնտեսական կեանքով, այնտեղ առեւտրական ու արդիւնաբերական ձեռնարկներ անեն, արտադրութեան միջոցներ, դրամագլուխ ու տեխնիկ ուժեր հասցնեն — վերաշինութեան նպաստել չէ՞: Անպատճառ խանութպա՞ն պէտք է դառնալ: Ուրի՞շ կերպ էր վար-

ւում Դաշնակցութիւնը այն ժամանակ, երբ իր ձեռքին էր իշխանութիւնը: Ուրի՞շ բան էր անում Քաջազնունին, երբ Միջագետքում ու Եգիպտոսում յորդոր էր կարդում Դաշնակցական ընկերներին ու մարմիններին օգնելու երկրի վերաշինութեան: Մի՞թէ այն ժամանակ նա մտածում էր, որ Բաղտատի ենթակոմիտէն կամ Գահիրէի կոմիտէն Երեւանում արհեստանոց կամ կրպակ պիտի բանան:

Դաշնակցութիւնը իր գործունէութեան ընթացքին ե՛ւ առաջ, երբ ինքն էր իշխանութիւնը Հայաստանում, ե՛ւ այժմ, բոլշեւիկների օրով — մի՛ վայրկեան անգամ չի դադարել, Հայաստանի վերաշինութիւնը իր մտահոգութեան առարկան ունենալուց: Եւ մամուլի մէջ արձանագրուած հանգանակութիւններն ու զանազան մարմինների գործառնութիւնները վկայում են, որ արտասահմանից Հայաստան գնացած օժանդակութեան մեծագոյն մասը Դաշնակցականների ջանքերով ու միջոցներով են եղած:

Կարելի է առարկել, գուցէ, թէ՛ մեծ բան չէ եղել մինչեւ այժմ կատարուածը: Մեծ է թէ փոքր, այդքան է արտասահմանի հայ գաղութների կարողութիւնը: Եւ Դաշնակցութեան գոյութիւնից կամ մահից կախուած չէ այդ կարողութեան քանակը: Դաշնակցութիւնը չի շփոթում ռէժիմը երկրի ու ժողովրդի հետ: Ռէժիմը այսօր մէկ է, վաղը՝ ուրիշ: Ժողովուրդն է մնայունը, ինքնանպատակը: Եւ ահա այդ ժողովրդի համար է, նրա տնտեսական բարօրութեան ու երջանկութեան համար, որ Դաշնակցութիւնը աշխատում է հայ գաղութների նիւթական ու բարոյական միջոցները կապել երկրի հետ: Բոլշեւիկները դէ՞մ կը լինին, չե՞ն ուզի, որ

Դաշնակցականների ձեռքով կատարուած տնտեսա-
կան ձեռնարկները մուտք ունենան Հայաստան — ի-
րենց՝ բոլշեւիկների համար վատ: Դրանով նրանք
մի աւելորդ անգամ ցոյց տուած կը լինին, որ ի-
րենց հետաքրքրողը ժողովրդի բարիքը չէ, այլ ի-
րենց եսական շահը: Եւ Քաջազնունին փոխանակ
Դաշնակցութեան գլխին դամբանական կարդալու,
աւելի արդար ու հետեւողական կը լինէր, եթէ նշա-
ւակութեան սիւնին գամէր հէնց բոլշեւիկների այդ
անբարոյական վարմունքը:

Քաջազնունին կարծում է, որ Դաշնակցութիւ-
նը «գաղութներում գործ չունի»: Ո՞վ գործ ունի
հապա գաղութներում: Ասենք թէ ինչ որ մոգական
գաւազանի զօրութեամբ հնարաւոր եղաւ Քաջազնու-
նու բաղձանքը իրագործել եւ Դաշնակցութիւնը
մէջտեղից վերցնել, ո՞վ պիտի շարունակէ նրա պաշ-
տօնը, քանի որ «գործը» մնում է: Քաջազնունին
հէնց ինքն էլ ընդունում է, որ գաղութների ար-
ժէքը «մեծապէս կախուած կը լինի նրանից, թէ
որքան ընդունակ կը լինինք կազմակերպուելու,
ազգային կապն ու գիտակցութիւնը կենդանի պա-
հելու գաղութների մէջ»: Գաղութների կազմակեր-
պութիւնն, ուրեմն, անհրաժեշտ է, բայց Քաջազ-
նունին չի ուզում, որ Դաշնակցութիւնը զբաղուի
դրանով: Բայց ո՞վ պիտի զբաղուի:

Երկրի համար հասկանալի է — կան «մեր ժա-
ռանգորդները»— բոլշեւիկները, իսկ ովքե՞ր են Քա-
ջազնունու կարծիքով Դաշնակցութեան ժառանգնե-
րը արտասահմանում: Բոլշեւիկնե՞րը.— բայց հայ
բոլշեւիկներ գոյութիւն չունին գաղութներում:
Ռամկավարնե՞րը.— նրանք էլ ունին իրենց գաղա-
փարները, որոնք շատ հեռու են Քաջազնունու ջա-

տագոված գաղափարներից: Բացի այդ, դեռ նոր էր,
որ հայ բոլշեւիկների փորձ փարոլ Ա. Մեասնիկ-
եանը յայտարարեց, որ Դաշնակցութիւնից յետոյ
անմիջապէս պէտք է ոչնչացնել եւ ռամկավարնե-
րին, «Թօթափել ոտքից ռամկավարական փոշին»:
Եւ գաղութների հայ աշխատաւորութիւնն էլ չի ա-
խորժում ռամկավարներից ու չի գնում նրանց յե-
տեւից: Հնչակեանների մասին խօսելն, ի հարկէ,
աւելորդ է, թէեւ իրենց վերջին այլափոխութեամբ
նրանք բաւական մօտեցել են Քաջազնունու երազած
դրութեան: Ուրեմն, ո՞վ է մնում գաղութների հա-
մար: Պատասխան չկայ: Եղած կազմակերպութիւնը
հարկաւոր է լուծել, այս պարզ է, բայց թէ լուծե-
լուց յետո՞յ ինչ պէտք է անել — մնում է անյայտ:
Երեւի կը լինի, ինչ որ ճակատին է գրուած...

Որ «գաղութային հայութիւնը... մնալու է իբ-
րեւ օժանդակող ույժ» Հայաստանի համար, ընդհա-
նուր առմամբ, ի հարկէ, անվիճելի է: Այլեւս ընդ-
հանուր տեղիք է դարձել, որ «հայ քաղաքական
մտքի անմիջական հոգատարութեան առարկան պի-
տի լինի գոյութիւն ունեցող Հանրապետութիւնը»:
Այդ գիւտը Քաջազնունուն չի պատկանում — Դաշ-
նակցութեան հիմնական դաւանանքն է նա: Եւ գըլ-
խաւորապէս Դաշնակցութեան թափած ճիգերի հե-
տեւանքով է, որ այսօր այդ գաղափարն այլեւս
ընդհանուրի սեփականութիւն է: Բայց ունենալով
հանդերձ այս համոզումը՝ չի կարելի համաձայն-
ուել այն արհամարհական վերաբերումի հետ, որ
Քաջազնունին ցոյց է տալիս դէպի գաղութահայու-
թիւնը: Այսօրուայ «գաղութային հայութիւնը» մի
քիչ տարբեր է երէկուայ գաղութահայութիւնից:
Երէկ մեր գաղութները կազմուած էին, ընդհանրա-

պէս, պանդուխտներից, աշխատանքի համար օտարութիւն գնացած անհատներից եւ, չնչին բացառութեամբ, տեղաւորուած լինելով աւելի կամ պակաս ժամանակի համար՝ սկսել էին ուծանալ մայր երկրից, համակուել ուրոյն հոգեբանութեամբ, որ շատ յաճախ չէր համապատասխանում երկրի ժողովրդի հոգեբանութեան:

Այսօրուայ գաղթականութեան մեծ մասի բընոյթը բոլորովին տարբեր է: Յունաստան, Սիւրիա, Միջագետ, Բալկաններ, Ֆրանսիա ապաստանած հայ գանգուածների ճնշիչ մեծամասնութիւնը բնաւ ցանկութիւն չունի տեւականօրէն հաստատուելու այդ երկրներում եւ ամէն րոպէ պատրաստ է վերադառնալ իր ծննդավայրը կամ տեղափոխուել Հայաստան: Հակառակ Քաջազնունու պնդումի, այս գանգուածների մեծ մասը աշխատաւոր տարրեր են — երկրագործ, բանուոր, արհեստաւոր, մասնագէտ-մտաւորական, որոնք կարող են օգտակար ոյժ դառնալ Հայաստանի համար:

Սրանք արդէն երէկուայ գաղթականներն ու պանդուխտները չեն, այլ պատերազմի հետեւանքով տեղահանուածներ: Եւ ինչպէս ուրիշ երկրների տեղահանուածները վերադարձան իրենց տեղերը կամ վերջնականապէս հաստատուեցին նոր վայրերում, սրանք էլ ձգտում են վերադառնալ իրենց տեղերը կամ գնալ Հայաստան: Սրանց կապը Հայաստանի հետ օրգանական է եւ շատ ուժեղ: Ասել, թէ սրանք «պետական տարր չեն» ու անցնել, չափազանց թեթեւ վերաբերում է: Հայ ժողովրդի մի երրորդ մասի հետ այդպէս վարուել չի կարելի, մանաւանդ, որ Հայաստանը իր ապագայ զարգացման համար մեծապէս կարիք ունի նրան: Եւ դրութիւնն այժմ

այնպէս է, որ ո՛չ թէ այս գաղթականներն են «օժանդակող ոյժ» Հայաստանի համար, այլ Հայաստանը ինքը պէտք է օգնէ նրանց, պէտք է տեղ տայ իր ծոցում, գուրգուրայ նրանց վրայ, ամուր կապերով կապէ իր հետ: Որովհետեւ նրանք Հայաստանի քաղաքացիներ են եւ Հայաստանի ուժեղացման էական պայմաններից մէկը:

Այսպիսի հանգամանքներում այսօրուայ մեր «գաղութային քաղաքականութիւնը» մի քիչ այլ պէտք է լինի, քան որ առաջ էր: Մենք ո՛չ միայն չպիտի թուլացնենք գաղութների կազմակերպական կարողութիւնը, այլ պիտի աշխատինք է՛լ աւելի զօրացնել: Եւ Դաշնակցութիւնը այդ է անում: Չպէտք է չափազանցել, բայց եւ չպէտք է նսեմացընել մեր գաղութների նշանակութիւնը:

Սրանք են, ընդհանուր առմամբ, Քաջազնունու յիշած առարկայական պատճառները, որոնք աւելորդ են դարձնում Դաշնակցութեան գոյութիւնը: Ուշադիր ընթերցողը, անշուշտ, նկատեց, թէ ի՛նչ յեղյեղուկ աւազի վրայ են կառուցուած Քաջազնունու առաջ բերած փաստերն ու դատողութիւնները: Այդ դատողութիւնների մէջ աւելի զգացմունքն է խօսում, քան պաղարիւն: Այդ պատճառով Քաջազնունու բանավարութիւնները դառնում են արհեստական, ներքին անկեղծութիւնից զուրկ եւ անհամոզեցուցիչ:

Պակաս խախուտ չեն ե՛ւ Քաջազնունու ենթակայական փաստարկութիւնները: Այստեղ, զգացմունքից զատ, գործում է եւ երեւակայութիւնը: Եւ ո՞վ կարող էր ենթադրել որ Քաջազնունին այդպէս հարուստ, գրեթէ բանաստեղծական երեւակայութիւն ունի:

Ահա Քաջազնունու երեւակայութիւններից առաջինը. «Կուսակցութիւն չկայ այլեւս», «չկայ գործ, չկայ հաւատ ու ոգեւորութիւն»: «Ինէրցիա՛» — այսպէս է ներկայանում Քաջազնունուն Դաշնակցութիւնը: «Մի՞թէ մենք ապրում ենք...»

Պարապ աշխատանք կը լինէր, ի հարկէ, Քաջազնունուն փաստեր ու թուեր բերելը, միեւնոյն է. նա չպիտի հաւատայ: Նա իր հաւատին աւելի է հաւատում, քան փաստերին ու թուերին: «Դաշնակցութիւնը չկայ այլեւս»— ո՞վ կայ հապա նրա տեղը: «Բոլշեւիկները», շտապում է պատասխանել Քաջազնունին, «բոլշեւիկները, որովհետեւ ես հաւատում եմ»... յայտնի է, թէ ինչի է հաւատում Քաջազնունին: Իսկ փաստերն ու թուե՞րը ինչ են ասում:

Փաստերը ասում են, որ Հայաստանում, հակառակ բոլշեւիկեան հալածանքների, Դաշնակցութեան հմայքը ժողովրդի աչքին շարունակում է մնալ բարձր: Ժողովուրդը՝ ընկած բոլշեւիկեան դժոխքի մէջ — ճիշտ թէ սխալ— Դաշնակցութեան հետ է կապում իր փրկութեան յոյսը: Այս պարագան հաստատում են ո՛չ միայն կուսակցական աղբիւրները, այլեւ Կովկասում եղած անաչառ մարդիկ՝ հայ թէ օտար: Ժողովրդական տարերքը «Դաշնակցական» է: Սա անվիճելի է: Եւ որքան վճռական է Քաջազնունին իր հաւատի մէջ, նոյնքան վճռականութեամբ պիտի յայտարարեմ, որ Դաշնակցութիւնը երկրում ո՛չ միայն կենդանի է, այլեւ ժողովրդական լայն խաւերի սեփականութիւնն ու գուրգուրանքի առարկայ:

Եւ եթէ այդպէս չլինէր, ինչո՞ւ համար բոլշեւիկները այդքան եռանդ ու դրամ պիտի վատնէին,

գոյութիւն չունեցող կուսակցութեան դէմ պայքարելու համար: Նայեցէք բոլշեւիկեան թերթերը. ահա երեք տարի է օրը օրին անընդհատ գրում են, որ Դաշնակցութիւնը մեռել է, եւ հայ ժողովուրդը երես է դարձրել նրանից: Երեք տարի է, մի միտինգ չի անցնում Հայաստանում, ուր Դաշնակցութեան գլխին հայհոյանքներ չթափուեն: Երեք տարի է, հայ բոլշեւիկներին հանգիստ չի տալիս Դաշնակցութեան ուրուականը: Ինչո՞ւ այդքան մտահոգութիւն... չէ՞ որ «Դաշնակցութիւնը այլեւս չկայ, մեռել է»:

Իսկ հիմա տեսէք հայ բոլշեւիկները ինչո՞վ են զբաղուած: Խումբ-խումբ եւ առանձին-առանձին Դաշնակցականներին կանչում են իրենց մօտ, դնում են նրանց առջեւը նախօրօք պատրաստուած դէկլարացիան Դաշնակցութիւնից հրաժարուելու մասին եւ պահանջում են ստորագրել: Ով չի ստորագրում — պաշտօնից են հեռացնում կամ աքսորում են: Եւ ապա այս ձեւով հաւաքուած դէկլարացիաները տպում են թերթերում եւ ծափ են տալիս, թէ Դաշնակցութիւնը քայքայւում է: Եթէ «Դաշնակցութիւնը այլեւս չկայ», ինչո՞ւ են այս յիմարական արարքները, ինչո՞ւ է այս հրճուանքը:

Աւելին եւս. ահա մի տարի է բոլշեւիկները պատրաստում են «Նախկին-Դաշնակցականների» համագումարը: Վերջապէս, գլուխ են բերել: Դէսից-դէնից — յայտնի է՝ ինչ միջոցներով — Երեւան են հաւաքել հարիւր-երկու հարիւր մարդ, մեծ մասը, կոմունիստներ, անունը դրել են «Դաշնակցութեան Ընդհանուր Ժողով» եւ այդ ժողովին անունից յայտարարում են Դաշնակցութեան լուծումը: Ո՞վքեր են մասնակցել այդ կատակերգութեան: Կարո՞ղ էք մի պարկեշտ գործչի անուն ցոյց տալ: Կարո՞ղ էք

տանել, թէ ժողովրդի մէջ մաղաչափ իսկ համակրանք ունի այդ զաւեշտը: Եթէ «Դաշնակցութիւնը այլեւս չկայ», ինչո՞ւ համար բոլշեւիկները դնում են իրենց այդքա՛ն ծիծաղելի դրութեան մէջ, ինչո՞ւ են կաշուից դուրս գալիս...

Ահա իմ ձեռքին է «Խորհրդային Հայաստան» թերթի 1923 թ. նոյ. 29 համար — 14 մեծադիր էջեր՝ նուիրուած բոլշեւիկեան իշխանութեան եռամեայ տարեդարձին: Թերթի ճակատը զարդարած են աւուր պատշաճի նշանաբաններ, որոնց մէջ ահագին տեղ է տրուած «մեր հակառակորդներին»— Դաշնակցութեան: Քիչ վարը դրուած է կոմունիստների շինարարութիւնը ներկայացնող մի նկար, որի կէսը ուղղուած է Դաշնակցութեան դէմ: Առաջնորդող յօդուածը գրեթէ ամբողջապէս վերաբերում է Դաշնակցութեան: Ալ. Մարտունու (Ա. Մեասնիկեանի) «Եռամեայ Սոց. Հայաստանի Առօրեայ Խնդիրները» 16 էջանոց ընդարձակ յօդուածը սկսում է եւ վերջանում հայհոյանքներով Դաշնակցութեան դէմ: Աշոտ Յովհաննիսեանի, Ա. Մռաւեանի, Սուրխաթի եւ մի շարք ուրիշների գրուածքները ծայրից-ծայր հայհոյանքներ են Դաշնակցութեան ու Դաշնակցական գործիչների: Ահագին տեղ է տրւում մեր կուսակցութեան եւ թերթի միւս բաժիններում: Եթէ Դաշնակցութիւնը մեռած է, ինչո՞ւ համար «Խորհրդ. Հայաստանի» պաշտօնաթերթը սկզբից մինչեւ վերջ զբաղւում է նրանով: Մի՞թէ «բանուորա-գիւղացիական հայրենիքում» ուրիշ, աւելի կենդանի գործ չկա՞յ, քան «մեռելի» միս ծամելը:

Չէ՛, եթէ մարդիկ այդքան յոգնում են, աշխատում են համոզելու աշխարհին, որ Դաշնակցութիւնը մեռած է, կը նշանակէ մի բան կայ...

Իսկ թէ ինչ կայ, կարող է ցոյց տալ հետեւեալ
երկու թիւը: Համառուսական Կուսակցութեան
Կենտրոնական Կոմիտէի պաշտօնաթերթ «Պրաւ-
դա»-ն իր 1923 թ. համարներից մէկում տալիս է
խորհրդային բոլոր հանրապետութիւնների մէջ
գտնուող կոմունիստների վերջին վիճակագրութեան
աղիւսակը: Ըստ այդ աղիւսակի, առ մէկն սեպտեմ-
բերի, բոլոր խորհրդային երկրներում եղել է 3,828
հայ կոմունիստ: Նմանապէս Անդրկովկասեան Խոր-
հուրդների պաշտօնաթերթ «Զարիա Վաստոկա»-ն
(Թիւ 239) տալիս է Անդրկովկասի վիճակագրու-
թեան արդիւնքը, որի համաձայն Հայաստանում
կայ 1692 կոմունիստ: Ահա այս երկու չոր ու ցամաք
թուերը անհամեմատ աւելի պերճախօս են, քան
բոլշեւիկների արած բոլոր յայտարարութիւնները,
միտինգները, ընդհանուր ժողովներն ու բանաձեւե-
րը, քան Քաջազնունու բոլոր փաստաբանութիւն-
ներն ու հաւատը: Երեք տարի լինել պետական կու-
սակցութիւն Հայաստանում, ստանալ, Քաջազնու-
նու տեսլով, Դաշնակցութեան հսկայ ժառանգու-
թիւնը, ունենալ իր յետեւը Ռուսաստանի նիւթական
ու բարոյական աջակցութիւնը եւ ունենալ միայն
1692 անդամ... Այս թուից է բղխում բոլշեւիկների
անսահման կատաղութիւնը Դաշնակցութեան դէմ,
որովհետեւ նրանք զգում են իրենց ոչնչութիւնը
երկրում, տեսնում են, որ ժողովուրդը ոչ թէ իրենց
հետ է, այլ Դաշնակցութեան: Իսկ Քաջազնունին իր
սենեակում նստած, հալած իւղի տեղ է դնում բոլ-
շեւիկների բոլոր զրպարտութիւններն ու խոստումները, չի հա-
ւատում մեզ, չի հաւատում թուերին ու փաստերին
եւ երանելի ներշնչումով կրկնում է բոլշեւիկների
խօսքը. «Դաշնակցութիւն չկայ այլեւս»... Եթէ

«Դաշնակցութիւն չկայ», հապա ի՞նչ են եղել այն բազմահազար Դաշնակցականները, որոնք դեռ երէկ կենդանի էին. ո՞ւր է հայ մտաւորականութիւնը, հայ գիւղացիութիւնն ու բանւորութիւնը. միթէ 1692 կոմունիստով ամէն բան վերջացա՞ւ: Այս 1692 կոմունիստնե՞րն են Դաշնակցականները — «միակ Դաշնակցականները այսօր...» Կարիք կա՞յ հերքելու այսքան վրան բաց անհեթեթութիւն...

«Չկայ հաւատ ու ոգեւորութիւն», ասում է Քաջազնունին: Աւելի ճիշտ ասած կը լինէր, եթէ գրէր՝ նախկին հաւատն ու ոգեւորութիւնը, որովհետեւ, իրօք որ, այն հաւատն ու ոգեւորութիւնը, որ համակել էր ամէնքին, օրինակ, երեք–չորս տարի առաջ, այսօր գոյութիւն չունի: Շատ ենք տրորուել ու հիասթափուել եւ այդ պատճառով դարձել ենք կասկածոտ ու պաղարիւն: Բայց նախկին միամիտ, անառագաստ հաւատին այժմ յաջորդել է զգաստ իրատեսութիւնը, գործնական հաւատը, եթէ կարելի է այսպէս ասել: Սխալ է պնդել, թէ հայ ժողովրդի, ուրեմն եւ Դաշնակցութեան մէջ հաւատ չի մնացել. Քաջազնունին իր հոգեբանութեամբ է կշռում երեւոյթները: Նա աւելի անկեղծ կերպով արտայայտուած կը լինէր, եթէ գրէր. «Չկայ հաւատ ու ոգեւորութիւն իմ մէջ»: Ինքը թուլացել ու վհատուել է, իր հոգու մէջ հանգել է յոյսի կայծը, եւ կարծում է, թէ ուրիշներն էլ են անհաւատ դարձել: Հասարակական երեւոյթների չափազանց մակերեսային եւ անձնական գնահատութիւն է այս: Հաւատն ու ոգեւորութիւնը գործի մէջ են երեւան գալիս, իսկ որովհետեւ Քաջազնունին գործ չի տեսնում, հասկանալի է, որ նրա համար հաւատ ու ոգեւորութիւն էլ չկայ: Բայց այս գետնի վրայ Քա–

ջազնունու հետ վիճելը դժուար է, որովհետեւ, ինչպէս ասացինք, նրա համար աւելի արժէք ունի իր ներքին համոզումը, քան արտաքին փաստերն ու թուերը:

«Այն օրուանից, շարունակում է Քաջազնունին, երբ մենք իշխանութեան գլուխն անցանք, կուսակցութեան մթնոլորտը թունաւորուեց»: Միանգամայն ճիշտ է. իշխանութիւնը մեր վրայ շատ թանգ նստեց: Դժուար էր խուսափել սխալներից եւ չենթարկուել իշխանութեան թոյնին, մանաւանդ մեզ պէս համեստ կարողութիւնների ու պետական քիչ փորձառութիւն ունեցող մարդկանց համար: Երէկուայ ճարտարապետը, որի մասնագիտութիւնը տուն ու եկեղեցի շինելն էր, երէկուայ լրագրողը, որ մինչեւ այդ միայն թերթ էր խմբագրել եւ երէկուայ վարժապետը, բժիշկը, քիմիկոսը, բանաստեղծը, հաշուապահը, նաւթահանքերի ծառայողը, խմբապետը, յանկարծ, մի հրաշքով, դարձան պետական մարդիկ — նախարար, դեսպան, նահանգապետ, խորհրդարանի անդամ, զինուորական, քաղաքային ու գաւառային գործիչ — մի խօսքով՝ Հայաստանի իշխանութիւն: Եւ ի հարկէ, տեղի ունեցան ե՛ւ սխալներ, ե՛ւ գայթակղութիւններ եւ ո՞վ գիտէ դեռ ինչեր. «Կուսակցութեան մթնոլորտը թունաւորուեց»:

Բայց Քաջազնունին գիտէ, թէ ի՛նչ ողբերգութիւն էր ամէն մի Դաշնակցականի համար, երբ նրան ստիպում էին այս կամ այն պետական պաշտօնը ընդունելու: Այդ միայն հայ իրականութեանը անիրազեկ արտասահմանի լղրճուկ մթնոլորտում է, որ համարձակւում են ամբաստանել մեզ ինչ որ իշխանատենչութեան, նախարարական «փափուկ»

աթոռների յետեւից վազելու մէջ: Քաջազնունին գիտէ, թէ ի՛նչ էր մեզ համար այդ իշխանութիւնը եւ, օ՜, ինչքա՜ն երջանիկ կը լինէինք մենք, եթէ ամէն մէկս թողնուէր իր վարժապետի, բժշկի, լրագրողի ու ճարտարապետի դերի մէջ: Դաշնակցութիւնը մտաւ իշխանութեան մէջ, որովհետեւ չէր կարող չմտնել: Այդ դերին յարմար ուրիշ ոյժ, ինչպէս Քաջազնունին էլ է պնդում, հայ ժողովրդի մէջ, դժբախտաբար, չկար: Մտաւ հաստատ գիտենալով, որ իր այդ քայլը պիտի «թունաւորէ կուսակցութեան մթնոլորտը»: Գիտէր, որովհետեւ առաջին անգամը չէր, որ դրւում էր նման դրութեան մէջ:

Քաջազնունուն յայտնի է, որ ուրիշ անգամներ էլ Դաշնակցութիւնը եղել է իշխանութիւն: Յիշենք, թէկուզ, եկեղեցական կալուածների եւ հայ-թաթարական ընդհարումների շրջանը եւ նրա հետեւանքները: Այդ ժամանակ էլ «թունաւորուեց կուսակցութեան մթնոլորտը» եւ այն էլ ի՛նչ չափով: Քաջազնունուն յայտնի է նոյնպէս, թէ այն օրերին որպիսի ծանր տագնապ ապրեցինք մենք: Քի՛չ գտնուեցին եւ այն ժամանակ մարդիկ, որոնք Դաշնակցութիւնը յայտարարեցին մեռած: Յիշէք Միհրանական շարժումը, «Մշակ»ի անբարոյական պայքարը, անջատականութիւնը, թրքահայ-ռուսահայի վէճը, շանտաժներն ու բռնութիւնները... Բայց, հակառակ բոլոր մարգարէութիւնների, Դաշնակցութիւնը շատ շուտով սթափուեց, ուղղեց մէջքը եւ ի զարմանս բոլոր հակառակորդների շարունակեց իր ճամբան: Նոր, կենարար օդ մտաւ եւ մաքրեց կուսակցութեան թունաւորուած մթնոլորտը: Նոյնը կը լինի եւ այժմ: Յոգնածները, փոքրոգիները, հաւատը կորցրածները կամ իսպառ «թունաւորուածները» կը

մեռնին կամ կը հեռանան մեզանից: Կեանքը կը ստեղծէ օդի նոր հոսանք, կը մաքրէ եւ արդէ՛ն իսկ մաքրում է — մեր մթնոլորտը, եւ «մեռած» յայտարարուած Դաշնակցութիւնը անյողդողդ կը շարունակէ իր ճամբան...

«Երիտասարդութիւնը, նոր սերունդը մեզ հետ չէ այլեւս», գանգատւում է Քաջազնունին: Ո՞ւմ հետ է հապա այդ նոր սերունդը. մի գուցէ բոլշեւիկների՞: Բայց բոլշեւիկներն էլ նոյն գանգատն են անում: Կոմունիստական թերթերում ամէն քայլափոխին կը պատահէք լուրերի, որոնք ապացուցանում են, որ նոր սերունդը բոլշեւիկների հետ չէ: Երեք ամիս առաջ, «Խորհրդ. Հայաստան» թերթում դառն դժգոհութիւններ էին տպուած Երեւանի ուսանողութեան դէմ. համալսարանի շուրջ 1000 ուսանողներից հազիւ 20 հոգին կոմունիստ է արձանագրուած, բայց նրանք էլ ժողովի չեն գալիս եւ կոմբջիջը քայքայուել է: Նոյն բողոքը լսւում է եւ Ալեքսանդրապոլում, ե՛ւ որբանոցների մէջ, ուր մի քանի հազարից աւելի չափահաս որբ կայ եւ մի քանի հատ կոմունիստ միայն: Նոյն է դրութիւնը եւ միջնակարգ դպրոցներում. նոր սերունդը յամառ կերպով չի համաձայնւում կոմունիստ դառնալ: Ո՞ւր է գնում, ի՞նչ է անում հապա այդ նոր սերունդը. բայց գուցէ դարձել է ապաքաղաքայի՞ն, չի՞ հետաքրքրւում կուսակցական հարցերով: Բայց ե՞րբ է տեսնուած, որ երիտասարդութիւնը, այն էլ յեղափոխական շրջանում չհետաքրքրուի քաղաքական խնդիրներով: Անշուշտ, հետաքրքրւում է, բայց կոմունիստ չէ. ի՞նչ է հապա:

Սակայն, գուցէ, գաղութների՞ «նոր սերունդը մեզ հետ չէ այլեւս»: Այդ հօ բոլորովին չի կարելի

ասել: Ամէն տեղ, ուր կայ երիտասարդութիւն, կան եւ Դաշնակցական ուսանողական ու պատանեկան միութիւններ— Եւրոպա, Եգիպտոս, Սիբիր: Եթէ գաղութներում վիճակագրութիւն կազմուէր, կը պարզուէր, որ ամէնից շատ երիտասարդ անդամներ Դաշնակցութիւնը ունի: Եթէ հետաքրքրուենք իմանալու, թէ ի՞նչ է կարդում նոր սերունդը, կը համոզուենք, որ առաջին տեղը բռնում է Դաշնակցական գրականութիւնն ու մամուլը: Եթէ առնենք գաղութների հայկական դպրոցները, կ'երեւայ, որ կուսակցական ուսուցիչների մեծ մասը Դաշնակցական է, ասել է՝ դպրոցական սերունդը դաստիարակւում է Դաշնակցական գաղափարների մթնոլորտում: Ո՞րտեղից է հանել Քաջազնունին, թէ «նոր սերունդը մեզ հետ չէ», ի՞նչ տուեալներից է ստացել իր այդ եզրակացութիւնը: Մնում է անհասկանալի: Քաջազնունուն թւում է, թէ «նոր սերունդը մեզ հետ չէ»․ երբ հարցը Դաշնակցութեան է գալիս, Քաջազնունուն, տարաբախտաբար, շատ բան է թւում: Եւ թւում է բոլորովին անհիմն ու անտեղի կերպով:

Ընդհակառակը, նա՛, ով որ կեանքը տեսնում է այնպէս, ինչպէս նա կայ, չի կարող չխոստովանուել, որ երիտասարդութեան, նոր սերնդի խոշոր մեծամասնութիւնը երկրում թէ՛ գաղութների մէջ Դաշնակցական է կամ ապրում է Դաշնակցութեան գաղափարներով: Եւ սա եւս մեր կուսակցութեան կենսունակութեան նշաններից մէկն է:

Դաշնակցութեան յուղարկաւորութիւնը կատարելուց յետոյ՝ Քաջազնունին չափազանց վրդովւում է, որ «մի քանի տասնեակ, առ առաւելն մի քանի հարիւրեակ մարդ» կուսակցութիւնը դարձրել են

իրենց համար զբաղումի առարկայ, «փէշակ» կամ ամերիկացու բառով ասած՝ «պիզնէս», եւ չեն ուզում պոկ գալ հայ ժողովրդի մարմնից: Կուսակցութիւնը դարձնելով ինքնանպատակ՝ այդ մարդիկ ճգնում են արհեստական միջոցներով պահել Դաշնակցութիւնը, մինչդեռ նա արդէն վաղուց սկսել է քայքայուել...

Քաջազնունու այս խօսքերին կարելի է եւ չպատասխանել: Եթէ նա ուզում է ասել, որ «Դաշնակցութիւնը այլեւս մեռած է» եւ, միեւնոյն է, այդ «մի քանի տասնեակ... կամ հարիւրեակ» մարդկանց ճիգերը ո՛չ մի դրական արդիւնքի չպիտի հասնեն․ մենք արդէն տեսանք, որ այդ կատարելապէս սխալ է: Դաշնակցութիւնը ապրում է ոչ թէ մի քանի տասնեակ կամ հարիւրեակ մարդկանց ճիգերով կամ այդ մարդկանց նպատակների համար, այլ՝ որովհետեւ կեանքը անհրաժեշտ է դարձնում նրա գոյութիւնը: Իսկ եթէ Քաջազնունին իր խօսքերով ինչ որ վիրաւորական վերագրումներ է ուզում անել Դաշնակցութիւնը «փէշակ» դարձնող մարդկանց — թո՛ղ նա գործ ունենայ իր խղճի հետ: Եւ թո՛ղ կեանքը ինքը ցոյց տայ, թէ ո՞վ ինչ բանն է արել «փէշակ»...

Եւ, վերջապէս, «ամենապերճախօս ապացոյցը» Դաշնակցութեան մահուան՝ «խորհրդաժողովում ընդունուած բանաձեւը»՝ «հակասական, ոչինչ չասող... զուրկ շիտակութիւնից ու տղամարդութիւնից»...

Այդ բանաձեւը հրապարակի վրայ չկայ եւ, ուրեմն, անհնար է քննութեան առնել նրա բոլոր կէտերը եւ ցոյց տալ, թէ ո՞րքան իրաւացի է Քաջազնունու վրդովումը: Սակայն, նրա էութիւնը ամ-

փոփոխուած է խորհրդաժողովի հրատարակած Յայտագրի մէջ եւ ընթերցողները հնարաւորութիւն ունեն ստուգելու Քաջազնունու մեղադրանքը: Ես այդ բանաձեւում անշիտակութիւն եւ անտղամարդութիւն չեմ տեսնում:

Ի՞նչ է այդ բանաձեւի էութիւնը: Խորհրդաժողովը ասում է նախ՝ որ «Միացեալ եւ Անկախ Հայաստանի պահանջը այսուհետեւ եւս մնում է իբր ղեկավար սկզբունքը Հ. Յ. Դաշնակցութեան քաղաքական գործունէութեան»: Յետոյ, համոզուած լինելով, որ բոլշեւիզմի ճակատագիրը պիտի որոշուի Մոսկուայում եւ ոչ Երեւանում, նա նպատակայարմար չի համարում Հայաստանի խորհրդային ռեժիմի տապալումը բռնի միջոցներով: Այսպէս էր մտածում Դաշնակցութիւնը եւ դեկտ. 2-ին, երբ իշխանութիւնը յանձնում էր բոլշեւիկներին: Այն ժամանակ էլ կային մարդիկ, որոնք «տղամարդութիւնից զուրկ» էին համարում այդ քայլը եւ դիմադրութեան ու քաղաքացիական կռուի կոչ էին անում: Քաջազնունին դրանց մէջ չէր. նա շիտակ եւ տղամարդու վայել գործ էր համարում մեր արածը եւ բնաւ ինքնասպանութեան եւ Դաշնակցութեան լուծման հարց չէր յարուցանում: Ընդհակառակը, նա բառ չէր գտնում որակելու համար վարմունքը այն մարդկանց, որոնք յայտարարել էին «հին Դաշնակցութիւնը» մեռած եւ կարմիր դրօշակ էին պատրաստում՝ դիմաւորելու համար նոր տէրերին:

Ի՞նչ պէտք է անէր Դաշնակցութիւնը, որպէսզի Քաջազնունու աչքում չլինէր «զուրկ շիտակութիւնից ու տղամարդութիւնից»: Պէտք է լինէր հետեւողական, այսինքն կամ պիտի ասէր՝ «ե՛ս չկամ. մեռած եմ», կամ պիտի կռուէր բոլշեւիկների դէմ:

Միջին ճամբայ չկայ. «կա՛մ մահ, կա՛մ ազատութիւն»: Յեղափոխական կուսակցութիւնը չպէտք է յարմարուի պայմաններին, չպէտք է ոչ մի րոպէ ձեռները ծալած նստի: Եթէ նա այս վայրկեանիս չի՛ կռւում, կը նշանակէ շիտակ չէ, տղամարդ չէ, անկեղծ չէ, հակասութեան մէջ է ինքն իր հետ:

Գրականութիւնից յայտնի են այնպիսի հերոսներ, որոնց համար համակերպում չկայ, որոնց կեանքը համակ կռիւ է — կռիւ հողմաղացների դէմ, կռիւ ոչխարների հօտի դէմ, չար ոգիների դէմ, աւանակների կարաւանի դէմ, երեւակայական ասպետների դէմ— ամբողջ աշխարհի դէմ: Կռի՛ւ մինչեւ մահ — ամէն գնով եւ բոլոր պայմաններում: Քաղաքական կուսակցութիւնները ուրիշ դեր եւ քաղաքական գործունէութեան այլ ձեւեր ունին: Քաղաքական կուսակցութիւնը պարտաւոր է գիտենալ, թէ ե՞րբ է պէտք կռուել եւ երբ ձեռները ծալած նստել: Հանգամանքների ճշգրիտ ըմբռնումը եւ նրանցից բղխող գործելակերպի ընդգրկումը — այս է կուսակցութեան առաջին պարտականութիւնը: Անտեսանել այս գործելակերպը տղամարդութիւնից զուրկ— հասկացողութեան ու ճաշակի խնդիր է, վերջ ի վերջոյ:

Ես հակառակ համոզումը ունիմ: Իմ հասկացողութեամբ մեր վերջին խորհրդաժողովը ե՛ւս մի ապացոյց է Դաշնակցութեան կենսունակութեան եւ իրատեսութեան: Խօսքերը չեն էականը կեանքում. — կարող է պատահել, որ նրա որոշումների մէջ կան բառեր ու նախադասութիւններ, որոնք սրա ու նրա գեղասէր ճաշակին կամ տրամաբանութեան հաճելի չերեւան.— կարեւորը ոգին է, հիմնական գաղափարը, որ մղում էր տալիս ժողովին: Այդ տեսակէտից

խորհրդաժողովը միաձոյլ ամբողջութիւն էր եւ ներշնչուած էր մէկ գաղափարով։ Բաջազնունուն չէր տրուած այս մասին կարծիք յայտնելը կամ դատ ու դատաստան անելը, որովհետեւ նա իր վճռական քայլը անելուց առաջ չուզեց նեղութիւն քաշել անձամբ ներկայ լինելու այդ ժողովին եւ ըմբոստանալու հէնց ժողովին մէջ, ժողովի դէմ, եթէ իր զգաստացնող ձայնը լսող չլինէր։ Իսկ այսպէս խօսել, ինչպէս Բաջազնունին է խօսում — ի՞նչ արժէք ունին այդ խօսքերը։

Բաջազնունին մեզ է մեղադրում, որ մենք «պապանձման կնիք» ենք դրել նրա խեղճ զեկուցագրի վրայ. «կողպէք ենք դրել» նրա բերանին. ասել ենք նրան. «Փակի՛ր բերանդ, լռի՛ր», որովհետեւ մենք «վախկոտներ ենք», «վստահութիւն չունինք մեր վրայ», «վախն ու կասկածը բոյն է դրել մեր սրտերի մէջ»։ Մի խօսքով՝ այլանդակ մարդիկ ենք մենք։

Այսպէս է ասում Բաջազնունին, իսկ ի՞նչ է ասում իրականութիւնը։

Որոշած լինելով գումարել խորհրդաժողով՝ Հ. Յ. Դ. Արտ. Պատասխանատու Մարմինը յանձնել էր մի շարք ընկերների պատրաստել օրակարգի նիւթերի մասին զեկուցումներ։ «Քաղաքական մոմենտի» մասին զեկուցում ներկայացնելը յանձնուել էր մի քանի հոգու, ի թիւս որոնց եւ Բաջազնունու։ Բաջազնունին իր զեկուցումը գրել էր, բայց չէր տուել Պատ. Մարմնին եւ մինչեւ վերջին վայրկեան բոլորից գաղտնի էր պահել նրա բովանդակութիւնը։

Խորհրդաժողովին մասնակցելու համար ուրիշ ընկերների շարքին հրաւէր էր ստացել եւ Բաջազնունին։ Միաժամանակ նրան հաղորդուել էր, որ թէ ճանապարհի եւ թէ ժողովրդավայրում ապրելու

ծախսը կը հոգայ կուսակցութիւնը։ Ուրեմն, նիւթական արգելք չկար, որ նա ներկայ գտնուէր ժողովին։ Ցամենայն դէպս կուսակցութիւնն ամէն միջոց ձեռք էր առել, որ նա գայ, բայց նա չեկաւ։ Ի նկատի ունենալով, որ «քաղաքական մոմենտի» պէս կարեւոր հարցի մասին զեկուցանողներից մէկն էլ ինքն էր, հրաւէրը կրկնուեց եւ ժողովավայրից։ Նա դարձեալ չեկաւ։

Ինչո՞ւ չեկաւ։ Պատճառ ունէ՞ր չգալու։ Կարող էր ունենալ, կարող էր եւ չունենալ։ Մեր գործը չէ այդ։ Իրողութիւնը այն է, որ չեկաւ եւ իր կամքով ներկայ չգտնուեց խորհրդաժողովին։ Նրա զեկուցումը կարդացուեց, եւ խորհրդաժողովի մէջ մի հատիկ մարդ չգտնուեց, որ գէթ մօտաւոր կերպով իւրացնէր նրա յայտնած մտքերը։ Խորհրդաժողովը հաւաքուել էր կեանքի գործի համար, Բաջազնունին առաջարկում էր՝ ինքնասպանութիւն։ Նրա զեկուցումը լսուեց եւ մէկ կողմ դրուեց։ Խորհրդաժողովը անցաւ հերթական նիւթին։

Այս է ամբողջ եղելութիւնը։ Կա՞յ այստեղ «ցենզուրայի» կամ վախկոտութեան նշոյլ։ Ո՞վ է փորձել Բաջազնունու բերանին կողպէք դնել։ Ինչի՞ց է երեւում այդ։ Այդ բոլորը գոյութիւն ունի միայն Բաջազնունու երեւակայութեան մէջ։ Եթէ նա մի քիչ պաղարիւն կերպով մտածէր, այդպիսի ծանր ամբաստանութիւններ չէր անի իր ընկերների հասցէին, եւ, մանաւանդ, չէր հրատարակի այդպիսի անտեղի խօսքեր։ Եթէ կայ մէկը, որ փակել է Բաջազնունու բերանը, դա ինքը Բաջազնունին է։ Եթէ մէկից պէտք է դժգոհէր, այդ մէկը հէնց Բաջազնունին է։ Եւ եթէ մէկի դէմ պէտք է ըմբոստանար, իր դէմ պէտք է ըմբոստանար Բաջազնունին։ Սեփա–

կան յանցանքը թողած ուրիշի օձիքից բռնել— Բա-
ջազնունուն չի՛ սազում բնաւ:

Բաջազնունին կատարել է իր պարտքը— գրել
ու հրատարակել է Դաշնակցութեան դամբանակա-
նը: Դամբանականի մէջ մարդիկ, սովորաբար, աշ-
խատում են փնտռել լաւ խօսքեր. Բաջազնունին ո՛չ
մի լաւ խօսք չի գտել Դաշնակցութեան մասին: Եւ
Դաշնակցութեան համար պատրաստուած դամբա-
նականը դարձել է Բաջազնունու դամբանական —
Բաջազնունո՛ւ, իբրեւ քաղաքական գործչի: Ցաւա-
լի է այդ: Նա ուրիշ վիճակի էր արժանի: Մենք կ'ու-
զէինք, որ նա մինչեւ վերջ կանգնած մնար այն
բարձր պատուանդանի վրայ, ուր դրել էր նրան
կեանքը. կ'ուզէինք նրա բերանից լսել կեանքի խօս-
քեր, կ'ուզէինք տեսնել նրան միշտ անկողմնակալ
եւ կուսակցական ճղճիմ հաշիւներից վեր... Այդ-
պէս չեղաւ: Անտաւոր ժամանակների թոյնը նրա
հոգին էլ վարակեց: Դրա դէմ մենք ունինք այն մը-
խիթարութիւնը, որ մեր պատճառով չէ, որ Բա-
ջազնունին իջնում է իր պատուանդանից խառնուե-
լու համար այն բազմութեան, որը հասարակական
տրամադրութիւնների մակընթացութեան ժամերին
բարձրանում է ալիքների կատարը, որպէսզի աւելի
խորը սուզուի ծովի մէջ տեղատուութեան պա-
հուն...

VI

ՎԵՐՋԱԲԱՆ

Վերջին խօսքը տանք Բաջազնունուն եւ փա-
կենք:

1922-ին, աշխատելով պարզել, թէ «ի՞նչ պէտք
է լինի մեր ուղին» եւ պատասխանելով բոլշեւիկնե-
րի ու ռամկավարների յարձակումներին՝ նա հետեւ-
եալ մտքերն էր յայտնում Հ. Յ. Դաշնակցութեան
մասին.—

«Պէ՞տք է արդեօք, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը
... ձգտի նորից իր ձեռն առնելու Հայաստանի պե-
տական ղեկը: Նախադասելի չէ՞, որ մի ուրիշ կու-
սակցութիւն փոխարինի նրան:

Փաստ է, որ մօտ անցեալում Դաշնակցութիւնը
չկարողացաւ տանել իրան վիճակուած ծանր լու-
ծը: Դաշնակցական կառավարութիւնը չկարողացաւ
հաստատել ամուր իրաւակարգ ու պետական կա-
նոնաւոր կեանք, չկարողացաւ լուծել ելմտական ու
տնտեսական մեծ տագնապը, չկարողացաւ վերա-
ցընել քաղաքական մանր ու խոշոր, ներքին ու ար-
տաքին խոչընդոտները եւ, երկուք ու կէս տարուայ
գերմարդկային աշխատանքից յետոյ, ստիպուած ե-
ղաւ տալ իր տեղը օտար իշխանութեան*):

Սա անհերքելի ճշմարտութիւն է, ուրեմն եւ

---

*) Ընդգծումները մեծ մասը իմն են: Ս. Վ.

միանգամայն օրինաւոր այն հարցը, թէ լաւ չէ՞ր լինի թողնել ասպարէզը ուրիշներին:

Անշուշտ, լաւ կը լինէր, եթէ հայ փրկանութեան մէջ գոյութիւն ունենար Դաշնակցութիւնից աւելի կարող ու աւելի ձեռնհաս քաղաքական կազմակերպութիւն: Դժբախտաբար, այդպիսի կազմակերպուած ոյժ չկայ ասպարիզում եւ դարձեալ Դաշնակցութիւնն է, որ պիտի ճգնի անել իր լաւագոյնը:

Դաշնակցութիւնը չարդարացրեց իր կոչումը: Բայց... այսքան էր հայ ժողովրդի կարողութիւնը, աւելին չունէր ու այսօր էլ չունի:

Եթէ մեր նորածին անկախութեան կորուստը ապիկարութիւն էր եւ ոչ պարտութիւն, անխորտակելի դժուարութիւնների ու գերագանցօրէն մեծ ուժերի հանդէպ,— ապա, ուրեմն, ապիկարութիւնը Դաշնակցութեանը չէր, այլ հայ ժողովրդինը: Դաշնակցութիւնը ամէնից մեծ ու ամէնից լաւ կազմակերպուած ոյժն է, որ մինչեւ այսօր կարողացել է ասպարէզ հանել հայ ժողովուրդը, եւ Դաշնակցութեան պարտութիւնը՝ ժողովրդի պարտութիւնն է:

Ահա մի դառն իրողութիւն, որի մասին ամէնից աւելի ցաւում է ինքը Դաշնակցութիւնը:

Բայց Դաշնակցութեան հակառակորդներն ու քննադատները չպիտի մոռանան հետեւեալը.—

Դաշնակցական իշխանութիւնը իր անփորձութիւնով ու թուլութիւնով, իր թերութիւններով ու պակասութիւններով, նոյն իսկ իր ախտերով հանդերձ՝ ունի մի անփոխարինելի առաւելութիւն. նա երկրի իշխանութիւն է. կապուած է երկրի ու ժողովրդի հետ անքակտելի կապերով, իր բոլոր նիգերով, իր միս-մարմնով: Նա անջատ մարմին չէ,

անջատ ապրումներով, անջատ ցանկութիւններով ու ձգտումներով: Հայաստանի կեանքը նրա իսկ կեանքն է եւ մահը՝ նրա մահը: Նա մի անբաժան օրգան է այն հաւաքական մարմնի, որի անունն է «հայ ժողովուրդ»— միշտ արթուն, միշտ գործօն ու միշտ էլ շատ զգայուն: Նա կարող է չգիտենալ կառավարել, բայց նա երբեք եւ ո՛չ մի պայմաններում չի մոռանայ ու չի դաւաճանի հայ ժողովրդի դարաւոր դատին:

Ամէն մի հարուած, որ ուղղուած է հայ ժողովրդի եւ հայկական դատի դէմ,— որտեղից էլ գայ այն՝ դրսից թէ ներսից, աջից թէ ձախից — Դաշնակցութիւնը ընդունում է առաջին հերթին իր կրծքի վրայ: Եւ եթէ, մի սեւ օր, Դաշնակցութեան կրծքին հասցրած հարուածը մահացու լինի (ինչպէս մարգարէանում են այսօր բոլշեւիկները), նա կը լինի մահացու, ներկայ պատմական շրջանում, նաեւ հայկական դատի համար:

Չհասկացողներին այս խօսքը կարող է թուալ շատ յանդուգն ու շատ էլ ծիծաղելի: Փորձեմ բացատրել:

Անհատ Դաշնակցականներ ու ամբողջ խմբեր կարող են կոտորուել, բանտերը լեցուել, աքսորուել, ցրուել աշխարհի չորս կողմը, չէզոքանալ կամ անցնել հակառակ դրօշների տակ: Կուսակցական շարքերը կարող են նօսրանալ, նուազել. այս կամ այն մարմինները կարող են կազմալուծուել. կուսակցական կեանքը, իր ամբողջութեան մէջ, կարող է խանգարուել, նոյնիսկ ընդհատուել աւելի կամ պակաս ժամանակով: Վերջապէս կարող է վերանալ ասպարէզից ու մոռացուել իսպառ «Դաշնակցութիւն» անունն անգամ:

Բայց սա դեռ չի լինի Դաշնակցութեան մահը։

Մահը կը գայ այն օրը միայն, երբ հայ ժողովուրդը կորցնի այն հոգեբանութիւնը, դաւաճանի այն սկզբունքներին, մոռանայ այն խտէալները, որոնք ծնունդ են տուել Հ. Յ. Դաշնակցութեան եւ ամբողջ երեսուն տարի պահել են նրան հայ մարտնչող բանակի առաջին շարքերում։

Դաշնակցութիւնը կազմուած է ո՛չ միայն այն մի քանի հազար մարդուց, որ արձանագրուած են կուսակցական տետրակների մէջ։ Դաշնակցութեան շրջանակները շատ աւելի լայն են ու արմատները շատ աւելի խոր։ Դաշնակցութիւնը հայ բողոքի մարմնացումն է, նրա մարտական ոյժը, որ ծառացել է ստրկութեան դէմ եւ իր իրաւունքն է պահանջում։

Ցուցակագրուած Դաշնակցականները չեն, որ կազմում են Դաշնակցութեան ոյժը։ Ոյժը գաղափարի մէջ է — այն առողջ, կենսունակ, հաստուացած ու անխորտակելի գաղափարի — որ կազմում է Դաշնակցութեան էութիւնը եւ որը սերնդից սերունդ խոր արմատներ է ձգել հայութեան հաւաքական հոգու մէջ։

Ո՞րն է այդ գաղափարը։

Պարզ ու կարճ.— առաջին հերթին՝ օտար գերութիւնից անկախ քաղաքական կեանք։

Այսօր այսքանը միայն։ Մնացածը կը գայ իր ժամանակին ու իր հերթին.— կը գայ այն ձեւերով ու կ՚իրագործուի այն միջոցներով, որ կեանքի ընթացքը կը թելադրէ մեզ կամ մեր յաջորդներին։

Հիմնականն ու էականը այսօրուայ համար այդ «պարզ ու կարճն» է։ Մնացածը կարող է ուշանալ աւելի կամ պակաս, բայց այս մէկը պէտք է իրակա-

նանայ անյապաղ։

Այս է պատմութեան պահանջը — նրա սպառնալիքը. կա՛մ այսօր, կամ երբեք։

Իբրեւ ազգային միութիւն, իբրեւ պատմակուլտուրական ուրոյն դաս, հայութիւնը վտանգուած է մեծապէս։ Կեանքի ու մահուան հարց է դրուած նրա առջեւ։ Միայն անկախ պետութեան անյապաղ հաստատումն է, որ դեռ կարող է ի մի հաւաքել հայ ժողովրդի մնացորդները հայրենի հողի վրայ եւ փրկել նրա ապագան, փրկել մարդկութեան համար նրա բազմադարեան կուլտուրան։

Այսօր դեռ կարելի է անել այդ, վաղը արդէն ուշ կը լինի։

Ընդհանուր կազմալուծման ու վերաշինման այս օրերին, երբ հին աշխարհի քաղաքական քարտէսը քննութեան է առնուած ու արմատական փոփոխութիւնների ենթարկւում, երբ քանդւում են հին պետութիւնները ու նորերը հաստատւում նրանց փլատակների վրայ, երբ զրկուած ու ճնշուած ազգերը ներկայացնում են մարդկութեան իրենց պահանջները ու ցուցադրում իրանց կենսունակութիւնը.— պատմական այս մեծ օրերին է, որ հայ ժողովուրդը պէտք է գրաւի իրան պատկանող անկիւնը արեգակի տակ։

Ահռելի զոհաբերութիւններով, արեան ծովեր անցնելով ու մեր յետեւը անհամար դիակներ թողնելով՝ մենք փորձ արինք վերահաստատելու հայ անկախ պետութիւնը։ Յանդուգն էր այդ քայլը, թերեւս մեր ուժերից վեր։ Բայց պէտք է անէինք, որովհետեւ ժամը հասել էր ու չէր սպասի մեզ. կամ պէտք է ինքնահաստատուէինք, պետական պատնէշ կառուցանէինք մեր շուրջը ալեկոծուող համաշխար-

Հայրին մեծ կուլի մէջ, կամ ոտի տակ գնայինք, տրորուէինք, բնաջինջ լինէինք:

Պատմութիւնը իր ընթացքն ունի, որ մենք չենք կարող փոխել, կանգնեցնել կամ դանդաղեցնել ըստ մեր ցանկութեան: Պէտք է քայլենք հետը, ապա թէ ոչ նա մեր դիակների վրայով կ'անցնի առաջ:

Փորձ արինք մեր անկախ պետութիւնը հաստատելու: Անյաղթելի դժուարութիւնների հանդիպեցինք, բաղխուեցինք հակառակ ուժերի հետ, պարտուեցինք...

Պարտուեցինք, եւ այսօր մեր կարճատեւ անկախութիւնը վտանգուած է մեծապէս: Անունը մընում է դեռ, բայց հիմքերը քանդւում են, կառուցուածքը տատանւում, սպառնական ճեղքեր տալիս վերից վար:

Վերջացա՞ւ սրանով մեր դատն ու պայքարը: Սպառե՞լ ենք արդեօք բոլոր հնարաւորութիւնները, գործածե՞լ ենք բոլոր ուժերը ու— սնա՞նկ հանդիսացել... Կարո՞ղ ենք ասել, թէ այլեւս բան չունինք անելու, թէ մեր ինքնահաստատուելու տենչը ու կատարած փորձը մի գեղեցիկ ցնորք էր միայն, որ խորտակուեց անողոք իրականութեան բաղխելով, թէ քաղաքական անկախութիւնը մեր ուժերից վեր է եւ թէ մեզ մնում է միայն խոնարհուել ճակատագրի առաջ ու լռելեայն մեռնել...

Ո՛չ, պետութիւնները չեն կազմւում մի օրուայ մէջ ու ,մանաւանդ, չեն կազմւում հեշտօրէն:

Երեխաները միայն կարող էին երազել, թէ մի գեղեցիկ օր մեր պետութիւնը — կազմ ու պատրաստ, ծաղիկներով զարդարուած ու շաքարեղէնով համեմուած — կը դրուէր մեր առաջը ու մեր պահապան հրեշտակը կ'ասէր վերեւից․— Վայելեցէ՛ք

խաղաղութեամբ...

Կռուի ու տանջանքների մէջ են ծնւում ազատութիւնները: Մեր երկունքը եղաւ աւելի երկար ու աւելի ծանր, քան իրաւունք ունէինք սպասելու, թերեւս ա՛յնքան երկար ու այնքան ծանր, որ մեր ուժասպառ կազմը չկարողանայ դիմանալ:

Թերեւս: Բայց այսօր դեռ վաղաժամ է այդ յոռետեսութիւնը, ուրեմն եւ փոքրոգութիւն՝ զինադուլը:

Հայաստանի այսօրուայ կացութիւնը կարող է հասցնել քաղաքական մահի: Այդ սպառնալիքը կայ եւ շատ լուրջ է. բայց ո՛չ անխուսափելի, ո՛չ անյաղթելի: Այսօրուայ կացութիւնը ինքը կարող է դառնալ (դուցէ եւ է՛ արդէն) մի շատ կարեւոր աստիճան՝ հետեւեալ քայլը անելու համար...

Պայքարը շարունակւում է. շարունակւում է կազմակերպման պրոցէսը: Դատը դեռ չի կորցըրուած եւ աւելի քան երբեք պահանջում է ուժերի լարում:

Փրկել պետութիւնը, ամուր հիմքերի վրայ դընել ու կենսունակ դարձնել այն,— ահա մեր անելիքը: Սա պիտի լինի այսօրուայ մեր ամենամեծ հոգսը — միակ մեծ հոգսը:

Յաջողելու համար պէտք է կենտրոնացնենք այս մէկ կէտի վրայ մեր ամբողջ կարողութիւնը, ամբողջ ուշադրութիւնն ու ամբողջ աշխատանքը:

Յաջողելու համար պէտք է միացնենք մեր ուժերը այն բոլոր կենդանի ուժերին, որոնք պայքարում են — ինչ գոյնի եւ դրօշի տակ էլ լինի — նոյն նպատակի համար:

Ով մեզ հետ միասին կանգնած է այս ճամբու վրայ ու վճռականութիւն ունի մինչեւ վերջը գնա–

լու, նա իսկական Դաշնակցականն է, *ինչ անուն էլ կրելու լինի (բուրժուա թէ պրոլէտար, ընկերվարական թէ կղերական, ռամկավար թէ բոլշեւիկ), նա մեր բնական ու անբաժանելի դաշնակիցն է* :

Եւ թշնամի է նա — գիտակցօրէն թէ անգիտակցօրէն, կամայ թէ ակամայ, յանուն համաշխարհային յեղափոխութեան թէ համաշխարհային հակայեղափոխութեան, յանուն բուրժուայի թէ յանուն պրոլէտարի,— որ կտրում է մեր ճամբան, պատնէշներ կառուցանում ու խրամատներ փորում մեր գրոհի առջեւ :

ՅՈՎՀ. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ

(«Ճակատամարտ», 1922 թ. յունիս 4)

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Գրքի սկզբում ասուեց արդէն, որ Քաջազնունին իր զեկուցման կցել է նաեւ մի նամակ՝ գրուած ի պատասխան իմ նամակի :

Աւելորդ չեմ համարում ներկայացնել այստեղ Ե՛ւ իմ պատասխանը Քաջազնունու այդ նամակին : Իմ նամակն եւս «հիմնական մտքերի զարգացումն է, լրացումը եւ լուսաբանութիւնը» :

1923 թ. յուլ. 30
Ալլէնծ

Սիրելի Ռուբէն Իվանովի՛չ,

Մի ամսից աւելի է, որ ստացել եմ յունիս 17 նամակդ, բայց, հակառակ ցանկութեանս, պատասխանը այսքան ուշացաւ : Մի ժամանակ ես էի վատ զգում ինձ, յետոյ հիւանդապահութիւն էի անում... Այսպիսի պայմաններում անհրաժեշտ տրամադրութիւնը չէր լինում գրելու : Եւ եթէ այսօր էլ գրիչ եմ ձեռք առնում, բնաւ համոզուած չեմ, թէ պիտի կարողանամ քո այնպէս խնամուած ու բովանդակալից նամակին վայել պատասխան գրել :

Մեր նամակագրութեան հիմնական խնդիրների վերաբերմամբ մեր տեսակէտները այնքա՜ն են տարբերւում միմեանցից, որ չգիտեմ՝ ո՞ր ծայրից սկսեմ : Այսպէս, օրինակ, քեզ համար արդէն դարձել է անխախտ համոզում, որ «Դաշնակցութիւնը անցել է մի որոշ ճամբայ, բերել է իր կեանքի դատը մինչեւ մի որոշ կայան, որից դէնը ինքը այլեւս անզօր է *առաջնորդելու», որ նա «պէտք չէ այլեւս Հայաստանին», որ, Դաշնակցութիւն կազմակեր–*

պութիւնը դատապարտուած է մահուան (ըստ իս
մեռած արդէն)», որ «Հ. Յ. Դաշնակցութիւնը այլ-
եւս անզօր եւ անպէտք գործիք է» եւայլն եւայլն,
իսկ ինձ համար նոյնքան անխախտ համոզում է, որ
Դաշնակցութիւնը կենդանի է, կա՛յ, նրա գոյու-
թիւնը զգացւում եւ շօշափւում է հայ կեանքի բոլոր
երեւոյթների մէջ եւ դեռ հարկաւոր է հայ ժողո-
վըրդին:

Փաստե՞ր ես ուզում: Ահա գաղութները, որոնց
կեանքը մեր աչքի առջեւ է եւ որոնց մասին կարող
ենք դատել ոչ թէ «նշանաւոր օտարականների» տը-
պաւորութիւններով: Մեր գաղութների մէջ ազգա-
յին–հասարակական կեանքին ջիղ, գոյն ու բովան-
դակութիւն տուողը այսօր էլ Դաշնակցութիւնն է:
Դաշնակցական մամուլն է ամենատարածուածը եւ
ամէնից աւելի ազդեցիկը: Ընտրութիւնների ժամա-
նակ նախապատուութիւն է տրւում Դաշնակցական
թեկնածուներին: Դաշնակցութեան ներքին կազմա-
կերպութիւնը ոչ միայն չի խախտուել, այլ վերջերս
տեղի ունեցող շրջանային ժողովները ցոյց են տա-
լիս, որ կատարելապէս ամուր է: Նոյն իսկ գաղթա-
կանութեան մէջ, Յունաստանում ու Սիրիայում,
կազմակերպական եռանդուն աշխատանք է կատար-
ւում, եւ կենդանի տարրերը, մանաւանդ երիտա-
սարդութիւնը, նոր սերունդը սիրով մտնում է մեր
կուսակցութեան մէջ: Ես լաւ ծանօթ չեմ, ի՞նչ է
կատարւում Ռումանիայում, բայց Ամերիկայի, Ե-
գիպտոսի, Բուլղարիայի ու Սիրիայի մասին ունիմ
մանրամասն տեղեկութիւններ, որոնք հաստատում
են քո ասածի հակառակը:

Բայց գաղութների կազմակերպութեան ամուր
լինելը — կ՚ասես — նշան չէ, որ նա կենդանի է երկ-

րում: Համաձայն եմ, որ եթէ Դաշնակցութիւնը լի-
նի միայն գաղութային կազմակերպութիւն, եւ նրա
արմատները երկրում պիտի չորանան, աւելի լաւ է
վերացուի: Գաղութները կեանք եւ արժէք ունին
այնքան, որքան գոյութիւն ունի մայր երկիրը եւ
իր կենդանի հիւթով սնունդ է տալիս նրանց: Բայց,
բարեբախտաբար, երկրի վիճակն էլ այն չէ, ինչ որ
դու ես ենթադրում:

Մեր ստացած բոլոր տեղեկութիւնները ցոյց են
տալիս, որ ժողովրդի ընդհանուր համակրանքը
Դաշնակցութեան կողմն է, եւ, հակառակ խիստ հա-
լածանքների, երկրի բոլոր կողմերում կան կազմա-
կերպութիւններ: Նոր սերունդը — մի կողմ դրած
որբանոցները, նոյն իսկ պետական դպրոցներում—
սնւում է Դաշնակցական գաղափարներով... եւ ա-
կընյայտնի կերպով ընդդիմադիր է բոլշեւիկներին:
Այս ընդհանուր մտայնութեամբ է բացատրւում,
որ, ինչպէս ցոյց է տալիս բոլշեւիկների պաշտօնա-
կան վիճակագրութիւնը («Զարեա Վաստոկա», Թիւ
239), Հայաստանում միայն 1692 կոմունիստ կայ՝
ո՛չ միայն հայ: Դրանով է բացատրւում եւ այն հա-
կադաշնակցական դաժան քաղաքականութիւնը, ո-
րին հետեւում են բոլշեւիկները: Ի հարկէ, այդ քա-
ղաքականութեան հետեւանքով մեր կազմակերպու-
թիւնը երկրում սեղմուել է, փոքրացել ծաւալով,
բայց այդ չի նշանակում, որ նրա պոտենցիան սպա-
ռել է: Ընդհակառակը, դրանով աւելացել է նրա ա-
ռաձգականութիւնը եւ եթէ հնարաւորութիւններ
տրուեն ազատ արտայայտուելու, կասկած չկայ,
նա շատ շուտով նորից կը ստանայ իր լայն զանգ-
ուածային կազմակերպութեան բնոյթը:

Քեզ համար «կուսակցութիւն չկայ այլեւս —

կան բեկորներ», մինչդեռ իրականութիւնը ցոյց է տալիս, որ կուսակցութիւնը ապրում է, պահում է իր կազմակերպութիւնն ու ժողովրդականութիւնը: Դու այդ փաստին մի պատասխան ունիս միայն. «Ես չեմ հաւատում քո ունեցած տեղեկութիւններին»... Է՛հ, բանը որ հաւատի մնաց, ի հարկէ, դժուար է ապացուցանել հակառակը, բայց իրականութիւնը հաւատով չի կարելի հերքել: Դու կարող ես իմ ասածին չհաւատալ — այն դէպքում պարտական ես հակառակ փաստեր բերել եւ ոչ թէ բաւականանալ միայն վերացական խորհրդածութիւններով ու սխոլաստիկ բնոյթ կրող բանավարութիւններով, ե՛ւս առաւել չսահմանափակուել սոսկ քո ունեցած նախկին կուսակցական տեղեկութիւններով ու տպաւորութիւններով, քանի որ հէնց ինքդ էլ վկայում ես, որ երբեք չես եղել իսկական մտքով կուսակցական մարդ, այսինքն՝ չես ապրել կուսակցութեան ներքին կեանքով ու տեղեակ չես եղել նրա վիճակին: Կուսակցութեան մեռած լինելու ապացոյց չեն եւ մի շարք հիւանդագին երեւոյթները ընկերական փոխ-յարաբերութիւնների մէջ — նրանք արդիւնք են անցողական պատճառների — ո՛չ էլ Ընդհանուր Ժողովի չգումարուիլը, քանի որ դու շատ լաւ գիտես, որ Ընդհանուր Ժողովը չգումարուեց ոչ ներքին, այլ արտաքին արգելքների հետեւանքով: Այդպիսի մոմենտներ անցեալում էլ պատահել են մեր կուսակցական կեանքում:

Բայց — ասում ես — կուսակցութիւնը մեռել է ո՛չ թէ միայն իբրեւ ֆիզիքական մարմին, այլեւ գաղափարապէս: Ապացոյց դրան Խորհրդաժողովի բանաձեւը՝ «զուրկ շիտակութիւնից եւ տղամարդութիւնից»: Ինչո՞վ է այդ բանաձեւը անշիտակ ու

տղամարդութիւնից զուրկ: Նրանով, որ տապանաքար չի՞ դրել Դաշնակցութեան վրայ: Խորհրդաժողովը՝ հաշուի առնելով ստեղծուած առարկայական պայմանները, որոնք իր համոզումով ժամանակաւոր են, հրահանգում է սպասողական դիրք բռնել, սպասել ընդհանուր հանգամանքների պարզուելուն՝ նըւիրուելով գլխաւորապէս ներքին աշխատանքների: Այս քաղաքականութիւնը կարելի է անուանել պատեհապաշտ, ո՛չ-յեղափոխական, բայց «զուրկ շիտակութիւնից եւ տղամարդութիւնից» անուանել չի կարելի: Խորհրդաժողովի բանաձեւի մէջ ներքին կեղծիք չկայ. կայ համակերպում արտաքին պայմանների, որոնք համարւում են ժամանակաւոր: Եւ առողջ ու կենդանի կուսակցութեան պարտականութիւնն է հէնց այդ — գիտենալ, թէ երբ պէտք է զէնք շարժել եւ երբ զէնքը պատեանը դնել: Խորհրդաժողովի բանաձեւը բնորոշում է մի հանգըրուան մեր կեանքում, ի հարկէ, շատ անախորժ, բայց լոկ հանգրուան եւ ո՛չ աւելի:

Բայց ինչո՞ւ է քեզ Դաշնակցութիւնը թւում մեռած:

Նրա համար, որ հիմք ընդունելով այդ փաստը՝ կազմես քո բանավարութիւնը, — Դաշնակցութիւնը մեռաւ, կեցցէ՛ Դաշնակցութիւնը, այսինքն՝ կեցցեն բոլշեւիկները, որոնք Դաշնակցութեան ժառանգն են. Դաշնակցութիւնը «պէտք է վերանայ ասպարէզից եւ իր տեղը տայ հայ բոլշեւիկներին». «հայ բոլշեւիկները Դաշնակցականներ են. միակ Դաշնակցականները այսօր». «այսօր Հայաստանի ներկան ու ապագան ապահովուած է շատ աւելի, քան 1920 թ. նոյեմբերին»: «Ես չեմ ճանաչում հայ բոլշեւիկներին... սրտիս խորքում մի յամառ հա-

ւատ ունիմ, որ նրանք էլ ինձ պէս ու իմ չափ հայ մարդիկ են»:

Էլի՛ հաւատ... Ինչի՞ վրայ է հիմնուած այդ հաւատը, եւ արդեօք դա նոյն այն հաւատը չէ՞, որ ունէինք ամէնքս, երբ 1920 թ. դեկտ. 2-ին իշխանութիւնը յանձնում էինք բոլշեւիկներին: Այն ժամանակ էլ մտածում էինք, թէ բոլշեւիկները մեզ պէս մարդիկ են, թէ Հայաստանի կուլտուրական ու տնտեսական ներկայ յետամնաց պայմաններում նրանք էլ նոյնը պիտի անեն, ինչ որ մենք.— պիտի պաշտպանեն Հայաստանի սահմանները, պիտի տան երկրին խաղաղութիւն եւն. եւն.— յիշում ես, թէ ինչ էինք մտածում մենք: Արդիւնքը, սակայն, ի՞նչ եղաւ: Եւ ի՞նչ երաշխաւորութիւն ունիս, թէ «Մեասնիկեանի ու Լուկաշինի կառավարութիւնը» վաղը, երբ հրամայեն ի վերուստ, չի անի այն, ինչ որ Կասեանի կառավարութիւնը արաւ: Արդեօք բոլշեւիկների գաղափարաբանութի՞ւնն է փոխուած. արդեօք նրանք պրոլէտարական տիկտատուրայի՞ց ու համաշխարհային յեղափոխութի՞ւնից են հրաժարուել: Այն, որ նրանք այսօր վերջ են տուել պատերազմին, «լուծել» են սահմանների հարցը, ապահովել հաղորդակցութեան միջոցները եւ աշխատելու պայմանները, դեռ ոչինչ չի նշանակում: Այդպէս է նրանց այսօրուայ ընդհանուր կուրսը — խաղաղութիւն եւ ուժերի հաւաքում նոր դրոհի պատրաստուելու համար: Ե՞րբ պիտի հնչէ նոր դրոհի ահազանգը, ոչ ո՛ք գիտէ, բայց ո՛չ մի երաշխաւորութիւն չկայ, որ այսօրուայ դրութիւնը տեւական է լինելու:

Ոչինչ չի նշանակում եւ այն, որ բոլշեւիկները ճառում են անկախութեան մասին: Մեր աչքի առջեւ

է նրանց էվօլիւցիան այդ խնդրում, եւ այսօր միայն ներողամիտ ժպտով կարելի է խօսել զանազան Ռ. Ս. Ֆ. Ս. Ռ.-երի եւ Ս. Ս. Ս. Ռ.-երի սահմանադրութեան մասին: Անկախութիւնն ու ինքնավարութիւնը արտասահմանի համար յատկացուած ցուցանակներ են միայն, իսկ իրականին մէջ քաղաքական, վարչական ու տնտեսական բոլոր իրաւունքները կենտրոնացած են կոմունիստական կուսակցութեան ձեռքի մէջ՝ Մոսկուայում: Քեզ մխիթարում է, որ «Մեասնիկեանի ու Լուկաշինի կառավարութիւնը մի քիչ աւելի է, քան... գէմստուօյական հաստատութիւնները»: Ինձ այդ չի մխիթարում. ես իսկապէս չեմ իմանում, թէ ի՞նչ է ներկայացնում իրենից այդ կառավարութիւնը անկախութեան տեսակէտից եւ եթէ, իրօք, նա այսօր աւելի է, քան մի գէմստուօ, ո՛չ մի տուեալ չունիմ պնդելու, որ վաղն էլ այդպէս կը մնայ:

Ինձ առանձին ոգեւորութիւն չի պատճառում եւ բոլշեւիկների, այսպէս կոչուած, շինարարութիւնը. ճուտերը աշնան են հաշւում, եւ դեռ վաղաժամ է այդ մասին եզրակացութիւններ հանելու: Երեւի ինձ պէս է մտածում եւ Հայաստանի ժողովուրդը, որ գայլի աչքով է նայում բոլշեւիկներին:

Դու ասում ես, որ մենք բոլշեւիկների կատարած քիչն էլ չկարողացանք անել: Ինչո՞ւ: Որովհետեւ նոյն այդ բոլշեւիկները 1920 թ. մայիսից սկսած բլոկատայի ենթարկեցին մեր երկիրը, կտրեցին մեզ նաւթից ու հացից եւ քիչ յետոյ էլ բոլորովին խորտակեցին: Այդ խորտակումը մեր բարոյական ու մտաւոր տկարութեան եւ բոլշեւիկների զօրութեան ապացոյց չէ բնաւ: Ո՛չ էլ դրանով նրանք մեր երկիրը փրկեցին կորստից:

Դու հակառակ համոզումն ունիս. «այն օրհասական ժամին, երբ մենք սպառել էինք արդէն մեր վերջին ուժերը, բոլշեւիկները ասպարէզ եկան, խորտակեցին մեզ, բայց երկրին պաշտպան կանգնեցին»... Մինչդեռ նոյն այդ «օրհասական ժամը», 1920 թ. նոյեմբերի աղէտը հէնց բոլշեւիկների ձեռքի գործն էր: Նրանք Հայաստանն ու հայ ժողովուրդը զոհ բերին իրենց ցնորամիտ ծրագիրներին, իսկ մենք հիմա երախտագիտութիւն ենք յայտնում նրանց, որ մեզ բոլորովին չոչնչացրին ու ինչ որ մի բան էլ թողին կանգուն: Սա էլ տեսակէտ է, ի հարկէ: Բոլշեւիկները ո՛չ միայն չփրկեցին Հայաստանը, այլ պատճառ դարձան հայ ժողովրդի մեծագոյն դժբախտութեան՝ մահացու հարուած հասցնելով Հայաստանի անկախութեան եւ հայկական խնդրին: Եւ ես ուղղակի ապշում եմ, ինչպէ՞ս կարող ես դու հայ բոլշեւիկների վարմունքը գովել եւ անուանել «պաշտպանութիւն երկրի»: Ինչպէ՞ս դու մոռանում ես այն զզուելի ոճիրը, որով հայ բոլշեւիկները արգելք եղան հաշտութեան եւ բարեկամութեան դաշնագրի ստորագրութեանը՝ Չիչէրինի ու Շանթի միջեւ Մոսկուայում: Ինչպէ՞ս մոռացութեան ես տալիս մայիսեան ապստամբութիւնը, որն իսկապէս սպառեց մեր ժողովրդի ուժերը, բոլշեւիկների սադրանքները Ղարաբաղի ու Զանգեզուրի վերաբերմամբ, Քէմալին ոսկի ու զէնք մատակարարելը հէնց Հայաստանի դէմ: Եւ մեզ համարում ես անկարող, իսկ բոլշեւիկներին՝ ժողովրդի փրկիչներ, փոխանակ նրանց երեսին շպրտելու «ազգային դաւաճան» խօսքը...

Այո՛, բոլշեւիկները ստեղծեցին մի դրութիւն, որով Հայաստանը կապուեց Խորհրդ. Ռուսաստանի

հետ: Մենք գոհ չենք այդ դրութիւնից, բայց համակերպւում ենք: Եւ համաձայն եմ քեզ հետ, որ «այն օրը, երբ ռուսը գնայ Կովկասից, Հայաստանը կը վտանգուի մեծապէս»: Եւ բոլորովին չեմ ձգտում, որ Մոսկուային փոխարինէ Անգորան: Եւ հէնց դրա համար է, որ Դաշնակցութիւնը այսօր ո՛չ միայն չի կռւում բոլշեւիկների դէմ, այլ եւ օգնում է նրանց այն ձեռնարկներին, որոնք, իր հասկացողութեամբ, օգտակար են Հայաստանին ու հայ ժողովրդին: Որոշ վերապահութեամբ, մի պահ ընդունինք նաեւ, որ բոլշեւիկները «ստեղծուած պայմանների մէջ կարող են շարունակել մեր գործը»*): Բայց ի՞նչ երաշխաւորութիւն, որ Խորհրդ. Ռուսաստանը երկար կեանք ունի կամ Խորհրդ. Ռուսաստանի ներկայ քաղաքականութիւնը տեւական է, որպէսզի հայ բոլշեւիկների «օգտակար» դերն էլ տեւական լինի: Հապա եթէ կրկնուի 1918–ի պատմութիւնը. ու մենք մեզի երես առ երես մնանք մեր հարեւանների ու Թուրքերի հե՞տ: Դու հաւատում ես, որ այս դրութիւնը տեւական է: Ես այդ հաւատը չունիմ: Աւելին — ես հակառակ հաւատն ունիմ: Եթէ ճիշտ դուրս գայ իմ հաւատը, հայ բոլշեւիկների ազդեցութիւնը զրօի կը հաւասարուի: Եւ քանի որ այդ հնարաւորութիւնը չի հերքւում, որքա՞ն խելացի բան է ցանկանալ ամբողջ հայ ժողովրդի քաղաքականութիւնը կապել միայն Խորհրդ. Ռուսաստանի ու բոլշեւիկների հետ. արդեօք սա նոյն ճակատագրական սխալը չէ՞, որ մենք արինք 1914–ին:

Դու ասում ես, որ բոլշեւիկները արդէն իսկ

---

*) «Որոշ պայմանների» մէջ ցարիզմն էլ կարող էր շարունակել մեր գործը:

համաձայնութիւն ստեղծել են մեր հարեւանների հետ, մինչդեռ Դաշնակցութեան անցեալում չյաջողուեց եւ ապագայում էլ չի յաջողուի: Ամէնքին յայտնի է արժէքը այն «համաձայնութեան», որ բոլշեւիկներին յաջողուել է ստեղծել Կովկասում: Կովկասն այսօր էլ բուռն հնոց է ազգային հակամարտութիւնների, որոնք զսպուած են ռուսական ուժով: Ենթադրենք մի պահ, որ ռուսները հեռացան Կովկասից — չեմ ասում, որ անպատճառ կը հեռանան — ի՞նչ կը լինի այդ «համաձայնութեան» վիճակը: Ասել, թէ որովհետեւ անցեալում Դաշնակցութեան չի յաջողուել համաձայնութեան գալ հարեւանների հետ, ապագայում էլ չի յաջողուի, հազիւ թէ լինի ճիշտ: Կովկասի բոլոր ժողովուրդներն էլ փորձառութեան որոշ բովով անցել են, ինչպէս եւ Դաշնակցութիւնը:

Նմանապէս եւ թրքական խնդրում: Որ Թուրքերը, առհասարակ, հաշտ աչքով չեն նայում հայերին, յայտնի է: Բայց այն պահուն, որ Թուրքերը իրենց յարաբերութիւնները խզեն ռուսների հետ, արդեօ՞ք աւելի տրամադիր չեն լինի Դաշնակցականների հետ գործ ունենալու: Թուրքերի — եւ ո՛չ միայն Թուրքերի — աչքին հայ բոլշեւիկները նոյն ռուսներն են, Ռուսաստանի գործակալները արեւելքում, մինչդեռ Դաշնակցականները, իբրեւ անկախութեան ձգտող, հակառուսական ոյժ են: Ի հարկէ, Թուրքերի եւ Դաշնակցականների միջեւ վիհը շատ խորն է եւ, անշուշտ, ուրիշ՝ նոր ոյժ աւելի յարմար կը լինէր այդ դերի համար, բայց այդպիսի ոյժ գոյութիւն չունի: Դու ասում ես. երբ պէտք լինի, նոր մարդիկ ու նոր կուսակցութիւններ առաջ կը գան: Նոր կուսակցութիւնները արհեստական կեր-

պով չեն ստեղծւում. նրանք առաջ են գալիս կեանքի ընթացքում: Եթէ հայ կեանքը ասպարէզ հանի Դաշնակցութեան փոխարինող նոր ոյժ — օրհնեա՛լ լինի նրա կամքը: Բայց այդպիսի նշաններ ես գոնէ դեռ չեմ տեսնում: Առ այժմ Դաշնակցութիւնն է հայ կեանքի ամենամեծ քաղաքական կազմակերպութիւնը, եւ քանի հայ ժողովուրդը նրան է վստահում, զանգուածօրէն նրան է փարած, նշանակում է նրա գաղափարները դեռ տեղ ունին մեր իրականութեան մէջ ու կենդանի են: Բոլշեւիկները բռնի ուժով փակել են նրա բերանն ու կապել ձեռքերը, բայց չեն մեռցրել հոգին:

Այս բոլորից յետոյ ես աւելորդ եմ համարում երկար կանգ առնել քո այն խօսքի վրայ, թէ հայ բոլշեւիկները Դաշնակցութեան ժառանգն են: Այդ ճիշտ չէ: Հայ բոլշեւիկները մեր կեանքում դրսից բերուած տարր են եւ չեն բղխել հայ իրականութիւնից, իբրեւ նրա օրգանական մասը: Հէնց որ ռուսական խորհրդային ռէժիմն ընկնի, նրանք էլ կը գոլորշիանան: Համարել նրանց Դաշնակցութեան ժառանգ — գեղեցիկ, բայց անբովանդակ խօսք է միայն: Դաշնակցութեան ժառանգութիւնը բաժանելու ժամանակը չի հասել դեռ:

Դու գտնում ես, որ Դաշնակցութիւնը չի կարող ապրել մեր նոր պայմաններում. «մի՛ կարծեր, թէ մենք, իբրեւ կուսակցութիւն կարող ենք յարմարուել նոր պայմաններին»: Ինչո՞ւ չենք կարող: Որ մենք Սասնոյ լեռներից Արարատեան դա՞շտն ենք իջել, բայց չէ՞ որ բոլշեւիկներն էլ «լեռներից», «դաշտ» են իջել եւ այն ի՞նչ «լեռներից» ի՛նչ «դաշտ»: Եւ դեռ շարունակում են իջնել: Ինչո՞ւ նրանք կարող են յարմարուել նոր պայմաններին,

իւրացնել նոր մեթոդներ եւ օգտակար լինել հայ կեանքի համար, իսկ մենք չենք կարող: Ինչո՞ւ նրանք կարող են ազատագրուել իրենց անցեալից եւ դառնալ շինարար ոյժ, իսկ մենք չենք կարող: Երկուս ու կէս տարուայ փո՞րձը... Բայց, սիրելի Ռուբէն Իվանովիչ, դու ինքդ էլ շատ լաւ գիտես, որ այդ փորձը ոչինչ չի ապացուցանում: Երկու եւ կէս տարուայ մեր գործունէութեան ընթացքում մենք ամբողջապէս կախուած ենք եղել արտաքին պայմաններից եւ հնարաւորութիւն չենք ունեցել մեր անհատականութիւնը երեւան բերելու: Այդ արտաքին պայմանները մեր կամքից դուրս են եղել: Մի՞թէ, իրօք, դու հաւատացած ես, որ մենք, իսկապէս, անձեռնհաս ու ողորմելի մարդիկ ենք — մենք, այսինքն հայ մտաւորականութեան ութսուն տոկոսը, եթէ ո՛չ աւելին: Երեսուն տարուայ կուսակցական անցեալը, այո՛, դրել է մեր վրայ իր դրոշմը — հաստատել է ուրոյն սովորութիւններ ու հակումներ, բայց չպէտք է մոռանաս, որ ամէն ժամանակ իր սերունդն է արտադրում, եւ Դաշնակցութեան այսօրուայ սերունդը այն չէ, ինչ որ էր երէկ, եւ երէկուանը այն չէր, որ էր 30 տարի առաջ: «Վոշիկն» ու «տասնոցը» տեղի կը տան ինքնաշարժի ու գնդացիրի առջեւ: Ասել, թէ այսօրուայ Դաշնակցականն էլ անպատճառ պէտք է «վոշիկով» պտտի ու կապուած մնայ «տասնոցին», նշանակում է մեղանչել կեանքի օրէնքների դէմ եւ ժխտել բարեշրջումի գաղափարը: «Վոշիկն» ու «տասնոցը» Դաշնակցութեան էական յատկանիշը չեն կազմում. նրանք բնորոշում են միայն Դաշնակցութեան կեանքի մի որոշ շրջան:

«Ամէնից գլխաւորն այն է, որ այսօր մենք գործ

ունինք Խորհրդ. Ռուսաստանի հետ — ռուս ամենամեծ ու վճռական ոյժն է մեր հանդէպ կամ մեր շուրջը»: Շատ բարի. ասենք թէ, իրօք, այսօր Խորհրդային Ռուսաստանի հետ մենք չենք կարող ընդհանուր լեզու ունենալ ու այդ դերը աւելի լաւ կարող են կատարել հայ բոլշեւիկները, բայց ես արդէն հարցի վերեւում՝ ի՞նչ երաշխիք, որ վաղը Խորհրդային Ռուսաստանի տեղ չպիտի լինի մի ուրիշ Ռուսաստան, որի հետ հայ բոլշեւիկները չեն ունենայ ընդհանուր լեզու, եւ, ընդհակառակը, մենք աւելի յարմարութիւններ կ՚ունենանք այդ տեսակէտից: Եւ մի՞թէ կարելի է մահուան դատավճիռ արձակել մի կուսակցութեան նկատմամբ միայն նրա համար, որ այսօր, շնորհիւ արհեստական ու անցողական պայմանների, չունի քաղաքական գործունէութեան անմիջական ասպարէզ: Շատ աւելի ծանրակշիռ կը լինէր, եթէ դու ապացուցանէիր, որ հայ իրականութեան մէջ այսօր բոլշեւիկներից զատ ուրիշ ո՛չ մի կուսակցութիւն ո՛չ մի դեր չունի, բայց չեմ կարծում, որ այդպիսի բան կարողանաս ապացուցանել: Դու էլ ընդունում ես, որ քաղաքական շերտաւորումը անհրաժեշտ է, ուրեմն դէմ չես եւ ոչ-բոլշեւիկ — որ անխուսափելի կերպով պիտի դառնայ հակաբոլշեւիկ — կազմակերպութեան կամ կազմակերպութիւնների գոյութեան: Եթէ այդ բանը ընդունում ես, քո մերժումը Դաշնակցութեան դառնում է իրական տուեալներով չհիմնաւորուած ու խիստ ենթակայական:

Այո՛, ենթակայական: Վատ մտքով չեմ ասում այս: Դու չափազանց շատ ես դառնացած մեր «երկուս ու կէս տարուայ անցեալից» եւ դրանից մեկնելով՝ եզրակացնում ես, որ, առհասարակ, մենք ան-

պէտք ենք իբրեւ պետական տարր։ Մինչդեռ մեր այդ երկուս ու կէս տարուայ վաղանցուկ կեանքի մէջ էլ — եթէ առարկայօրէն նայենք — կան շատ լուսաւոր կէտեր, որոնք բաւարար դրաւական են արդիւնաւոր ապագայի։ Մենք — հայ մտաւորականութիւնը — յանցաւոր չէինք, անշուշտ, որ պետական դաստիարակութիւն չէինք ստացել։ «Վուշիկն» ու «տասնոցն» էլ մեղաւոր չեն, որ ինժէնէր Քաջազնունին ստիպուած էր դառնալ նախարարապետ, լըրագրող Վրացեանը վարել երկրի դիւանագիտութեան գործը կամ քիմիկոս Արարատեանը՝ ստեղծել պետական ֆինանսներ։ Հայ կեանքը այդքանն էր տուել։ Դաշնակցութեան տեղը եթէ ուրիշը լինէր, աւելի կամ պակաս չափով նման մարդիկ պիտի դընէր գործի գլուխ։ Եւ նոյնը չե՞ն անում այսօր բոլշեւիկները — աւելի դուեհիկ ձեւերով։ Էականը այդ չէ․ էականը այն է, թէ այդ մարդկանց գործունէութեան մէջ պետական առողջ սաղմ կա՞ր, յառաջդիմութիւն նկատւում էր։ Ըստ իս — այո՛, անպայման։ Իր բոլոր աչք ծակող թերութիւններով ու սըխալներով հանդերձ, «մեր երկուս ու կէս տարուայ անցեալը» դրական, յուսատու երեւոյթ է եւ ապացուցանում է, որ մենք կարող կը լինէինք պետութիւն ստեղծել, եթէ մեզ հանգիստ թողնէին... Հէնց նոյն բոլշեւիկները։

Անձնական ու կուսակցական կիրքը չէ, որ խօսում է իմ մէջ․ ամէն անաչառ դիտող նոյնը կը հաստատէ։ Հէնց մեր մոլորութիւններից մէկն էլ այդ է․— մենք անպատճառ վատ ենք, ուրիշը՝ անպատճառ լաւ։ Մեզ խարազանում ենք անխնայ, ուրիշին՝ նայում ներողամիտ ժպտով։ Մեր մեղքը չափում ենք փթերով, ուրիշինը՝ շատ անգամ չենք էլ

նկատում։ Այդ ինքնախարազանման մէջ, կարծես, ինչ որ հաճոյք ենք ստանում։ Այդ տեսակէտից քո յօդուածաշարքն էլ «Ճակատամարտ»ի մէջ անթերի չէր․ դու այնտեղ շատ մռայլ, չափազանցուած խօսքերով ես արտայայտւում մեր պակասութիւնների ու սխալների մասին եւ շատ համեստ ես, երբ պէտք է արժէքաւորել մեր դրական կողմը։ Հասկնալի է, որ այդ յօդուածաշարքը առատ նիւթ պիտի տար հակադաշնակցականներին, թէեւ այնտեղ քո տեսակէտը Դաշնակցութեան մասին անհամեմատ աւելի դրական էր, քան Խորհրդաժողովին ուղարկած զեկուցումիդ մէջ։ Այնտեղ դու ընդունում էիր, որ, լաւ-վատ, էլի Դաշնակցութիւնն է մեր կեանքում միակ կենդանի կուսակցութիւնը, այժմ արդէն այդ Դաշնակցութիւնը մեռած է...

Գրութիւնս շատ երկարեց, բայց նամակիդ մէջ յարուցուած հարցերի մեծ մասը դեռ մնում է չշօշափուած։ Այդ հարցերը շատ հետաքրքրական են ու կենսական, բայց, դժբախտաբար, հնար չկայ բոլորի մասին խօսելու․ պէտք կը լինէր առնուազն մի քանի անգամ երկարացնել նամակս։ Սակայն, վերջացնելուց առաջ անհրաժեշտ եմ համարում կանգ առնել նաեւ հետեւեալ կէտերի վրայ։

Դու դառնացած դատապարտում ես Խորհրդաժողովը, որ չի զբաղուել քո զեկուցման քննութեամբ եւ խօսք չես խնայում այդ դատապարտութեան համար․ «Ժողովի անդամները տարուել են կուսակցական նեղսրտութիւնով ու նեղմտութիւնով», իսկ ինքդ «ազատ ես այդ կարգի թուլութիւնից»։ Աւելին դեռ․ «Հռովմը ինձ համար շատ աւելի թանգ է, քան Կեսարը», իսկ մենք՝ ժողովի անդամներս, Հռովմը զոհել ենք Կեսարին։ Մենք կուսակցական

գործունէութիւնը դարձրել ենք «փէշակ» եւ անընդունակ ենք ընդհանուր, ժողովրդական գործը տարբերել կուսակցականից եւ առաջինը ստորադասում ենք երկրորդին: Նոյնիսկ անձնական վիճակի հարց էլ ես յարուցանում — «Հապա մենք ի՞նչ անենք»— մենք՝ «վերջին հաշուով՝ մի քանի տասնեակ, առ առաւելն՝ մի քանի հարիւրեակ մարդ»: Այսինքն, պարզ ասած՝ մենք, առ առաւելն մի քանի հարիւր մարդս, Դաշնակցական լինելը դարձրել ենք արհեստ եւ մեր գոյութիւնը պահելու նպատակով՝ ամուր կառչել ենք ու պոկ չենք գալիս Դաշնակցութեան դիակից...

Հին երգ է այս: Դեռ Լեւոն Աթաբէգեանը 1907ին եւ նրանից առաջ ուրիշներն էին երգում այդ երգը: Հիմա էլ բոլշեւիկներն ու ռամկավարներն են կրկնում... Ի հարկէ, դու այդպէս գռեհիկ իմաստով չես մտածում եւ մեր գոյութեան խնդիրը, երեւի, չես նիւթականացնում, բայց դրանից էութիւնը չի փոխւում.— մենք պահում ենք Դաշնակցութիւնը անձնական նկատումներով:

Ո՛չ, սիրելի Ռուբէն Իվանովիչ, դու սխալւում ես չարաչար: Հռովմի ու Կեսարի պատմութիւնը մենք էլ գիտենք: Ենթադրել, թէ ինչ որ եսական ու շահամոլ հաշիւների վրայ է հիմնուած Դաշնակցութեան գործիչների այսօրուայ ընթացքը՝ նշանակում է շատ վատ, չափազանց վիրաւորական կարծիք ունենալ այդ մարդկանց մասին: Ի՞նչ է տուել ու տալիս Դաշնակցութիւնը իր գործիչներին անձնական տեսակէտից: Բացի բարոյական ու նիւթական զըրկանքից, անվերջ նեղութիւններից ու վաղաժամ ծերութիւնից ի՞նչ ենք տեսել մենք... Երբե՛ք կուսակցութիւնը ինձ — եւ անշուշտ շատերի համար—

չի եղել փէշակ կամ ինքնանպատակ: Կուսակցութիւնը մի գործիք է միայն հայ ժողովրդի երջանկութիւնն ապահովելու համար, եւ հասկացողութեան հարց է, թէ այդ գործիքը տակաւին ընդունա՞կ է կատարելու իր դերը, թէ այլեւս անպէտք է: Մենք կարծում ենք՝ ընդունակ է: Դու պնդում ես հակառակը: Ի՞նչ գործ ունի այստեղ «փէշակը» կամ «մենք ի՞նչ անենք»-ը...

Այո՛, մեր վերաբերումը դէպի կուսակցութիւնը մի քիչ այլ է, քան քոնը — մի քիչ աւելի ջերմ ու սրտացաւ, աւելի ինտիմ — բայց այդ բնական է, որովհետեւ մենք նրա հետ կապուած ենք օրգանապէս, իսկ քո կապակցութիւնը կուսակցութեան հետ, եթէ կարելի է այսպէս ասել, մեքենայական է: Բայց դրանից չի հետեւում բնաւ այն, ինչ որ դու ես ասում:

Իսկ ինչո՞ւ Խորհրդաժողովը չի քննել քո զեկուցումը: Խորհրդաժողովում չկար ո՛չ մի մարդ, որ համամիտ լինէր քո թէզերին: Գուցէ նրանք սըխալւում էին. գուցէ, իրօք, դու աւելի ճիշտ էիր տեսնում իրականութիւնը: Գուցէ՛: Բայց Խորհըրդաժողովի համար Դաշնակցութեան գոյութիւնն ու անհրաժեշտութիւնը կասկածի, ուրեմն եւ քննութեան նիւթ չէր: Էլ չեմ խօսում այն մասին, որ օրակարգի մէջ էլ չկար այդ հարցը, ո՛չ էլ նրա իրաւասութեան սահմանի մէջ էր մտնում նա: Այլ բան է, եթէ դու ինքդ ներկայ լինէիր կամ ժողովականներից գոնէ մէկը համամիտ լինէր քեզ հետ եւ հիմնաւորէր ու պնդէր հարցի քննութեան վրայ, բայց համաձայնուիր, որ տուեալ պայմաններում, երբ ոչ ոք կողմնակից չէր քո մտքերին, ժողովի համար զուր ժամավաճառութիւն պիտի լինէր նրանով զբաղուե-

լը։ Եթէ քեզ համար այդ խնդիրը այդքա՞ն կենսա-
կան էր, դու պարտական էիր ամէն զոհողութիւն
յանձն առնել, ներկայ գտնուել ժողովին եւ պաշտ-
պանել քո հայեացքները։

Սխալ եզրակացութիւններ ես հանել եւ իմ այդ
դիտողութեան առթիւ, թէ՝ «ես կ'ուզէի, որ զեկու-
ցումդ շուտ մոռացուէր»... Թերեւս ես պարզ չեմ
արտայայտուել։ Ես կ'ուզէի, որ զեկուցումդ կա-
տարուած չլինէր ո'չ թէ նրա համար, որ քո ասած-
ները «ad hominem չարժառիթների արդիւնք են
կամ հիւանդ ուղեղի զառանցանք», ո'չ էլ այն պատ-
ճառով, որ մենք «վախկոտներ» ենք ու «ջայլամներ»
կամ «խիստ ցենզուրայի տակ ենք առնում մտքերը,
կողպէքներ ենք դնում բերանների վրայ, թաքցնում
ենք ասուած խօսքերը, որովհետեւ վստահութիւն
չունինք մեր վրայ։ Վախն ու կասկածը բոյն են դրել
մեր իսկ սրտերի մէջ»... Սա կոչւում է՝ «ղուր տե-
ղը մեծ աղմուկ». ես ո'չ ցէնզուրայի մասին եմ մը-
տածել, ո'չ էլ կողպէքների, սարսափելու էլ բնաւ
պատճառ չեմ տեսնում։ Եւ խորհրդաժողովի ան-
դամների մասին շատ աւելի բարձր կարծիք ունիմ
եւ ամենեւին չէի վախենում, որ քո զեկուցման քըն-
նութիւնը ինչ որ ահաբեկիչ կամ քայքայիչ ազդե-
ցութիւն պիտի ունենար։ Դաշնակցութիւնը այդ-
պիսի ահաւոր դատավճիռներ շատ է տեսել, բայց
եւ այնպէս մնացել է կայուն։ Նոյնը կը լինի եւ այ-
ժըմ. կարող ես հաստատ համոզուած լինել։

Բայց ես վախենում էի եւ այժմ, քո վերջին նա-
մակից յետոյ, աւելի եմ վախենում այն հետեւանք-
ներից, որ քո զեկուցումը կարող էր եւ կարող է ու-
նենալ անձնապէս քեզ համար, որովհետեւ եթէ քո
զեկուցումից ուզենանք տրամաբանական եզրակա-

ցութիւններ հանել, դու, բնականաբար, չես կա-
մենայ քո կենդանի մարմինը կապել մի դիակի հետ
(«Դաշնակցութիւնը արդէն իսկ մեռած է»)։ Եթէ
այս եզրակացութիւնը ճիշտ է, ապա եւ անխուսա-
փելի են դրանից բղխող բոլոր հետեւանքները —
հետեւանքներ, որոնց պատկերը մեր կեանքում,
մեր բարքերը ի նկատի ունենալով, իմ աչքին ներ-
կայանում է շատ մռայլ գոյներով։

Եւ դու արդէն որոշել ես. «Հակառակ խորհրդ-
դաժողովի բռնած դիրքի լսելի կ'անեմ իմ ձայնը».
«յամառութիւն մի համարէք, որ այսօր ես ըմբոս-
տանում եմ ձեր դէմ»։ Խորհրդաժողովը, սիրելի
Ռուբէն Իվանօվիչ, քո զեկուցման մասին ո'չ մի ո-
րոշում չի արել, ո'չ ընդունել է, ո'չ մերժել, ուրեմն
եւ խօսք չի կարող լինել «ցէնզուրայի» ու «կողպէք-
ների» մասին, որոնց դէմ դու պէտք ես զգում ըմ-
բոստանալու եւ քո ձայնը լսելի անելու։ Ըմբոստա-
նալ կարելի է մի հակադիր, բռնացող ուժի դէմ —
ո'չ խորհրդաժողովը, ո'չ էլ որեւէ Դաշնակցական
որեւէ փորձ է արել քո բերանը գոցելու։ Եղել են
մարդիկ, որոնք ad hominem մօտիւնե՞ր են
փնտռել. ամէն բերան չի փակուի։ Դրանք, սակայն,
հատիկներ են, իսկ Դաշնակցական անհատների
99%-ի դէպի քեզ տածած անկեղծ ու ջերմ զգացում-
ների մասին կասկածելու ամենեւին հիմք չունիս։
Այդ պատճառով ես չեմ կարողանում ըմբռնել. ո՞ւմ
դէմ ես ուզում «ըմբոստանալ» եւ ի՞նչ անել։

Դու ուզում ես «կատարել քո պարտքը», այ-
սի՞նքն։ Ջանալ համոզել մարդկանց, որ Դաշնակ-
ցութիւնը մեռա՞ծ է։ Այդ աշխատանքը արդէն վա-
ղուց ի վեր շատ եռանդով կատարւում է։ Այդ դերը
քեզ չի սազում։ Եւ ի՞նչ ձեւով պիտի կատարես այդ

աշխատանքը· կուսակցական ներքին ճանապար-
հո՞վ, ընդհանուր ժողովո՞ւմ: Դրա դէմ, ի հարկէ,
ոչինչ չի կարելի առարկել· այդ քո իրաւունքն է,
նաեւ պարտականութիւնը: Բայց այդ ի՞նչ «ըմբոս-
տացում» է:

Չէ՛, ըստ երեւոյթին, քո «ըմբոստացումը» այլ
բան է նշանակում, եւ դու աւելի գործնական դիտա-
ւորութիւններ ունիս: Մամուլի մէ՞ջ դուրս պիտի
գաս· գի՞րք պիտի գրես, Դաշնակցութեան մահը ա-
պացուցանելու համար: Ասա՛, խնդրեմ, դրանով
ի՞նչ պիտի աւելանայ այն նիւթի վրայ, որ ասում ու
գրում են բոլոր հակադաշնակցականները, բացի քո
բարոյական հեղինակութիւնից, որով դու — ամե-
նայաջող դէպքում — մի քանի տասնեակ կամ մի
քանի հարիւր մարդ պիտի հեռացնես Դաշնակցու-
թիւնից անխուսափելի կերպով դէպի ռամկավար-
ներն ու բոլշեւիկները կամ չէզոքութեան ճահճի
մէջ: Աւելին դժուար է սպասել, որովհետեւ դու ո՛չ
պայքարող մարդ ես, ո՛չ նոր կուսակցութիւն կազ-
մող ու վարող, ո՛չ էլ օրգանապէս կարող ես հան-
դուրժել պայքարի այն ձեւերին, որոնք ընդունուած
են մեր կեանքում: Յետո՞յ, արդի՞ւնքը: Ի հարկէ,
մասսան էլի կ'երթայ իր ճանապարհով, որ առ այժմ
Դաշնակցութեան ճանապարհն է, եւ քեզ էլ կը դա-
սէ — ոմանք սրտի կսկիծով, ոմանք, գուցէ, եւ չա-
րախնդութեամբ — ուրիշ հեռացողների, նեղ օրե-
րին լքողների շարքը: Քո խօսքերից ու գրածներից
կ'օգտուին վատ մարդիկ, ինչպէս մինչեւ օրս էլ օգ-
տւում են «Ճակատամարտ»ի մէջ գրածներիցդ, քո
խօսքերը զէնք կը դառնայ չարամիտների ձեռքին,
քո գրածների շուրջ կը յարուցուի աղմուկ ու կիրք
սէնսացիա սիրող գաղութահայ մամուլի մէջ, մի

քանի յօդուած կը գրեն հայ բոլշեւիկները «Դաշ-
նակցութեան քայքայման» մասին: Եւ դրանով խըն-
դիրը կը փակուի: Կը փակուի հասարակական տե-
սակէտից, բայց Քաջազնունու անձնաւորութեան
համար միշտ կը մնայ բաց… Այս է ահա, որ ինձ
անկեղծ վախ ու ցաւ է պատճառում, որովհետեւ
հայ կեանքը Քաջազնունիներ շատ չունի…

Բայց դու կարող ես ասել — եւ ասում ես ար-
դէն — որ «պարտք» ունիս կատարելիք· իսկ ի՞նչ
նշանակութիւն ունին անձնական նման նկատումնե-
րը այնտեղ, ուր հասարակաց գերագոյն շահն է
գրուած: «Երբ ես համոզուած եմ, որ սխալուողը
ես չեմ, դիմացինս է — այդտեղ արդէն անընդու-
նակ եմ զիջելու կամ յարմարուելու»: Համոզուած
եմ — շատ խիստ է ասուած: Բայց դու համոզուա՞ծ
ես, որ համոզուած ես: Չի՞ կարող պատահել, որ
սխալուած լինես: Չե՞ն եղել անցեալում դէպքեր,
երբ եղել ես համոզուած, բայց սխալ է դուրս եկել:
Հապա եթէ այս անգամ էլ գան մոմենտներ, որ չես
նախատեսել քո համոզումը գոյացնելիս: Եւ մի՞թէ
կարելի է Բուքրէշում կամ Փարիզում մեկուսացած,
պատահական տեղեկութիւնների վրայ հիմնուած,
միայն վերացական դատողութիւններով անխախտ
համոզում գոյացնել Հայաստանի դէպքերի ու Հա-
յաստանի դրութեան մասին: Սա հո մաթէմատիկա-
կան հաշիւ կամ բնագիտական փորձ չէ· այստեղ
մենք գործ ունինք ընկերային յարափոփոխ ու բարդ
երեւոյթների ու սինէմայի արագութեամբ զարգա-
ցող քաղաքական դէպքերի հետ: 1914-ից մինչեւ
1923 թուականը ինչպիսի՞ գլխապտոյտ, իրար ժըխ-
տող դէպքեր տեղի ունեցան եւ ո՞վ կարողացաւ նա-
խատեսել այդ դէպքերը, ո՞վ կարող է այսօր էլ,

առանց վերապահութեան ասել, որ ինքը վերջնականապէս համոզուած է։ Իսկ մահուան վճիռ արձակելու համար հարկաւոր է վերջնական համոզում...

Բայց, գուցէ, իմ այս բոլոր մտահոգութիւններն ու վախերը աւելո՞րդ են։ Գուցէ ես սխա՞լ եզրակացութիւններ եմ հանում նամակից։ Գուցէ «պարտքն» ու «ըմբոստացումը» բոլորովին ա՞յլ նշանակութիւն ունին։ Այն ժամանակ ինձ կը մնայ սրտանց ուրախանալ, որովհետեւ ինձ համար թանգագին է ո՛չ միայն անձնական բարեկամ Քաջազնունին, այլ եւ կուսակցական ընկեր Քաջազնունին։

Ս. ՎՐԱՑԵԱՆ

300

"ՀԱՅՐԵՆԻՔ" ԱՄՍԱԳԻՐ

Հայ ժողովուրդի մօտիկ անցեալի ուսումնասիրութեան նուիրուած այս մեծ պարբերաթերթը՝ միաժամանակ ժամադրավայրն է մեր գրականութեան հին ու նոր լաւագոյն դէմքերուն:

144 մեծադիր էջերէ բաղկացած անոր ամէն մէկ հատորը առանձին գրքի մը արժէքը ունի՝ գրական, բանաստեղծական, յուշագրական ու հասարակագիտական իր ճոխ բովանդակութեամբ:

Հայ գրականութեամբ ու պատմութեամբ հետաքրքրուող ամէն մէկ անձ անպատճառ պէտք է կարդայ Հայրենիք Ամսագիրը, որ այլամերժօրէն նուիրուած է հայ պատմութիւնը, հայ արուեստը ու հայ գրականութիւնը ներկայացնելու:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

	Տարեկան	Վեցամսեայ
[illegible]	5·00 տոլար	3·00 տոլար
[illegible]	5·50 տոլար	3·25 տոլար

Հասցէ՝

Hairenik Association
13—15 Sawmut St.
Boston, Mass., U. S. A.

ՀՀ Ազգային գրադարան
NL0490834

ՌՈՒԲԷՆ ԴԱՐԲԻՆԵԱՆ

"ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ Յ. ՔԱՋԱԶՆՈՒՆԻԻ"

Այնքան մեծ ընդունելութիւն գտած այս գործըն՝ շատ քիչ քանակութեամբ միայն մնացած է: Ունենալ փափաքողները պէտք է աճապարեն:

166 *էջերէ բաղկացած այնքան շահեկան ու հըմտալից այս գործին գին նշանակուած է* միմիայն 25 սէնթ:

Դիմել՝

Hairenik Association
13—15 Sawmut St.
Boston, Mass., U. S. A.

ԳԻՆ ՄԷԿ ՏՈԼԱՐ